Ոգի-Նաիրի
Vogi-Nairi

ЕВГЕНИЙ ВОДОЛАЗКИН

ОПРАВДАНИЕ ОСТРОВА

роман

Перевод с русского на армянский язык
Нерсес Атабекян

Հրատարակվել է «Թարգմանության ինստիտուտ»
ինքնավար ոչառեւտրային կազմակերպության
աջակցությամբ, Ռուսաստան:

EVGENIY VODOLAZKIN

JUSTIFICATION OF THE ISLAND

novel

Translation from Russian into Armenian
Nerses Atabekyan

© The publication of the book was negotiated through Banke, Goumen & Smirnova Literary Agency (www.bgs-agency.com).

Vogi-Nairi

Եվգենի ՎՈԴՈԼԱԶԿԻՆ

ԿՂԶՈՒ ԱՐԴԱՐԱՑՈՒՄԸ

վեպ

Թարգմանությունը ռուսերենից՝
Ներսես ԱԹԱԲԵԿՅԱՆԻ

Ստեփանակերտ 2022

ՀՏԴ 821.161.1-31 Վոդոլազկին
ԳՄԴ 84(2=411.2)-44
Վ 778

«Գեղarm» հանդեսի մատենաշար

Վոդոլազկին Ե.
Վ 778 **Կղզու արդարացումը:** Վեպ:
Թարգմ. ռուսերենից՝ Ներսես Աթաբեկյան:
Ստեփանակերտ, «Ոգի-Նաիրի» հրատ., 2022, 312 էջ:

Եվգենի Վոդոլազկինը «Լավր», «Ավիատոր», «Սոլովյով և Լարիոնով», «Բրիսբեն» վեպերի, «Գնալ աներկյուղ» և «Լեզվի գործիքը» կարճ պատմվածքների ժողովածուների հեղինակն է, «Մեծ գիրք», «Յասնայա պոլյանա» և «Տարվա գիրք» մրցանակների դափնեկիր: Նրա գրքերը թարգմանվել են բազմաթիվ լեզուներով: Նոր վեպի գործողությունները ծավալվում են Կղզում, որը չկա քարտեզի վրա, բայց նրա գոյությունը կասկած չի հարուցում: Այն հնարավոր չէ գտնել պատմության դասագրքերում, բայց իրադարձություններն այնքա՜ն ծանոթ են: Միջնադարը միահյուսվում է արդիականության հետ, համընդհանուրը՝ անձնականի, իսկ ողբերգականությունը՝ գրոտեսկի: Այստեղ հեշտությամբ գոյակցում են պայծառափայլ իշխաններն ու Կղզու նախագահները, տարեգիրներն ու մարգարեները, մեղուների տիրակալն ու խոսող կատուն: Վաղեմի գուշակության համաձայն՝ Կղզուն մեծ փորձություններ են սպասում: Կկարողանա՞ հաղթահարել, երբ հողը սկսում է փախչել ոտքերի տակից...

ՀՏԴ 821.161.1-31 Վոդոլազկին
ԳՄԴ 84(2=411.2)-44

ISBN 978-9939-1-1558-0

© Evgenii Vodolazkin, 2020
© Գրքի հրատարակման համաձայնությունը կայացվել է Banke, Goumen & Smirnova գրական գործակալության հետ (www.bgs-agency.com).
© «Ոգի-Նաիրի» (թարգմանության համար), 2022

Տատյանային և Նատալիին

Եվ հողը կցնցվի,
և կբռնկվի սև ջուրը Հյուսիսում,
և կհորդի վառվող ջուրը Հարավում:
Եվ մոխիր կտեղա երկնքից,
և ձեր սրտերը մոխիր կդառնան:

Ագաֆոնի մարգարեությունը

Հրատարակչի կողմից

Կղզիաբնակ հանրությանը վերջերս ցնցեց լուրն այն մասին, որ նշանավոր *Կղզու պատմությունը*՝ առաջին հայրենական տարեգրությունը, պարզվում է, շարունակություն ունի: Եվ անհրաժեշտ դարձավ նրա նոր՝ լիակատար հրատարակությունը: *Կղզու պատմությունը* նախկին տեսքով բազմիցս հրատարակվել է: Տեղ է գտել դպրոցական ու համալսարանական ծրագրերում և անհամար մեջբերումների աղբյուր դարձել: «Մենք դեռ կտեսնենք, թե այս ամենը ինչով կվերջանա», «Նա հասկանում էր, որ պատերազմը կարող է վերսկսվել, քանզի մեկն էր նրանցից, ովքեր ուզում էին վերսկսել», «Երջանիկ են այն ժամանակները, որ չեն հիշատակվում տարեգրություններում», «Ժամանակը շտապելու բան չունի» - այս արտահայտությունները հաստատուն տեղ են գտել մեր ամենօրյա կյանքում, և քչերն են հիշում, որ դրանք գալիս են տարեգրություններից:

Կղզու պատմության լիակատար տեքստին խնդրեցինք ծանոթանալ Նորին Բարձրություն Պայծառափայլ իշխաններ Պարֆենիին ու Քսենիային: Մեզ շատ կարևոր էր թվում նրանց կարծիքը հրապարակվող աշխատանքի մասին, և նրանք համաձայնեցին կիսել իրենց դատողությունները: Նշումներն աննկատելիորեն օրագրային բնույթ ստացան, ինչի համար անչափ ուրախ ենք. չէ՞ որ իշխանական զույգի յուրաքանչյուր խոսք հենց իր՝ պատմության խոսքն է: Նշումների հեղինակների թույլտվությամբ մենք դրանք բաժանել ենք հատվածների և հրապարակել որպես տարեգրության յուրատեսակ մեկնաբանություններ:

Այս տարվա իրադարձությունները փոխեցին հրատարակության նախնական ծրագրերը: Մենք հասել ենք այն ժամանակը, երբ հնագույն մարգարեությունները սկսել են կատարվել: Ժամանակն այդ

ուրախ չես կոչի, բայց մեզ շատ բան է սովորեցնում: Դարձել ենք ավելի իմաստուն, իսկ շատ իմաստնության մեջ շատ տրտմություն կա, ինչպես ասում է Ժողովողը:

Մեզ հետ կատարվողը տեսնելով՝ աշխարհն էլ սկսեց խորհել պատմության էության մասին: Ոչ միայն մեր, ընդհանրապես պատմության: Դրան նպաստեց նաև վերջերս էկրան բարձրացած մեծն Ժան-Մարի Լեկլերի *Կղզու արդարացումը* ֆիլմը: Սկզբում շատերին զարմացրեց, որ գլխավոր հերոսները համաձայնել են ֆրանսիացի ռեժիսորի խորհրդատուն լինել, բայց կինոնկարի ահռելի հաջողությունը հաստատեց, որ այդ որոշումը ճիշտ էր:

Հիմա, երբ մեր ժողովուրդը կանգնած է ճամփաբաժանին, այս գրքի լույս աշխարհ գալը առանձնահատուկ իմաստ ունի: Դեպի լույսը՝ մեր ժամանակի խավարից:

Գլուխ առաջին
ՖԵՈԴՈՐ

Մենք առաջ պատմություն չունեինք: Հիշողությունը պահպանում էր առանձին դեպքեր, բայց միայն կրկնվելու հատկություն ունեցողները: Հենց այդ պատճառով էլ մեր գոյությունն ասես շրջանաձև էր:

Մենք գիտեինք, որ գիշերվան հաջորդում է ցերեկը, իսկ ձմռանը՝ գարունը: Այդ շրջանները գծում են երկնքում լողացող լուսատուները, և նրանց պտույտի ծամփան մեկ տարի է: Հենց տարին էլ մեր մեր հիշողության բնական սահմանն էր:

Մենք աղոտ հիշում էինք սարսափելի փոթորիկներն ու երկրաշարժերը, ծանր ձմեռները, երբ սառչում էր Ծովը, եղբայրասպան պատերազմներն ու այլազգիների արշավանքները, բայց թե երբ են եղել դրանք, արդեն որոշել չէինք կարող:

Ընդամենը ասում էինք. մի անգամ, ամռանն էր: Կամ էլ՝ գարնանը, սրանից շատ գարուններ առաջ: Դրա համար էլ բոլոր փոթորիկները մեզ համար միացել, դարձել էին մի մեծ փոթորիկ, իսկ եղբայրասպան պատերազմները վերածվել էին մեկ անվերջանալի պատերազմի:

Մկրտության հետ մենք լսեցինք Սուրբ Գրոց խոսքը, իսկ մինչ այդ միայն մեկմեկու զառամած բառերն էինք լսում: Այդ բառերը ցրիվ էին գալիս, դառնում հող ու մոխիր, որովհետև միայն գրվածն է պահպանվում, իսկ մենք մինչև մկրտությունը գիր ու գիրք չունեինք:

Իսկ հետո Կղզի եկան գրքերը, և իմացանք մեզնից առաջ կատարված իրադարձությունների մասին, և դա մեզ օգնեց հասկանալ ներկա դեպքերը:

Հիմա մենք գիտենք, որ մարդկության պատմությունն ունի սկիզբ

և գնում է դեպի իր վերջը: Այս մտքերով ենք ձեռնարկում անցողիկ տարիների և դեպքերի շարադրանքին:

Օրհնիր, Տե՛ր:

Պարֆենի

Կղզու պատմությունը գրել են վանականները: Զարմանալի ոչինչ չկա. միայն հավերժություն փնտրողն է ունակ արտացոլելու ժամանակը, իսկ երկրայինը բոլորից լավ հասկանում է նա, ով մտածում է երկնայինի մասին: Ասենք, այդ հեռավոր ժամանակն էլ ուրիշ էր՝ մածուցիկ, ծորուն: Հիմիկվանի պես չէր: Մանկության ժամանակն է այդպես դանդաղ. ձգվում, բայց հետո թափ է առնում ու կյանքի վերջում արդեն թռչում է: Ընդհանուր առմամբ հանրահայտ բան է: Եվ նման չէ՞, արդյոք, ժողովրդի կյանքը առանձին մարդու կյանքին:

Համարվում է, որ ժամանակագրության առաջին գլուխները պատկանում են երեց Նիկոն Պատմիչի գրչին: Ձեռագիրն իր ողջ գոյության ընթացքում ոչ մի անգամ չի լքել Սպաս-Օստրովյան վանքի պատերը. դա խստագույնս արգելված էր:

Տարեգիրների համոզմամբ՝ պատմությունը սրբազան տարածքում պաշտպանված էր կեղծագրությունից: Հիմա պատմության հետ ավելի ազատ են վարվում. ով ասես ու որտեղ ասես գրում է: Եվ դա չէ՞, արդյոք, ներկայիս բոլոր նենգափոխումների պատճառը:

Տարեգրությունը վանքից հանելու արգելքը, սակայն, չէր բացառում վանքի պատերի ներսում նրա հետ ծանոթանալու կարելիությունը: Սովորաբար այդպիսի հնարավորություն տրվում էր տիրակալ իշխաններին: Համարվում էր (ու մինչ օրս էլ այդպես է), որ անցյալի իմացությունը պետք է նրանց, ովքեր իշխանության ղեկին են: Այդ միտքն ինձ արդար է թվում: Իհարկե, արդար է նաև այն, որ պատմության իմացությունը դեռ ոչ մեկին հետ չի պահել սխալներից:

Բարեպաշտ իշխան Ֆեոդորի օրերում մեր Կղզին մկրտվեց: Իսկ

մինչ այդ Ֆեոդորին ոչ թե Ֆեոդոր էին անվանում, այլ Ալեքսանդր: Եվ նա բարեպաշտ չէր:

Եվ իշխում էր միայն Կղզու հյուսիսային մասին, բայց երկպառակչական պատերազմում զավթեց հարավային մասն ու դարձավ ողջ Կղզու իշխան:

Իսկ կառավարման ութերորդ տարում ասաց.

Բոլորդ հավաքվեք Ավազոտ ծանծաղուտում, և այնտեղ կմկրտվեք:

Ասաց.

Ով մկրտություն չընդունի, բարեկամ չէ ինձ:

Մկրտվեցին բոլորը կամ համարյա բոլորը՝ հասկանալով, որ ծանր է իշխանի բարեկամ չլինելը:

Քսենիա

Ըստ բյուզանդական կայսր Հուստինիանոսի 47-րդ հավելվածի՝ պատմական դեպքերը թվագրվում են հերթական կայսեր տիրակալության տարով:

Հետևելով բյուզանդական ավանդույթին՝ Նիկոն Պատմիչը (ինչպես և մնացած բոլոր տարեգիրները) իրադարձությունները թվագրում են իշխանի կառավարման տարով. մենք, ինչպես հայտնի է, կայսրեր չենք ունեցել:

Եվ Կղզի բերեցին Ավետարանը, և կարդացին մարդկանց, և բոլորն իմացան մեր Տեր Հիսուս Քրիստոսի կյանքի մասին:

Իսկ հին աստվածների մասին պարզվեց, որ փայտ են նրանք, որ նրանց պետք չէ պաշտպանել, քանզի եթե աստվածներ լինեին, իրենք իրենց կպաշտպանեին: Եվ ոչ ոք առանձնապես իր անձը չէր դնում նրանց համար, բացի մի քանի դյութերից, որ ծառայում էին նրանց:

Երբ հեթանոս աստվածներին կրակ տվին, դյութերն ասացին՝ կգա օրը, երբ հրո ճարակ կդառնան նաև գրոց տառերը: Ոչ ոք չհա-

վատաց նրանց, քանզի բոլորը համարում էին, որ այդպես են ասում անզոր չարությունից: Ու նրանից նաև, գուցե, որ երբեք գրոց տառեր չեն ունեցել: Իսկ նրանց ասած բառերը կախվեցին օդում մինչև առաջին քամին ու քշվեցին-կորան:

Ֆեոդորի քսաներորդ տարում պատմական գրքեր ուղարկեցին Կղզի: Մենք աչքի լույսի պես ենք պահում դրանք. չկա ավելի վատ բան, քան անպատմություն մնալը, երբ նոր-նոր ես սկսել հասկանալ, թե դա ինչ է: Գրքերից իմացանք, որ պատմությունը միակ ու համընդհանուր է, որ նույնիսկ մի անհայտ կղզում կորած՝ պատմությունն ընդհանրական ծառի մի ճյուղն է:

Բացի այդ, իմացանք, որ պատմությունը կանխագուշակված է մարգարեություններում, որոնք ընդգրկում են այն ինչպես ամբողջովին, այլև փոքր մասերով: Մարգարեությունը կանոնակարգված ժամանակին դիմակայում է որպես նրա՝ ժամանակի հաղթահարում: Իսկ մեծ մարգարե Եղիային, որ երկինք էր բարձրացել հրեղեն մարտակառքով, Աստված ազատեց մահից ու ժամանակից, որոնք, վերջին հաշվով, նույնն են:

Իր մարգարեն ունի նաև կղզիաբնակ ժողովուրդը, և անունը՝ Ագաֆոն Ապագայատես է: Ներշնչմամբ է խոսում, ոչ թե գրքերով, քանզի մեր Կղզու մասին դեռ գրքեր չեն գրվել: Գուշակություններ է անում տևական ժամանակների համար, այնպես որ, դեռ ստուգել չենք կարող: Բայց և այնպես, Ագաֆոնի մտահակությունն ու ընդհանուր սևեռումը վկայում են, որ նրա կանխատեսումները կիրականանան, ինչին և ապավինում ենք: Հատկապես գուշակությանը, որ ցամաքի այս կտորը ցնցող թշնամանքը տևականորեն կդադարի, երբ երկու իշխանական ճյուղերը միավորվեն:

Բայց կարծում եմ՝ բավական է մարգարեությունների մասին: Չխորանանք ապագայի մեջ ու վերադառնանք՝ հիշելով, որ պատմությունը խոսում է անցյալի մասին:

Պարֆենի

Ագաֆոն Ապագայատեսն ուսուցանում էր, որ մարգարեությունը չի նշանակում սերունդների ազատության սահմանափակում: Ժառանգներն ազատ են իրենց արարքներում, բնականաբար՝ այնքան, որքան թույլ են տալիս հանգամանքները: Իսկ հանգամանքների պատճառը, ասում էր Ագաֆոնը, Աստված չէ, այլ՝ մարդը:

Նրա հետ դժվար է չհամաձայնել. երկար կյանքն ինձ համոզել է, որ մարդիկ են իրենց համար հանգամանքներ ստեղծում: Ավելի հաճախ, հասկանալի է, անբարենպաստ: Իսկ Աստված տեսնում ու մարդկանց համար դրանք բացում է մարգարեների միջոցով: Երբե՛մն:

Այդպես Ագաֆոնի միջոցով մեզ հայտնություն եղավ, թե երբ կդադարի թշնամանքը Կղզում: Նիկոն Պատմիչն այդ մարգարեության մասին հիշատակում է որպես դեռ չկատարվածի. հիմա բոլորին հայտնի է, որ այն կատարվել է: Դա, այսպես ասած, միջնաժամկետ մարգարեություն էր:

Բայց կա Ագաֆոնի ևս մեկ մարգարեություն, որը վերաբերում է հեռավոր ապագային: Այն մեզ չի հասել: Ի տարբերություն Ագաֆոնի մյուս մարգարեությունների, որոնք այս կամ այն չափով մասնավոր բնույթ ունեն, այն վերաբերում է ընդհանրապես Կղզու ճակատագրին: Ցավոք, նրա բովանդակության մասին մենք դույզն-ինչ պատկերացում չունենք: Կամ էլ՝ բարեբախտաբար չունենք. որոշել կկարողանանք միայն մարգարեությունը կարդալուց հետո:

Սբ. Ագաֆոնն իր գլխավոր մարգարեությունը տառացիորեն թելադրել է տարեգիր Պրոկոպի Ռնգախոսի ականջին: Ագաֆոնը, որն այդ ժամանակ հասել էր իր կյանքի 120 տարուն, նաև գրի առնողին խստագույնս պատվիրել էր լեզուն իրեն պահել: Ագաֆոնի, եթե կարելի է այսպես ասել՝ հասակավոր մարդու կողմից դա որոշակիորեն կատակ էր (ի վերջո, ոչ ոք սրբերին չի արգելել կատակել), քանզի դեռ պատանի տարիներին Պրոկոպիի լեզուն կտրել էին զազրախոսության համար: Այնպես որ, այդ մարդու լեզվի հարցում կարելի էր հանգիստ լինել:

Պրոկոպին, սակայն, անսպասելի վարվեց, և դրա համար նրան լեզու պետք չէր: Բացելով ժամանակագրության ձեռագիրը՝ հանել էր մարգարեությունը, և ըստ լուրերի, գաղտնի ուղարկել Մեծ երկիր, ինչպես հիմա կասեին, հավանական հակառակորդին:

Պրոկոպիի արարքը,- եթե դա ճիշտ է,- բերում է մտքի, որ գաղտնի տեղեկատվությունն այնքան էլ լավատեսական չի եղել կղզիաբնակների համար: Հնարավոր է նաև, որ ինչ-որ կերպ խթաներ մայրցամաքայինների նվաճողական մտադրությունները. ոչինչ այնպես չի ոգեշնչում հակառակորդին, ինչպես ժամանակին ստացած մարգարեությունը:

Պրոկոպի Ոնգախոսի նպատակների մասին կարելի կլինի դատել միայն մարգարեության տեքստին ծանոթանալուց հետո, բայց, ինչպես ասացինք, նրա հետքերը կորել են: Ինչո՞ւ չէր արտագրել, այլ պոկել էր ձեռագրից. չէ՞ որ դրանով հայրենակիցներին զրկել էր այն կարդալու հնարավորությունից:

Բացառված չէ, որ տարեգրի գործողությունները կոչված էին վրեժ առնելու դաժան հայրենիքից, որն իրեն զրկել էր լեզվից: Պրոկոպիի համար դա լուրջ կորուստ էր. հանգուցյալը սիրում էր խոսել: Եվ զարմանալիորեն դա հաջողում էր նույնիսկ այն սակավով, որ դեռ մնացել էր բերանում (ասում են՝ լեզուն ժամանակի հետ մի քիչ աճում է): Այսպես, թե այնպես, ձեռագրից մարգարեությունը գողանալու պատմությունը հայտնի դարձավ միայն նրա մահից հետո: Դա վառ վկայությունն է այն բանի, որ Պրոկոպիի ժամանակներում տարեգրություններով առանձնապես չէին հետաքրքրվում:

Իսկ նախկինում Կղզի բերված գրքերը, եթե կարծ, մեզ հայտնում էին հետևյալը:

Աստված առաջին օրը ստեղծեց երկինքն ու երկիրը, և երկիրն անտեսանելի էր և անզարդ, և Աստծո Հոգին շրջում էր ջրերի վրա՝ շունչ տալով ջրային էությանը: Եվ ասաց Աստված. *Եղիցի լույս.* ու եղավ այդպես:

Հաջորդ օրերին Նա արարեց ծովը, գետերն ու երկնային մար-

մինները: Աշխարհը լցնելով ջրով՝ թողեց կղզիներն ու ցամաքները, ի նշանավորումն նրա, որ հողն արեգակով ցամաքելուց չի ծագել, այլ մինչև արևն արարելը, որ մարդիկ արևն աստված չկարծեին:

Աստված միաժամանակ ստեղծեց ձկներին ու թռչուններին, քանզի ցեղակից են, զուտ այն տարբերությամբ, որ ձկները լողում են ջրում, իսկ թռչուններն՝ օդում:

Եվ Աստված ստեղծեց մարդուն ու կնոջը նրա, որ թողնի հորն ու մորը և մեկ մարմին լինի իր կնոջ հետ: Եվ երկրի երեսին ամեն ինչ Աստված հանձնեց նրանց ի տնօրինություն:

Արարչության յոթ օրերը, սակայն, դեռ ժամանակ չէին: Ժամանակը սկսվեց մեղանչումով ու Դրախտից վտարվելով, և ժամանակի հետ սկսվեց պատմությունը, քանզի գոյություն չունի պատմությունը ոչ մի տեղ, բացի ժամանակից:

Ադամը 230 տարեկանում ծնեց Սեթին, իսկ Ադամի կյանքի բոլոր տարիները 930-նն էին: Եվ սկսեցին ծնվել երեխաներ, և Ադամից մինչև Նոյ 10 սերունդ և 1468 տարի է: Իսկ երբ լրացավ Նոյի 600 տարին, ջրհեղեղ եղավ երկրի վրա:

Եվ Աստծո կամոք Նոյը կոչնակ զարկեց, և սկսեցին նրա շինած տապանը գալ կենդանիներ ու թռչուններ, ամեն տեսակից արու և էգ, բացի ձկներից, որոնց համար ջուրը սարսափելի չէ: Եվ երբ մտան ներս, Նոյը գոցեց տապանի դուռն, ու բացվեցին երկնքի վիհերը: Եվ անձրևը եղավ քառասուն օր ու քառասուն գիշեր, այնպես որ, այլևս ցամաք չմնաց, և նույնիսկ մեր Կղզին անցավ ջրի տակ: Այնտեղ, ուր հիմա ամպեր են կախված, այն օրերին թավալվում էին ալիքները:

Հաստվածաշնչյան գրքերից մեկն ասում է, որ Սատանան, ցանկանալով խորտակել մարդկային ցեղը, վերածվել մկան ու կրծում էր տապանի հատակը: Եվ Նոյն այդ ժամանակ խնդրեց Աստծուն, և առյուծը փռշտաց, և նրա ռունգերից դուրս թռան երկու կատու՝ արու և էգ, և խեղդեցին մկանը: Այդպես են հայտնվել կատուները, որ մեր աշխարհում դեռ հազվագյուտ են:

Պարֆենի

Նիկոնի տեքստում գտնում ենք պարականոն տեղեկություններ, որոնք ժամանակակից ընթերցողը լեգենդ կհամարի. նկատի ունեմ կատուների մասին պատմությունը: Մանրամասները, որով պատումը տարբերվում է ծանրաշարժ դարվինյան արձակից, սքանչելի են, իսկ ամենայն սքանչելին այսպես թե այնպես ճշմարիտ է:

Ահա այն՝ տեսակի ծագումը, որ լողզած չէ հարյուրավոր էջերում: Այն, ինչ կարելի է տեսնել. ահա, խնդրեմ, կատուները դուրս են թռչում առյուծի ռունգերից, ահա մլավոցով պտույտ են գալիս օդում և իջնում չորս թաթերին: Հիշելով իրենց գերխնդիրը՝ մեկ ցատկով հայտնվում են մկան կողքին ու՝ հո՛պ-հո՛պ: Հոպ-հոպ եմ ասում՝ նկատի ունենալով, որ մենամարտը խիստ անսովոր էր: Գիտեի՞ն, արդյոք, կատուներն՝ ում դեմ են գնում: Լավ հարց է:

Այո՛, այդ տեղեկությունները լիովին չեն համապատասխանում դարվինիզմին, բայց դա ավելի շուտ դարվինիզմի խնդիրն է: Որի հիմնադիրը պարզապես չէր հասկանա կատուների մասին հեքիաթները. ինձ թվում է՝ այդ մարդը ժպտալ չգիտեր:

Իսկ հիմա՝ լուրջ: Ինձ, իմ ոչ փոքր տարիքով պայմանավորված, հաճախ են հարցնում՝ ինչպես եմ վերաբերվում Դարվինին: Ի՞նչ ասես: Բնաշրջության հաճախանքը որսացող ականջը խուլ էր մետաֆորի զարկերակի և, ավելի լայն առումով, պոեզիայի հանդեպ: Միայն մետաֆորի նկատմամբ սըր Չառլզի խլությամբ են բացատրվում նրա հարձակումները Սուրբ Գրքի վրա: Միայն պոեզիայի հանդեպ անզգայությունը թույլ չտվեց հասկանալ, որ ինքը չի հակասում աստվածաշնչյան տեքստին: Կարծում եմ՝ հանգուցյալը հիմա դա հասկանում է:

Մեզ՝ կղզիաբնակներիս, Աստված ջուրը տվել է և՛ որպես բարիք, և՛ որպես պատիժ: Անհիշելի ժամանակներից այն մեր առևտրական նավերը հասցնում է մարդաբնակ աշխարհի հեռավոր անկյունները, այն գիծը, որ սահման է դնում ծովին ու ցամաքին: Սակայն մեր հոգևոր ամայացման ժամանակներում ջուրը ելնում էր

ահեղ բարձրության՝ խորտակելով մարդկանց ու ողողելով դաշտերը: Այդպես էին ասում մեր պապերը: Միայն ապշել կարելի է Նոյի ժամանակներում մարդու անկման աստիճանից, եթե ջուրը ողողեց ողջ աշխարհը:

Եվ քառասներորդ օրը Նոյը բացեց տապանի պատուհաններն ու արձակեց ագռավին՝ իմանալու՝ ջրերը չե՞ն իջել: Բայց ագռավը նստեց ջրի երեսին լողացող մեռած մարմինների վրա ու սկսեց կտցել, ու չվերադարձավ: Եվ այդ ժամանակ Նոյն ուղարկեց աղավնուն: Աղավնին վերադարձավ՝ ձիթենու ճյուղը կտուցին, և Նոյը հասկացավ, որ ջրերն իջնում են:

Նոյը մեռավ ջրհեղեղից 350 տարի անց, նրա կյանքի բոլոր տարիները 950-նն էին:

Քսենիա

Նախահայրերի աներևակայելի երկարակեցությունը ոմանց կարող է թյուրիմացություն թվալ. ասենք, ժամանակագրական մի համակարգից մյուսին անցնելու, գրչի սխալի և այլն: Բայց այդպիսի ենթադրությունների անհրաժեշտություն, իմ համոզմամբ, չկա: Ամեն ինչ իր բացատրությունն ունի:

Մարդիկ դեռ ապրում էին դրախտային անժամանակությամբ: Մի ոտքով հավերժության մեջ՝ դեռ վարժվում էին ժամանակին: Դրախտից հեռանալուն զուգահեռ կյանքի տևողությունը կրճատվում էր: Ընդ որում, պետք չէ մտածել, թե միայն նախահայրերն էին երկարակյաց: Ես ու Պարֆենին հիմա երեք հարյուր քառասունյոթ տարեկան ենք, և դա ոչ մեկին չի զարմացնում:

Երեկ ինչ-որ թերթիկ էի լրացնում: Հարցին՝ *քանի՞ տարեկան եք,* պատասխանեցի.

- Երեք հարյուր քառասունյոթ:

Նույնիսկ չժպտացին:

Առաջ ամաչում էի իմ տարիքից, բայց հարյուր հիսունից հետո

դադարեցի: Պարզապես որոշ մարդիկ ավելի երկար են ապրում՝ տարբեր պատճառներով:

Եվ երկիրը բաժանվեց Նոյի որդիների՝ Սեմի, Քամի ու Հաբեթի միջև: Մենք, պետք է ենթադրել, Հաբեթի տոհմն ենք, և մեր կղզին պատկանում է Հաբեթոստյանների ճյուղին:

Նոյից Աբրահամ 3324 տարի է: Եվ երբ Տերը հայացքը դարձրեց Սոդոմ և Գոմորին, Աբրահամը հարցրեց.

Եթե քաղաքում հիսուն արդար լինի, մի՞թե կոչնչացնե՞ս նրանց, չե՞ս խնայի ամբողջ քաղաքը:

Տերն ասաց.

Եթե հիսուն արդար գտնեմ, ապա կխնայեմ այս վայրը:

Եվ Աբրահամն ասաց ի պատասխան.

Ահա, համարձակվում եմ խոսել Տիրոջ հետ, ես՝ հող ու մոխիր: Եթե հիսուն արդարը պակասեն հինգ հոգով, դարձյա՞լ կկործանես քաղաքը:

Տերն ասաց.

Ո՛չ, չեմ կործանի, եթե գտնեմ քառասունհինգը:

Եվ ապա խոսեց Աբրահամը, և՛ քառասունի մասին հարցրեց, և՛ երեսունի, և՛ քսանի, և՛ տասի: Եվ խոստացավ նրան Տերը խնայել այդ վայրը նույնիսկ հանուն տասը արդարի, բայց տասն էլ չգտնելով՝ Տերը երկնքից ծծմբի ու կրակի հեղեղ թափեց Սոդոմ և Գոմորի վրա ու ողջ շրջակայքի վրա:

Շատ այլ դեպքեր էլ են նկարագրում պատմական գրքերը, ես միայն սկզբնականները հիշատակեցի:

Իր կառավարման երեսունիններորդ տարում իշխան Ֆեոդորը կնքեց մահկանացուն: Ֆեոդորի մահվանից հետո իշխեց նրա որդի Կոնստանտինը:

Գլուխ երկրորդ
ԿՈՆՍՏԱՆՏԻՆ

Պայծառափայլ իշխան Կոնստանտինի երրորդ տարում, մարտ ամսի յոթերորդ օրը, երբ Քաղաքի վրա թանձրացել էր գիշերը, փողոցներում դղրդոց ու աղաղակներ լսվեցին: Մարդիկ, որ տներից դուրս էին եկել աղմուկի պատճառը հասկանալու, խոցվեցին հրե նետերով: Նետերը շարունակեցին տեղալ նաև ցերեկը. դրանք արձակում էին երկնային հեծյալները՝ անտեսանելի մնալով, միայն նրանց նժույգների շիկացած սմբակներն էին երևում:

Եվ քանզի բոլորին պարզ դարձավ, որ հեծյալները մահ են սփռում, Քաղաքի բնակիչներն այլևս դուրս չեկան տներից, և ամեն ինչ ավարտվեց նույն օրվա երեկոյան: Այն ժամանակ ոչ ոք չկարողացավ բացատրել տեղի ունեցածի ո՛չ պատճառը, ո՛չ իմաստը, բացի դարբին Ագապիտից, որն ասաց.

Տեսնված պայտերի բնույթից դատելով՝ եզրակացնում եմ, որ սույն տեսիլքը այլ բան չի նշանակում, քան պատերազմ, քանզի պայտերն այդպիսին են լինում միայն պատերազմից առաջ:

Կոնստանտինի տասնհինգերորդ տարում իշխան Եվֆիմին, որի նախնիները ժամանակին տիրում էին Կղզու հարավային մասին, հրապարակեց իր ճշմարիտ տոհմաբանությունը: Ճշմարտությունը նրանում էր, որ Եվֆիմիի տոհմն իբր ծագում էր Օգոստոս կայսրից, ինչի մասին նախկին, բանավոր փոխանցված տոհմագրությունը լռում էր:

Ճշմարիտ տոհմաբանությունը պատմում էր, թե ծովային անցումներից մեկի ժամանակ փոթորիկն ինչպես է Օգոստոսի տորմիղը քշել-սեղմել Կղզու ափին, և այնքան դաժան ու երկարատև էր

փոթորիկը, որ Օգոստոսը երեք օր ու երեք գիշեր չէր կարողանում դուրս գալ բաց ծով: Կայսրը ընդունելության արժանացավ տեղի իշխանական գերդաստանի կողմից, և նրան սպասավորում էր անձամբ իշխանուհի Մելանիան: Եվ այդ պատումի ճշմարիտ խոսքով՝ *խոցվեց Օգոստոսի սիրտը նրա գեղեցկությամբ,* և առաջին իսկ գիշերը նրանք հղացան իշխան Եվֆիմիի նախնի Իրակլիին, որն էլ դարձավ կղզու իշխանատոհմի նախահայրը:

Եվֆիմին նոր տոհմագրությունը բծավոր եղջերուի որսի ժամանակ գտել էր ծեր կաղնու փչակում: Եվֆիմիի հետապնդումից մազապուրծ՝ եղջերուն սլացել էր դաշտով, որտեղ միայնակ ծառն էր կանգնած: Վազքն այնքան արագ էր, որ Եվֆիմիի նետերը չէին հասնում ետևից, բայց կաղնու տակ կենդանին հանկարծ մեխվել էր տեղում և մեր լեզվով ասել իշխանին.

Այստեղ կգտնես ճշմարիտ տոհմաբանությունը քո:

Եվֆիմին ցույց տվեց կաղնին, եղջերուն և, ամենագլխավորը, տոհմագրի գալարափաթեթը, և գրավոր խոսքին դժվար էր կասկածել:

Բայց տիրակալ իշխան Կոնստանտինը կասկածեց: Իր իշխանության քսաներորդ տարում հարցրեց Եվֆիմիին՝ ինչո՞ւ բծավոր եղջերուն այլևս չի խոսում մեր լեզվով և ընդհանրապես ոչ մի լեզվով չի խոսում, իսկ ձեռագրի մագաղաթը կասկածելիորեն թարմ է: Նաև որոշ նմանություն էր տեսել նկարագրվող տոհմագրի և հունական տարեգրությունների միջև, որ վերջին ժամանակները սկսել էին հասնել Կղզի: Կոնստանտինը հայտարարեց, որ անպարզալուր են Եվֆիմիի բացատրություններն ու վանք դրեց նրան:

Կոնստանտինի քսանվեցերորդ տարում գտնվեց նրա նոր տոհմագրությունն ամփոփող հրովարտակը: Երկրորդ գտածոյի առանձնահատկությունն այն էր, որ այս անգամ եղջերու չկար: Եվֆիմիի գյուտի մասին լսած մեկը գնացել էր նայելու՝ կաղնու փչակում ուրիշ գալարափաթեթ չկա՞: Եվ ի զարմանս իրեն՝ գտել ու շտապ հանձնել էր Կոնստանտինին:

Կոնստանտինի նոր տոհմագրությունը նույնպես հիշատակում

էր Օգոստոսի՝ Կղզի ժամանելը, բայց խոսվում էր արդեն իշխանական տանը կայսեր երկրորդ գիշերվա մասին: Կայսրը իշխանուհի Իլարիայի հետ էր եղել գիշերը, և այդ խելահեղ սիրո պտուղն էր իշխան Ռոմանը՝ իշխան Կոնստանտինի նախնին:

Վանականները հետագայում պատմում էին, թե Կոնստանտինի տոհմագրի մասին լուրը Եվֆիմին *ծանր հայացքով* է ընդունել ու կարծես նույնիսկ հայտարարել, թե առաջին անգամը ամենայն մանրամասնությամբ ստուգել էր փչակն ու այլ բան չէր գտել: Նրա առարկությունները, սակայն, վանքի սահմաններից դուրս ոչ ոք չլսեց, քանզի դեպքից երկու օր անց իշխան Եվֆիմին հանկարծամահ եղավ:

Պարֆենի

Եվֆիմին եղջերուի հետագա լռությունն արդարացնում էր նրանով, որ կենդանին իր կյանքի գլխավոր խոսքն արդեն ասել էր: Եվ, ըստ էության, ինչ կարող էր ավելացնել արդեն ասվածին: Ինչ վերաբերում է հրովարտակի թարմ տեսքին, ապա խելամտորեն առարկում էր, որ իր գտած փաստաթուղթը ոչնչի հետ հնարավոր չէ համեմատել, քանզի այլ հնամենի գալարափաթեթներ Կղզում չկան:

Երբ երջանիկ գյուտի շնորհիվ պարզվեց, որ Կոնստանտինի տոհմը նույնպես սկիզբ է առնում Օգոստոսից, ոմանց թվաց, թե երկու փաստաթղթերը հակասում են իրար: Բայց իրականում Կոնստանտինի տոհմաբանությունը փոխզիջում էր ենթադրում. խոսելով Օգոստոսի կողմից երկրորդ գիշերը Կոնստանտինի նախնու բեղմնավորման մասին, այն չէր բացառում, որ ժիր կայսրն առաջին գիշերը հասցրած կլիներ բեղմնավորել Եվֆիմիի նախնուն:

Սակայն Եվֆիմիի ժառանգորդ Պրոկլը փոխզիջման չգնաց ու չկիսեց տոհմաբանությունը:

Կոնստանտինի քսանութերորդ տարում երկինքը քարեր ու արնագույն մոխիր տեղաց: Տեսարանն ահաբեկեց բոլորին, քանզի ոչ մի լավ բան չէր խոստանում: Քարերը տաք էին, իսկ մի քանիսն այնպես շիկացած, որ Քաղաքում տներ վառվեցին:

Դրանից մեկ տարի անց արծաթի ոչ մեծ ձուլակտորներ թափվեցին երկնքից: Եվ չնայած սառն էին, մարդիկ վախենում էին հավաքել. ոչ ոք չգիտեր՝ ինչ ուժ է թափել: Մի քանի խիզախներ սկսեցին հավաքել, և բոլորը վախով էին նայում՝ չիմանալով հետո ինչ է պատահելու նրանց: Բայց ոչինչ չպատահեց, բացի նրանից, որ հարստացան: Եվ շատերն այն ժամանակ նախանձեցին նրանց, իսկ վանական Ավքսենտին իր կյանքի իննսունվեցերորդ տարում ասաց.

Դեռ կտեսնենք այս ամենն ինչով կվերջանա:

Ու բոլորը խաղաղվեցին:

Կոնստանտինի երեսունիններորդ տարում իշխան Պրոկլը՝ Եվֆիմիի ավագ որդին, եկավ Կոնստանտինի պալատ: Այնտեղ նա հայտարարեց, որ իրենց տոհմն առավելություն ունի Կոնստանտինի տոհմի հանդեպ, քանզի Իրակլիին՝ իր նախնուն, Օգոստոսը Ռոմանից՝ Կոնստանտինի նախնուց մեկ օր առաջ է բեղմնավորել: Եվ Կոնստանտինի հայացքը, շրջապատողների ասելով, նույնպես *ծանր* էր, և աչքերում արտացոլվում էր Պրոկլին վանք դնելու ցանկությունը:

Իսկ Պրոկլը լուռումունջ ցույց տվեց պատուհանը, և բոլորին լսելի դարձավ հրապարակից եկող գվվոցը, որն ասես ծովի փոթորկված ալիքների աղմուկ լիներ: Բայց ալիքներ չէին դրանք, այլ մարդկանց ամբոխը, որ իշխան Պրոկլի հետ եկել էր Պալատ: Ամբոխը գվվում ու եռում էր, և բոլորը մոտեցան պատուհանին ու լուռ նայում էին նրան:

Եվ այդ ժամանակ իշխան Կոնստանտինը ժպտաց, և բռնեց Պրոկլի ձեռքը, և նստեցրեց նրան բարձր գահավորակին: Իսկ ինքը կանգնած մնաց նստածի թիկունքում:

Ասաց.

Եղբա՛յր իմ, կարևորը ոչ թե հղացման գիշերն է, այլ ծննդյան ցե-

րեկը: Իսկ Իլարիան Մելանիայից երկու շաբաթ շուտ է ծնել, և դու դա գիտես:

Պրոկլը թեև չգիտեր, բայց ոչինչ առարկել չէր կարող: Ուզում էր վեր կենալ, բայց իշխան Կոնստանտինը ձեռքերը դրեց ուսերին ու թույլ չտվեց:

Ասաց.

Ես քեզ եղբայր եմ կոչում, քանզի նույն նախնին ունենք՝ Հռոմի օգոստափառ կայսրը: Տեսնում եմ՝ այն հարգանքը չի մատուցվում քեզ, որին արժանի ես ծննդյան իրավունքով: Այսուհետ քեզ ինձ գահակից եմ կարգում, և ամեն օր սեղան կկիսես ինձ հետ:

Այնպեսի ուժ կար նրա ձեռքերում ու խոսքի մեջ, որ իշխան Պրոկլը ո՛չ վեր կենալ կարողացավ, ո՛չ հրաժարվել: Եվ այդ ժամանակից Կոնստանտինի հետ սեղան էր կիսում ամեն օր, չնայած այդ օրերը շատ չեղան, ընդամենը երեք: Երրորդ օրը Պրոկլը ճաշից հետո վատ զգաց ու երեկոյան ավանդեց հոգին:

Հաջորդ օրվա լուսաբացին Կղզու հարավային մասում սկսեցին զինված մարդիկ հավաքվել: Խոսքերից դատելով՝ չէին հավատում, որ Պրոկլի մահը բնական է եղել, ու չէին թաքցնում դրա համար վրեժ լուծելու մտադրությունը: Դրա մասին հայտնեցին Ֆրոլին՝ իշխան Պրոկլի կրտսեր եղբորը, բայց նա հավաստիացրեց, որ առանց մարդկանց մասնակցության էլ մեղավորից վրեժ կառնվի:

Կեսօրին մոտ վիճակը փոխվեց: Իշխան Ֆրոլն ինքը ելավ ամբոխի առաջ, ու դեմքը արցունքներից թաց էր: Ասելով, որ եկել է արցունքները չորացնելու ժամանակը (և չորացնելով), Ֆրոլը հավաքվածներին կոչեց վճռական գործողությունների, չնայած և չբացատրեց, թե ինչ նկատի ունի: Բացատրությունների չսպասելով՝ իշխան Կոնստանտինն իր զորքին հրամայեց պատրաստվել Հարավի դեմ արշավանքի:

Շուտով կատարվեց իշխան Պրոկլի հոգեհանգիստը: Կղզու եպիսկոպոս Ֆեոֆանն արգելեց զինված մարդկանց մասնակցությունը՝ բացատրելով, որ այսուհետ հանգուցյալի զենքը բարի գործերն են նրա, որոնցով նվաճվում է Երկնային Արքայությունը:

Իշխան Ֆրոլը պահանջում էր Աստծո ծառա Պրոկլին հուղարկավորել որպես նահատակի, բայց եպիսկոպոսը դա էլ մերժեց, քանզի սպանության ուղիղ ապացույցներ չկային:

Բայց իշխան Ֆրոլը, հանգուցյալի կապտած դեմքը ցույց տալով, գոչեց.

Սա չէ՞ ապացույց, և ո՞վ ինձ կասի, թե սխալվում եմ:

Քննությունը թող Նրան, Ով երբեք չի սխալվում՝ պատասխանեց Ֆեոֆանը, իսկ հիմա հնազանդվիր ու սգա:

Բայց Ֆրոլը սգալով՝ չհնազանդվեց, և դեռ չէին լռել դամբանական երգասացության վերջին հնչյունները, երբ ծանր մեղադրանք նետեց Կոնստանտինի դեմքին:

Իշխան Կոնստանտինը, կարծես ցասումը զսպելով, լուռ էր, հետո ասաց.

Վիշտը մթագնել է միտքդ, եղբա՛յր: Հիմա, երբ մի քայլի վրա ենք եղբայրասպան կռվից, այն առանձնակի սուր պիտի լինի: Գնանք, ուրեմն, քննենք, թե ինչպես ենք փրկելու Կղզու խաղաղությունը:

Արդյո՞ք ճաշի չես հրավիրում՝ ժպտաց Ֆրոլը, բայց ուրախություն չկար ժպիտի մեջ: Եվ եղբայր չես դու ինձ, քանզի իմ տոհմը գալիս է Օգոստոս կայսրից, իսկ քո նախնիները, ներող կլինես, ճահճի տակուցք են, և ընդհանուր ոչինչ չունենք մենք, ինչպես որ ընդհանուր ոչինչ չունեն լույսն ու խավարը:

Եվ Կոնստանտինի ու Ֆրոլի զրույցը տեղի չունեցավ, քանզի՝ ինչպե՞ս կարող էր այսպիսի խոսքերից խետո:

Եվ բաժանվեց Կղզին երկու մասի՝ հյուսիսային ու հարավային, ինչպես վաղնջական ժամանակներում, և վերսկսվեց դիմակայությունը, որը բոլորին մոռացված էր թվում: Չէ՞ որ թշնամանք չկար այդ ժամանակ Հարավի և Հյուսիսի մարդկանց միջև, այլև շատերն իրար ազգական էին, ուրեմն ինչո՞ւ կռվով գնացին իրար վրա: Ավելի լավ չէ՞ր իշխաններն ամեն ինչ լուծեին խաղաղ զրույցով:

Քսենիա

Այդպես սկսվեց պատերազմը, որը հետագայում կոչեցին *Տոհմագրությունների պատերազմ,* չնայած կարծում եմ, որ պատճառը բնավ տոհմաբանությունը չէր: Ֆրոլը երկար տատանվելուց հետո որոշեց, որ եկել է իշխանությունը վերցնելու հարմար պահը, իսկ Կոնստանտինը (նա էլ էր տատանվում) մտածեց, որ սպառնալիքը պետք է խեղդել օրորոցում՝ չսպասելով, որ ուժ առնի: Ըստ էության, հենց նա էլ սկսեց պատերազմը՝ ենթադրելով, թե գործ է ունենալու իշխան Ֆրոլին նվիրված մի բուռ մարդկանց հետ, ու ոչ մի կերպ չէր կանխատեսում, որ Ֆրոլի կողմը կանցնեն Հարավի բոլոր բնակիչները: Զարմանալիորեն իրենք՝ բնակիչներն էլ դա չէին կանխատեսել, քանզի զբաղվում էին ոչ զինվորական գործերով:

Պատրաստվե՞լ էին, արդյոք, այդ պատերազմին: Բառի սովորական իմաստով՝ ոչ: Հասկանալի է, որ իշխան Եվֆիմին իր տոհմագիրը փչակում չէր գտել, և այն ինչ-որ բանի համար պետք էր նրան: Բայց ուզո՞ւմ էր, արդյոք, պատերազմել: Ստուգապես՝ ոչ. նույնիսկ զորք չուներ: Հնարավոր է՝ ուզում էր բարձրացնել իր կարգավիճակը: Պատերազմել չէր ուզում նաև իշխան Պրոկլը, և նույնիսկ իշխան Ֆրոլը չէր ուզում: Պատերազմը Ֆրոլի մտքով անցավ միայն այն ժամանակ, երբ շուրջը սկսեցին հավաքվել զինված մարդիկ, որոնք դեռ երեկ հողագործներ, արհեստավորներ, նավաստիներ էին:

Ինչը ստիպեց այդ մարդկանց թողնել իրենց բարեկեցությունը, խաղաղ կյանքը փոխարինել անլուր տառապանքներով և ի վերջո հասնել կատարյալ կործանման: Արդարության գաղափա՞րը: Բայց ինչու այն առաջ այդպիսի ուժով չէր թակում նրանց սրտերը: Եկել էին թիկունք լինելու մեկին, որի կրած վիրավորանքներն, ըստ էության, իրենց չէին հուզում, և որն իրենցից ոչինչ չէր խնդրել: Պատերազմը նաև իշխան Կոնստանտինի ծրագրերում չկար: Ոչ մեկի ծրագրերում չկար,- բայց և այնպես՝ սկսվեց:

Անսպասելի խզումը, կտրված լարի հնչումի պես խուլ, բոլորին միավորեց ընդհանուր գործողության մեջ: Արդյո՞ք խնդիրն այդ հնչ-

յունը չէր: Ե՛վ այո, և՛ ոչ: Պատահել էր, որ բոլոր լարերն էին պայթել, ու ոչ ոք ձայն չէր լսել: Ուրեմն ինչո՞ւ հիմա լսեցին:

Ռազմական գործողությունները սկսեց պայծառափայլ իշխան Կոնստանտինը: Իր իշխանության քառասունմեկերորդ տարում նա զորքը շարժեց Կղզու հարավային մասի վրա, բայց դա պատերազմ չէր կոչում, քանզի ողջ Կղզին էր համարում իր հայրենակալվածքը: Եվ զորքին, լանջախաչը բարձր պահած, ընդառաջ ելավ եպիսկոպոս Ֆեոֆանը:

Ասաց.

Խաչ հանված մեր Տեր Հիսուս Քրիստոսի անունով արգելում եմ ձեր ընթացքը, քանզի հույս եմ տածում խաղաղության:

Ինչպես որ դու, սրբազա՛ն, առարկեց իշխան Կոնստանտինը, ես էլ խաղաղություն եմ ցանկանում, դրա համար էլ շարժել եմ զորքը: Դավաճանություն է իմ իշխանության մեջ, ուրեմն ինչո՞ւ ես արգելում ինձ պոկելու նրա արմատը՝ հանձին մեզ դավաճանած իշխան Ֆրոլի: Ֆրոլից բացի, հավատացնում եմ, ինձ ոչ ոք պետք չի, բայց քանի դեռ նա բռնված չէ, մեր Կղզին ցնցելու են հեղաշրջումներն ու պատերազմները:

Իսկ եպիսկոպոսն իրենը պնդելով՝ պատասխանեց.

Մի արմատը պոկելով՝ շատ ուրիշ արմատներ կվնասես, չե՞ս տեսնում, արդյոք, պայծառափայլ իշխա՛ն, որ դրանք միահյուսված են: Եվ ահա քեզ իմ վերջին խոսքը. նախ սպանիր ինձ, հետո արդեն գործիր ինչպես քո կամքն է:

Հեծյալը վերից վար նայեց Ֆեոֆանին, և պայծառափայլի հայացքը զայրույթից պղտորված էր: Նա թափ տվեց սանձը, բայց Ֆեոֆանը կառչեց ասպանդակից, և նժույգը տարավ նրան: Ոտքերը քարշ էին գալիս գետնի վրայով, բայց եպիսկոպոսը չէր թողնում ասպանդակը, և արցունքներ էին կանգնած տեսնողների աչքերում: Եվ երբ Կոնստանտինը քառատրոփի արձակեց նժույգը, Ֆեոֆանն ընկավ սմբակների տակ, բայց հրեշտակային միջամտությամբ անվնաս մնաց:

Իշխան Կոնստանտինը որոշ տեղ անցնելով՝ կանգ առավ:

Չկարգադրեց սպանել եպիսկոպոս Ֆեոֆանին, այլ հրամայեց շրջանցել: Եվ շրջանցեցին ռազմիկները Ֆեոֆանին, և կանգնած էր նա, ինչպես ջրասույզ ծառը ծանծաղուտում, որին շրջանցում է արագ հոսանքը: Հենց ծառի պես էլ էր՝ ծերունական թևերը տարածած, անշարժ, գիսախռիվ, համր:

Զորքը վաղուց թիկունքում էր, և նույնիսկ նրա բարձրացրած փոշին հասցրել էր նստել, իսկ Ֆեոֆանն անշարժ էր դեռ: Աղոթում էր իր ժողովրդի համար՝ բոլոր ուժերը դնելով աղոթքի մեջ: Եվ այնքան մեծ էր ոգու լարումը, որ նրան երբեմն թվում էր՝ թռչում է: Իսկ երբ հասկացավ, որ չի թվում, ընդհատեց աղոթքը, քանզի չէր ուզում կորցնել հողը ոտքերի տակ: Ասում են նաև, որ երբ կտրվել էր գետնից, Ֆեոֆանին էր հայտնվել իրեն ձիու սմբակներից փրկած հրեշտակը:

Հրեշտակն ասել էր.

Աղոթքդ, սրբազան հայրապե՛տ, անզոր է մարդկանց մեղքերի հանդեպ: Պատերազմի ցանկությունը նրանց համար ինչ-որ արտաքո պահանջ չէ, այլ ծնված յուրաքանչյուրի սրտում:

Ինչպե՞ս կարելի է ցավ ու մահ ցանկալ՝ ուզում էր հարցնել Ֆեոֆանը, բայց հրեշտակի տխուր դեմքը հարցի պատասխանն էր:

Կոնստանտինի զորքը շարժվում էր առաջ ու ոչ մի դիմադրության չէր հանդիպում և ընդհանրապես ոչ մեկին չէր հանդիպում: Միայն ամայի գյուղեր, որոնց բնակիչները, իշխանի դաժան բարքն իմանալով, փախել էին: Եվ Կոնստանտինը, հպատակների ընդունելությանը չարժանանալով, կատաղության մեջ ընկավ ու հրամայեց վառել նրանց տները՝ ենթադրելով, որ փախածներն անցել են իշխան Ֆրոլի կողմը: Բայց իրականում այդպես չէր, և Ֆրոլի կողմը մարդիկ անցան տնազուրկ լինելուց հետո, քանզի վերադառնալու տեղ չունեին: Եվ, կարծրացած սրտով, Ֆրոլի ամենադաժան ռազմիկներն էին, քանզի մի չարիքն իր ետևից մյուսն է բերում:

Շարունակելով ընթացքը դեպի հարավ՝ Կոնստանտինի իշխանության քառասուներեքերորդ տարում նրա զորքը խորացավ Անտառում: Հայտնի է, որ թավուտներն այդ տեղերում խիտ ու դժվարանց են, և լայն ճանապարհներ չկան, այլ միայն նեղ կածաններ:

Զորքը երկար ժամանակ առաջ էր գնում՝ ձգվելով մի քանի ասպարեզ, մինչև որ կանգ առան արահետին տապալված բազում ծառաբների առաջ: Իսկ երբ առջևից գնացողները ձիերից իջան, որ դեն քաշեն ծառերը, հանկարծ ձախից և աջից նետերի պարսեր թռան, և Կոնստանտինը հասկացավ, որ ծուղակն է ընկել:

Զորքը նույնիսկ նահանջել չէր կարող, որովհետև ետևինները, որ դեռ չգիտեին ծուղակի մասին, սեղմում էին առջևից գնացողներին: Սակայն աղետը շուտով նրանց էլ հայտնի դարձավ, քանզի նետերը և՛ իրենց հասան, և՛ կողքից գնացողներին, և՛ Կոնստանտինի ողջ սփռված զորքին: Նետահարում էին ծառերի վրայից, թփերի միջից և ընկած ծառաբների ետևից: Նետերի ծայրակալները ներծծված էին թունավոր խոտերի հյութով, ինչի պատճառով թեթև վերքը անխուսափելիորեն մահ էր բերում: Իսկ նետաձիգներն անխոցելի էին, քանզի հարձակման տեղերը մանրակրկիտ նախապատրաստվել էին:

Եվ Կոնստանտինի զորքը սկսեց հետ քաշվել, ուր ծառերն ավելի նոսր էին թվում ու նետեր չէին թռչում: Ռազմիկների մի մասը պաշտպանում էր նահանջը, իսկ հիմնական զորքը մղվում էր դեպի նոսրացող Անտառ, ու դրան ոչ ոք չէր խանգարում: Շուտով ծառերի ետևում մի մարգագետին երևաց, և Կոնստանտինը բոլորին հրամայեց հավաքվել այնտեղ, որ մարտակարգ ընդունեն:

Իսկ երբ հեծյալները մտան բարձր խոտերի մեջ, ձիերի սմբակների տակ ճղփաց ջուրը, և պարզվեց, որ մարգագետինը ճահիճ է: Ֆրոլի մարդիկ նեղում էին, նահանջողներն արդեն չէին կարող վերադառնալ ու գնում էին առաջ, քանզի ջուրը խոր չէր թվում: Ասում են, որ այնտեղ ծանծաղ տեղեր կային և փրկության ուղիներ, եթե զգույշ անցնեին, բայց Կոնստանտինի զորքին քշում էր վախը, և զգույշ գնալ չէին կարող: Ձիերը սկսեցին թաղվել ճահճուտում՝ իրենց հետ տանելով և իրենց տակ ճզմելով հեծյալներին: Ճահճաջրով կաշկանդված ոտքերը չէին կարողանում ազատվել ասպանդակներից: Հետևակն էլ էր ջրահեղձ լինում, քանզի առանց ձիերի էլ ճահճից դուրս գալը հեշտ չէ:

Եվ սարսափի թառանչ էր ամենուր. չէ՞ որ ճահճուտը ներս է քաշում կենդանի արարածի պես, ու շատերին դա դժոխային տառապանք էր թվում: Ցեխը դանդաղ փակվում էր ճչացողների վրա, և ճիչը պղպջակներ էր դառնում: Իսկ Ֆրոլի մարդիկ կանգնել էին չոր տեղերում ու նետահարում էին փրկվածներին, ինչի համար եպիսկոպոս Ֆեոֆանի կողմից քսանինը տարով զրկվեցին հաղորդությունից:

Կոստանտինի զորքից նրանք, ում հաջողվել էր փրկվել, մի քանի շաբաթ դեգերելով Անտառում՝ տուն դարձան ուժասպառ և, հավելեմ, առանց պատերազմելու որևէ ցանկության: Այդպես Կղզին վերջնականապես երկու կես եղավ, և Հարավում հիմա տիրում էր իշխան Ֆրոլը:

Իշխանության գալով՝ Ֆրոլը սկսեց վերականգնել Ամրոցը պատող հողապատնեշը, քանզի անպատերազմ տարիներին հողը նստել էր, իսկ բլրակներին ծառեր էին աճել: Մեծ երկրից, որ Մայրցամաք էր կոչվում, իշխանը նաև ռազմական արվեստին քաջատեղյակ մարդիկ բերեց, և իր զորքը հանձնարարեց նրանց: Հասկանում էր, որ պատերազմը կարող է վերսկսվել, քանզի մեկն էր նրանցից, ովքեր ուզում էին վերսկսել:

Քսենիա

Ընտանեկան ավանդությունները հիշատակում են, որ դեռևս առաջին պատերազմի ժամանակ Ֆրոլն ուզում էր շարունակել հարձակումը Կոնստանտինի վրա, բայց հետո հրաժարվեց այդ մտքից: Հասկանում էր, որ Անտառում հաջողվածը բաց տեղանքում կրկնելն այնքան էլ հեշտ չի լինի: Բացի այդ, նրան հայտնի էր, որ Կոնստանտինի բանակի զգալի մասը տարաբախտ արշավանքին չի մասնակցել, ուրեմն և բարոյալքված չէ: Վերջապես, Ֆրոլը կանոնավոր բանակ չուներ: Եվ առաջին հերթին ձեռնամուխ եղավ դրա ստեղծմանը: Այսպիսով, նա դիմակայությունն ավարտված չէր համարում:

Պայծառափայլ Կոնստանտինի հիսուներորդ տարում եպիսկոպոս Ֆեոֆանի համար ճաշ եփող կինը, Անգելինա անունով, հղիացավ և ինն ամսից ծննդաբերեց: Դուրս գալով Գլխավոր հրապարակ՝ նա ի լուր ամենքի հայտարարեց, որ երեխայի հայրը Ֆեոֆանն է:

Եվ եկան Ֆեոֆանի մոտ Կոնստանտինի մարդիկ և ասացին.

Մի՛ տրտմիր, ո՞վ եպիսկոպո՛ս, սովորական բան է: Կյանքն առանց կանանց դժվար է, ու ճաշ եփելիս ինչ ասես չի պատահի: Մեր իշխանն իմաստուն է, նա չի մեղադրում քեզ, հակառակը, կանչում է պալատ՝ անկեղծ խոսակցության: Ինչ վերաբերում է Անգելինային, որի վարքը երբեք հրեշտակային չի եղել, ապա իշխանը, հավատա, կստիպի նրան հրաժարվել մեղադրանքներից:

Բայց եպիսկոպոս Ֆեոֆանը հրաժարվեց գնալ իշխանի մոտ՝ ասելով.

Կինը սուտ է խոսում, իսկ ես ապավինում եմ ոչ թե իշխանին, այլ մեր Տեր Հիսուս Քրիստոսին, Ում հայտնի են մարդկանց բոլոր գործերն ու մտքերը:

Նրա բառերը խլանում էին դրսից եկող աղաղակների մեջ, որոնք նոր եպիսկոպոս էին պահանջում կղզիաբնակների համար:

Ֆեոֆանի պատասխանը ստանալով՝ իշխան Կոնստանտինը թոթվեց ուսերն ու արդարամիտի քայլքով ելավ Պալատից ու կանգնեց ամբոխի առաջ: Որոշ ժամանակ լուռ նայում էր: Մարդիկ գոռում էին, թե չեն կարող համբուրել եպիսկոպոսի ձեռքը, որը շոյում է կանանց: Սկսելով խոսքը՝ իշխանը կարծես շնչահեղձ էր լինում առաքինի զայրույթից և իր ըմբռնումը հայտնում հավաքվածներին: Բայց շուտով դժվարությամբ տիրապետեց իրեն և ասաց, որ առանց քննության չի կարելի ոչինչ ձեռնարկել: Ամբոխը փառք գոչեց նրա բարեսրտությանը, բայց պահանջեց քննության կանչել տեղի ունեցածի բոլոր մասնակիցներին, և որ նրանք բոլորը, ներառյալ երկու շաբաթական նորածինը, անպայման կանչված լինեն:

Իր ճիշտն ապացուցելու համար Անգելինան հայտնեց, որ եպիս-

կոպոսի ձախ ազդրին մեծ խալ կա: Անհապաղ կանչվեց եպիսկոպոսի բաղնեպանը և հաստատեց խալի առկայությունը: Եվ լռություն տիրեց. չէ՞ որ մինչև բաղնեպանի ասածը շատերը դեռ Ֆեոֆանի արդարացման հույս ունեին:

Իսկ Ֆեոֆանը լռում և աղոթում էր:

Ծանր մեղադրանքներ ու ծանրակշիռ ապացույցներ են ներկայացված քեզ, ո՜վ եպիկոպո՛ս, ասաց Կոնստանտինը: Ինչո՞վ կառարկես:

Ոչ թե ես, նորածինը կառարկի՝ պատասխանեց Ֆեոֆանը, և ամբոխի մեջ ծիծաղ հնչեց:

Վախենամ, որ այդ վկայությունը հասկանալի լինի ոչ բոլորին՝ ենթադրեց իշխան Կոնստանտինը, որը չէր ծիծաղում: Կհասկանան միայն նրանք, որ երկու շաբաթական են:

Բայց հոգևոր հայրը մոտեցավ նորածնին ու գոչեց.

Հանուն Աստծո Որդի Հիսուս Քրիստոսի ասա՝ արդյո՞ք իմ որդին ես:

Եվ նորածինը պատասխանեց նրան պարզահնչյուն խոսքով.

Ո՛չ, եպիսկոպո՛ս, ես քո որդին չեմ:

Այդպես բոլորին պարզվեց եպիսկոպոս Ֆեոֆանի անմեղությունը: Երբ նրան խնդրեցին նորածնին հարցնել, թե ով է հայրը, Ֆեոֆանն ասաց, որ դրա համար պետք չէ դիմել նորածնին, բավական է հարցնել Անգելինայից:

Պարֆենի

Ասում են, որ Կոնստանտինը հապշտապ դադարեցրել էր քննությունը: Սկսեցին լուրեր տարածվել իշխանի մասնակից լինելու մասին՝ եթե ոչ երեխայի ծննդին, ապա՝ եպիսկոպոսին ներկայացված մեղադրանքին: Այդպիսի քայլի դրդապատճառ կարող էր դառնալ Ֆեոֆանի անհամաձայնությունը Կոնստանտինի արշավանքին դեպի Հարավ, և այդ դեպքում խոսքը վրեժի մասին էր:

Բացառված չէ, սակայն, որ վրեժխնդրությունն այստեղ կապ չու-

ներ, և պատճառները զուտ գործնական էին. իշխանը պարզապես չէր ցանկանում, որ աշխարհիկ և հոգևոր իշխանությունների բախումը կրկնվեր հետագայում. պատահական չէ, որ տարեգիրը հիշեցնում է անկեղծ զրույցի մասին, որից Ֆեոֆանը խիզախորեն հրաժարվել էր: Այս դեպքում հարկ է ենթադրել, որ արդեն այդ ժամանակ նոր արշավանքը Կոնստանտինին անհնարին չէր թվում:

Կոնստանտինի հիսունհիգերորդ տարում մեծ երաշտ եղավ: Եվ արտերում հասկը չբարձրացավ, եղածն էլ խանձվեց խարկող արևի տակ: Նաև անտառները սկսեցին վառվել, մանավանդ Կղզու հարավային ծայրին, որտեղ սովորաբար ծովից ուժեղ քամիներ են փչում: Ծուխը տարածվում էր Կղզու խորքը, այնպես որ, որոշ օրերի կանգնած էր համատարած մշուշի պես՝ ծածկելով արևը:

Այդպիսի հրդեհներ չէր հիշում ոչ ոք, որքան բավում էր ապրողների հիշողությունը, ասենք, ավանդություններն էլ նման բան չէին հիշատակում: Զարմանքի էր արժանի նաև, որ հրդեհները շարժվում էին ծովեզերքի երկարությամբ՝ հյուսիսից հարավ, ասես մեկն այնտեղ կրակ էր տալիս Անտառը, բայց մարդիկ մերժում էին հրկիզման միտքը. երբ շուրջն ամեն ինչ վառվում է, ո՞ւմ մտքով կանցնի էլի ինչ-որ բան վառել: Հրդեհի արտասովոր շարժի մեջ գիտակցված ուժ էին տեսնում, դարեր ի վեր մարդկային ցեղի դեմ ելածի ուժը, դրա համար էլ դիմեցին եպիսկոպոս Ֆեոֆանին:

Եվ եպիսկոպոսն ասաց.

Հարկ չէ անդենական ոլորտներում փնտրել, զավակնե՛րս, զի մութ ցանկություններ նաև մարդկանց սրտերում են ծնվում: Աշխարհի իշխանը, թե պարզապես իշխանն է սոյնի մեղավորը՝ ինձ քիչ է հուզում: Կկիսեմ տագնապներս սուրբ Միքայել Հրեշտակապետի հետ:

Ինչո՞ւ Միքայել Հրեշտակապետի, զարմացան նրա մոտ եկածները, չէ՞ որ նրան պատերազմից հետո էիր աղոթում, որ պահպանի խաղաղությունը, իսկ հիմա պետք է հրդեհը կանգնեցնել:

Ես փորձում եմ կանգնեցնել ավելի ծանր հրդեհը, պատասխա-

նեց հայրապետը, իսկ ներկա ժամանակն առաջարկում եմ նախապատերազմական համարել:

Մենակ մնալով՝ Ֆեոֆանը կանգնեց աղոթքի:

Տասը ամիս անց նրան հայտնվեց հրեշտակը, որին առաջ տեսել էր, և ասաց.

Ինձ ուղարկել են հայտնելու քեզ, որ պատերազմի ճանապարհն արդեն վառվել-բացվել է Անտառում, և, իհարկե, մարդկանց սրտերում է բաց: Իսկ քեզ ողորմածություն կլինի նրանով, որ արդեն չես տեսնի պատերազմը: Ուրեմն, հոգա, Ֆեոֆա՛ն, մարմնիդ նաշի համար, զի անմահ հոգուդ ողջ կյանքում ես հոգացել:

Եվ դա լսելով՝ լաց եղավ Ֆեոֆանը: Ոչ թե մահվան վախից, այլ ցավից իր ժողովրդի համար: Եվ այդ օրվանից անցավ նաշը պատրաստելուն: Եվ քանի որ կաղնուց էր լինելու, ամուր փայտից, գործն արագ չէ գնում, բայց եպիսկոպոսը չէր էլ շտապում:

Երկու տարի անց, երբ նաշն արդեն պատրաստ էր, Ֆեոֆանն սկսեց քնել այնտեղ: Եվ կափարիչը սարքելու ամիսներին շտկեց այն տեղերը, որ անհարմարություն էին պատճառում: Այդպես քնելը դուր եկավ հայրապետին, և նաշում նրա երազները պայծառ էին:

Երազ էր գալիս գերազանցապես մանկությունը, որ անցկացրել էր ծովի ափին, քանզի ձկնորսի զավակ էր: Գույներն ու բույրերը այնքան թարմ էին, որ երբեմն ստիպում էին արթնանալ, և այդ ժամանակ շտապում էր նորից քուն մտնել, քանզի երազում եկածը գրավիչ էր: Նա պատմում էր, որ տեսել է կապուտակ ծովը լուսաբացին, պատահում էր նաև, որ կուպրի հոտն էր առնում, որով հայրը ձթում էր նավակը: Ինչպես երեխա ժամանակ, ափից հրվելով ու թիակները ծալելով՝ պառկում էր աղը կերած ցանցի վրա ու նայում երկինք, ու նավակը ճոճվում էր, ու երկինքը նրան ծով էր թվում, իսկ ծովը՝ երկինք: Եվ այդ ժամանակ իր նաշը սկսեց նավակ կոչել, որն ամեն գիշեր ելնում է ծով:

Մի առավոտ Ֆեոֆանը դուրս չեկավ խցից: Ներս մտնել չհամարձակվեցին, լուռ կանգնել էին, մինչև որ կանչեցին սրբահայր Ավքսենտիին, համարյա հարյուրչորս տարեկան, որը չէր ծերանում ու

չէր մեռնում: Նա մտավ եպիսկոպոսի մոտ և որոշ ժամանակ այնտեղ մնալով՝ դուրս եկավ՝ ժպիտը շրթունքներին:

Ասաց.

Աստծո ծովագնաց Ֆեոֆանն այս գիշեր տեսանելիից այն կողմ է լողացել, որտեղից լողվորներն ու ճամփորդները սովորաբար չեն վերադառնում:

Նաև ասաց.

Բարի հոսանքով տարված՝ եպիսկոպոս Ֆեոֆանը ողջություն է մաղթում բոլորիդ:

Պարֆենի

Կոնստանտինի իշխանության հիսունհինգերորդ տարվա նկարագրությունը հատկանշական է առաջին հերթին նրանով, որ *Կղզու Պատմությունն* անցնում է ուրիշ տարեգրի ձեռքը: Դա հետևում է ոչ թե ոճի փոփոխությունից (բոլոր տարեգիրների ոճը մոտավորապես նույնն է, բացառությամբ, թերևս, Պրոկոպի Ռնգախոսի) պարզապես մի շարք աղբյուրներ այդ թվագրությամբ հայտնում են Նիկոն Պատմիչի մահվան մասին:

Նիկոնի մասին մեզ համարյա ոչինչ հայտնի չէ: Նրանից մնացել է միայն անունը, և դա վատագույն դեպքը չէ. շատ այլ պատմիչների նույնիսկ անունները չեն մնացել: Միջնադարի հեղինակները սովորաբար անանուն են, քանզի, հավատով ոգեշնչված, ոչ թե իրենց անձնական, այլ հանուրի հայացքն էին ներկայացնում: Ավելի ճիշտ, հանուրի հայացքը, որ միևնույն ժամանակ իրենցն էր:

Ի տարբերություն մեզ, այսպես ասած՝ հին կերտվածքի մարդկանց, Նոր ժամանակի մարդու համար դժվար է հասկանալ, թե դա ինչպես է հնարավոր: Բանն այն է, որ միջնադարյան աշխարհի կենտրոնում Աստված էր, իսկ ներկայիս աշխարհի կենտրոնում՝ մարդը: Աստված մեկ է բոլորի համար, ուստի Միջնադարի հայացքը վերևից է, չէ՞ որ միայն վերևից է կարելի ընդգրկել բոլորին: Այդ հայացքն արտացոլում է միակ Աստծուն և դրա համար էլ միակն է:

Իսկ հիմա, երբ աշխարհի կենտրոնում մարդն է, հայացքները շատ են, ինչպես որ մարդիկ:

Պայծառափայլ իշխան Կոնստանտինի վաթսուներորդ տարում մեր մեղքերի պատճառով մեծ երաշտը շարունակվեց:

Նույն տարում Կղզու Եպիսկոպոս կարգվեց Աֆանասին:

Կոնստանտինի վաթսունմեկերորդ տարում դարձյալ բերք չկար մեծ երաշտի պատճառով: Քանի որ պարենի պաշարները սովորաբար պահվում էին Կղզու հյուսիսում, ուտելիքի սակավությունն առաջինը զգացին հարավի բնակիչները: Եվ այդ ժամանակ եպիսկոպոս Աֆանասին իշխանին հորդորեց Հարավ ուղարկել պահվող ցորենի մի փոքր մասը, որ այնտեղ ապրող մարդիկ չմեռնեն:

Իսկ իշխան Կոնստանտինը պատասխանեց.

Հարավը ոչ միայն Հյուսիսից է բաժանվել, այլև պարենի պաշարներից: Ինչպե՞ս կարող եմ կերակրել օտարներին, եթե վաղը մերոնք ուտելու բան չեն ունենալու:

Կոնստանտինի վաթսուներեքերորդ տարում գարնանից անձրևներ տեղացին: Մայիսի վերջին, երբ անձրևները դադարեցին, իշխանն իր զորքը շարժեց դեպի Հարավ: Այս անգամ գնաց Անտառի վառված մասով և արգելքների չհանդիպեց, միայն հրդեհատեղում կուչ եկած մանրիկ ծառեր:

Հետո դաշտով գնացին, ուր արդեն ցանել էին երկար սպասված ցորենը, և այնտեղ էլ ոչ ոք չդիմավորեց նրանց, բացի զառամյալ գեղջուկ Ելեվֆերիից, որն ասաց.

Ինչի՞ եք տրորում ցանքսերը: Կհամեմատեի ձեզ մորեխի հետ, բայց տանջալի մահից եմ վախենում:

Զինվորներից եղան, որ ուզում էին սպանել Ելեվֆերիին, բայց նրան իր մարմնով ծածկեց եպիսկոպոս Աֆանասին, որ սրտերը մեղմելու համար գնում էր զորքի հետ:

Քսենիա

Իշխանի զորքը պատահմամբ չէր ցանած դաշտով անցնում, ինչպես որ պատահական չէր արշավանքը մայիսին սկսելը, երբ ելնում են առաջին ծիլերը: Կոնստանտինը հասկանում էր՝ եթե այդ բերքը հավաքվի, իշխան Ֆրոլին հաղթելու հավանականությունը կտրուկ նվազելու է: Գիտեր, թե Ֆրոլը ինչպես է պատրաստվել պաշտպանության, և սովը նրա՝ Կոնստանտինի գլխավոր դաշնակիցն էր:

Ֆրոլի Ամրոցին մոտենալու հետ Կոնստանտինի զորքին ավելի ու ավելի հաճախ էին գյուղեր ու գյուղակներ հանդիպում, և բոլորն՝ ամայի, քանզի բնակիչները փախել էին ամրոցի պարիսպների պաշտպանության տակ: Եվ հույս ունեին այնտեղ որևէ սնունդ գտնել իրենց համար, չնայած տևական երաշտից հետո Ամրոցում համարյա ոչինչ չէր մնացել: Այն քիչ ուտելիքն էլ, որ իշխան Ֆրոլն ուներ, բաժանում էր իր զինվորներին: Դրա համար էլ փախստական տղամարդիկ բանակ էին մտնում. չէ՞ որ միայն այդպես կարող էին կերակրել իրենց ընտանիքները:

Մոտենալով Ամրոցին՝ իշխան Կոնստանտինը զարմացավ, թե որքան է փոխվել: Լրտեսների պատմածով գիտեր, որ Ֆրոլը վերակառուցում է Ամրոցը, բայց այդպիսի փոփոխություններ չէր սպասում: Ամրոցը պատող ջրախանդակը լայնացրել էին, իսկ պատերն այնքան էին բարձրացել, որ Կոնստանտինին թվաց՝ սահող ամպերը քսվում են դրանց վերնատամներին: Եվ կողքին կանգնածներին հարցրեց՝ իսկապե՞ս քսվում են: Եվ նրանք միաձայն պատասխանեցին.

Ո՛չ, չեն քսվում:

Երբ առաջապահ ջոկատն առաջին անգամ մոտեցավ Ամրոցի հյուսիսային պարսպին, այնտեղից նետեր թռան: Պարսպի ետևում բարձրացավ անտեսանելի խարույկների ծուխը, և շուտով կաթսաներ հայտնվեցին փայտե վերհանների վրա: Վերհանները շարժական էին ու կաթսաները տեղափոխում էին այնպես, որ դրանք հայտնվում էին պարսպի դրսի երեսին: Կաթսաները ճոճվում էին

շղթաներից կախված, և ժամանակ առ ժամանակ թափում այն, ինչով լցված էին. եռացող ջուր ու ձյութ:

Ամրոցում ջուր շատ կար, քանի որ նրա միջով էր հոսում Գետը: Ձյութի պակաս էլ չունեին. չէ՞ որ այդ կողմերում շատերն էին ձկան որս անում ու ձթում էին իրենց նավակները: Եվ իշխան Կոնստանտինի առաջապահ ջոկատը նահանջեց նետաթռիչք տարածության վրա, և հիմնական զորքն էլ ավելի առաջ չգնաց:

Եվ այդ ժամանակ եպիսկոպոս Աֆանասին ասաց Կոնստանտինին.

Տեսնում ես, իշխա՛ն, որ Ամրոցը լավ պաշտպանված է և այն կարելի է գրավել միայն ահռելի զոհերի գնով: Սանձիր հպարտ ոգիդ ու վերադարձիր Քաղաք. թող դա լինի քո զոհը Բարձրյալին:

Իսկ իշխանը պատասխան տվեց.

Ի՞նչ զոհի մասին ես խոսում: Ինչպե՞ս վերադառնամ, երբ Աստծուն ատելի Ֆրոլը զոհեց Կղզու միասնությունը:

Ոչ մի միասնություն, առարկեց եպիսկոպոսը, չարժի մարդու կյանքին: Եթե միասնությունը հաճո է Աստծուն, առանց քեզ էլ կվերադարձնի, իսկ եթե հաճո չէ, ուրեմն ինչո՞ւ վերադարձնել:

Բայց իշխան Կոնստանտինն ականջալուր չեղավ եպիսկոպոսին: Անպտուղ դադարն ընդհատելով՝ մի լուսաբացի զորքը շարժեց Ամրոցի վրա: Անցած ժամանակը Կոնստանտինը նվիրել էր լաստեր պատրաստելուն, որոնցով հաղթահարելու էին ջրախանդակը: Լաստերի մի մասը Քաղաքից էին բերել, իսկ մնացածը պատրաստել էին տեղում: Ճակատամարտից առաջ օրհնություն խնդրեց եպիսկոպոսից, բայց Աֆանասին մերժեց:

Երկնային հրեշտակներին, ասաց, կխնդրեմ միայն, որ բոլոր պատերազմիկներին ծածկեն անտեսանելի վահաններով:

Եվ իշխանը ծանր նայեց նրան:

Ասաց.

Կարևոր է, եպիսկոպո՛ս, որ հրեշտակները բոլորին հերիքեն: Եվ վահանները նույնպես, թե չէ որոշ հրեշտակներ, լսել եմ, դատարկաձեռն են թռչում:

Հենց Կոնստանտինի զորքը սկսեց լաստերը ջուրն իջեցնել, պարիսպներից նետերի հեղեղ տեղաց: Եվ չնայած գրոհողները փորձում էին պատսպարվել վահաններով, նետերը գտնում էին նրանց մարմինների ճանապարհը: Եվ կրկին, ինչպես մինչ այդ Անտառում, ծայրակալներին թույն էր քսած, և փոքրիկ քերծվածքն անգամ մահ էր բերում:

Իսկ երբ զորքի մի մասին հաջողվեց անցնել խանդակն, ու առջևից գնացողները սկսեցին պարիսպներին դիմհարել սանդուղքները, վերևից նրանց վրա եռման ջուր ու ձյութ թափվեց: Եվ սարսափելի էր տեսնել, թե ինչպես են խաշված մարդիկ թափվում սանդուղքներից, և նրանց աղաղակներն արդեն մարդկային չէին: Միսը զատվում էր ոսկորից, և մարմինները ձյութից սևացած էին, ասես ծնված լինեին այն երկրներում, որտեղ մարդիկ, ասում էին, սև գույնի են: Խաշվածները թավալվում էին գետնին, ոմանք էլ իրենց գցում էին խանդակն ու խեղդվում, որովհետև միայն ջրի սառը խորքն էր կարող ազատել անտանելի ցավից:

Եվ այդ ժամանակ խաչը բարձրացնելով՝ խանդակին մոտեցավ եպիսկոպոս Աֆանասին ու ողջ ուժով գոչեց.

Աստծո անունով՝ բոլորին հրամայում եմ կանգ առնել:

Բայց նրա ձայնը խեղդվեց մարտնչողների աղաղակների և մահացողների հեծեծանքի մեջ: Այդպես կանգնել էր, իսկ շուրջը թռչում էին նետերը, և ոչ մեկը չդիպավ նրան, քանզի աջ ուսին նստել էր վահանակիր հրեշտակը, և անբիծ սրտերը տեսնում էին այդ հրեշտակին: Իսկ երբ պարզ դարձավ, որ մարտնչողները խուլ են եպիսկոպոսի կոչի հանդեպ, նրա բառերը կրկնվեցին հրեշտակային ձայնով: Եվ կոչն այդ ասես երկնային որոտ լիներ, որից բոլորը սարսում են, և ոչ ոք իր մեջ ուժ չգտավ հակառակվելու:

Ոչ հրեշտակային վահաններով պաշտպանված՝ պարսպի վրա ելավ իշխան Ֆրոլը: Երեք օր շարունակ լուռ հետևել էր եպիսկոպոսին ու նրա հրեշտակին, ինչպես և ներքևում տիրող մահվանը: Իսկ եպիսկոպոսը կանգնեց լաստերից մեկի վրա և, խաչակնքվելով, դանդաղ լողաց դեպի ամրոցի պարիսպը:

Ասաց Ֆրոլին.

Թույլ տուր դուրս բերեն վիրավորներին և սպանվածներին:

Ֆրոլը լուռ էր, բայց չխանգարեց, հակառակը՝ Ամրոցի պաշտպաններին նշան արեց, որ դադարեցնեն նետաձգությունը: Այդ տեսնելով՝ եպիսկոպոսն ու Կոնստանտինի մարդիկ մեռածներին ու դեռ ողջերին սկսեցին դնել լաստերի վրա: Լաստերի վշտալի ընթացքին բլրի գագաթից հետևում էր Կոնստանտինը, և արցունքները լվանում էին դեմքը, իսկ ինքը մտածում էր, թե դա ոչ ոք չի տեսնում:

Բայց արցունքներն այնպես էին շողում արևի տակ, որ անտես չմնացին Ֆրոլի աչքից, և ասաց.

Սա՞ էիր ուզում, Կոնստանտի՛ն:

Ֆրոլը կամացուկ ասաց, բայց Կոնստանտինն ինչ-որ կերպ լսեց նրան: Գուցե՝ միջին ականջով, որը, ինչպես գրքերում են գրում, ունի ամեն մարդ:

Եվ նույնքան կամաց պատասխանեց.

Չէ, սա չէր, Ֆրո՛լ:

Պատասխանեց.

Ես միասնություն էի ուզում, և կհասնեմ դրան:

Եվ քամին նրա բառերը տարավ-հասցրեց Ֆրոլի ականջին, և Ֆրոլը միայն օրորեց գլուխը: Նա էլ էր միասնություն ուզում, բայց ի՜ր իշխանության ներքո:

Իշխան Կոնստանտինը դեռ կանգնած էր բլրակի վրա ու հետևում էր, թե ինչպես են լաստերը, հարյուրերոդ անգամ վերադառնալով, բերում խեղված մարմինները:

Մրմնջաց.

Ես գրքեր եմ կարդացել կայսրությունների ու ժողովուրդների մասին, որոնք ընդունել են փրկարար լուծը: Ինչո՞ւ այդպես չի լինում Կղզում, որտեղ ոչ թե տարբեր, այլ նույն ժողովուրդն է ապրում: Միասնությունը կլավացնի նրանց կյանքը, ուրեմն ինչո՞ւ դա չեն հասկանում: Իսկ հիմա ոչ մի լավ բան չի սպասում նրանց:

Այդ օրվանից սկսվեց Ամրոցի պաշարումը:

Այդ տարի եղանակը բարեհաճ էր շինականի հանդեպ, և Կղզու երկու մասերում բերքը խոստանում էր առատ լինել: Այնտեղ, ուր իշխան Կոնստանտինի զորքը չէր տրորել արտերը, ցորենը լավ բարձրացել էր: Իսկ Ամրոցի պաշտպանները, որ այդ ամենը տեսնում էին պարիսպների վրայից, կտրված էին իրենց դաշտերից:

Իշխան Ֆրոլը գիտեր, որ համարյա պարեն չի մնացել և ուզում էր հաց գնել Մեծ երկրից: Կոնստանտինը, կանխատեսելով դա, ծով հանեց իր տորմիղը, կանգնեցրեց հացահատիկ բարձած նավերն ու սպառնաց, որ հաջորդ անգամ կրակ կտա: Եվ նավերը հետ դարձան և լողացին դեպի Մեծ երկիր, և այլևս չվերադարձան:

Այդ ժամանակ Ֆրոլը, մեծ փողեր խոստանալով, երկու նավատերերի համոզեց գիշերով տեղափոխել ցորենը, բայց Կոնստանտինի մարդիկ որսացին ու վառեցին նավերը: Նավերը վառվում էին գիշերվա մեջ, երկու ջահի նման, և ամրոցի պարիսպներից նայողները լաց էին լինում:

Եվ սով սկսվեց Ամրոցում: Ձիու գլուխն արժեր տասը դինար, բայց շուտով դա էլ չէր ծարվում, և այդ ժամանակ սկսեցին շուն, աղավնի և առնետ ուտել: Եփում էին կաշվե գոտիները, թամբերն ու բարձրաձիտ կոշիկները: Երբ այդ ամենն արդեն կերված էր, այլևս ծուխ չէր բարձրանում տների վրա, նույնիսկ այն տների, որտեղ դեռ ինչ-որ բան մնացել էր, քանզի ծուխը մատնում էր, որ տանը դեռ ուտելիք կա, և այդ ժամանակ գալիս էին ավազակները: Եվ դեռ ալյուրի պաշար ունեցողները խմորն անթխել էին ուտում, որ չմատնեն իրենց:

Պաշարման ութերորդ ամսին Ամրոցում սկսեցին մարդ ուտել: Գիշերով դարանում էին փողոցում, սպանում և ուտում, հատկապես երեխաներին: Պատմում էին, որ հինգ երեխաների մայրը սպանել է նորածնին, որ մեծերին կերակրի, հետո խելագարվել է: Ոմանք էլ ասում էին, որ մինչ այդ է խելագարվել ու նորածնին եփելիս արդեն խելագար էր: Դա էին հաստատում ծխի վրա եկած ավազակները, որոնք տեսածից սարսափել ու փախել էին՝ ոչնչի ձեռք չտալով: Եվ փողոցներում ամենուր մեռած մարմիններ էին թափված, ու ոչ ոք

չէր հավաքում, հակառակը, գիշերվա քողի տակ մսի պատառներ էին կտրում, որ ուտեն:

Փախստականները իշխան Կոնստանտինին պատմում էին պաշարվածների վիճակի մասին, և մի օր նա ամրոցի պարիսպների տակ ուղարկեց իր դեսպանորդ Անիսիմին:

Երբ ժողովուրդը հավաքվեց պարսպի վրա, Անիսիմը դիմեց կանգնածներին.

Մեր իշխանը՝ պայծառափայլ Կոնստանտինը, չարություն չունի ձեր հանդեպ ու ոչ մեկին չի վնասի, բացի միայն Ֆրոլից: Հանձնեք Ֆրոլին, և կփրկվեք, քանզի չեք ապրի առանց ուտելիքի, որ արդեն չունեք:

Զորավար Օրեստը դրան պատասխան տվեց, որ մարդիկ Ամրոցում կդիմանան ճիշտ այնքան, որքան պետք է ոսոխ Կոնստանտինին հաղթելու համար, իսկ իշխան Ֆրոլին չեն դավաճանի:

Հայացքով զորավարին զննելով՝ Կոնստանտինի դեսպանորդ Անիսիմն ասաց.

Այդպիսի խոսքերի համար, Օրե՛ստ, դու չափազանց կուշտ տեսք ունես, իսկ ես ամրոցի նահատակներին ու տառապյալներին եմ դիմում:

Դեռ վերջին բառը չէր պոկվել նրա շրթունքներից, երբ պարսպից արձակված նետը խրվեց կուրծքը: Մի վայրկյան ոտքի մնալով՝ Անիսիմը տապալվեց գետնին: Պարսպի վրա իրարանցում ու կռիվ սկսվեց, ինչը վկայում էր, որ բոլորը չեն համաձայն Օրեստի ասածին:

Մեկ շաբաթ անց Ամրոց դիմեց եպիսկոպոս Աֆանասին: Հանդիպեց իշխան Ֆրոլին և խնդրեց Ամրոցից բաց թողնել նրանց, ովքեր ուզում են հեռանալ: Բայց Ֆրոլը չհամաձայնեց, որովհետև գիտեր՝ շատ շատերը կուզեն:

Դու այդ մարդկանց պատանդ ես դարձնում՝ իշխանին ասաց եպիսկոպոս Աֆանասին:

Սխալվում ես, եպիսկոպո՛ս, պատասխանեց Ֆրոլը: Նրանց պատանդ է դարձնում Կոնստանտինը՝ սովի մատնելով, և ամեն կործանված կյանք մահացու մեղք կդառնա նրա համար:

Որոշ լռությունից հետո եպիսկոպոսն ասաց.

Մահացու մեղքը կկիսվի երկուսիդ միջև, բայց դա քո մասը չի թեթևացնի:

Եվս մեկ ամսից խռովություններ սկսվեցին Ամրոցում, որովհետև իշխան Ֆրոլը ոչ մեկին բաց չէր թողնում: Այդ ժամանակ մեծ ցասումով բռնվեցին մարդիկ, և դա հուսահատության ցասում էր: Խռովությունները դաժանորեն ճնշում էր զորքը, որին Ֆրոլը կերակրում էր այն քչով, որ դեռ ուներ: Իսկ երբ դա էլ սպառվեց, ցասումը ժանտամահի պես անցավ զորքին: Եվ իշխան Ֆրոլին պարզ դարձավ, որ գլխավոր վտանգն իր համար ոչ թե Ամրոցից դուրս է, այլ ներսում:

Պատվիրակ ուղարկելով եպիսկոպոս Աֆանասիին՝ Ֆրոլը հայտնեց, որ պատրաստ է անձնատուր լինել, եթե իշխան Կոնստանտինը պահպանի իր կյանքն ու ազատությունը: Կոնստանտինը պետք է երդվի խաչի վրա, որ կարձակի գերյալին այն բանից հետո, երբ նա խաչը համբուրելով՝ գերագույն իշխանություն ճանաչի Կոնստանտինին:

Վերադառնալով՝ եպիսկոպոսը իշխան Կոնստանտինին փոխանցեց Ֆրոլի խոսքը: Լսածի վրա խորհրդածելով՝ Կոնստանտինը ժողովրդի ներկայությամբ համբուրեց խաչը՝ երդվելով, որ կարձակի գերյալին, և դրա մասին անհապաղ հայտնեցին Ֆրոլին:

Եվ այդ ժամանակ դարպասները բացվեցին, և զորքը հեծյալ իշխան Կոնստանտինի գլխավորությամբ մտավ Ամրոց: Նրանց դիմավորեցին որպես ազատարարների և դափնեպսակ դրին Կոնստանտինի գլխին: Զորքից Ամրոցի մարդկանց նկանակներ էին նետում, որ անմիջապես պատառոտվում ու չքանում էին պաշարվածների սովահար բերաններում: Մարդիկ թափված փշուրներն էլ էին հավաքում ու գետնին թավալվելով՝ կռվում դրանց համար:

Իսկ երբ իշխանական հարկաբաժնից դուրս բերեցին Ֆրոլին, նա մինչև գետին խոնարհվեց Կոնստանտինին:

Ասաց.

Հիշի՛ր, իշխա՛ն, խաչի երդումը, որ ավագությունդ ճանաչելուց հետո կարձակես ինձ:

Եվ պատասխանեց նրան Կոնստանտինը.

Հիշում եմ, Ֆրո՛լ, իմ երդումը, բայց նույնիսկ ճանաչելուդ չեմ սպասի, հենց հիմա կարձակեմ:

Ասելով՝ նշան արեց պահակախմբին, և նրանք հետ քաշվեցին գերուց: Եվ այդ ժամանակ ամբոխը միանգամից փակվեց Ֆրոլի շուրջը, ինչպես մինչ այդ նկանակաների շուրջն էր խռնվում: Եվ այնպես էին ատում իշխանին Ամրոցում տառապածները, որ նա մի վայրկյանից մեռած էր: Պահակախումբը չհասցրեց միջամտել, ասենք, ականատեսների պատմելով՝ այնքան էլ չէին շտապում, քանզի միջամտելու ուղիղ հրաման չէին ստացել:

Հեծյալ Կոնստանտինը, դափնեպսակը գլխին, նայում էր թշնամու խեղված մարմնին, երբ հանկարծ ամբոխից մի նիզակ թռավ վրան: Իշխանն առանց օղազրահի էր, չէ՞ որ կռվի չէր եկել, այնպես որ, կուրծքն անպաշտպան էր նիզակի առաջ: Եվ ասպանդակներից կախվելով՝ մեռավ ակնթարթային մահով: Իրարանցման մեջ ոչ ոք չնկատեց՝ ով էր նետել նիզակը, ոմանք էլ ասում էին, որ նետվել էր հրեշտակի ձեռքով՝ որպես պատիժ ուխտադրժության համար:

Այդպես ավարտվեց Կոնստանտինի ու Ֆրոլի, Հյուսիսի և Հարավի մեծ դիմակայությունը:

Պարֆենի

Մեծ կայսրությունների ստեղծման մեջ մարմնացել է միավորման համընդհանուր ձգտումը, և ամեն անգամ պատմաբանները դրա համար որևէ պատճառ են գտնում: Բայց նույն պատճառներով էլ բացատրում են նաև կայսրությունների քայքայումը՝ ամեն անգամ հայտարարելով, թե *պատճառները մակերեսին են:* Մակերեսին, թերևս, այն իմաստով, որ բոլորն էլ խիստ մակերեսային են:

Խորքային պատճառները ոչ ոք չգիտի: Մենք միայն շոշափում ենք դրանք՝ աղոտ զգալով մոտենալու և հեռանալու ռիթմը: Իսկ մինչ այդ, ավաղ, ուսումնասիրում ենք ալիքները՝ մոռանալով մակընթացությունների ու տեղատվությունների մասին:

Քարերը հավաքելու ժամանակ և քարերը նետելու ժամանակ: Ցանկության դեպքում կարելի է հայտարարել *(պատծառները մակերեսին են),* որ մարդը հավաքում է լավ քարերը, իսկ նետում՝ վատերը,- բայց չէ՞ որ դա ոչ մի կերպ չի բացատրում նրա արտասովոր զբաղմունքը: Դա ոչ թե քարերի, այլ ռիթմի հանդեպ սիրուց է անում:

Որոշ բաներ իրենց գոյությունը դադարեցնում են ոչ այն պատճառով, որ վատն են. պարզապես նրանց ժամանակն անցել է: Եվ սկսում են գոյություն ունենալ ոչ այն պատճառով, որ լավն են. նրանց ժամանակը, հակառակը, եկել է: Քարերը հավաքելու ժամանակ և քարերը նետելու ժամանակ: Գուցե պատասխանը ժամանա՞կն է: Ժամանակն ու ռիթմը:

Բացարձակ ներդաշնակության վայրը Դրախտն էր, բայց մարդիկ խախտեցին այդ ներդաշնակությունը՝ իրենց դատապարտելով քրտինքի, արյան ու մահվան: Խելամիտ պատճառնե՞ր կային: Ըստ երևույթին՝ ոչ. տեսնում եմ միայն գերհագեցում անդորրից ու փախուստի ցանկություն: Բայց ճոճանակը կրկին շարժվեց, և փախածների ժառանգները երազում են կորուսյալ Դրախտի մասին:

Շախմատի խաղաքարերի գերագույն ներդաշնակությունը միայն սկզբնական դասավորության մեջ է. առաջին իսկ քայլը խախտում է այն: Ցանկացած հաջորդ քայլ միայն բարդացնում է վիճակը, բայց չքայլել չի կարելի: Այդպիսին է շախմատի անողոք օրենքը, և խաղացողները չեն այն հնարել:

Կղզու Հարավը ճնշումների չէր ենթարկվում Հյուսիսի կողմից, և բնակիչներին թանկ չէր իշխան Ֆրոլը: Նրա կողմն անցան՝ ենթարկվելով պատմության տարօրինակ ռիթմին և շարժման բնազդական ձգտմանը: Իսկ երբ շարժման արագությունից ականջները զնգացին, այդ մարդկանց կրկին սկսեց ձգել անդորրը:

Կոնստանտինն ու Ֆրոլը ստեղծված էին իրար համար և ընդհանուր գործ էին անում: Ինչ-որ առումով անբաժան զույգ էին և նույն օրն էլ մահացան:

Նույն օրն ենք երազում մեռնել նաև ես ու Քսենիան:

Գլուխ երրորդ
ՄԻԽԱԻԼ

Իշխան Կոնստանտինի մահվանից հետո Կղզին կառավարում էր նրա որդին՝ իշխան Միխաիլը: Նրա տիրակալության սկիզբն անամպ չեղավ, քանզի իշխան Անդրոնիկը՝ սպանված իշխան Ֆրոլի որդին, չէր շտապում ճանաչել Միխաիլի առաջնությունը: Հայտարարեց, որ հոր կողմից իշխան Կոնստանտինի անդրանիկությունը ճանաչելը չի տարածվում իր վրա, և հանդիպում պահանջեց Միխաիլի հետ:

Հանդիպման ընթացքում իշխանները խոսում էին տոհմաբանությունների մասին, քանզի դրանցից էր սկսվել աղետալի դիմակայությունը: Մի շաբաթվա վեճերից հետո համաձայնության եկան, որի էությունը հետևյալն էր: Իշխաններն ընդունում էին, որ կայսր Օգոստոսն առաջին գիշերն անց է կացրել իշխանուհի Մելանիայի հետ՝ որպես իշխանական ընտանիքի գեղեցկագույնի: Օգոստոսը, սակայն, հարաբերությունների խորություն էր փնտրում, ուստի երկրորդ գիշերն անցկացրեց իշխանուհի Իլարիայի հետ, և նրա փնտրտուքն ապարդյուն չէր:

Չնայած փնտրածը գտնելուն, կայսրը հաջորդ առավոտ լքեց Կղզին և այլևս երբեք այնտեղ չվերադարձավ:

Առաջինը ծննդաբերել էր Իլարիան, ինչը, իշխանների համաձայնությամբ, նրա տոհմին իշխանության գերակայության իրավունք էր տալիս Մելանիայի տոհմի հանդեպ: Եվ իշխան Անդրոնիկը հաստատեց այդ իրավունքի ճանաչումը, չնայած դեմքի արտահայտությունն այդ պահին մտախոհ էր:

Պարֆենի

Տոհմածառերի պատերազմից հետո իշխանները համաձայնության եկան: Պարզվում է՝ Օգոստոսը ոչ թե երեք, այլ երկու օր էր մնացել Կղզում: Միխաիլի և Անդրոնիկի մտածելով՝ այդ երրորդ օրվա հետ բացառվում էր նաև հնարավոր երրորդ դինաստիան:

Երրորդ դինաստիայից իրենց ապահովագրելու այդ փորձի մեջ կարելի է որոշ պարզամտություն տեսնել: Իրականում փաստարկը քննություն չէր բռնում: Երկու օրում երկու դինաստիաների նախահայր դարձած մարդը, նույն երկու օրվա մեջ տեղավորվելով, միանգամայն կարող էր սկիզբ տալ նաև երրորդ և ավելի դինաստիաների: Սա՝ բնախոսության տեսանկյունից: Իսկ եթե պատմությանը նայենք մետաֆիզիկական տեսանկյունից, ապա դինաստիայի հիմնադրումը չի հանգում հղիացմանը և անկասկած առանձին օր է պահանջում, որովհետև այդ օրն ինքնին դարաշրջան է:

Ուշագրավ է, որ փոխզիջում ձեռք բերելու ընթացքում նախամայրերից մեկի գեղեցկությանը հակադրվում է մյուսի խորությունը: Կարելի է, իհարկե, զարմանալ, որ բանակցելիս կանանց վերաբերյալ նոր մանրամասներ պարզվեցին. Կլիոն դարեր շարունակ ծպտուն չէր հանել Օգոստոսի կղզիական կապերի մասին:

Այստեղ իրեն ի հայտ է բերում մեր նախնիներին հատուկ վերաբերմունքը աշխարհին՝ որպես արվեստի ստեղծագործության: Միայն գեղեցիկն է ճշմարիտ, կամ, տարեգրության ոգով արտահայտվելով, խոր: Եվ հակառակը. միայն խորն է իսկապես գեղեցիկ: Որպեսզի հավատան տեքստին, այն պետք է գեղեցիկ լինի: Հենց այդ հանգամանքն է հանում այն հարցը, թե Օգոստոսը, խորքը գտնելով, ինչու է անմիջապես մեկնել: Մեկնելը կարևոր չէ, գլխավորը՝ գտել էր այն, ինչ փնտրում էր:

Իշխան Անդրոնիկի մտախոհությունը վատ նշան թվաց իշխան Միխաիլին: Զգում էր, որ Անդրոնիկն այնքան էլ հաստատուն չէ իր պնդումների մեջ: Երբեմն կարծես նույնիսկ մոռանում էր պայմանագրի մասին, բայց երբ հիշեցնում էին, չէր առարկում: Միխաիլը

հասկանում էր, որ իրենց պայմանագիրն անկայուն է և կփլվի առաջին իսկ քամու պոռթկումից, ինչպես ավազի վրա շինած տունը: Եվ այդ ժամանակ դիմեց եպիսկոպոս Աֆանասիին և հայտնեց նրան ապագայի վերաբերյալ իր տագնապները:

Տագնապիր, իշխա՛ն, ներկայի համար, Միխաիլին խորհուրդ տվեց եպիսկոպոսը, քանզի ապագան գալիս է ներկայի տեսքով: Այստեղ օգնել կարող է միայն Ագաֆոն Ապագայատեսը, որն անտես առնելով ժամանակը՝ չի տագնապում ապագայի համար:

Սա լսելով՝ իշխան Միխաիլը կանչեց Ագաֆոնին և նրա հետ կիսեց իր տագնապները:

Եվ Ագաֆոնն ասաց.

Դու, իշխա՛ն, որդի կունենաս՝ Պարֆենի անունով, որ *կույս* է նշանակում: Իսկ Անդրոնիկը դուստր կունենա՝ Քսենիան, այսինքն՝ *օտար,* ինչը կարելի է հասկանալ՝ *աշխարհին օտար:* Եվ կմիավորվեն նրանք պսակով, և նրանց միացումով Կղզում կդադարի երկպառակությունը:

Տեսանելի՞ ժամանակում կկատարվի՝ հարցրեց իշխան Միխաիլը:

Անտեսանելի է միայն հավերժությունը՝ պատասխանեց Ագաֆոն Ապագայատեսը:

Տեղեկանալով Ագաֆոնի ասածին՝ իշխան Անդրոնիկը թողեց իր մտախոհությունն ու սկսեց ոգևորությամբ վերաբերվել կնքված պայմանագրին: Ագաֆոնի կանխագուշակությունն ավելի մեծ ոգևորություն էր ներշնչում, քան Միխաիլի խոստումները:

Միխաիլի իշխանության հինգերորդ տարում Կղզում ափ իջավ ոմն դարբին՝ խոսող ու կույր շան հետ: Դարբինը մարդկանցից ոսկե մատանիներ ու ապարանջաններ էր հավաքում ու թաղում հողի մեջ, հետո շանը հրամայում էր գտնել: Եվ շունը փորում-հանում էր թանկարժեք զարդերը, ատամներով բռնած՝ վերադարձնում տերերին և նրանցից յուրաքանչյուրի մասին ասում՝ մեկը ողորմած է ու բարեպաշտ, մյուսը, հակառակը, անառակ ու շնացող:

Ոմանք, համոզվելով, որ շունը պայծառատես է, նախընտրում

էին բաժանվել իրենց զարդերից և աննկատ ծլկում էին, միայն թե չլսեն նրա դառը բառերը: Եվ քանզի ոչ մի անգամ չսխալվեց, բոլորն ասում էին, որ շունը հարցախույզ, բայց և կախարդի ոգի ունի: Դարբնի հետ անհայտ ուղղությամբ լողալուց առաջ շունը ժանտախտի խոցի արշավանք գուշակեց Կղզու վրա:

Տեսնելով, որ շունը մինչ այդ չի սխալվել, բոլորը խիստ անհանգստացան և հարցրին Ագաֆոն Ապագայատեսին, թե կեղծ չէ՞ խոցի մասին գուշակությունը:

Եվ Ագաֆոնը հարցով պատասխանեց նրանց հարցին.

Ի՞նչ օգուտ նրա մասին իմանալուց, ինչի դեմ անզոր եք:

Ինչո՞ւ, Ապագայատե՛ս, չես ուզում զգուշացնել մեզ կործանարար ժանտամահի մասին՝ առարկեցին մարդիկ: Մենք փրկության միջոցներ կձեռնարկեինք, թեկուզ և այդպիսիք իրականում չկան:

Սրան Ագաֆոնը տրտում պատասխանեց.

Ե՞ս չեմ արդյոք զգուշացնում ձեզ գիշերուզօր, որ հարբեցողությունը կործանարար է, և ցուցանում միջոցները փրկության: Պատասխան տվեք, ուրեմն, շա՞տ բան եք ձեռնարկել մինչ օրս:

Քսենիա

Սպասվող ժանտախտի խոցի մասին Ագաֆոն Ապագայատեսը դժկամությամբ հայտնեց իշխաններին և նրանց մահվան մասին էլ ոչինչ չխոսեց: Նա չէր սիրում ապագան տեսնել: Ճիշտն ասած, Ապագայատես անունն էլ նրան լիովին ճիշտ չէր տրվել. Ագաֆոնը միաժամանակ ամեն կողմ էր նայում:

Նա վերահաս իրադարձությունները տեսնում էր նույնքան հստակ, որքան վրա հասածները: Առաջինները գուցե նույնիսկ ավելի պարզ էր տեսնում, քանզի դրանք չէր աղճատում մարդկային անկատար հիշողությունը: Պատմությունը, ուսուցանում էր Ագաֆոնը, խոսում է ոչ այնքան անցյալի, որքան ներկայի մասին:

Իր քարոզներից մեկում նա դիտարկում է իրադարձությունների կանխորոշվածության հարցը: Պնդում է, որ կանխորոշվածություն

չկա: Կա մարդու ազատ ընտրություն, որը հանգեցնում է այս կամ այն իրադարձությանը:

Այդպես էր ասում Ագաֆոնը:

Տարեգրության այս գլուխը քննարկելիս ես ու Պարֆենին շոշափեցինք ընտրության ազատության հարցը: Ես չէի հասկանում, թե ընտրության անսահման ազատությունն ինչպես կարող է չխախտել Աստծո ամենազորությունը:

Պարֆենին ասաց.

- Ինչո՞ւ, իմ ուրախությո՛ւն: Կարող է: Պարզապես մարդու ցանկացած, նույնիսկ ամենաազատ ընտրությունը կանխավ հայտնի է Աստծուն:

Ես մտածեցի. ամուսինս ինձ *իմ ուրախություն* է անվանում: Արդեն մի ամբողջ հավերժություն մենք մեկմեկու ուրախությունն ենք: Մենք մեկմեկու ազատ ընտրությունն ենք, չնայած մեզ պսակել են առանց մեր համաձայնությունը հարցնելու: Գուցե կարելի է ասել, որ ընտրությունը կատարվել է հետո, մեր համատեղ կյանքի ընթացքում, բայց այդպիսի բացատրությունը մակերեսային կլիներ: Եվ հաստատ դուր չէր գա Ագաֆոնին, որն անտեսում էր ժամանակը: Ընտրությունը կատարվել էր ոչ թե պսակադրությունից հետո, այլ՝ նրա ներսում:

Իմ մեջ շատ բան է համահունչ Ագաֆոնին: Երբեմն ապագայից որոշ բաներ կռահում եմ, բայց դրա մասին չեմ ասում: Ոչ թե թաքցնում եմ. պարզապես չեմ կարող արտահայտել: Ոչ մի դեպքում ինձ չեմ համեմատում Ագաֆոնի հետ. նա *կանխատեսում էր,* իսկ ես՝ *կանխազգում եմ:* Դա բառերով չի արտահայտվում:

Պայծառափայլ իշխան Միխաիլի տիրակալության յոթերորդ տարում նրա կինը՝ իշխանուհի Զոյան, մայիսյան օրերին ծանր զգաց իրեն: Հենց այդ ժամանակ էլ, մայիս ամսին իշխան Անդրոնիկից հղացավ իշխանուհի Եվպրակսիան:

Միխաիլի իշխանության յոթերորդ տարու օգոստոս ամսին Կղզին բռնվեց ժանտամահով, որ սկսվել էր Մեծ երկրում, իսկ Կղզի բերեցին նավերի առնետները:

Եվ այդ ժամանակ հարցրին Ագաֆոնին իշխան Միխաիլն ու իշխան Անդրոնիկը.

Ինչո՞ւ, ուրեմն, հղացան մեր երեխաները, եթե նրանց վիճակված է մեռնել ժանտախտից:

Հղիության վերաբերյալ հարցերը երրորդ անձին ուղղելն այնքան էլ արդար չէ, քանզի այն գործում են երկուսը՝ պատասխանեց Ագաֆոնը: Միայն մի բան կասեմ. երեխաները կփրկվեն:

Մեկ շաբաթում ժանտամահը բռնեց ողջ Կղզին, և ոչ մի տեղ փրկություն չկար: Ոմանք քաշվում էին Անտառ՝ հուսալով, որ սարսափելի հիվանդությունը չի գտնի իրենց, ոմանք էլ քողտիկներ էին շինում ամայի ափին: Սակայն կենսական պահանջմունքները ստիպում էին գոնե երբեմն տուն գնալ, իսկ վերադարձին արդեն իրենց մեջ կրում էին մահաբեր խոցի մասնիկները, որոնք տեսանելի էին դառնում տեղ հասնելուն պես:

Ժանտախտով վարակվածը նախ որսատեգի հարվածի պես մի բան էր զգում թիակի տակ կամ կրծքին՝ սրտի դիմաց, ու բռնվում էր ցավով, ու սկսում էր արյուն խորխել: Հետո ասես վառվում էր կրակի մեջ, հետո դողով բռնվում: Եվ ուռչում էին բոլոր գեղձերը, մեկինը՝ վզին, մեկինը՝ ազդրին, մյուսներինը՝ թևատակին կամ այտամկանի տակ, ու նաև թիակի տակ կամ աճուկներում:

Ժանտախտի առաջին ամսում մեռավ ավագերեց Իոաննը, որը արիաբար խոստովանեցնում էր մեռնողներին, հետո էլ հոգեհանգստի կարգ կատարում նրանց համար: Մի հոգեհանգստի սկսեց դանդաղ նստել, թևատակերից բռնեցին ու մոտեցրին նստարանին, և նույնիսկ երբ տուն էին տանում, չդադարեցրեց հուղարկավորության ծեսը, և շուտով հոգին ավանդեց՝ աղոթքը բերանին:

Մեռավ ոսկերիչ վարպետ Եվլոգին, որի զարդերը կրում էր կղզու վերնախավը: Նրա ձեռքերն էին կռել Պայծառակերպության տաճարի աշտանակներն ու ոսկեզօծել գմբեթները, որոնք պարզ եղանակին ասես կրակվում էին՝ ի ուրախություն բարեպաշտների և ի սարսափ անհավատների:

Մեռավ հարկահանների գլխավոր Եվմենին, մի անկաշառ ու մեծ

ջանադրությամբ աշխատող մարդ, ինչի համար էլ նրան վերաբերվում էին հարգանքով, բայց, անկեղծ ասած, չէին սիրում:

Նրա ետևից հեռացավ քաղաքային պահազորի պետ Վիսսարիոնը, որի ծանր բռունցքը ծանոթ էր քաղաքացիներից շատերին: Եվ նրա սովորույթի ուժն այնպիսին էր, որ նույնիսկ հուղարկավորությանը Վիսսարիոնի ահեղ աջը հանկարծ բռունցք դարձավ: Կարծում եմ՝ շատերը թեթևացած շունչ կքաշեին այս վախճանն իմանալով, եթե չնայեին դեմքին նրա, ով սարսափելի է ցանկացած պահազորից:

Մեռան ևս բազում ու բազումք, բայց նրանց անունները միայն Աստծուն են հայտնի:

Եվ ողջերը չէին հասցնում թաղել մեռածներին, և չէին հերիքում առողջները հիվանդներին խնամելու համար, այնպես որ, տասը հիվանդին մեկ առողջ էր խնամում: Շատ տներ արդեն դատարկ էին կամ էլ մեկական մարդ էր մնացել, երբեմն՝ երեխա:

Այդ օրերին Քաղաքի գլուխը, այլ կերպ ասած՝ թեմակալը, Ամբրոսի անունով մի մարդ էր: Նա ամեն օր շրջայցում էր թաղամաս թաղամասի ետևից, որպեսզի հասկանա, թե որտեղ է ավելի ծանր, և այնտեղ օգնություն ուղարկի: Իրեն վստահված գումարներից ոչ մի դինար չյուրացրեց, ինչը սովորական էր Կղզում, այլև սեփական միջոցներն էլ գումարելով՝ ամեն ինչ տալիս էր ժանտամահի դեմ պայքարին:

Այդ Ամբրոսին անձամբ էր ստուգում դատարկ տները, որպեսզի ոչ ոք մոռացված չմնա այնտեղ, ու չէր վախենում հիվանդ մարմիններին դիպչելուց՝ ցանկանալով որոշել՝ կյանք կա՞ նրանց մեջ, թե՞ արդեն՝ ոչ: Բնակիչները պաշտում էին Ամբրոսիին որպես սրբակյացի, ինչը հաճախ չի հանդիպում քաղաքագլուխների մեջ: Մեծ էր նրա վաստակը, որ մեռածներին, թեկուզ և ոչ անմիջապես, բայց թաղում էին, իսկ ողջերին օգնություն էր ցուցաբերվում: Պարտքի այդպիսի անմնացորդ կատարումը շատերին փրկեց այն ժամանակ, չնայած շատերին էլ, իհարկե, չփրկեց:

Եվ մոլեգնեց ժանտամահը երեք ամիս, և ոչ ոք այն ժամանակ մեռածներին չէր հաշվում, սակայն բոլորին պարզ էր, որ տասնյակ հազարներ են:

Սեպտեմբերի վերջին, սքեմ առնելով, այս աշխարհը լքեց իշխան Միխաիլը:

Իսկ հոկտեմբերի սկզբին, նույնպես հրեշտակային կերպով, հոգին ավանդեց իշխան Անդրոնիկը:

Եվ մնաց Կղզին ամայի ու գլխատված:

Այդ մահերին գումարվեց, սակայն, ևս մեկը: Հոկտեմբերի կեսին, երբ ժանտախտն արդեն սկսել էր մարել, վախճանվեց Ագաֆոն Ապագայատեսը: Դատելով նրանից, որ կյանքի վերջին տարիներին Ագաֆոնը ինչպես երբեք ջերմեռանդ էր աղոթքով ու պահքով, գիտեր իր մոտալուտ մահվան մասին: Եվ ոչ մեկին ոչինչ չէր ասել: Եվ նրա անարատ մարմինը հողին հանձնվեց Պայծառակերպության տաճարում:

Նրա մահը մեծ վիշտ էր ողջ Կղզու համար, քանզի Ագաֆոնը արդարակյաց մարդ էր: Կղզիաբնակները տխուր էին նաև այն պատճառով, որ հեռացել էր ապագան գիտեցող միակ մարդը: Եվ չնայած ուժ չուներ ոչինչ կանխելու, հենց այն մտքից, որ ինչ-որ մեկին հայտնի է ապագան, բոլորը մի քիչ թեթևացում էին զգում:

Հիշելով հոգիներն Աստծուն ավանդած իշխանների համաձայնագրի, առավել ևս՝ Ագաֆոն Ապագայատեսի գուշակության մասին, Ռոմանյան և Իրակլյան դինաստիաները, որոնց տոհմերը գալիս էին Օգոստոսի որդիներից, որոշեցին իշխանության հարցը հետաձգել մինչև իշխանական երեխաների ծնվելն ու մեկ տարեկան դառնալը: Երբ պարզ լիներ, որ նորածիններն այլևս հաստատվել են այս աշխարհում, պետք է ռեգենտ նշանակվեր:

Որպեսզի դժվար ժամանակներում Կղզին չպատուհասեր նաև անիշխանության խոցը, կղզիաբնակ ժողովուրդը երկու դինաստիաների գլխավորությամբ խնդրանք դիմեց եպիսկոպոս Ֆեոֆանին, որ մինչ այդ ժամանակը ստանձնի կառավարումը: Լսելով իրեն ուղղված խոսքը՝ Ֆեոֆանը փակվեց խցում ու ողջ գիշեր ծնկաչոք աղոթում էր: Արևի առաջին ճառագայթների հետ նա դուրս եկավ սպասող մարդկանց առաջ և ասաց.

Եթե հաճո է Աստծուն, թող այդպես լինի:

Գլուխ չորրորդ
ՅՈՒՍՏԻՆ

Դժվար թե գտնվի մի գրիչ, որն արժանի լինի նկարագրելու կառավարումը բարեպաշտ Յուստինի՝ իշխան-ռեգենտի, որը տևական խնդրանքներից հետո համաձայնել էր ստանձնել մանկահասակ Պարֆենիի՝ վաղաժամ մահացած իր Միխաիլ եղբոր որդու խնամակալի պաշտոնը: Եթե գտնվի էլ այդպիսի գրիչ, դժվար կլինի, ախ որքա՜ն դժվար կլինի իշխանին վերագրել *խնամակալ,* կամ, առավել ևս, *ռեգենտ* չոր ու պաշտոնական բառերը, այն դեպքում, երբ բարեպաշտ իշխան Յուստինը առաջին իսկ օրվանից երկրորդ *հայր* դարձավ մանուկ Պարֆենիի համար:

Կծռնչա այդ գրիչը չյուղած սռնակալի պես, կսահի թղթի վրայով, կկարկամի գայլի հոտ առած ձիու նման և պաշտոնականությանը կգերադասի *հայր* ջերմ բառը: Առաջին, թե երկրորդ. ո՞ւմ է հետաքրքիր այդ հաշվառքը և ընդհանրապես ո՞ւմ կհետաքրքրի: Գլխավորը՝ որ *հայր* է: Հենց այդ բառն առաջինը թռավ որբուկի շրթունքներից, երբ երեխան սահմանված ժամանակին սկսեց խոսել:

Երկրորդ բառը *մայրն* էր՝ ուղղված բարեխնամ իշխանուհի Գլիկերիային՝ իշխան Յուստինի կնոջը: Տագնապներով լեցուն, աղքատ, բայց ազնիվ. դժվար, բայց հրաշալի պարմանություն ապրած իշխանուհին մշտավառ օրինակ դարձավ երեխայի համար: Անզուգականի առկայծում, չափ և սահման:

Քսենիա

Ընտրության մասին: Այս գլուխը գրել է մի մարդ, որը միաժամանակ երկու փոխբացառող ընտրություն է արել: Խոսքը Պրոկոպի

Ռնգախոսի մասին է, որը նկարագրել է իշխան-ռեգենտ Յուստինի տիրակալությունը: Այդ նկարագրությունը բնութագրվում է պատումի առանձնահատուկ ոճով, որն ինչ-որ մեկը շատ դիպուկ՝ վերամբարձ է կոչել: Այն խիստ տարբերվում է մյուս տարեգիրների ոճից:

Շատ տարիներ առաջ հայտնաբերվեց մի զարմանալի, կարելի է ասել՝ սենսացիոն ձեռագիր: Վերնագրված էր *Իշխան Յուստինի ճշմարիտ պատմությունը՝ գրված Պրոկոպի Ռնգախոսի ձեռքով:* Պրոկոպիի խցում այն գտել էին ծխատարի ճեղքում:

Այն ժամանակից, երբ վանքը սկսել էին տաքացնել նկուղի մեծ վառարանով (դա դեռ Պրոկոպիից առաջ էր), խցում արդեն վառարան չէին վառում, և տարեգիրն ամենայն հավանականությամբ որոշել էր օգտագործել այդ թաքստոցը: Նկատեմ, որ Սպասո-Օստրովյան վանքի վերականգնումը ժամանակ առ ժամանակ վերսկսվում է, ու միայն Աստծուն է հայտնի, թե էլ ինչ գյուտեր են սպասում մեզ...

Ձեռագիրը թաքստոցում պահելը հեղինակի պարապ քմահաճույքը չէր. ձեռագիրը տեղեկություններ է ամփոփում, որոնք, մեղմ ասած, հակառակ են նրան, ինչի մասին ինքը խոսում է տարեգրության մեջ: Գտնված փաստաթղթից դատելով՝ Պրոկոպին պատրաստվում էր հրապարակել ձեռագիրը: Եվ այն թաքստոցում մնացել էր, ըստ երևույթին, հեղինակի հանկարծամահ լինելու հետևանքով:

Ձեռագրի վերջին էջին մի հանելուկային հավելում կար: Հրապարակված վիճակում այն այսպիսի տեսք ունի.

Ագաֆոնի գերեզմանին կից չի գտնի ոչ ոք մարգարեության ձայնը որ է աղբյուր իմացության Կղզու ապագայի

Դարձվածքի կառուցվածքն արտասովոր է և իմաստը՝ մութ: Պարզ է միայն, որ ինչ-որ կերպ կապված է Ագաֆոն Ապագայատեսի մարգարեության հետ: Բայց ինչպե՞ս:

Եվ այսպես, Կղզուց գողանալով ապագայի կանխագուշակությունները՝ Պրոկոպին միևնույն ժամանակ այն հարստացրել էր

անցյալի մասին գիտելիքներով: Հայտնաբերված տեքստի արդեն իսկ վերնագրից հետևում էր, որ տարեգրության բերած պատմությունը *անճշմարիտ* է եղել: Քանի որ զուգահեռ երկու պատմություններ են գրվել, ստացվում է, որ Պրոկոպիի ընտրությունը կատարվել էր միաժամանակ ճշմարիտի և կեղծի օգտին:

Իր գրություններում ճշմարտությունը ստից զատելով՝ Պրոկոպին կարծես թե վերջակետ չի դնում: Գուցե և նույնիսկ հնարավոր է համարում, որ ճիշտն ու սուտը ժամանակի ընթացքում կփոխեն տեղերը (նրա կյանքում այդպես պատահել էր), ու թողնում է, որ սերունդներն ինքնուրույն գնահատեն:

Երեխաները, որոնց վիճակված էր պսակվել, երեք տարեկանում նշանվեցին: Նրանք Կղզու իսկական զարդն էին՝ մեր հողի երկու ամենագեղեցիկ ծաղիկները: Բոլորին թվում էր՝ լուսապսակ կա գլուխների շուրջը, և իրենք էլ ասես երկու փոքրիկ արևներ լինեին: Երբ մթնդած եղանակին դուրս էին գալիս, ամպերը փախչում էին, այնպես որ, կարելի էր ասել՝ միանգամից երեք արև էր լույս տալիս ու ջերմացնում բոլորին: Իսկ երեխաներին՝ օրհնյալ Պարֆենիին ու Քսենիային, ջերմացնում էր նրանց սերը Յուստինի ու Գլիկերիայի հանդեպ:

Եթե Պարֆենին վարքով հիշեցնում էր իր տարիքի բոլոր երեխաներին, ապա Քսենիայի դեպքում ամեն ինչ այլ էր: Մանկական խաղեր չէր սիրում ու խուսափում էր դրանցից, ինչի պատճառով անտեղյակներին և զգացմունքների նրբությանն անհաղորդներին կարող էր անմարդամոտ և նույնիսկ մի քիչ վայրի թվալ: Բայց թվացյալ անմարդամոտությունն իրականում արտացոլում էր նրա ուշադրությունը ոչ թե ստորոտի, այլ գագաթի հանդեպ: Մանուկ հասակից նրա համար օրինակ էր Գլիկերիան՝ ողջախոհության ու մաքրության լուսատուն:

Գլիկերիան Յուստինի երկրորդ կինն էր: Առաջին կինը՝ Ագաֆյան, անպտուղ էր, և իշխանը ստիպված բաժանվել էր նրանից: Մինչ այդ Յուստինն ու Գլիկերիան փորձել էին Ագաֆյային բուժել անպտղությունից, բայց քանի որ նրանց ջանքերը նույնքան ան-

պտուղ էին, որքան Ագաֆյան, Յուստինը ցավ ի սիրտ կին առավ Գլիկերիային:

Քսենիայի խնամքը ստանձնեց նրա հորաքույր Կլավդիան, որն իր օրերն էր կարծում Ծովեզերքին: Սակայն երեխաներին որոշեցին չբաժանել իրարից, և նրանք սովորաբար միասին էին լինում՝ մերթ Պալատում, մերթ ծովափին:

Ավա՜ղ, զորությունս չի բավում նկարագրելու բարությունն ու իմաստնությունը մարդկանց, որոնք ստանձնել էին մանուկների խնամակալությունը: Ինչպես այստեղ չողբամ ինձ, որ չեմ եղել Աթենքում և ակադեմիաներում չեմ ուսանել, որ կոպիտ եմ մտոք ու զգացմունքներով՝ նվաստ: Որ հետևելով նրանց խաղերին, սկզբում չէի հասկանում դրանց ծածուկ դաստիարակչական բնույթը, որ բարեպաշտ զույգի հետ, ասենք, զույգ ու կենտ խաղալով՝ սքանչելի մանուկներն արդեն վաղ տարիներին սովորել էին դրանք տարբերել իրարից, այն դեպքում, երբ պաշտոնակիր անձինք անգամ հաճախ դրանք դժվար են տարբերում:

Առաքինի Յուստինի ռեգենտության ութերորդ տարում նրա սան Պարֆենին սովորություն դարձրեց դանակ խաղալը: Այդ խաղը ճշգրտություն ու ճարպկություն էր զարգացնում, որոնք այնքան պետք են ապագա տիրակալին: Պտտաշարժումով դանակ նետելը, որ Պարֆենիին սովորեցնում էր բարեմիտ Գլիկերիան, պայքարի միջոց էր անդյուրաշարժության դեմ, որը որոշակիորեն հատուկ էր նշյալ որբին, ասենք, հասարակական կյանքում էլ, ընդհանուր առմամբ, այդպիսի արվեստը, ինչպես ասում են, անօգտակար չէ: Երեխային դանակախաղ սկսեցին սովորեցնել այն տարիքից, երբ ցանկացած գիտելիք հեշտ է յուրացվում:

Այլ բան ենք մենք՝ մեծահասակներս, որ անընդունակ ենք ոչ միայն պտտաշարժումով դանակ նետելուն, այլև նույնիսկ ամենափոքր թվով այլալեզու բառեր չենք մտապահում: Դրա համար էլ համր ու անլեզու ենք Մեծ երկրից եկածների առաջ, անկարող նույնիսկ ողջունել նրանց, չեմ խոսում արդեն բարդ բաների մասին, ինչպիսին է փիլիսոփայական դիսկուրսը կամ, օրինակ, սիլլոգիզմ

կառուցելը: Առանց լեզվի ո՛չ սովորական բարեկամություն կհաստատես, ո՛չ ավելի սերտ հարաբերություններ, ինչի պատճառով էլ մեզանում այդքան քիչ են միջպետական ամուսնությունները: Բայց դադարենք սույնի մասին և վերադառնանք՝ ինչին հարկ է:

Խաղի ընթացքում Գլիկերիան, որպես ճշմարիտ երկրորդ մայր, հետևում էր, որ ոչ մի դանակ չթռչի իշխանական գահի ժառանգի կողմը: Իսկ երբ սատանայական դրդումով դանակը համենայնդեպս թռավ, մանուկ Պարֆենիին փրկեց նրան կնության կոչված Քսենիայի ձիչը: Այդ պահին նա հարազատների հետ զբոսնում էր ծովի ափին: Աշտարակ հիշեցնող ժայռի կողքով անցնելիս կարճ ճչաց.

Դանա՛կը:

Եվ դա բավական էր: Անդյուրաշարժությունը հաղթահարելով՝ տղան հասցրեց կիսաշրջան անել, ու դեպի սիրտը թռչող դանակը խրվեց նախաբազուկը:

Երկարաշեղբ դանակ էր և այնպես վարպետորեն նետված, որ եթե չլիներ աղջկա ձիչը, Պարֆենիի համար ամեն ինչ կարող էր ողբալի վախճան ունենալ: Զայրույթից իրեն կորցրած ողջամիտ Գլիկերիան կարգադրեց անմիջապես գլխատել դանակն անզգույշ նետած պատանուն: Որոշ ստախոս կամ պարզապես անտեղյակ մարդիկ հիշում են, որ հատված գլուխն իբր խոսել է: Իսկ եթե ուշադրության առնենք, թե հատկապես *ինչ* է խոսել (չեմ ուզում կրկնել), ապա խոսող գլխի պատմությունը կատարելապես անարժանահավատ կներկայանա:

Քսենիա

Ես բուն դանակախաղը չեմ տեսել (շատ հեռու էինք խաղացողներից), բայց զգացի՝ այդ պահին ինչով են զբաղված այնտեղ՝ Կղզու հյուսիսում:

Զբոսնում էինք ծովի ափին, մեր դղյակի մոտ: Առջևից Կլավդիա հորաքույրն էր քայլում, մահացած հորս քույրը, որը զբաղվում էր իմ դաստիարակությամբ: Շորի փեշը քշտած՝ գնում էր ափակոծության շերտով: Փեշը երկու ձեռքով բարձր պահել էր ծնկներից վեր, բայց, մեկ է,

ծայրը քսվում էր թաց ավազին՝ ժամանակ առ ժամանակ թաղվելով դողացող ծովափրփուրի մեջ: Այդ օրը ուշադրություն դարձրի Կլավդիայի ոտքերին: Այսօրվա լեզվով ասած՝ x-աձև էին: Հանկարծ տագնապի խայթոց զգացի, ու դեռ չհասկանալով՝ ինչ եմ անում, ճչացի.

- Դանա՛կը:

- Ինչո՞ւ ես ճչում՝ «Դանա՛կը»,- քայլը չդանդաղեցնելով՝ հարցրեց հորաքույրը:

- Իսկ ինչո՞ւ են ձեր ոտքերը X-աձև,- հարցին հարցով պատասխանեցի ես:

Կլավդիան ո՛չ իմ ճիչը հասկացավ, ո՛չ հարցս, ես էլ ո՛չ մեկը հասկացա, ո՛չ մյուսը. պարզապես դուրս էր թռել: Ես ընդհանրապես այնտեղ չէի: Հեռու Քաղաքում տեսնում էի Պարֆենիին, անթափանց ապագայում լսում բառեր: Ի դեպ, Կլավդիայի հետ էլ էր այդպես պատահել, և մի անգամ իմ մասին ասաց՝ *խնդրահարույց երեխա է:* Իմ կարծիքով՝ դա մեզ մոտ ընտանեկան է:

Ճիչս փրկեց Պարֆենիին: Տարօրինակ կերպով լսել էր ինձ (նշանածս ինձ լսում էր ցանկացած հեռվից) ու շրջվել իմ կողմը: Դա բավական էր, որ դանակը սիրտը չխրվի, այլ՝ ուսը: Այդ դեպքի երկու վարկածներից, որ առաջարկում է Պրոկոպի Ռնգախոսը, ճշմարտությանն ավելի մոտ է *Ճշմարիտ պատմության* մեջ նկարագրվածը:

Յուստինի ռեգենտության տասներկուերորդ տարում ամուսնու անձնվեր կինը՝ Գլիկերիան, ողջախոհության այդ անոթը Բարեպաշտության տուն հիմնեց, որտեղ տեղավորեց նախկինում իրենց մարմինը վաճառող, բայց այլևս վերափոխության ճանապարհին կանգնած կանանց: Որպեսզի երբեք նախկին մեղքին տրվելու գայթակղությունը չունենան, Տնից հեռացրին բոլոր տղամարդկանց, բացի 92-ամյա դռնապան Եվլամպիից: Ապաշխարածները (նրանք իրար քույր էին ասում) ամենօրյա հագուստներ էին կարում: Շաբաթը մի անգամ, կիրակի օրերը, քույրերից մեկը գնում էր տոնավաճառ, որտեղ կարովի ապրանքներ էին ծախում, իսկ վաստակած գումարով մթերք էին գնում:

Իշխան Յուստինի ռեգենտական կառավարման տասնչորսերորդ տարում մարդասիրության լուսատու Գլիկերիան այդպիսի ևս մի տուն հիմնեց, հետո էլի մեկը, հետո՝ էլի: Կղզու բարքերն այն աստիճան էին բարելավվել, որ ոմանք սկսեցին վախենալ, որ ի վերջո մանկածնությունը կդադարի: Կամ էլ կիրականացվի ինչ-որ ավելի կուսական եղանակով, օրինակ՝ բողբոջումով: Ընդսմին, տիրակալող ամուսինների գլխավոր առաքելությունը՝ իշխանական զույգի դաստիարակությունը, կատարվում էր գերագույն պատասխանատվությամբ, չնայած և՝ դանդաղ:

Արդարակյաց Յուստինի կառավարման տասնութերորդ տարում իրադարձություններն ինչպես երբեք անշտապ էին ծավալվում: Հիշարժան դանակախաղից անցած ութ տարիներին պարմանի Պարֆենին ու Քսենիան մեծացան միայն մեկուկես տարով: Դա վկայում է, թե որքան բարդ էր բարեպաշտ Յուստինի ու Գլիկերիայի դաստիարակչական գործը:

Նրանք արդարացիորեն որոշել էին, որ այդպիսի դեպքերում պետք չէ շտապել, և Պարֆենիի ու Քսենիայի ժամանակի բնական հապաղումը ոչ մի դեպքում պետք չէր արհեստականորեն հաղթահարել: Յուստինն ու Գլիկերիան նկատել էին, որ մանկության ժամանակն անշտապ է: Այդ հայտնագործությունը նրանց թույլ տվեց հատուկ եղանակով հաշվել Պարֆենիի ու Քսենիայի տարիները՝ դրանք բաժանելով երեքի, երբեմն՝ նաև չորսի: Դա, իհարկե, նրանց ստիպում էր ավելի երկար մնալ իշխանության ղեկին, քան նախատեսված էր, բայց ինչ արած, այդպիսի մարդիկ էին ու չէին կարող թերդաստիարակված թողնել իրենց խնամարկյալներին:

Եթե պատշաճ դաստիարակության համար պետք լինի հարյուր տարի, երբեմն ասում էր Յուստինը, ուրեմն այդքան էլ կջանանք:

Իմ համոզմամբ՝ պետք չէ համեմատել տարբեր մարդկանց ժամանակները կամ ասել՝ սա երկար է ապրել, իսկ այ սա՝ ոչ: Յուրաքանչյուրն ապրում է այնքան, որքան իրենից պահանջվում է կյանքի նպատակին հասնելու համար: Բոլորին է հայտնի, թե ինչ խառնաշփոթ է սկսվում, հենց սկսում ենք խոսել ժամանակի, տարիքի և

այդ կարգի հանգամանքների մասին: Անմիջապես պարզվում է, որ յուրաքանչյուրն իր ժամանակն ունի, և այդ պատճառով էլ մարդիկ դժվարությամբ են ընդհանուր լեզու գտնում:

Ահա թե ինչու՝ բոլորը չէ, որ գիտեն իրենց տարիքը: Չէ՞ որ հազվագյուտ չեն ընտանիքները, որտեղ ոչ մեկի տարիքը չգիտեն, թեև պատկերացնում են, ասենք, ով է տան մեծը: Իսկ եթե անտեղյակ են լինում նաև դրան, ապա տարիքի վերաբերյալ պայմանավորվում են: Ժամանակը լավ է նրանով, որ նրա շուրջ միշտ կարելի է պայմանավորվածության գալ:

Իմաստնագույն Յուստինի կառավարման քսաներորդ տարում նա նապաստակի որսի էր: Ու դեռ չէր հասցրել թակարդ դնել, երբ երկնքից մի հսկա օձ ընկավ, ու բոլորը սարսափեցին: Եվ որոտ եղավ, և հեծեծաց հողը, և մարդիկ դեսուդեն փախան: Եվ հասկացավ իշխանը, որ դա վերին նշան էր, որպեսզի խորշի այլևս նապաստակի որսից՝ այդպիսի անբարեպաշտ զբաղմունքից: Եվ այդ օրվանից այլևս որսի չէր գնում:

Վեհանձնագույն Յուստինի կառավարման քսանհինգերորդ տարում Կղզի ժամանեց հելլեն փիլիսոփա Եվսեբիոսը: Իշխանի սրբակյաց վարքը տեսնելով՝ Եվսեբիոսը փոխեց իր մտաց կարգը և մկրտություն ընդունեց: Աղքատ մարդ չէր նա և 300 դինար ընծայեց իշխանին՝ Կղզու բարեկարգման համար: Անարծաթ Յուստինը, իր ժողովրդի հանդեպ սիրուց մղված, մինչև վերջին դինարն անհապաղ ծախսեց բարի գործերի վրա, իսկ Եվսեբիոսին հրովարտակ հանձնեց՝ խոստումով, որ նվիրաբերած փողերը մյուս աշխարհում հարյուրապատիկ կվերադառնան:

Մեկ տարի անց Եվսեբիոսը հանկարծամահ եղավ, և երբ թաղում էին, ափերի մեջ դրվեց վերոնշյալ հրովարտակը: Մի քանի շաբաթ անց նա երազում հայտնվեց Յուստինին և ասաց. հե՛տ առ քո հրովարտակը: Եվ այդ ժամանակ բացեցին գերեզմանն ու Եվսեբիոսին նստած գտան՝ գալարափաթեթը ձեռքին: Բայց երբ փորձեցին վերցնել, հանգուցյալը ոչ մեկին չտվեց՝ միայն իշխանին պահանջելով: Երբ Յուստինը վերցրեց գալարափաթեթը, Եվսեբիոսը

կրկին պառկեց: Եվ բոլորը տեսան գրվածը. *ես՝ Եվսեբիոս Փիլիսոփաս, իմ ձեռաց գրով հավաստում եմ բարեպաշտ իշխան Յուստինին, որ հարյուրապատիկ ստացել եմ պարտքը:* Տեղեկանալով այդ զարմանալի իրադարձության մասին՝ շատ ունևոր մարդիկ առանց վախի և, կարելի է ասել, ուրախությամբ փող էին տալիս իշխան Յուստինին:

Յուստինի կառավարման քսանվեցերորդ տարում օձը սողաց գինու սափորի մեջ ու խմեց ողջ գինին: Եվ դրանից այնպես ուռավ, որ չկարողացավ դուրս գալ: Իսկ երբ սափորը բերեցին իմաստնագույն Յուստինին, իշխանը հեզ ժպիտով ասաց օձին.

Նախ վերադարձրու մեզ քո խմած գինին, և միայն այդ ժամանակ կկարողանաս դուրս գալ:

Որոշ ժամանակ անց փսխելով գինին՝ օձը ազատվեց: Իսկ այդ ամենին ականատես մարդիկ բերանքսիվայր գետին ընկան և փառաբանում էին իշխանի մեծ իմաստնությունը:

Յուստինի կառավարման երեսուներորդ տարում մեծ դժբախտություն պատահեց. սեպտեմբերի մի գիշեր հրդեհ բռնկվեց իշխանական Պալատում: Կրակը երկար մարում էին, ու երբ վերջապես հաջողվեց, իշխանի ննջարանում երկու ածխացած մարմին գտան: Այդպես վառվեցին բարեպաշտության երկու լուսատուները, և ննջարանը դամբարան դարձավ նրանց համար:

Պարֆենի

Պրոկոպիի տարեգրության մեջ ամեն ինչ չէ, որ պետք է կեղծիք համարել: Պրոկոպին իրավացիորեն նշում է, որ ամեն մարդ իր ժամանակն ունի, որը կարող է փոփոխվել նրա կյանքի տարբեր շրջաններում: Իրավացի է նաև այն հարցում, որ ամեն մեկին ժամանակի տևողությունն ու ռիթմը տրվում է ըստ պահանջմունքի: Երբեմն շատ ավելի ժամանակ է պետք ինչ-որ բան հասկանալու կամ, հակառակը, ուրիշին բացատրելու համար:

Այո՛, բոլոր մարդիկ ունեն ընդհանուր ժամանակ, բայց այն ավե-

լին չէ, քան կետագիծ, որով միանում են մեր անձնական ժամանակները: Դրա համար էլ ոմանք ապրում են քսան տարի, ոմանք էլ՝ երկուհարյուր: Կամ ինը հարյուր: Նրանց անձնական ժամանակն իրականություն է, իսկ ընդհանուր ժամանակը՝ զուտ պայմանականություն: Ցանկություն՝ ձևացնելու, որ ամեն ինչ փոխկապակցված է: Նույնիսկ մի տեսակ անսպասելի է, որ Պրոկոպին հասկանում էր դա:

Ինչ վերաբերում է Յուստինի ու Գլիկերիայի՝ հնարավորինս երկար իշխելու ապօրինի ձգտմանը, ապա այն զարմանալիորեն չէր չեղարկում նրանց հաշվարկների իրավացիությունը: Ես և Քսենիան, ասես զգալով (նա որ հաստատ զգում էր), որ մեր կյանքը մի փոքր կերկարի, չէինք շտապում մեծանալ:

Ի տարբերություն այլ տարեգիրների՝ Պրոկոպին ձգտում էր մոտ լինել իշխանական պալատին՝ բացատրելով նրանով, որ իրեն, որպես պատմաբանի, անհրաժեշտ է տեղեկություն ստանալ սկզբնաղբյուրից: Նույնիսկ ժամանակ առ ժամանակ իշխանին ցույց էր տալիս գրածը, ինչը, ուղիղ ասենք, դժվար է բացատրել որևէ անհրաժեշտությամբ:

Պրոկոպին արդարանալով ասում էր, որ այդպես է վարվել սրտի թելադրանքով, ուժ չունենալով թացնելու իր սերը իշխանական անձերի հանդեպ: Ասենք, ինչպես ցույց տվեց Պրոկոպիի գաղտնի ձեռագիրը, նրա սրտի թելադրանքն օրվա ընթացքում կարող էր անճանաչելիորեն փոխվել:

Այո՛, ինչ-որ երկակիություն կար Պրոկոպիի մեջ, չէ՞ որ նույնիսկ *Ճշմարիտ պատմությանն* անծանոթ ժամանակակիցները նրան *երկլեզու մարդ* էին անվանում: Գեղարվեստական արտահայտությունների մեծ մասի հանգույն՝ այդ պատկերն ուշադրության չէր առնում իրականությունը, քանզի պատմիչը, ինչպես հայտնի է, ընդհանրապես լեզու չուներ: Արտալեզվական առումով էլ իրականությունը միանշանակ չէր, ինչպես առաջին հայացքից է թվում: Լիբերալիզմը Միջնադարի ուժեղ կողմը չէր, իսկ նույն Պրոկոպիի փորձը վկայում է, որ երբեմն մի լեզուն էլ շատ է:

Հասկանալի է, որ Պրոկոպիի պատմության երկու վարկածների

այդպիսի արմատական տարբերությունն անբարենպաստ տպավորություն է թողնում: Երկու պատմությունները, թվում է, պետք է փոխլրացնեին իրար, բայց դրանց միակցումից ճշմարտության ծավալը չի աճում, քանզի ոչ մեկը, ոչ մյուսը խնդիր չեն դարձնում ճշմարտության որոնումը: Դա փոքր-ինչ տարբերվում է նրանից, ինչին մենք (նկատի ունեմ ինձ ու Քսենիային) վարժվել էինք Միջին դարերում:

Այդ հեռավոր դարաշրջանում պատմությունը գերազանցապես պատմություն էր, որովհետև պակաս կանխակալ էր նայում իրողություններին: Իսկ ժամանակակից պատմական միտքը ձևավորվում է նկարագրվող իրադարձություններից հեռու հանգամանքներով: Այն կախված է քաղաքական նպատակահարմարությունից, ինչը պատմական աշխատությունը վերածում է պայքարի գործիքի: Ահա թե ինչու այսօրվա պատմաբանը այս կամ այն չափով իրադարձությունների մասնակից է, և նրա հայացքը՝ հայացք կողքից: Իսկ Միջնադարի պատմաբանը վերևից էր նայում:

Պրոկոպի Ռնգախոսը վերևից չէր նայում, հետևաբար առաջ էր անցել իր ժամանակից: Գուցե հենց այդ պատճառով *Կղզու Պատմության* հրատարակիչները որոշեցին իշխան Յուստինի մասին գլխի հավելվածում հրապարակել նաև *Ճշմարիտ պատմությունը:* Ճիշտ որոշում է:

Ուշագրավ է, որ պաշտոնական պատմության մեջ ինքը՝ Պրոկոպին ճշմարիտ է համարում միայն Քսենիայի և իմ մասին պատումը: Քանի որ նա համակրանքով է գրում մեր մասին, դա ինձ, չեմ թաքցնում, հաճելի է: Իմ սրտագին ողջույնն եմ հղում անդրաշխարհի այն մասը, որտեղ նա հիմա գտնվում է (այստեղ հնարավոր են տարբերակներ):

Չորրորդ գլխի հավելված
Իշխան Յուստինի ճշմարիտ պատմությունը՝ գրված Պրոկոպի Ռնգախոսի ձեռքով

Այո՛, ամուր գրիչ պիտի ունենա, ով պատրաստվում է նկարագրել Յուստինի ու Գլիկերիայի արարքները: Արարքներ-չար արարքներ:

Այդպիսի նկարագրություններից ցանկացած գրիչ կարող է կոտրվել: Ես Աստծուց մերժված այդ զույգի մասին գրում եմ գիշերները, երբ ոչ ոք չի տեսնում: Ցերեկային բոլոր ներբողյաններից հետո գրում եմ, թե ինչ օձեր են՝ մարդկային կերպարանք առած:

Չնչին մասը, որ ճշմարիտ է տարեգրության մեջ, իմ բառերն են երեխաների՝ Պարֆենիի ու Քսենիայի մասին: Այդ բառերից ես՝ անարժանս, այստեղ էլ չեմ հրաժարվում: Մանուկները չեն կարող չսիրվել, հատկապես Քսենիան, արտասովոր և տարօրինակ երեխա, որին հասու է անիմանալին և տեսանելի՝ անտեսանելին: Նա միշտ խուսափում է մանկական զվարճանքներից, ինչպես դրանցից մանուկ հասակում խույս են տալիս միայն սրբերը: Եթե Պարֆենիին ու Քսենիային երբևէ վիճակվի իշխանական գահ բարձրանալ, բարեգութ և իմաստուն տիրակալներ կլինեն: Ոչ այնպիսին, ինչպիսին Յուստինն ու Գլիկերիան են:

Յուստին: Անուղեղ անառակ, կաշառակեր ու բռնակալ: Որոշվել էր, որ մանուկների ծնվելուց հետո մեկ տարով Կղզու տիրակալ է դառնում եպիսկոպոս Ֆեոֆանը: Յուստինը այդ մի տարին էլ հանդուրժել չէր կարող՝ սկսեց անխնա նեղել Ֆեոֆանին:

Զրուցում էր հետը, համոզում, ապացուցում, որ մի տարուց, մեկ է, ինքը ռեգենտ է լինելու, ուրեմն ինչու ձգձգել, ավելի լավ չի՞ միանգամից իշխանությունը փոխանցի իրեն՝ Յուստինին: Եպիսկոպոսը լուռ լսում էր, պարզապես նայում նրան ու շարժում հոնքերը, իսկ մի ամսից նույնքան լուռ թողեց իշխանական Պալատն ու վերադարձավ իր մենաստանը:

Գլիկերիա: Հազվագյուտ պոռնիկ, և դա լավագույնն է, որ կարելի է ասել նրա մասին, որովհետև որոշ իմաստով Գլիկերիան նույնիսկ ամուսնուց վատն էր:

Եթե որևէ մեկն իմանա, որ գրում եմ այս ամենը, դրանից հետո մի ժամ էլ չեմ ապրի: Բայց հենց դրանով էլ գրելը ձգում է արտակարգ ուժով, ու չեմ կարողանում դիմադրել: Ասենք, մեր սերունդների համար էլ է ցավում սիրտս. որ կարող է հավատան այդ բոլոր հորինվածքներին, որոնք ստիպված դրել եմ տարեգրության մեջ:

Օրինակ, Պարֆենիի առաջին բառերի մասին: Ինձ հայտնի մանկանցից ոչ մեկը չի սկսել *հայր* և *մայր* բառերից: Դրա համար գոյություն ունեն *մայրիկ* ու *հայրիկ* բառերը. և հենց այս հերթականությամբ:

Գլիկերիա նշանակում է քաղցր... Նրա քաղցրությունը փորձել էին դեռևս տասնչորս տարեկանից, և, նկատեմ, շատ շատերը, քանի որ Կղզու պատմության մեջ երկրորդ այդպիսի բ... չկար: Կարելի է մտածել՝ արտահայտություններս անթույլատիորեն թունդ են, բայց այդպես չէ: Ինչպես էլ արտահայտվեմ, համոզված եմ, չափազանց մեղմ են լինելու:

Նա իր մարմինը վաճառում էր փողոցներում ու հրապարակներում, տոհմիկների տներում ու զորանոցներում: Հատկապես՝ զորանոցներում, ուր նրան ձգում էր մասնակիցների թիվը, և նա վերջինն էր, որ հոգնում էր այդ խրախճանքներից: Իսկ երբ զինվորները փող չէին ունենում, որ վճարեն նրա պատրաստակամ մարմնի համար, ձրի էր տալիս: Եվ կսխալվի նա, ով դա կբացատրի անշահախնդրությամբ, քանզի միակ բացատրությունը նրա անհագ տռփանքն էր:

Կղզու ամենահմուտ անառակներն անգամ ապշում էին սիրային զվարճանքների բնագավառում նրա ունեցած գիտելիքներից և խղճուկ անգետներ էին զգում իրենց նրա ներկայությամբ: Ժամանակ առ ժամանակ, երբ Գլիկերիան զգում էր, որ հղի է, բոլոր իրեն հայտնի եղանակներով փորձում էր ազատվել պտղից: Երկու անգամ չէր հաջողվել, և նա ծննդաբերել էր:

Թե ինչ եղան այդ երեխաները, հայտնի չէ: Խոսում են միայն, որ տարիներ անց, երբ նա արդեն իշխանուհի էր, Պալատի դարպասներին էր մոտեցել մի մարդ, որը պնդում էր, թե նրա որդին է: Պահնորդները ցանկացել էին վռնդել, բայց Գլիկերիան թույլ չէր տվել: Հակառակը, հրամայել էր այդ մարդուն ուղեկցել գետնահարկերից մեկը, որտեղ իբր պատրաստվում էր զրուցել նրա հետ: Այլևս ոչ ոք այդ մարդուն չտեսավ:

Խոսելով այն մասին, որ կյանքում Գլիկերիային անշահախնդրությունը չէր առաջնորդում, հիշեցնեմ միայն, որ հենց նա է Կղզում

հիմնել հասարակաց տները, որոնց եկամուտներն էլ անձամբ էր տնօրինում: Այդ հաստատությունները դառը հեգնությամբ բարեպաշտության տներ էին կոչել, որտեղ իբր վերադաստիարակվում էին սիրո քրմուհիները:

Երբ այդպիսի տներից մեկում հղիացան միանգամից երեք վերադաստիարակվածներ, և ամբողջ Կղզին իմացավ դրա մասին, Գլիկերիան անձամբ գլխավորեց հետաքննությունը: Կասկածն ընկավ 92-ամյա դռնապան Եվլամպիի վրա: Հրապարակային դատաքննության ժամանակ Եվլամպին չհիշեց ոչ միայն կանանց, որոնց հետ իբր շնացել էր, այլ նույնիսկ, թե դա ինչպես է արվում:

Սակայն հղիացածները հիշում էին նրան ու հայտարարեցին, որ իրենց մոլորեցնելիս վերին աստիճանի կայտառ ու հնարագետ է եղել: Նայելով Եվլամպիին, որը քամու բերան ընկած չոր ծյուղ էր հիշեցնում, շատերը կասկածեցին նրա համառամտությանը: Մոլորեցնողի արցունքոտվող աչքերը կենտրոնացել էին մոտակա ամպի վրա: Ողջ տեսքը վկայում էր, որ վատ է հասկանում տեղի ունեցողը: Եվլամպին մեղավոր ճանաչվեց ու մահապարտվեց:

Բայց ինչ ենք խոսում Եվլամպիի մասին, երբ Գլիկերիան բազմիցս փորձել էր սպանել իր սան Պարֆենիին: Բարեբախտաբար Պահապան հրեշտակն ամեն անգամ նրա ձեռքը վանել էր պատանուց: Այդպիսի ամենահայտնի դեպքը դանակախաղն էր, երբ իշխանուհին տղաներից մեկին դրդել էր դանակը նետել Պարֆենիի վրա: Գլիկերիան դա բացատրել էր նրանով, որ Պարֆենին շապիկի տակ օղազրահ է կրում (չնայած՝ ո՞վ է օղազրահ կրում շապիկի տակ), ու նրան ոչինչ չի պատահի, այն դեպքում, երբ իշխանը պետք է վարժվի ցանկացած անակնկալի, ու որ դանակ նետելը լավագույն դեղն է հանրահայտ պատանեկան անդյուրաշարժության դեմ: Ուղեղները լվանալու մեծ վարպետ էր այդ Գլիկերիան:

Իսկ երբ Կղզու մյուս ծայրից հասած Քսենիայի ճիչը կանխեց սպանությունը, իշխանուհին շտապեց կտրել դանակ նետած տղայի գլուխը, ընդ որում, դահճին սպասելիս ակնհայտ կերպով փակել էր նրա բերանը: Չէր սպասում միայն, որ նույնիսկ կտրած վիճակում

գլուխը կխոսի: Արյունից կարմրած աստիճաններին (կառափնարան չունենալու պատճառով մահապատիժը կատարվում էր սանդուղքի վրա), մանկական վտիտ մարմնի կողքին ընկած գլուխը պատմեց և՛ Գլիկերիայի խնդրանքի, և՛ օղազրահի, և՛ էլի ուրիշ բաների մասին:

Զարմանալի՛ է, ճչաց Գլիկերիան, զարմանալի է, թե ինչ հիմարություններ է դուրս տալիս այս գլուխը: Այս պատանին անկասկած խելագար է:

Իհարկե, պարզապես գլուխը կորցրել է՝ ձայնում էին քծնողներն ու հացկատակները՝ նայելով, թե արյունն ինչպես է սրտազարկերի հետ շնչերակից հորդում աստիճաններին:

Եվ ոչ ոք չէր համարձակվում փակել գլխի բերանը, և այդ ժամանակ դեպի սանդուղքը նետվեց Գլիկերիան, որը ոչ միայն խոսող գլուխներից, այլև անձամբ աշխարհի իշխանից չէր վախենում: Երբ կռացավ գլխի վրա, ոտքը սայթաքեց արնաներկ աստիճանին: Ընկնելով՝ իշխանուհին ճակատով խփվեց կտրած գլխին, և ճակատն ալ կարմիր ներկվեց: Ասում են, որ քառասուն օր արյունը չէր մաքրվում ճակատից, հակառակ դեպքում ինչո՞վ բացատրել, որ նա այդ ընթացքում չլքեց Պալատն ու ոչ մեկի աչքին չերևաց:

Ատո՞ւմ էր, արդյոք, Գլիկերիան Պարֆենիին: Կարծում եմ, որ՝ ոչ, նույնիսկ երբ ուզում էր սպանել: Հեշտասիրությունից հետո նրա գլխավոր կիրքը իշխանատենչությունն էր, իսկ մնացած կրքերը, այսպես թե այնպես, գլխավորների շարունակությունն էին: Պարֆենին հեզ ու հնազանդ երեխա էր և ինքնին սպանելու ցանկություն չէր արթնացնի Գլիկերիայի մեջ, բայց կանգնած էր իշխանության տանող ճանապարհին, և դա նրա մեծագույն մեղքն էր:

Համոզված եմ, որ Գլիկերիան ի վերջո առանց տատանվելու կսպաներ Պարֆենիին, բայց մտափոխվեց, երբ նկատեց, որ պատանին ուրիշ ժամանակով է ապրում, շատ ավելի արձակ ու տևական, քան իրենն է: Եվ Գլիկերիան հասկացավ, որ Պարֆենին ոչ թե խոչընդոտ է իր համար, այլ պաշտպանություն:

Պարֆենիի ժամանակը նրա իշխանությունը հեռավոր իրադարձություն էր դարձնում, այն դեպքում, երբ նրա մահը բոլոր իշխան-

ներին կրկին կվերադարձներ տիրակալության համար պայքարին, որին կմիանար նաև հասարակ ժողովուրդը, իսկ ժողովուրդը (և այստեղ Գլիկերիան առանձնակի հույսեր չէր փայփայում) իր ու Յուստինի կողմը չէր լինի:

Գրածս վերընթերցելով՝ ուղղում եմ ինձ այն իմաստով, որ իշխանատենչությունը նրա մեջ, համենայնդեպս, տռփանքից ուժեղ էր: Այսպես, թե այնպես, այդ երկու կիրքը, միավորվելով, նրան տարան անօրինակ բարձունքների:

Նախ բոլոր միջոցներով շահեց Յուստինի այն ժամանակված կնոջ՝ չբերությամբ տառապող իշխանուհի Ագաֆյայի վստահությունը: Դժբախտին հավատացնում էր, որ հեշտությամբ կբուժի նրա անպտղությունն ու դրանով կվանի ամուսնուց մերժվելու վտանգը: Ասելով, որ պետք է հատուկ բուրախոտեր ծխել իշխանական ննջարանում, Գլիկերիան Ագաֆյային ուղարկեց խոտերի թուրմով լոգանք ընդունելու՝ զգուշացնելով իշխանուհուն, որ անհրաժեշտ պահին կգա նրա ետևից:

Ինչպես և նախատեսել էր՝ Յուստինը մտավ ննջարան, որտեղ սպասում էր կեղծ հեքիմը: Ի տարբերություն բուսաբուժության, որին Գլիկերիան ծանոթ չէր, սիրային հարցերում նրա համար գաղտնիքներ չկային: Իշխանի անկողնապետը պատմում էր, որ Գլիկերիայի շարժումներն անպարկեշտ էին, բայց ավելի անպարկեշտ էր նրա հայացքը: Հենց այդ հայացքն էր բորբոքել Յուստինին, և նրա ու Գլիկերիայի միջև կատարվեց այն, ինչին միամիտ Ագաֆյան, որը վաղուց պառկած էր սառը ջրի մեջ, ոչ մի կերպ չէր սպասում: Այդ գիշեր Յուստինի հետ անկողինն արդեն Գլիկերիան էր կիսում, իսկ Ագաֆյան այլևս այդ անկողին չվերադարձավ: Ասում էին, որ Գլիկերիան կախարդել է Յուստինին, չնայած ավելի ճշմարտանման է թվում, որ իշխանն առաջին հերթին կախարդվել էր նրա անկողնային հմտություններով:

Ագաֆյան էլի մի շաբաթ ուրվականի պես շրջում էր Պալատում: Երեկոյան ժամերին կանգնում էր ննջարանի դռան տակ և արցունք թափելով մնում այնքան ժամանակ, մինչև օրերից մի օր Գլիկերիան

արծաթե աշտանակով չխփեց դեմքին: Հարվածից ջարդվեց Ագաֆիայի քիթն ու պատռվեց հոնքը, և արցունքները խառնվեցին արյանը:

Այդ վիճակում էլ նրան ննջարանի դռան տակ գտավ իշխան Յուստինը: Գլիկերիան նրա ներկայությամբ մի անգամ էլ խփեց Ագաֆյային՝ ջնջխելով շրթունքն ու փշրելով առջևի ատամները: Եվ շարունակում էր խփել ու խփել դժբախտին՝ նշան բռնելով աչքին, որ շլվի, բայց իշխանը կանգնեցրեց այդ դժոխքի վիժվածքին:

Եվ այդ ժամանակ Գլիկերիան գոռաց, որ նա անհապաղ պետք է մահապարտի նախկին կնոջը, քանի որ Ագաֆյան օր ու արև չի տա իրենց: Բոլորը վախենում էին, որ Յուստինը, վերջնականապես ընկնելով Գլիկերիայի ազդեցության տակ, հենց այդպես էլ կանի, բայց նա, չցանկանալով կնոջ, թեկուզ և նախկին կնոջ մահը ու հրամայեց վանք դնել նրան:

Իսկ Ագաֆյան, արցունքն աչքերին, իր երախտիքն էր հայտնում նրա մեծահոգության համար և կրկնում, թե ինքը, անատամ, ի՞նչ կին է պայծառափայլ իշխանի համար, և խինդ ու բարօրություն էր մաղթում նրան Գլիկերիայի հետ, քանզի իր տիրակալի երջանկությունն իր համար վեր է ամեն ինչից:

Մի քանի օր անց Յուստինը եպիսկոպոս Ֆեոֆանից պահանջեց, որ իրեն պսակի Գլիկերիայի հետ: Բայց Ֆեոֆանը պատասխանեց, որ այդ միությունը մեղսական է, և նա չի ստանա եպիսկոպոսական օրհնությունը: Յուստինը պղնձե հայացքով նայեց եպիսկոպոսին, բայց ոչինչ չասաց, և բոլորը չար նշան տեսան այդ լռության մեջ:

Վատթարագույն ենթադրությունները հաստատվեցին, քանզի մեկ շաբաթից Ֆեոֆանը հանկածակի վախճանվեց, ու եպիսկոպոս կարգեցին Ֆիլարետին: Եվ անբարբառ ստրուկ էր նա, և կատարեց պսակադրությունը: Իսկ Գլիկերիան պատժվեց իր չարագործության համար, քանզի, Ագաֆյայի հանգույն, այդպես էլ չկարողացավ հղիանալ: Չափից դուրս շատ հղիություններ էր ընդհատել, որպեսզի ունակ լիներ ծննդաբերելու:

Ֆեոֆանից հետո տուժեց նաև քաղաքագլուխ Ամբրոսին, որի անձնազոհությունը ժանտախտի ժամանակ բազում կյանքեր էր

փրկել: Ի տարբերություն մյուս կառավարիչների՝ նա ոսկի չէր բերում Յուստինին, որ իր պաշտոնին մնա: Ժանտամահի օրերի նրա մեծագործությունը չէր ջնջվել հայրենակիցների հիշողությունից, այլ միշտ թարմ էր, բացի այդ, նա շարունակում էր անբասիր կատարել քաղաքագլխի պարտականությունները:

Ամբրոսիից ընծաներ չստանալով՝ Յուստինն ավելի ու ավելի էր գրգռվում: Չեմ խոսում արդեն այն մեծ խանդի մասին, որ իշխանն ուներ ժողովրդի կողմից սիրված քաղաքագլխի հանդեպ: Այս ստորագույն զգացումների մղումով Յուստինը վաղուց արդեն Ամբրոսիին պաշտոնանկ անելու առիթ էր փնտրում: Եվ իրականում չգտնելով՝ հորինեց այդ առիթը:

Այդ ժամանակ հայտնի դարձավ, որ վանքից անհետացել է փայլաքարերով զարդարված Իշխանական Աստվածաշունչը, որի վրա իշխանները երդվում էին գահ բարձրանալիս: Աստվածաշնչի կորստյան մեջ մեղադրվեց Ամբրոսին: Մեղադրանքի համար հիմք էին դարձել երկու վանականների ցուցմունքները, որոնք իբր տեսել էին՝ թեմական ինչպես է գիշերվա քողի տակ թանկարժեք գիրքը դուրս բերում վանքից:

Վկաներից մեկը վանական տնտեսն էր, որն ընդունակ էր վկայելու ում առաջ ասես և ինչի մասին ասես, բարեպաշտությանն օտար և արծաթասեր մի մարդ, որը սուրբ ոչինչ չուներ հոգու մեջ:

Երկրորդ վկայող վանականը ես էի...

Ինձ համար դժվար է խոստովանել այդ սուտը, բայց ինչ արած: Երբ Յուստինն ինձ հարցրեց՝ արդյոք չե՞մ տեսել Ամբրոսին ինչպես էր վանքից դուրս բերում Իշխանական Աստվածաշունչը, պատասխանեցի, որ չեմ տեսել: Նաև հարցրի՝ քաղաքագլուխն ինչպե՞ս կարող էր գիշերով հայտնվել վանական գրապահոցում: Իշխանը լռեց, ապա ասաց.

Իսկ ուրիշ էլ ո՞վ կարող էր գիշերով հայտնվել անտեղ: Միայն դու: Պահոցից գիրքը կարող էիր հանել միայն դու, և հայր տնտեսը կարող է հաստատել, թե դա ինչպես է եղել:

Կարո՞ղ էի սուտ վկայություն չտալ:

Կղզիաբանակներին հավաքելով Գլխավոր հրապարակում՝ Յուստինն ի լուր ամենքի հայտարարեց, որ քաղաքագլխի գործողությունները միշտ ուղղված են եղել Կղզու ոչնչացմանը՝ ամբողջովին ջրասույզ անելու միջոցով, իսկ այս աղաղակող դեպքը Ամբրոսիի հանցագործությունների շղթայի օղակներից մեկն է: Յուստինը նշեց, որ այդ օղակը հանգուցային է, քանզի հիմա ինչի՞ վրա են երդվելու իշխանները գահ բարձրանալիս: Ստացվում էր, որ նրանք այլևս գահ էլ չեն կարող բարձրանալ, և Յուստինը ստիպված է մնալ գահին, հակառակ իր՝ Յուստինի ցանկության: Լսելով այդ՝ ես հասկացա Յուստինի մտահղացման ողջ թափը:

Ամբրոսիին պատրաստվում էին մահապարտել, սակայն դատավճռի արձագանքը զայրույթի փոթորիկն էր, որ անմիջապես բարձրացավ հրապարակում: Իր ժողովրդին առաջին անգամ այդպիսին տեսնելով՝ Յուստինը շտապեց չեղարկել դատավճիռը, և դա մի քիչ հանգստացրեց մարդկանց:

Գլիկերիան նրան խորհուրդ տվեց գաղտնի գլխատել քաղաքագլխին, բայց իշխանը վախեցավ անշրջելի գործողություններից, քանզի հասկանում էր, որ ամբոխը օրերից մի օր կարող է պահանջել ցույց տալ կենդանի քաղաքագլխին: Ամեն դեպքում, Ամբրոսիին մահապատժի չենթարկեցին: Նույն երեկոյան նրան կուրացրին ու տեղափոխեցին Կղզու հարավ: Այդ մարդու հետագա ճակատագիրն ինձ անհայտ է:

Հետո արդեն, մահվան մահճում, վանական եղբայրների առաջ հայր տնտեսը խոստովանեց, որ Յուստինի գաղտնի պահանջով Իշխանական Աստվածաշունչն ինքն է դուրս բերել վանքից, ինքն էլ տարել է Պալատ, ապա սուտ վկայություն տվել Ամբրոսիի դեմ:

Յուստինն ու Գլիկերիան, որոնց այլ կերպ, քան սադայելի ծնունդ չես կոչի, ամեն դեպքում տարբեր կերպ էին նողկալի: Գլիկերիան, ինչպես արդեն ասվել է, տռփանքի մարմնացում էր, իսկ Յուստինը բռնված էր արծաթասիրության ախտով: Իրեն Կղզու գերագույն դատավոր նշանակելով՝ նա հաստատում էր իրեն վստահված երկրում կայացված ցանկացած դատական վճիռ: Եվ հաստատում էր միայն

կաշառք ստանալով՝ նախապատվությունը տալով դատաքննության այն կողմին, որն ավելի շատ փող կբերեր: Եվ դա անհասկանալի ու զարմանալի էր բոլորին, քանզի դեռ երբեք այդպիսի բան չէր եղել Կղզում, որ իշխանը կաշառակեր լիներ:

Եվ ահա միտք արեց Յուստինը՝ փող պահանջել հարուստներից, իբր բարի գործերի համար, խոստանալով, որ մյուս աշխարհում հարյուրապատիկ կստանան իրենց նվիրատվությունը: Նման մի բան փիլիսոփա Եվագրիոսի հետ իսկապես կատարվել էր Ալեքսանդրիայում, և իշխանը դրա մասին իմացել էր իմ բերած ձեռագրից: Այդ պատմությունն այնքան դուր եկավ նրան, որ ինձ կարգադրեց գրի առնել առանձին թերթի վրա և նվիրատու (զո՞հ) ընտրելուց հետո, նրա համար կարդում էր այդ պատմությունը, ապա փող պահանջում: Չգիտեմ՝ բոլո՞րն էին հավատում գրածին, բայց ոչ ոք նվիրատվությունից չհրաժարվեց:

Այս տողերը գրում եմ մեծ հրդեհից մի քանի օր անց, որին ճարակ դարձան բոլորին ատելի Յուստինն ու Գլիկերիան: Ասում են, որ Պալատը կրակ էին տվել հինգ տեղից, և դրան հեշտ է հավատալ: Հատկանշական է, որ վառվեցին իրենց ննջարանում, որտեղ սկիզբ էր առել նրանց մեղսական միությունը:

Յուստինի և Գլիկերիայի զարհուրելի մահից երեք տարի առաջ մի նշանակալի դեպք կատարվեց, որը շատերը կատակով կոչում էին *Յուստինի և օձի հրաշքը:* Ես այն անձամբ Յուստինի հրամանով նկարագրել եմ տարեգրության մեջ: Այդ թուլամիտին թվում էր, թե դեպքը վառ արտացոլումն է իր իմաստնության: Իրականում դա նրա և Գլիկերիայի տիրապետության մարմնացումն էր:

Նրանք երկգլխանի օձ էին, որ ծծել էր կղզու բոլոր հյութերը. ննջարանի հետնագաղտնարանում ոսկեդրամներով բազմաթիվ սնդուկներ հայտնաբերվեցին: Սնդուկներից մեկի վրա դրված էր հրաշափառ կերպով կրակից փրկված Իշխանական Աստվածաշունչը: Գուցե և մեղք է այսպես խոսել, բայց ասեմ. մնում է միայն ուրախանալ, որ ի տարբերություն սափորի օձի՝ Յուստինն ու Գլիկերիան այլևս երբեք դուրս չեն սողա իրենց գերեզմանից:

Գլուխ հինգերորդ
ԵՎՍՏԱՖԻ

Յուստինի ու Գլիկերիայի մահվանից հետո մանկահասակ Պարֆենիի ռեգենտ դարձավ Միխաիլի և Յուստինի կրտսեր եղբայրը՝ բարեմիտ իշխան Եվստաֆին:

Եվստաֆիի առաջին տարում ինչ-որ ծովագնացներ տարաշխարհիկ ձկներ բերեցին՝ իշխանին նվեր: Եվստաֆին, ցանկանալով տեսնել ձկները, իջավ Պալատին կից մարմարյա ջրավազանի մոտ, ընկավ ջուրն ու խեղդվեց: Եվ նրա կառավարման ժամանակը երեք օր էր:

Պարֆենի

Գրառումը կարճ է՝ կարծես նույնիսկ անհարիր Պրոկոպի Ռնգախոսի շատախոս ոճին: Մյուս կողմից՝ ինչքա՞ն կգրես այսպիսի դեպքում: Ոմանք կարող են ասել, թե ավելի դյուրին կլիներ ընդհանրապես ոչինչ չգրել, որ կառավարման երեք օրը հաշիվ չի. ու կսխալվեին: Բանն այստեղ Եվստաֆին ու նրա երեք օրերը չեն. դա իսկապես որևէ պատմական նշանակություն չունի:

Եվստաֆիի կառավարումն առանձին հիշատակելու իմաստն այլ է: Միջնադարը չէր հանդուրժում օղակների բացակայություն ժամանակագրական շղթայում: Ցանկացած շղթայի՝ լինի օլիմպիադա, որոնցով թվագրվում էին իրադարձությունները որոշ տարեգրություններում, լինեն կայսրեր կամ շարքային տարրեր: Կորսված օղակները խախտում էին ժամանակի ամբողջականությունը, որը

կազմակերպում է Աստծո աշխարհը և նախադրում հավերժությունը: Ռուսներն ու իռլանդացիները նույնիսկ *փուչ* տարիներ էին նշում. որոնք անցել էին առանց իրադարձությունների: Այսինչ տարի. ոչինչ չի եղել: *Եվ՝ լռություն:*

Պրոկոպի Ռնգախոսի՝ ոչ ռուսի և նույնիսկ ոչ իռլանդացու, փուչ տարին այսօր բոլորից մոռացված իշխան Եվստաֆիի մասին գրառումն է: Այո՛, կրկնում եմ, տեքստը Պրոկոպիի համար արտասովոր կարծուկտրուկ է: Հնարավոր է, որ տարեգիրն անսովոր ոճով ցանկացել է է ընդգծել իշխանի հետ կատարվածի արտասովորությունը. գնաց, ուրեմն, ձկները տեսնելու... Ձեռքը Պրոկոպիինն է, և դա նրա գրառումն է:

Նույն ձեռքը ժամանակին գրի է առել սբ. Ագաֆոնի մարգարեությունը: Կանխատեսո՞ւմ էր, արդյոք, Ագաֆոնն իր թելադրած տեքստի ճակատագիրը: Եթե՝ այո, ապա ինչո՞ւ թելադրեց հենց Պրոկոպիին. չէ՞ որ վանքում այլ գրիչներ էլ կային: Երբեմն ինձ թվում է, որ մարգարեությունը Պրոկոպիին վստահելով՝ Ագաֆոնը ցանկացել է առժամանակ անհայտ պահել նրա բովանդակությունը: Մինչև այն ժամանակը, երբ անհրաժեշտ կդառնար ու նորից կհայտնաբերվեր: Կապրենք՝ կտեսնենք:

Մի անգամ, առանց որևէ առիթի, Քսենիան ինձ ասաց, որ մարգարեությունը կգտնվվի:

- Ինչ գիտես,- հարցրի ես:

- Զգում եմ:

Դա ինձ համար ծանրակշիռ փաստարկ է: Ինչ (կանխա)զգում է Քսենիան, սովորաբար կատարվում է: Ես դեռ մանկուց եմ վարժվել դրան:

Հետաքրքիր է, որ նոր ռեգենտության մասին տեղեկության մեջ ես *մանկահասակ* եմ համարվում: Ճիշտն ասած, ես ու Քսենիան այն ժամանակ երեսուն տարեկան էինք: Բայց իսկապես ունեինք մեր սեփական ժամանակը, այնպես որ, մեծ հաշվով, այստեղ սխալ չկա:

Դա Պրոկոպի Ռնգախոսի վերջին գրառումն է: Արվել է Եվստա-

ֆիի մահվան օրը, որը նաև իր մահվան օրը դարձավ: Ըստ երևույթին, Յուստինի ու Գլիկերիայի կործանման ուրախությունն այնքան մեծ էր եղել, որ սիրտը չէր դիմացել:

Հրդեհին հաջորդած բոլոր օրերին նա չէր քայլում, թռչում էր: Իսկ նորոգ հանգուցյալ Եվստաֆիի իրիկնային հիշատակումին հանկարծ բռնեց սիրտն ու պատին քսվելով՝ ծանր սահեց գետնին: Կողքին կանգնած եղբայր Մելետին թևանցուկ արեց ու տարավ դուրս՝ մաքուր օդի:

Մենք էլ էինք այդ արարողությանն ու մի քանի վանականների հետ շտապեցինք նրանց ետևից: Պրոկոպին պառկել էր խոտերին: Եղբայր Մելետին պահել էր գլուխը, բայց Պրոկոպիի անթարթ հայացքը հույսի տեղ չէր թողնում: Բաց դռներից լսվում էին երգեցողության հնչյունները: Իսկ մենք ցնցված քարացել էինք, քանզի առաջին անգամ էինք մարդու մահ տեսնում:

Քիչ անց դուրս եկավ եպիսկոպոս Ֆիլարետը: Ուշադիր նայեց գետնին պառկածին ու փակեց նրա աչքերը: Բթամատով ու մատնեմատով փակեց, վստահ ու ճշգրիտ շարժումով, ասես ողջ կյանքում զուտ դրանով էր զբաղվել: Աղոթք կարդալով՝ Մելետիին ասաց, որ այսուհետ հանգուցյալի փոխարեն նա է տարեգիրը: Պրոկոպիի գլուխը պահող Մելետին խոնարհեց գլուխը. ինչպես հայրապետը կկամենա:

Մեկ ամսից եպիսկոպոսը ստիպված էր հեռանալ. Յուստինի ու Գլիկերիայի պսակադրությունը նույնիսկ տարիներ անց չէր ներվել նրան: Հովվապետը հեռացավ, իսկ օրհնությունը մնաց, և ոչ ոք այն հետ չէր առել Մելետիից:

Ի դեպ, հենց Մելետին պարզեց, որ տարեգրությունից հանվել է Կղզու մասին Ագաֆոնի մարգարեությունը: Սկզբում էջերի թվակալման ընդհատումն էր նկատել, հետո արդեն վանական եղբայրների հետ խոսակցություններից (նպատակային էր վարում այդ խոսակցությունները) պարզել էր, որ բացակայող տեքստը մարգարեությունն է:

Պրոկոպին հաճախ էր առեղծվածային արտահայտություններ

անում, թե տեքստերը երբեմն կորչում են, թե բոլոր մարգարեությունները չէ, որ հասնում են հասցեատերերին, կամ էլ, օրինակ, թե որքան օգտակար են լինում հակառակորդին ճիշտ ժամանակին փոխանցված մարգարեությունները: Տարբեր մարդկանց տարբեր բաներ էր ասում Պրոկոպին, դրա համար էլ նրա վերաբերյալ կասկածներ չէին ծագում:

Յուստինի և Գլիկերիայի գուսանը բնատուր շատախոս էր. բնականաբար, այն չափով, որքան հնարավոր էր իր կարգավիճակում: Ճիշտն ասած, համարվում էր, որ նրա մտքինը լեզվին է, ու քանի որ լեզուն Պրոկոպիի ամենաուժեղ տեղը չէր, այդ թուլությունը ինչ-որ կերպ մտքին էլ էր վերագրվում:

Ընդսմին, Պրոկոպին այնքան էլ պարզունակ չէր: Անլեզու տարեգրի անկապ արտահայտություններն ի մի բերելով՝ Մելետին վերականգնեց իրադարձությունների ընթացքը. այդպես թափված քարերը հավաքելով՝ խճանկարն են վերականգնում: Եվ հասկացավ, որ հանգուցյալը ձեռագրի էջը ոչ միայն պոկել, այլև ուղարկել է Մեծ երկիր:

Մելետին, իր ասելով, չէր հասկանում միայն, թե Պրոկոպին ինչո՞ւ էր այդպիսի վտանգավոր ակնարկներ անում, որոնք հանգամանքների որոշակի զուգադիպումով կարող էին մերկացնել նրան: Կարելի է միայն ենթադրել, որ դա նրա համար խաղ էր, որ ավելի ու ավելի գրավիչ էր դառնում ինքնամերկացմանը մոտենալով: Դա խտղտացնում էր Պրոկոպիի նյարդերը, ճիշտ ինչպես երևի *Ճշմարիտ պատմությունը,* որ գրում էր կեղծին զուգահեռ: Որքան երկար ենք ապրում ես ու Քսենիան, այնքան ավելի ենք զարմանում, թե կյանքում ճշմարիտն ինչպես է միահյուսվում կեղծին:

Այդպիսին էր Պրոկոպի Ռնգախոսը, որը երկլեզու մարդու անուն էր հանել, բայց ոչ մեկն էլ չուներ, ատում էր իշխանությունը, բայց մտերմություն փնտրում նրա հետ, գրում էր թաքուն, բայց պատմում դրա մասին, ժամանակին ողջ էր, բայց հիմա՝ մեռած: Նրա հետ անդարձ հեռացավ նաև մեր կյանքի մի մասը, որովհետև այլևս երբեք չի լինի:

Քսենիա

Իսկ ամենազարմանալին այն է, որ մենք դեռ ապրում ենք: Հիմա՝ ամառանոցում ենք, ուր տեղափոխվել ենք ամռան ամիսներին: Երեկոները զբոսնում ենք ամայի լողափերի երկարությամբ:

Այսօր Ֆիլիպն էր եկել՝ *Կղզու պատմության* հրատարակիչը: Միջինը ամիսը մի անգամ Ֆիլիպը գալիս է մեզ ոգևորելու: Առաջարկում է չսահմանափակվել տարեգրության նախկին մեկնաբանություններով և էլի որևէ բան գրել: Ինչի մասին կուզենք:

Խոստացել ենք, որ կմտածենք: Իրականում գրում էլ ենք, բայց դրանք ավելի շուտ անձնական նշումներ են: Պե՞տք է, արդյոք, հրապարակել:

Բաժանվելիս Ֆիլիպին ցույց տվեցի աշտարակ հիշեցնող ժայռը, գլխին՝ ատամնաշար: Ժամանակին այդ ժայռի մոտ էի ծչացել.

- Դանա՛կը:

Երբ ես ու Պարֆենին անցնում ենք կողքով, շշուկով ասում եմ.

- Դանա՛կը:

Եվ Պարֆենին ամեն անգամ կտրուկ շրջվում է. իհարկե, ոչ այնքան կտրուկ, որքան այն ժամանակ: Այդ պատմության մեջ նրան ամենից շատ զարմացնում է x-աձև ոտքերի մասին ասածս:

Ֆիլիպի հետ խոսելիս մի կին դուրս եկավ ժայռից: Այո՛, հենց այդպիսի ոտքերով: Տեսնելով, որ նայում ենք իրեն՝ ձեռքով արեց: Պարֆենին, նրան զննելով, կկոցեց աչքերը:

- Տեղով մեկ՝ հորաքույր Կլավդիան: Այս վայրը ինչ-որ բանով ձգում է նրանց:

Երեքս էլ ձեռքով արեցինք ի պատասխան: Ինձ երբեմն թվում է, որ ամեն նոր դար ծնում է միևնույն մարդկանց: Կամ էլ իրար շատ նման:

Ֆիլիպը զանգեց բջջայինով, ու հաջորդ պահին մոտեցավ մեքենան: Տեղավորվելով հետևի նստիքին՝ նա նորից ձեռքով արեց. այս անգամ՝ մեզ: Այդ երեկո բոլորը զարմանալիորեն ձեռքով էին անում իրար: Երբ մեքենան անհետացավ տեսադաշտից, ես ու Պարֆենին

դեռ էլի որոշ ժամանակ կանգնել էինք մայրուղու եզրին: Մեր կողքով անծանոթ մակնիշների մեքենաներ էին սլանում: Ժայռի մոտ կանգնած կինը մոտեցավ:

- Մենք սովորել ենք բեռնատար մեքենաները տարբերել մարդատարներից,- նրան ասաց Պարֆենին,- բայց չգիտես ինչու՝ մեր սահմանն այդքանն էր: Մակնիշները չենք կարողանում սովորել:

- Տարի՛քը,- պատասխանեց կինը:- Այնպիսի տարիքում եք, որ նույնիսկ անհարմար էլ է ասել:

Պարֆենին, իբր նեղացած, կախեց գլուխը: Իսկ երբ բարձրացրեց, տեսանք, որ ժպտում է:

Ասաց.

- Մեզ հարյուր քսան տարեկան ենք զգում: Ոչ ավելի:

Գլուխ վեցերորդ
ԳԱՎՐԻԻԼ

Վախով եմ ձեռնարկում գրառումներիս:

Ինձ՝ մեղավոր Մելետիիս, սբ. Ագաֆոն Ապագայատեսը մահվանից քիչ առաջ ասաց.

Ցնծա՛, զի գրիչը կլինես տարեգիր ժամանակների:

Ես խոնարհվեցի մինչև գետին: Պատասխանեցի.

Փա՛ռք Արարչին:

Իսկ նա ասաց.

Կենտրոնացի՛ր, զի գրիչը պարապ տեղը չի տրվում մարդուն:

Ես կրկին խոնարհվեցի:

Եվս մեկ անգամ կանչեց՝ արդեն մահվան մահճում.

Պահպանիր, Մելե՛տիե, միասնությունն անցնող ժամանակի:

Ես խոստացա, ու չնայած լավ չէի հասկանում՝ խոսքն ինչի մասին է, պահանջն ինձ արդարացի թվաց:

Պրոկոպի Ռնգախոսի մահվան օրը ինձ ապաշխարության կարգ նշանակեցին՝ նկարագրելու տարիների և իրադարձությունների հերթափոխությունը: Ամենայն մանրամասնությամբ գիտակցում էի իմ կոչումը: Հարց էի տալիս ինձ՝ կիրագործվե՞ր այն, եթե պահած չլինեի Պրոկոպիի գլուխը և դրանով եպիսկոպոս Ֆիլարետի աչքին չընկնեի: Եվ ինքս ինձ էլ պատասխանում էի. կիրագործվեր, հակառակ դեպքում ինչո՞ւ էր ինձ պատվիրանում Ագաֆոնը:

Եվստաֆիի մահվանից հետո մանկահասակ Պարֆենիի ռեգենտը իշխան Գավրիիլն էր՝ իշխաններ Միխաիլի ու Եվստաֆիի հորեղբայրը: Եվ չնայած Պարֆենիի տարիքը վաղուց արդեն չէր համա-

տեղվում տարիքի սովորական ընկալման հետ, բոլորը հասկանում են, որ մանկահասակությունն ընդամենը քիչ տարիներ է նշանակում: Իսկ քիչն ու շատը փոփոխական հասկացություն է: Մեկի համար քիչ է հարյուր տարին, իսկ մյուսի համար մի տարին էլ է շատ: Հարցնողներին, թե նշանադրյալները երբ են գահ բարձրանալու, պատասխանում էին. բարեպատեհ ժամանակին:

Գավրիիլի կառավարման առաջին տարում եպիսկոպոս կարգվեց Ֆեոպեմպտը: Ֆիլարետի օրոք Եկեղեցին դժվար ժամանակներ էր ապրել, և Ֆեոպեմպտը որոշեց վերականգնել նրա նախնական վայելչությունը:

Գավրիիլի հինգերորդ տարում վեց շաբաթ մառախուղ կանգնեց մեր մեղաց պատճառով, այնպես որ, արևը չէր երևում, և ձկներն էին մեռնում ջրերում, և թռչուններն էին թափվում գետնին, քանզի չէին տեսնում՝ ուր են թռչելու:

Գավրիիլի յոթերորդ տարում մեկը տոնավաճառում Փռյուգիական աշխարհից բերած արտակարգ չափերի մի խնձոր տվեց իշխանին: Եվ Գավրիիլը, խնձորի մեծությունից, ինչպես և գեղեցկությունից ապշած՝ այն նվիրեց կնոջը՝ իշխանուհի Արկադիային:

Արկադիան խնձորը վերցնելով՝ հիշեց մեծատոհմիկ Պավլինին՝ իշխանի և իր ընդհանուր ու անշահախնդիր բարեկամին: Այդ Պավլինը հիվանդ էր, և Արկադիան նրան ուղարկեց իշխանի ընծան, քանզի ենթադրում էր, որ մեծ խնձորները մեծ օգուտ են բերում հիվանդության ժամանակ:

Իսկ Պավլինը, որ հավատարիմ հպատակ էր, որոշեց արտասովոր պտուղն ընծայել իր իշխանին ու տիրակալին:

Իր նվերը ճանաչելով՝ Գավրիիլը կանչեց իշխանուհուն ու հարցրեց, թե ուր է խնձորը: Եվ Արկադիան պատասխանեց, որ կերել է: Երկրային ու երկնային բոլոր պատիժներով սպառնալով՝ իշխանը կրկնեց հարցն ու կնոջը կոչեց ապաշխարության: Բայց նա, վախից խելագարված, շարունակում էր իրենը պնդել ու նույնիսկ երդվեց խաչի վրա, որ չի ստում: Իսկ երբ Գավրիիլը ցույց տվեց խնձորը, Արկադիան ծնկի եկավ և պատմեց, թե բանն ինչպես է եղել իրակա-

նում: Քանզի իշխանը նրա հանդեպ այլևս հավատ չուներ, Պավլինը նույն իսկ օրը մահապարտվեց:

Մի կարճ ժամանակ անց Արկադիան ամուսնուն խնդրեց, որ իրեն թույլ տա ուխտի գնալ Սուրբ Երկիր, և իշխանը չարգելեց: Արկադիան Երուսաղեմում էլ մեռավ՝ բարեպաշտության գործերով հիշատակ թողնելով իր մասին: Մահվանից առաջ իշխանուհին խոստովանել ու հաղորդություն էր ստացել, ու պարզվեց, որ միշտ հավատարիմ է եղել ամուսնուն:

Իր կառավարման տասնհինգերորդ տարում Գավրիիլը հիշեց Պավլինին ու դառնորեն զղջաց նրա մահվան համար, քանզի Պավլինը նրա մանկության ընկերն էր: Իշխանը տրտնջում էր շրջապատողների մոտ, թե որքան դաժան է վարվում իր հետ ճակատագիրը՝ խլելով հարազատ մարդկանց, ու չկար մեկը, որ չհամաձայներ դրան:

Ի խրատ սերունդներին՝ Գավրիիլը հրամայեց կտրել Կղզու բոլոր խնձորենիները, քանզի (ասաց) այդ ծառիցն են բոլոր դժբախտությունները: Եվ այդ գործում էլ իշխանը շրջապատողների ջերմ աջակցությունը ստացավ, բացի միայն եպիսկոպոս Ֆեոպեմպտից, որն ասաց.

Խնձորենիները մեղք չունեն:

Եվ կղզում շատերն էին շշուկով կրկնում Ֆեոպեմպտին.

Խնձորենիները մեղք չունեն:

Ոմանք էլ շշուկով չէին կրկնում, այնպես որ, ի վերջո դա ասացվածք դարձավ: Իսկ մենք դեռ ապրում ենք առանց խնձորենիների:

Գավրիիլի կառավարման տասնյոթերորդ տարում սարսափելի երկրաշարժ եղավ, երբ ծովն էլ դուրս եկավ ափերից: Նավերը խլելով՝ ալիքը նրանց ցամաք էր նետում, որտեղ էլ պառկած են մինչ օրս, քանզի չկա կրկին ջուրը հասցնելու ոչ մի հնար: Իսկ ալիքի բարձրանալուց առաջ ծովը, հակառակը, նահանջեց մի քանի ասպարեզ, ու հատակը մերկացավ: Շատերը, մտածելով, որ ծովն արդեն չի վերադառնա, անհոգ շրջում էին հատակին և չտեսնված ստորջրյա արարածներ հավաքում, որոնք առաջ կարող էր տեսնել միայն փորձառու սուզակը:

Իսկ կարճ ժամանակ անց հորիզոնին երևաց ալիքը, որ բարձրությամբ լեռնաշղթայի պես էր: Մոտենում էր սարսափելի արագությամբ ու կուլ տվեց ոչ միայն հատակին շրջողներին, այլև ծովեզերքին ապրողներից շատերին կուլ տվեց, քանզի քչերին հաջողվեց փախչել անվտանգ տեղեր:

Գավրիիլի տասնութերորդ տարում պատահեց, որ անցնում էր արվարձանի մի փողոցով և տան ավերակներին նստած մի մարդ տեսավ: Մարդը խեղանդամ ու կույր էր: Կեղտակուր, այն աստիճան մաշված շորերով, որ անցքերից երևում էր չարչարված մարմինը: Լսելով, որ փողոցով հեծյալներ են անցնում՝ թշվառականը ճչաց.

Ողորմացե՛ք մեծ քաղաքի պաշտպանին:

Տարօրինակ խոսքից զարմացած՝ Գավրիիլը կանգ առավ ու հարցրեց.

Ո՞վ է սա և ի՞նչ են նշանակում բառերը նրա: Ինչ-որ գաղտնիք եմ տեսնում դրանց մեջ:

Իշխանին շրջապատող մարդիկ ուշադիր նայեցին կույրին, և մեկը հանկարծ հանձին նրա ճանաչեց Ամբրոսիին: Այստեղ իշխանը հիշեց նրա վշտալի կյանքը՝ ներառյալ ժանտամահն ու դաժան կուրացումը: Իշխանն ու շքախումբը չգիտեին, որ նա քաղաքում է, քանզի արվարձանի փողոցներով սովորաբար չէին անցնում: Իսկ փողոցի բնակիչների ասելով՝ նա վաղուց էր այդտեղ, և չասենք, թե՝ աննկատելի: Տարաբախտն օրը մի քանի անգամ ճչում էր իր տարօրինակ բառերը, բայց առաջ ոչ ոքի մտքով չէր անցել, որ դա քաղաքագլուխն է:

Եվ այդ ժամանակ Գավրիիլն իջավ ձիուց ու ասաց թշվառին.

Ո՛վ քաղաքագլո՛ւխ, նրա համար, որ բազում ու անմեղք տառապանքներ կրեցիր, պալատ կառնեմ քեզ, լավագույն զգեստները կհագցնեմ և սեղանակից կանեմ ինձ, ինչպես որ վայել է քո աստիճանին: Իմաստուն խորհրդատու կլինես ինձ գործերում և քո մարտիրոսական կյանքից հետո խորին խաղաղություն կվայելես:

Հոգեհաց է մեր կյանքը, իշխա՛ն, պատասխանեց Ամբրոսին, և ո՞վ է վայելք առնում հոգու հացին: Ու նաև, ես պաշտպանն եմ մեծ

քաղաքի, և ուրեմն ինչպե՞ս կթողնեմ ծառայությունս:

Քաղաքը բազում պաշտպաններ ունի, իսկ դու, ազնիվ խոսք, հանգստացիր:

Կույր ժպտալով՝ քաղաքագլուխը պատասխանեց.

Չէ՞ որ խոսում եմ Երկնայի Քաղաքի մասին, իսկ այն ավելորդ պաշտպաններ չի ունենում:

Զարմացավ իշխանը, թե որքան անդրդվելի էր այրն այդ, և թողեց նրան իր ընտրած ծառայությանը: Երբ Գավրիիլն արդեն ճանապարհ էր ընկնում, Ամբրոսին հարցրեց՝ գտնվե՞լ է, արդյոք, կորսված մարգարեությունը:

Ո՛չ, ասաց Գավրիիլն ու տարածեց ձեռքերը, ու գիտե՞ս, հազիվ թե գտնվի:

Գավրիիլի տասնիններորդ տարում մի գիշեր վիշապօձ թռավ երկնքով: Եվ լույս էր շուրջը, ինչպես ցերեկով, և նույնիսկ ավելի, քանզի օձն այնքան վառ էր շողում, որ բոլորը կկոցեցին աչքերը: Օձը ծովի կողմից էր գալիս, դրա համար էլ տեսանելի էր երկար ժամանակ: Եվ բոլորն աղոթում էին, որ նրա հայտնությունը զոհեր ու ավեր չբերի Կղզուն: Թռչելով Քաղաքի վրայով՝ օձն ընկավ Անտառում, և ածխացան ծառերը անկման տեղից մի քանի ասպարեզի վրա: Եվ չնայած բանն առանց զոհերի եղավ, բոլորը հասկացան, որ օձի հայտնվելը լավ նշան չէր:

Նայելով թռչող օձին՝ իշխան Գավրիիլն ասաց.

Ոչ այլ ինչ է նշանակում, եթե ոչ իմ մահը:

Ասաց.

Հասել է Պարֆենիի ու Քսենիայի պսակվելու ժամանակը, որ իշխանական գահ բարձրանան՝ արդեն միավորելով իշխող երկու ծյուղերը:

Քսենիա

Հետաքրքիր է, որ այս գլուխը,- առաջին անգամ տարեգրության մեջ,- ուղեկցվում է մանրանկարով: Մելետին նկարազարդել է գի-

սաստղի մասին պատմությունը, հասկանալի է՝ թևավոր օձի տեսքով: Տարեգիրն օձը նկարել է գրչով ու գունավորել օքրայով՝ դնելով աղեղնաձև ամպածիր շրջանակում:

Այսօր մեզ այցելած Ֆիլիպը (նա հաճախ է հյուրընկալվում մեզ) երկար հիանում էր մանրանկարով: Մտածում էր, որ մեր նշումներով տարեգրության առաջիկա հրատարակության մեջ այն կարելի է զետեղել կազմին: Մանրանկարը չափելով սեղանից վերցրած մի պատահական գրքի վրա՝ ապշել էր Միջնադարի միամտությունից ու չէր թաքցնում առաջադիմական ժպիտը:

Ավելի ուշ, երբ թեյ էինք խմում, Ֆիլիպը հարցրեց, թե ինչպես ենք վերաբերվում տիեզերքի մասին պատկերացումների այսպիսի արմատական փոփոխությանը: Պարֆենին (ինքը՝ բարյացակամություն) պատասխանեց, որ արմատական փոփոխություններ չի նկատել: Ֆիլիպը (հարգալից համբերատարություն) եռջուր ավելացրեց թեյին: Նա չէր հասկանում, թե ինչպես կարելի է չտեսնել Միջնադարի և արդիականության տարբերությունը: Նրանք հակադիր պատասխաններ են տալիս բոլոր հիմնական հարցերին:

- Հիմնական հարցը միայն մեկն է,- Պարֆենին գավաթը տարավ շրթունքներին,- և վերաբերում է աշխարհի ստեղծման հանգամանքներին: Միջնադարը պատասխանում էր. աշխարհը ստեղծել է Աստված: Ի՞նչ է ասում դրա մասին արդիականությունը:

- Դե, նախ և առաջ...,- Ֆիլիպի ձեռքը շրջան գծեց օդում:

- Արդիականությունն ասում է՝ չգիտեմ,- հուշեց Պարֆենին:- Ու չգիտես ինչու՝ ինձ թվում է, որ այլ բացատրություն գիտությունը երբեք չի ունենա:

Պատուհանից այն կողմ լսվեց ինքնաթիռի գվվոցը. մոտիկ օդանավակայան կա: Ֆիլիպն ակամա ստիպված էր բարձրացնել ձայնը, ու հանկարծ զրույցը վերածվեց վեճի.

- Հետաքրքիր է, ինչո՞ւ չի ունենա:

- Զուտ տրամաբանություն: Գիտությունը զբաղվում է միայն ֆիզիկական աշխարհով, բայց այդ աշխարհն ամբողջությամբ բացատ-

ռելու համար պետք է դուրս գալ նրա սահմաններից: Իսկ գիտությունը դուրս գալու տեղ չունի:

Ինքնաթիռն ասես քարացել էր օդում: Կախված կմնա այնքան ժամանակ, մինչև առաջադիմությունն ակնհայտ կդառնա բոլորին: Ֆիլիպը հետ ընկավ աթոռի թիկնակին: Հայացքը սահեց մանրանկարի վրայով:

- Մի շատ պարզ հարց ունեմ: Միջնադարում գիսաստղը օձի տե՞ղ էին դնում: Դնում էին, չէ՞: Չէ՞ որ դա չեք ժխտի:

- Ես չեմ կարող ժխտել ակնհայտը:

- Իսկ հիմա՞:

- Իսկ հիմա օձն են դնում գիսաստղի տեղ:

Իշխան Գավրիիլի խոսքին հետևեց պսակադրությունն ու դրա հանդիսավոր տոնախմբումը: Այդպիսի տոն Կղզին երբեք չէր տեսել, և բոլորը հասկանում էին, որ այդ պսակադրությունը ոսկի տառերով կգրվի պատմության մեջ:

Նորապսակները տաճար հասան երեք զույգ ձերմակ նժույգ լծած կառեթով: Եվ այդ պահին երեք ձերմակ աղավնի նստեց զանգակատան գմբեթին, և բոլորը ցնծացին, զի բարի նշան էր:

Ապրած տարիների ծանրությունը հաղթահարելով՝ զույգին պսակում էր եպիսկոպոս Ֆեոպեմպտը: Եվ այստեղ պատահեց այն, ինչն ապշեցրեց բոլորին:

Երբ եպիսկոպոսը հարցրեց՝ ցանկանո՞ւմ է արդյոք Աստծո ծառա Քսենիան Աստծո ծառա Պարֆենիի կինը լինել, Քսենիան, մի պահ հապաղելով, ասաց.

-Այո՛:

Իսկ հարցին՝ կապված չէ՞, արդյոք, խոստումով այլ փեսացուի հետ, հարսնացուն պատասխան չտվեց, ասես կնիք էր շուրթերին:

Տաճարով հառաչանք անցավ, որի մեջ էլ հնչեց ոչ բառը: Այն բարձր շշուկով արտաբերեց իշխան Ավերկին՝ հարսնացուի հորեղբայրը: Թիկունքից մոտենալով Քսենիային՝ նա զայրագին ոլորում

էր աչքերը և անընդհատ կրկնում իր ոչը այնպես, ասես ինքն էր հարսնացուն:

Կամ էլ՝ *այո,* մի փոքր միտք անելով՝ ֆշշացրեց հորեղբայրը: Գլխավորը՝ մի բան պատասխանիր:

Եվ նույն վայրկյանին մի քանի չղջիկ պոկվեցին գմբեթի տակից: Հավաքվածների գլխավերևով թռչելով՝ անհետացան գավթում: Դա չար նշան թվաց բոլորին, ու տաճարով երկրորդ հառաչանքն անցավ: Եվ շատերի հոնքերը վեր էին քաշվել տարակուսանքով ու տագնապով, միայն եպիսկոպոսն էր մնում խաղաղությամբ: Նա կրկնեց այլ փեսացուի՝ կղզիաբնակ, թե Մեծ երկրի բնակիչ, տրված խոստման հարցը: Եվ այդ ժամանակ հարսնացուն կամացուկ ասաց.

-Ո՛չ:

Եվ երրորդ հոգոցն անցավ տաճարով, որն արդեն թեթևության հոգոց էր:

Եկեղեցուց դուրս գալիս Քսենիայի հորեղբայրը եպիսկոպոսից հարցրեց, թե ինչու էին թռչում աղավնիներն ու չղջիկները, և գլխավորը՝ ինչ էին դրանով կանխուշակում: Եվ Ֆեոպեմպտը նայելով հորեղբորը՝ ժպտաց:

Ասաց.

-Ոչինչ էլ չէին գուշակում: Պարզապես թռչում էին:

Պատասխանի թեթևամտությունից ապշած՝ իշխան Ավերկին առարկեց.

-Նրանք թռչում էին տաճարից դուրս ու ներսում էին թռչում, և դա չէր կարող նշանակ չլինել:

-Վերոնշյալ Աստծո արարածներին,- պատասխանեց եպիսկոպոսը,- հատուկ է թռչելը, ինչպես որ քեզ՝ քայլելը: Դու, օրինակ, քայլում էիր տաճարում, բայց արդյո՞ք դա որևէ բան էր նշանակում:

Այդ օրը կենդանիների հետ կապված այլ դեպքեր էլ եղան: Ի պատիվ համաժողովրդական տոնախմբության՝ խոսող կատու էին բերել, որը մլավելով բացում ու փակում էր բերանը, այնպես որ, առանձին արտահայտություններ էին լսվում: Եվ շատերը զարմա-

ցած էին դրա վրա, չնայած ոմանք էլ պնդում էին, թե կենդանին ավելի շատ մլավում է, քան խոսում. չէ՞ որ տարբեր մարդիկ ասվածը տարբեր կերպ են հասկանում: Իսկ երբ Պարֆենիի և Քսենիայի անունները հիշատակելիս կատուն ասաց *սեր և միություն,* նրա խոսքի ուժին հավատացին նույնիսկ ամենաթերահավատները:

Մարդկանց հավանությանն արժանացած կատուն սկսեց պահին վայել ասացվածքներ շարել: *Համերաշխ լինեք՝ գանձի կտիրեք: Աշխարհն աչքիդ լույս չի տա, թե սիրելիդ տուն չգա:* Մի փոքր տատանվելով՝ ավելացրեց. Սիրտդ սեր ընկավ՝ թակարդի եկար: Իսկ երբ ունկնդիրները կատվին վալերիանի արմտիքի թուրմ մատուցեցին, բերանից սկսեցին ոչ տոնական բաներ հնչել:

Կատուն մռայլվեց ու մռմռաց. *Ինձ առանց ինձ պսակեցին՝ ջաղաց էի գնացել,* ու նաև՝ *Սերն աթարին էլ կկպնի,* ինչպես և այլ անվայել ատահայտություններ: Երբ այդ ամենը բարձրաձայնվեց, կատվին հապշտապ դուրս հանեցին, քանզի մարդկանց պես՝ կենդանիներն էլ հարբած ժամանակ իրենց հաշիվ չեն տալիս, թե ինչ են ասում և կարող են ծանր վիրավորանք հասցնել շրջապատողներին:

Իսկ Պարֆենիին ու Քսենիային բոլորով ուղեկցեցին ամուսնական ննջարան՝ զարդարված ծաղիկներով ու խոտերով, որոնց բուրմունքը տարածվում էր ողջ Կղզում: Այդ հրաշք բույրի մեջ սուզված՝ Կղզու բնակչությունը փառաբանում էր Աստծո սիրեցյալ երկու սրտերի ամուսնական միությունը:

Այդ երեկո մեծ խնջույք տրվեց բոլորի համար: Եվ երեկոն դարձավ գիշեր, և բոլորը երջանիկ էին, քանզի Պարֆենիի ու Քսենիայի պսակը ամրացնում էր երկու դինաստիաների դաշինքը, ինչը տևական ու հաստատուն խաղաղության հույս էր տալիս:

Եվ հինգ հարյուր ոչխար մորթվեց, ոմանք ասում են՝ հազար, և չորս հարյուր խոզ, և անթիվ-անհամար թռչուններ: Ծովեզերքից քսան սայլ ձուկ էին բերել, որով այնպես հարուստ է մեր Ծովը: Եվ այդ ամենը խորովվում էր փողոցներում, և դրվում սեղաններին, որ հենց տեղում էլ սարքում էին: Նաև գինու սափորներ էին դրվում սե-

ղաններին, ու գինին քամած էր կղզու քաղցրագույն խաղողից: Եվ չկար մեկը, որ չխրախճանար այդ ժամանակ, և չցնծար ընդհանուր ցնծությամբ՝ փառաբանելով Պարֆենիին ու Քսենիային:

Հաջորդ առավոտ նորապսակների իշխանական ննջարանի դռան առաջ սպասում էին հարազատներն ու կղզու վերնախավը: Ամուսիններն ուշ դուրս եկան, և բոլորը հասկացան, որ գիշերն անքուն է անցել, և ցնծացին: Իսկ երբ ամուսինների ետևից դուրս բերվեց արյունից կարմրած սավանը, բոլորը հավաստիացան Քսենիայի կուսությանը, որն առաջ էլ որևէ կասկած չէր հարուցում: Իմանալով նրա մեծագույն բարեպաշտությունն ու հրեշտակային մաքրությունը՝ ոմանք կասկածում էին նույնիսկ այր ու կույսի բուն մերձեցման, մարդկային բնույթի հետ հաշտվելու կարելիությանը:

Իշխան Գավրիիլը մահացավ վեց տարի անց, իր կառավարման քսանհինգերորդ տարում: Եվ դժվար է հիմա հասկանալ՝ արդյո՞ք վիշապօձի հայտնությունը եղավ մահվան նշանակ, զի առանց օձի էլ մի օր պիտի մեռներ: Հաստատապես կարելի է ասել միայն, որ պայծառափայլ իշխանը վախճանվեց: Նրա հետ ավարտվեց նաև ռեգենտության բազմամյա դարաշրջանը, և դրա մասին հայտարարվեց արդեն նրա մահվան օրը:

Պարֆենի

Ննջարանում մենակ մնալով՝ կողք-կողքի նստել էինք հսկա ամուսնական մահճին: Փողոցից լսվում էին խրախճացողների աղաղակները, և ննջարանի լռությունը դրանից ավելի զնգուն էր դառնում: Ո՛չ Քսենիան, ո՛չ ես չէինք խախտում լռությունը:

Ինչ-որ տեղ ներքևում շրջում էին ջահերով, և շառագույն արտացոլքը թրթռում էր առաստաղին: Դա միայն ընդգծում էր ննջարանի կիսախավարը: Մեզ ընդամենը մի աղոտ ծրագ էին թողել,- այնքան, որ տեսնենք առարկաների ուրվագծերը, բայց չամաչենք մեր մերկությունից: *Մերկություն* բառը ամանակաչափի պես թիկթակում էր

իմ ականջներում, և մարմինս անուշ ալիքներով արձագանքում էր այդ հաճախանքին: Մերկություն: Մեր-կու-թյուն:

Հագնված էինք նստել: Ձեռքս դրեցի Քսենիայի ուսին: Ցնցվեց: Նույնիսկ հագուստի ամուր կտորի միջով զգացվում էր նրա ջերմությունը: Եվ դյուրաբեկությունը: Եվ մերկությունը:

Քսենիա

Պարֆենին ձեռքը դրեց ուսիս: Ձեռքը դողում էր: Ես այրող քնքշություն էի զգում նրա հանդեպ: Եվ կարեկցանք: Ձեռքը զգույշ իջեցրի ուսիցս: Ծրթունքներս հպեցի մատներին: Ասացի.

- Պետք չի:

Հետո երկար լուռ նստած էինք: Նա հարցրեց.

- Ես քեզ տհա՞ճ եմ:

Ես նրան խոստովանեցի, որ այլ Փեսացու եմ ընտրել: Որ նաժիշտ Ֆոտինյան դեմքը ծածկող կնգուղով թիկնոց կբերի և ինձ կհանի Պալատից: Փողոցում մեզ կսպասի ծածկով սայլակը:

Ես պատրաստ էի նրա զայրույթին, արգելքին, նույնիսկ ծեծին էի պատրաստ: Բայց ոչինչ չպատահեց: Նա պարզապես լաց եղավ:

Իսկ հետո հարցրեց՝ հիմա ինչ կլինի Կղզու հետ, որի խաղաղությունը, Ագաֆոնի կանխատեսությամբ, կախված էր մեր պսակադրությունից: Ուզում էի պատասխանել, որ մարգարեության մասին հիշելով եմ որոշել նախ պսակվել, ապա հեռանալ: Բայց նրա հարցից հետո արդեն չգիտեի՝ դա ճի՞շտ պատասխան է արդյոք:

Պարֆենի

Նա ձեռքս իջեցրեց ուսից ու վեր կացավ:

Մտածեցի, որ նրան անտանելի են իմ հպումները, ու ներսս փուլ եկավ: Եվ նրանից, որ փողոցը ցնծում էր, ավելի ծանր էր ինձ համար: Եվ նույնիսկ ննջարանում խորոված մսի հոտ էր գալիս:

Քսենիան ինչ-որ անկյունից հանեց ուղեպարկը: Ասաց, որ պիտի թողնի ինձ.

- Ինչպե՞ս կթողնես,- հարցրի ես,- չէ՞ որ իմ կինն ես:

Նա առաջին անգամ նայեց աչքերիս.

- Ես Քրիստոսի հարսնացուն եմ, և Նա սպասում է վանքում: Իսկ դու ինձ ներիր:

Ուզում էի որևէ բան ասել, բայց շունչս բռնվել էր, որովհետև նա իմ մեծ սերն էր: Լռում էի ու զգում, թե արցունքներն ինչպես են հոսում իմ այտերով: Իսկ Քսենիան սրբում էր: Չգիտեմ՝ ինչքան մնացինք այդպես, որովհետև վշտից կորցրել էի ժամանակի զգացողությունը: Ասես երազում տեսա, թե ինչպես ներս մտավ նաժիշտ Ֆոտինյան, ինչպես սև թիկնոցը գցեց նրա ուսերին:

Երբ Քսենիան մոտեցավ դռանը, հիշեցրի Ագաֆոնի կանխատեսությունը: Արդեն հույս չունեի, որ կպահեմ նրան, պարզապես հարցրի, թե ինչպես վարվեմ:

Աչքերում վարանում տեսնելով՝ ծնկի եկա նրա առաջ: Ասացի, որ երբեք չեմ դիպչի իրեն, միայն թե մնա: Խոստացա, որ միասին կապրենք կատարյալ սիրո մեջ. եղբայր ու քույր կմնանք, ինչպես մինչև մեր պսակադրությունը: Եվ կողքիս ծնկաչոք էր նաև Ֆոտինյան, և նույնպես աղերսում էր նրան: Եվ բոլորս լալիս էինք:

Այդ ժամանակ Քսենիան մի կողմ տարավ Ֆոտինյային ու սկսեց կամացուկ ինչ-որ բան խոսել: Հետո դարձավ ինձ և ասաց.

- Իմ Փեսացուի առաջ խոստացիր, որ ընդմիշտ կույս կպահես ինձ և չես ցանկանա ինձ, և երբեք չես դիպչի ինձ:

Ես խոստացա: Ես չէի կարող չցանկանալ նրան, որովհետև դա մարդկային բնությունից վեր է, բայց ոչ մի անգամ չդիպա:

Քսենիա

Հիմա փառք եմ տալիս Աստծուն, որ այն ժամանակ չհեռացա: Պարֆենիի հետ ապրած երկար տարիները երջանկության ժամանակ էին: Գերագույն երջանկության:

Մի անսպասելի, գուցե նույնիսկ աներևակայելի բան ասեմ: Երբեմն մտածում եմ, որ իմ ընտրած ուղին միակ հնարավորը չէր: Կուսական սիրով կյանք ընտրելով՝ ես ինչ-որ կարևոր բանից զրկեցի ինձ ու Պարֆենիին:

Ոչնչի համար չեմ զղջում՝ ոչ այն ժամանակվա ջերմեռանդ հավատիս, ոչ նրա, թե ինչպես անցավ իմ կյանքը: Հավատս հիմա էլ վառ է, բայց դա ներքին կրակ է, որը կտրուկ արարքներ չի պահանջում: Տարիներ (դարեր) անց հասկանում եմ, որ իմաստնություն կա նաև բոլորի ճամփով գնալու մեջ: Այն յուրովի թեթև չէ ընտրյալների ճանապարհից: Երբեմն՝ ավելի ծանր է:

Այդ գիշեր մեզ շատ օգնեց Ֆոտինյան. ոչ միայն նրանով, որ սատար եղավ Պարֆենիին: Լուսաբացից առաջ դուրս գալով Պալատից՝ իմ հավատարիմ նաժիշտը մի փողոց գտավ, որտեղ հենց այդ պահին ոչխար էին մորթում, ու մի սափոր թարմ արյուն բերեց: Այդ արյան մեջ էլ թաթախեցինք մեր սավանը:

Գորովանքով ենք հիշում Ֆոտինյային և, իհարկե, ժպիտով, որովհետև այդ կնոջ հավատարմությունը կարող էր մրցել միայն նրա հնարամտության հետ: Ի զարմանս մեզ՝ պարզվեց, որ երեք սպիտակ աղավնիները, որ այնքան ճիշտ ժամանակին թռել-թառել էին զանգակատան տանիքին, վարժեցրել և արձակել էր հենց Ֆոտինյան: Աղավնիների համեմատությամբ, որոնք, նրա ասելով, երկար ժամանակ չէին ուզում թռչել, ոչխարի գործը մեծ ջանքեր չէր պահանջել:

Որտե՞ղ են հիմա հող դառնում նրա ոսկորները: Ավելի շուտ՝ ոչ մի տեղ: Կարծում եմ՝ արդեն դարձել են:

Արյունոտ սավանն այն ժամանակ հավաստեց և՛ մեր ամուսնական հարաբերությունները, և՛ ամուսնուս համար պահպանած իմ կուսությունը: Այն հիմա էլ պահպանվում է:

Գլուխ յոթերորդ
ՊԱՐՖԵՆԻ

Իշխան Գավրիիլի մահվանից հետո իշխանական գահ բարձրացավ Պարֆենին:

Պարֆենիի իշխանության առաջին տարում կղզիաբնակները մեծ սարսափ ապրեցին: Բոլորը, հատկապես Ծովի մոտ ապրողները, նկատեցին՝ ինչպես է մի սև ամպ մոտենում Մեծ երկրի կողմից: Ամպը բռնել էր ողջ երկինքն ու իրենով փակել ծագող արևը: Եվ տեսքից երևում էր, որ ամրոպաբեր չի, և ընդհանրապես ամպ չի, այլ մորեխի պարս: Տեսնելով նրա դանդաղ ընթացքը ծովի վրայով՝ շատերը արտասվելով կարկամեցին, քանզի մորեխի հայտնվելը այլ բան չէր նշանակում սովից, տառապանքներից ու մահից բացի:

Մորեխի մոտենալու մասին լսելով՝ Պարֆենին ու Քսենիան եպիսկոպոս Ֆեոպեմպտի հետ բարձրացան Պայծառակերպության տաճարի զանգակատուն և աղոթեցին Տիրոջն ու Նրա Անարատ Կույս Մորը, որ ազատի այդ փորձությունից: Եվ առավոտյան շուրջը պատվեց անթափանց խավարով, որի մեջ միայն հեծեծանք ու աղոթք էր լսվում:

Իսկ պարսը, զանգակատան ու ողջ Կղզու վրայով թռչելով, ափից տասն ասպարեզ հեռու իջավ Ծովի վրա ու կուլ գնաց ալիքներին: Եվ էլի մի քանի շաբաթ Կղզու ափերին էր խփվում փքված մորեխի խյուսը, իսկ Ծովն ասես շիլա լիներ: Մորեխը ափը ծածկել էր մի բազուկ բարձրությամբ ու նեխելով՝ գարշահոտ էր տարածում ողջ Կղզում:

Երբ վտանգն անցավ, գոհաբանական պատարագ մատուցեցին Կղզում, քանզի բոլորը հասկանում էին, որ հրաշք է կատարվել: Իսկ

որ հրաշափառ փրկությունը կատարվել էր Պարֆենիի իշխանության առաջին տարում, դրա մեջ տեսնում էին իշխանի ընտրյալ լինելն ու նրա կառավարման վրա իջած օրհնությունը:

Ասում են, որ մորեխը հոտային արարած լինելով, ինքնուրույն կամք չունի, այլ միայն հոտի ընդհանուր կամք, որ թելադրում է առաջնորդը: Գետնին նստելով՝ այդ արարածները խժռում են հողի վրա աճող ամեն ինչ: Երբեմն, սակայն, պատահում է, որ առաջնորդը սխալվում է, և այդ ժամանակ ամբողջ պարսը, ծեփված գուղձի պես, կործանվում է ծովում, և ոչ մեկը չի փրկվում, քանզի չի կարող լքել պարսը: Նման չե՞ն արդյոք մորեխին այն մարդիկ, որ լուծում են իրենց կամքը ամբոխի կամքի մեջ և անհետ կորչում կեցության ծովի ալիքներում:

Պարֆենիի իշխանության յոթերորդ տարում իշխան Ավերկին՝ Քսենիայի հորեղբայրը, սկսեց անհանգստանալ, որ ամուսինները երեխա չեն ունենում: Եվ սովորություն դարձրեց իր անհանգստությունը հրապարակավ արտահայտելը՝ պնդելով, թե ժառանգների բացակայությունը սպառնում է Կղզու հյուսիսային կողմը ներկայացնող Ռոմանյան և հարավային կողմը ներկայացնող Իրակլյան դինաստիաների համաձայնագրին: Ասում էր, որ Պարֆենիի ու Քսենիայի մահից հետո երկու դինաստիաների ընդհանուր ժառանգորդ չի լինի, և իշխանությունը կանցնի Ռոմանյաններին:

Որոշ ժամանակ անց իշխող զույգին հասան Ավերկիի խոսքերն այն մասին, որ Քսենիան որպես չբեր կողակից տեղը պետք է զիջի ուրիշ կնոջ, որը ունակ է մանկածնության: Դա շատերին ողջամիտ թվաց, այնպես որ, Ավերկիի շուրջը համախոհներ հայտնվեցին: Պարֆենին ու Քսենիան կարծես ոչինչ չէին նկատում, և նրանց պատասխան լռությունն արժանապատիվ էր:

Ծննդյան սուրբ օրը իշխան Ավերկին որոշեց բացահայտ հանդես գալ: Ծննդյան պատարագի ավարտից հետո նա անսպասելի բեմ բարձրացավ և ուշադրություն պահանջեց:

Հատկապես Ծննդյան տոնին, ասաց Ավերկին, իշխող զույգի անզավակությունը առանձնակի մտահոգիչ է: Զույգ ասելիս, սա-

կայն, նկատի ունեմ Քսենիային, քանի որ սավանն ակնհայտ հաստատել է իշխան Պարֆենիի մանկածնական կարողությունները: Որպես Քսենիայի մերձավոր ազգական սրտի ցավով ասում եմ ձեզ՝ Քսենիան պետք է վանք մտնի և իր կյանքի մնացած օրերն ապրի այնտեղ՝ քավելով իր թաքուն մեղքերը: Քանզի անպտղությունը պատիժ է, իսկ պատժի պատճառը մեղքերն են:

Քսենիան անխռով նայում էր իր հորեղբայր Ավերկիին: Իսկ Պարֆենին, ասես նրան չլսելով, շշուկով ինչ-որ բան էր խոսում կողքին կանգնածներից մեկի հետ:

Ֆեոպեմպտը նստել էր եպիսկոպոսական գահին, ձեռքերը գավազանին ծալած, իսկ ձեռքերին հանգչում էր կզակը: Ու շատերին թվում էր՝ քիչ բան է հասկանում: Ֆեոպեմպտը ծեր էր:

Եվ տաճարում գտնվողներից շատերը, որոնց, ինչպես հետո պարզվեց, իշխան Ավերկին էր սովորեցրել, սկսեցին բղավել, թե նույն տոհմի ուրիշ կին պիտի ներկայացնի Իրակլյաններին: Եվ այստեղ լսվեց, որ Պարֆենին պետք է կին առնի Ագլայային՝ Ավերկիի դստերը:

Դե ինչ, նա պատրաստ է՝ հավաստեց Ավերկին: Խոսքը հովվապետինն է: Եթե նա իր ժողովրդի հովիվն է, պետք է սատարի մեզ:

Եվ տաճարը ցնծաց, քանզի իշխան Ավերկիի խոսքը գեղեցիկ էր և ասվում էր բոլորի անունից, և բոլորը զգում էին իրենց կարևորությունը:

Ֆեոպեմպտը վեր կացավ: Վրահաս լռության մեջ դանդաղ քայլեց դեպի բեմը:

Ավերկիին չնայելով՝ հարցրեց.

Ասում ես, որ քո դուստր Ագլայան պատրաստ է դառնալ իշխան Պարֆենիի կինը:

Պատրաստ է, վեհապե՛տ՝ եպիսկոպոսին խոնարհում արեց Ավերկին:

Ֆեոպեմպտը գավազանը պարզեց Ավերկիի վրա.

Այս մարդն ինքը բացատրեց մեզ իր մտահղացումն ու գործողությունների կերպը: Ե՛վ մեկը, և՛ մյուսը ստոր եմ համարում:

Ավերկին շշուկով ասաց, բայց ամեն բառ լսվում էր.

Դու, վեհապե՛տ, գժտություն ես սերմանում: Իսկ իմ զարմուհի Քսենիան ամոթն է մեր տոհմի, որի բոլոր կանայք ծննդաբերել են ամուսնանանալուն պես:

Նույնիսկ չամուսնացած էլ են ծննդաբերել, ինչպես քո դուստր Ագլայան՝ լսվեց բազմության միջից:

Ո՞վ այստեղ համարձակվեց ստել՝ գոչեց Ավերկին:

Ամբոխը հետ քաշվեց, և բոլորը տեսան Քսենիայի նաժիշտ Ֆոտինյային:

Ես բազում տարիներ եմ ծառայում այս ընտանիքին, դրա համար էլ գիտեմ նրա բոլոր գաղտնիքները, չնայած բերանս միշտ խուփ է եղել: Բայց տեսնելով, թե ինչպես ես կործանում իմ տիրուհուն, զգում եմ, որ բացելու իսկական ժամանակն է: Պատասխան տուր ինձ, իշխա՛ն, թե ինչ երեխա են թաքցնում այնտեղ, որտեղ մեր հորդառատ Գետը, բազում բազուկների բաժանվելով, թափվում է Ծովը: Որ դա ճշմարիտ է, պատրաստ եմ երդվել խաչը համբուրելով, իսկ դու պատրա՞ստ ես:

Բայց իշխան Ավերկին պատրաստ չէր:

Եպիսկոպոսը կարճ միտք արեց և ասաց.

Համենայնդեպս լավ է, որ չհամբուրեցիր խաչը:

Իսկ այդ օրը պատարագին մասնակցածները հետագայում իրենք էին զարմանում, որ սատարել են այդ Ավերկիին, քանզի սրտով սիրում էին Քսենիային բարության ու հոգու մաքրության համար:

Ասում էին.

Երևի սատանան էր հուշել:

Նաև ասում էին՝ եպիսկոպոսին կրկնելով.

Համենայնդեպս լավ է, որ չհամբուրեց խաչը: Իսկ կարող էր:

Քսենիա

Այդ օրը թաքուն հույս ունեի, որ նենգ հորեղբայրս համենայն-

դեպս փոքրիկ պալատական հեղաշրջում կանի: Դեռ չէի թողել միանձնուհի դառնալու միտքը, և առիթը հարմար էր թվում: Գլխավորը, որ չնվաստացրին Պարֆենիին. հեռատես Ավերկին չմոռացավ հաճոյախոսություն անել նրան: Միայն Ֆեոպեմպտին էր թերագնահատել, և, իհարկե, Ֆոտինյային:

Չնայած, մեկ է, նրան ոչինչ էլ չէր հաջողվի: Սովորաբար հեզ ու հանդարտ Պարֆենին հորեղբորս ճառի ընթացքում շշուկով հրամայել էր տաճարից դուրս գալիս բռնել դավադրին: Հետո, իհարկե, չեղարկեց հրամանը. քանի որ դրա անհրաժեշտությունն այլևս չկար:

Ահա թե ինչպիսին է նա՝ իմ Պարֆենին:

Պարֆենիի քսաներորդ տարում լուրեր եկան Մեծ երկրից, որ ապագոնյան կայսր Նիկիֆորը զավթել է տարածքի զգալի մասը, և ոչ ոք ուժ չունի դիմակայելու նրան, իսկ որոշ տերություններ էլ հանձնվում են առանց դիմադրության: Եվ ուրախացան կղզիաբնակները, որ Մեծ երկրից բաժանված են Ծովով:

Իսկ մեր հողի վրա այդ բոլոր տարիներին հիշատակության արժանի ոչինչ չպատահեց: Սա չէ՞, արդյոք, իշխանությունների իմաստնության նշանը: Երջանիկ են տարեգրությունների մեջ չմտած ժամանակները: Օրհնյալ է նա, ում կառավարումը չի նշանավորվում պատմական իրադարձություններով, քանզի դրանցից համարյա յուրաքանչյուրը ծնվում է արյամբ ու տառապանքով:

Պարֆենիի քսաներկուերորդ տարում վախճանվեց եպիսկոպոս Ֆեոպեմպտը՝ պայծառ հիշողություն թողնելով իր մասին: Հուղարկավորությանը եկել էին նրա բարի գործերը, քանզի հավաքվել էին այնտեղ բազումք նրանցից, ում գաղտնաբար օգնել էր: Ֆեոպեմպտի հրաժեշտի արարողությունը լեցուն էր տխրությամբ և արցունքներով, չնայած բոլորին հասկանալի էր, որ եպիսկոպոսին ճանապարհում են երկնային հայրենիք, իսկ նրա համար լացողները դեռ օտարության մեջ են:

Ֆեոպեմպտից հետո Կղզու եպիսկոպոս դարձավ Եվսեբին:

Պարֆենիի քսանհինգերորդ տարում Կղզու հարավում, Գետի

ափին կանգնած լքյալ դղյակից սկսեցին տարօրինակ ու սարսափելի ձայներ լսվել: Ինչպես որ վայել է դղյակին՝ այն բարձր բլրի վրա էր, և այդպիսի դիրքի պատճառով ձայներն անխոչընդոտ տարածվում էին բոլոր կողմերը: Լսվում էին գերազանցապես գիշերը, և այնքան ուժեղ էին, որ շրջակայքի բնակիչները շուտով սկսեցին մի քանի ասպարեզ հեռվից շրջանցել դղյակը:

Ըստ էության, սակայն, հաճախ շրջանցելու կարիք էլ չէր լինում. դղյակը ճանապարհներից հեռու էր, անպես որ, բավական էր միայն չմոտենալ: Սակայն դղյակի կողքից՝ գետով լողացողները պատմում էին, որ սարսափել են այնտեղից լսվող տնքոցներից ու ստորգետնյա հարվածներից: Եվ բոլորին պարզ էր, որ այնտեղ գետնի տակից փորձում է դուրս պրծնել չար ոգին ու նրանից է տնքում, որ չի կարողանում:

Մի գիշեր հողը սովորականից ուժեղ դողաց, իսկ տնքոցներն այնքան աղեկտուր էին, որ շրջակա գյուղերում ոչ ոք աչք չփակեց: Եկեղեցի ունեցող գյուղերում մարդիկ հավաքվում էին աղոթքի և աղերսում երկնային ուժերին, որ ստորգետնյա ուժերը չարձակվեն վերև ու չտարածվեն այդ տեղանքում՝ աղետներ բերելով բնակիչներին: Ուղիղ կեսգիշերին այնպիսի ուժի հարված լսվեց, որ աղոթքի կանգնածների ոտքի տակ հողը ցնցվեց: Նույն պահին դղյակը բլրի հետ փլվեց Գետի մեջ ու կտրեց հոսանքը: Ջուրը տարածվելով հեղեղեց շատ գյուղեր ու հարակից դաշտերը, բայց այդ պահից տնքոցներն ու ստորգետնյա հարվածները դադարեցին: Իսկ Գետը փլված դղյակի տեղում պղնձի ու երկաթի հանքեր գտան:

Շտապ տեղ հասած եպիսկոպոս Եվսեբին զննեց բլրի հիմքը, միակ բանը, որ մնացել էր ամբողջից: Եպիսկոպոսը հիմքի բնույթից համոզվեց, որ տեղավայրն այլևս անվտանգ է, իսկ մարդուն թշնամի ուժերը պղնձով ու երկաթով հուսասի փակված են գետնի տակ:

Եպիսկոպոսին անհանգստացնողը Հարավում գտնվող Լեռն էր, որ լռում էր արդեն բազում դարեր: Ավանդույթը, սակայն, հայտնում էր, որ եղել է ժամանակ, երբ այն ցնցվել է, և կրակի գետեր են հոսել լանջերով, և դողով է բռնվել ողջ Կղզին:

Եվսեբին ասաց.

Վախենամ, թե սրանից հետո Լեռն էլ արթնանա, քանզի բոլոր բարձունքները ստորերկրյա կապ ունեն իրար հետ, և եթե այս փոքրիկ բլուրն այսքան աղմուկ արեց, ապա ինչ խոսենք մեծն Լեռան մասին:

Ասաց.

Ինչ վերաբերում է Գետին, չնայած առժամանակ հեղեղել է շուրջը, բայց շուտով նոր հուն կբացի իր համար, քանզի այստեղի հողը տալիս է այդ հնարավորությունը: Ուզում եմ միայն զգուշացնել բոլորին, ում մետաղ է հարկավոր, որ չփորձեն այստեղից հանել: Հանածոների բաղադրակազմը խոսում է այն մասին, որ պետք չէ արդյունահանել, քանզի կործանարար գործ է:

Սակայն երկաթի և պղնձի պետք ունեցող որոշ մարդիկ չանսացին եպիսկոպոսին: Բիր ու բահ առած եկան և անցան գործի: Եվ այդ ժամանակ հողը սարսափելի կրճտոցով բացվեց ու ողջ-ողջ կուլ տվեց հանքափորներին:

Պարֆենիի քսանյոթերորդ տարում Կղզի ժամանեցին ապագոնյան կայսր Նիկիֆորի պատվիրակները: Կայսրը ողջություն էր մաղթում մեծ իշխան Պարֆենիին և հայտնում, որ իր գայիսոնի տակ է միավորել ողջ լուսավորյալ աշխարհը: Իր թագի մեջ, սակայն, պակասում է մի մարգարիտ, որ Կղզին է՝ Աստծուց ու մարդկանցից վստահված իր եղբայր Պարֆենիին: Նորին Կայսերական Մեծությունը հակված է թեթևացնելու Պարֆենիի վրա դրված պատասխանատվության բեռն ու ստանձնելու Կղզու իշխանությունը: Իսկ Պարֆենիի դիրքը կբարձրացվի ներկայի համեմատ, և նա Նորին Կայսերական Մեծության կուսակալ կնշանակվի Կղզում:

Իշխան Պարֆենին լսեց Նիկիֆորի դեսպաններին և պատվիրեց իր եղբայրական երախտագիտությունը հայտնել կայսերը՝ ցուցաբերած հոգատարության համար: Դրա հետ միասին, չցանկանալով ծանրացնել կայսերական պարտականությունների անչափելի բեռը, Պարֆենին Նիկիֆորին հայտնում էր, որ պատրաստ է այսուհետ ևս կրել Կղզու կառավարման հոգսերը: Ինչ վերաբերում է աստիճա-

նի հնարավոր բարձրացմանը, Պարֆենին պատասխանեց, որ իրեն անարժան է համարում նման շնորհի և նախընտրում է մնալ իր նախկին խոնարհ դիրքում: Իշխանի հետ հանդիպումն ավարտելուն պես Նիկիֆորի պատվիրակներն ամենայն պատիվներով ուղարկվեցին Մեծ երկիր:

Պարֆենիի քսանութերորդ տարում Նիկիֆորը կրկին պատվիրակներ ուղարկեց: Նրանք պակաս բարեկամական տեսք ունեին, և խոսքի մեջ արդեն եղբայրության մասին բառեր չկային: Կայսրը տեղեկացնում էր իշխանին, որ իր կայսրության հիմնումը պատահականություն չէ, և մերձակա ու հեռավոր պետությունների հնազանդվելու մեջ տեսնում է դրա անվերապահ նշանը: Ըստ Նիկիֆորի՝ մեծ կայսրությունները ստեղծվում են մեծ գաղափարների համար, դրա համար էլ փոքր պետությունները միավորվում են մեծի մեջ, իսկ դրան սահման է դնում միայն նրանց ամբողջական մուտքը կայսրություն:

Կանխատեսելով Պարֆենիի առարկությունները՝ օգոստափառ փիլիսոփան նշում էր, որ միավորված պետությունները չափազանց շատ չեն լինում, քանզի, Ժողովողի խոսքով, *բոլոր գետերը հոսում են ծով և ծովը չի լցվում:* Բայց քանի դեռ թեկուզ մեկ գետ ծովը չի թափվել, նրա ջրերը բավարար չեն լինի, ուստի կայսրը չի հրաժարվի իր նպատակից:

Մարդասիրության մղումով՝ Նիկիֆորը Պարֆենիին առաջարկում էր արյուն չհեղել ու չպայքարել անխուսափելիի դեմ: Կղզու իշխանին զգուշացնում էր, որ դա վերջին ուղերձն է, որից հետո ոչինչ լինի, բացի պատերազմից ու բազում զոհերից:

Իշխան Պարֆենին պատվիրակներին իր համաձայնությունը հայտնեց առ այն, որ կայսրությունն ունի իր առավելությունները, ինչպես և, որ մեծ կայսրությունները ստեղծվում են մեծ գաղափարների համար: Բոլոր բերված փաստարկներն, անշուշտ, ճիշտ են Մեծ երկրի համար: Սակայն, շարունակելով փիլիսոփայական երկխոսությունը կայսեր հետ, Պարֆենին միևնույն ժամանակ ներկայացրեց իր առարկությունները: Մատնացույց արեց Կղզու գլխավոր

առանձնահատկությունը, որ այն բոլոր կողմերից շրջապատված է ջրով: Երկրի բնական մեկուսացումը նրա համար կանխանշված առանձնահատուկ ուղու նշան է, և իր կարծիքով՝ այդ նշանն անտեսելը շտապողականություն կլիներ: Ինչ վերաբերում է մեծ գաղափարին, ապա այն, չնայած մեծությանը, կարող է և անձիշտ լինել: Այդ ամենը իրեն՝ իշխան Պարֆենիին թույլ չի տալիս ընդունել կայսեր մեծահոգի առաջարկն ու մտնել կայսրության կազմի մեջ:

Կայսր Նիկիֆորից պատասխան չհետևեց: Ավելի ստույգ՝ պատասխանը ռազմանավերն էին, որ Կղզու ափերին հայտնվեցին Պարֆենիի իշխանության քսանիններորդ տարում: Նավերն այնքան շատ էին, որ թվում էր Ծովը չի տեղավորում: Ծովն ասես փոքրացած լիներ ու լճակ էր հիշեցնում՝ երեսին շաղված աշնանային տերևներով: Բայց տերևներ չէին դրանք, այլ ահեղ ռազմանավեր: Պարֆենիի հրամանով նրանց ընդառաջ ելավ կղզու նավատորմը, թվով խիստ սակավ, բայց պատրաստ կռվելու մինչև վերջինը:

Նիկիֆորի նավերը խարիսխ գցեցին Կղզուց երկու ասպարեզ հեռու: Ճոճվում էին ալիքների վրա, իսկ արևի տակ շողում էին կայսերական ռազմիկների սաղավարտները: Այդ փայլը կուրացնում էր առաջապահ նավի տախտակամածին կանգնած Պարֆենիին: Աչքերը կկոցած՝ հաշվում էր կայսեր նավերն, ու հաշիվն անընդհատ խառնվում էր: Հետո դարձավ տախտակամածին կանգնածներին ու հարցրեց.

Պատրա՞ստ եք, արդյոք, մեռնել Աստծու պահած մեր Կղզու համար:

Եվ կանգնածները պատասխանեցին.

Այո՛, պատրաստ ենք մեռնել:

Եվ նա այլևս ոչ մի բառ չասաց:

Իսկ երբ Պարֆենին ափ իջավ, նրան դիմավորեց աղաղակող ու մազերը պոկոտող կանանց բազմությունը: Նրանք աղերսում էին պահպանել իրենց ամուսինների, որդիների ու եղբայրների կյանքը՝ ասելով, որ ամենազոր է կայսրը, և ցանկացած դիմադրություն անօգուտ է: Ձեռքերը պարզում էին դեպի Ծովն ու Պարֆենիին կո-

չում համեմատել երկու նավատորմները, և ասում էին, որ կայսերական նավատորմի կողքին կղզունը չի էլ երևում: Եվ այդ ժամանակ Պարֆենին հարցրեց նրանց.

Պատրա՞ստ եք, արդյոք, ապրել օտարի իշխանության տակ:

Մենք պատրաստ ենք պարզապես ապրել, ասացին կանայք:

Եվ Պարֆենին լուռ նայում էր նրանց, և ոչ ոք չգիտեր՝ ինչ է մտածում:

Երկու օր տորմիղները կանգնած էին դեմ դիմաց, իսկ երրորդին պատվիրակներ եկան Նիկիֆորից: Կայսրը հայտնում էր, որ զորքն անվերջ անգործ չի մնալու և պատրաստ է գրավել Կղզին: Նա իշխանին առաջարկում էր հանդիպել՝ զգուշացնելով, որ դա առաջին ու վերջին հանդիպումն է լինելու:

Եվ շուտով յուրաքանչյուր տորմիղից մեկական նավ բաժանվեց ու մոտենալով՝ կանգնեցին կողը կողին: Իշխան Պարֆենին և կայսր Նիկիֆորը խոսակցում էին՝ իրենց նավերը չլքելով, և ոչ ոք չէր լսում նրանց խոսակցությունը, քանզի իրենց անվտանգությունն ապահովելով՝ պայմանավորվել էին, որ տախտակամածերին մարդ չլինի: Մյուս նավերից երևում էր, թե ինչպես են կանգնած՝ ամեն մեկն իր նավակողին, բայց կայսերական նավը զգալիորեն բարձր էր, այնպես որ, Նիկիֆորը վերևից ներքև էր նայում Պարֆենիին, և դրա մեջ ավելին կար, քան նավակողերի բարձրության տարբերությունը: Կայսրն ինչ-որ բան էր ասում՝ Կղզին ցույց տալով, իսկ Պարֆենին անշարժ կանգնած էր, միայն քամին էր խառնում մազերը: Այդպես երկար խոսեցին, հետո իշխանը խոնարհեց գլուխն, ու նրա նավը դանդաղ լողաց դեպի ափ:

Ափին Պարֆենիին դիմավորեց ամբոխը, որ սպասում էր նրա խոսքին: Սակայն ոչ մի բառ չպոկվեց նրա շրթունքներից: Եվ բոլորը, չգիտես ինչու, մտածեցին, որ պատերազմ է սկսվում, և կանանցից մեկը ճչաց.

Մի՛ թող կործանվենք, չէ՞ որ հոր տեղ ես մեզ համար:

Եվ այդ ժամանակ Պարֆենին ասաց.

Դուք չեք կործանվի: Բայց ձեր հայրն այսուհետ կայսր Նիկիֆորն է:

Ու հեռանալով՝ ցույց տվեց ծովի կողմը: Ու բոլորը տեսան, որ կղզու նավերը շրջվել են դեպի ափ, ու կայսեր նավերն էլ սկսեցին շարժվել: Ծուտով պարզ դարձավ, որ Նիկիֆորի տորմիղը ուղղություն է վերցրել դեպի Կղզին:

Հաջորդ առավոտ կայսերական զորքը նավահանգստից շարժվեց Քաղաք: Նրանց դիմավորում էին լռությամբ, և ուրախություն չկար այդ լռության մեջ, բայց ատելություն էլ չկար, այլ միայն զարմանք: Քաղաքի դարպասները բաց էին, և նրանք ներս մտան ճանապարհին բարձրացած փոշու հետ, և նրանց սաղավարտներն արդեն չէին շողում առաջվա պես, բայց փայլում էին քրտինքով ողողված դեմքերը:

Դարպասներից ներս նրանց դիմավորեց միայն Ամբրոսին, որը զորքին ներկայացավ որպես Քաղաքի պետ: Ամբրոսիին տեսնելով՝ ռազմիկները տխրեցին, իրար ասելով՝ եթե քաղաքագլուխն այսպիսի տեսք ունի, ապա ինչպիսին պիտի լինեն քաղաքի մուրացիկները:

Իսկ Ամբրոսին ասաց.

Ինչ-որ բան ինձ հուշում է, որ այս սաղավարտակիրները երկար են մնալու այստեղ, բայց, ի սեր բոլոր սրբերի, որտե՞ղ ենք տեղավորելու այսքան երկաթն ու փոշին: Վախենամ, որ քաղաքում շատերը ստիպված լինեն նեղություն տալ իրենց:

Ինչը և շատ շուտով գտավ իր հաստատումը:

Պարֆենի

Հիշում եմ այդ օրերը որպես, գուցե, ամենածանրը իմ կյանքում:

Բոլոր փորձություններն ու նվաստացումները, որ ինձ ու Քսենիային վիճակվեց կրել շատ տարիներ անց, անձնական էին ու վերաբերվում էին միայն մեզ: Իսկ այն ժամանակ ես պատասխանատու էի ողջ Կղզու համար:

Ես ստիպված էի ընտրություն անել այնտեղ, ուր, անկեղծ ասած, ավելի լավ կլիներ չընտրել: Ես փորձում էի գուշակել՝ ինչ կա

բռունցքներից մեկում, երբ երկու բռունցքն էլ դատարկ էին: Դժբախտաբար նույնիսկ ընտրությունից հրաժարվելու իրավունք չունեի: Ընտրությունը ինչպես միշտ երկուսի միջև էր՝ *պետք է հնազանդվել ճակատագրի հարվածներին, թե պետք է դիմադրել:* Այս արտահայտությունը, նկատեմ, արդեն կար իմ ժամանակ:

Առաջին դեպքում պարզապես պետք էր նավահագիստ թողնել թշնամու նավերն ու բացել Քաղաքի դարպասները: Ինչ էլ բա՛ռ է՝ *պարզապես... Պարզապես* համաձայնել հավերժ արտաքին կառավարման՝ մշտական կողոպուտով և, որ ամենավատն է, սեփական ժողովրդի մշտական նվաստացմամբ:

Երկրորդ դեպքում մեզ սպասում էր պատերազմն ու մահը. բազում մահեր: Իսկ հետո, ամենայն հավանականությամբ, այն, ինչով մեզ սպառնում էր առաջինը, որովհետև երկար չէինք կարողանա կռվել Նիկիֆորի դեմ: Եթե հարցը միայն ինձ վերաբերեր, կդիմադրեի. թեկուզ միայն նրա համար, որ հետո ամոթ չլիներ:

Ես երկար եմ մտածել որոշում կայացնելուց առաջ ու դրանից հետո էլ շարունակում էի մտածել: Իմ որոշումն էր՝ Կղզին հանձնել կայսերը:

Կայսրը կամային մարդ էր: Ցանկանում էր ստանալ Կղզին ու ստացավ: Հիմա նա մեռած է, և այլևս ցանկություններ չունի: Կանայք, որ ինձ խնդրում էին հանձնել Կղզին, վախենում էին իրենց ամուսինների համար: Հիմա նրանք նույնպես մեռած են ու ոչնչից չեն վախենում:

Քսենիա

Պատրաստ եմ հաստատել, որ Պարֆենիի կյանքում ավելի ծանր ժամանակ չի եղել: Դեռևս Նիկիֆորի առաջին պատվիրակությունից առաջ իրավիճակի զարգացումը միանգամայն կանխատեսելի էր: Երբ Պարֆենին ասում է, որ շատ է մտածել իր որոշման մասին, նկատի ունի տարիները, որ անցել էին Նիկիֆորի կայսրության հզորանալուց մինչև նրա ներխուժումը Կղզի: Եվ շարունակում էր իր

որոշումը ծանրութեթև անել շատ տարիներ անց: Իմ կարծիքով, հիմա էլ է շարունակում մտածել:

Վերջնական որոշում էր կայացրել՝ տեսնելով կանանց ամբոխը, որոնք խնդրում էին չխլել իրենց ամուսիններին:

Հետո այդ կանայք մեղադրեցին նրան դավաճանության ու կայսեր հետ գաղտնի պայմանավորվածության մեջ: Հետաքրքիր է՝ ի՞նչ կարող էր պայմանավորվել Պարֆենին: Որ կորցնում է իշխանությո՞ւնը:

Այդ կանայք առանց բացառության բոլոր դժբախտությունների մեղքը բարդեցին Պարֆենիի վրա: Ասում էին, որ Կղզում երբեք այնքան վատ չեն ապրել, որքան Նիկիֆորի օրոք, և դրա համար մեղադրում էին ամուսնուս: Մոռանալով միայն, որ ապրե՛լ են: Պարզապես ապրել են: Ու որ հենց այդ էին խնդրում Պարֆենիից: Եվ շատերը, եթե պատերազմ լիներ, կարող էին և չապրել:

Գլուխ ութերորդ
ԿԱՅՍՐ ՆԻԿԻՖՈՐ

Քաղաք մտնելուց հետո Նորին Կայսերական Մեծություն Նիկիֆորը հռչակվեց Կղզու գերագույն տիրակալ, իսկ իշխան Պարֆենին նրա կուսակալն էր: Ոմանք ասում են, որ Պարֆենին սկզբում հրաժարվել է պաշտոնից և ուզում էր հեռանալ Կղզուց: Մյուսներն ասում են՝ եպիսկոպոս Եվսեբին իշխանին հիշեցրել է Ագաֆոն Ապագայատեսի խոսքը նրա և բարեպաշտ իշխանուհի Քսենիայի խաղաղարար առաքելության մասին: Այդպես է եղել, թե ոչ՝ հայտնի էր միայն իշխանին ու եպիսկոպոսին, բայց իշխանը մնաց:

Նա առաջվա պես կառավարում էր Կղզին, բայց հիմա փոքրիշատե կարևոր ցանկացած որոշման համար ամեն անգամ թույլտվություն էր խնդրում կայսրից: Տեսանելի փոփոխություններից նշեմ միայն այն, որ իշխանական զորքը մտավ կայսերական բանակի կազմ ու փոխեց համազգեստը: Եթե ավելի ստույգ, ապա համազգեստ ստացավ, որովհետև մինչ այդ ոչ մի համազգեստ ու միօրինակություն էլ չկար, ամեն մեկը հագնվում էր սեփական ցանկությամբ: Կղզու ռազմիկներին զգուշացրին, որ պատերազմի դեպքում նրանց, որպես կայսերական բանակի ստորաբաժանում, կարող են ուղարկել աշխարհի ցանկացած կետ: Բայց պատերազմ ու հակառակորդ չկար, քանզի ողջ աշխարհին արդեն պատկանում էր կայսերական թագին:

Տեսանելի փոփոխությունների թվին է պետք դասել նաև Մայրցամաքի հետ ծովային կապի ամրապնդումը: Ավելի ու ավելի հաճախ կարելի էր տեսնել, թե ինչպես են նավահանգստից Մեծ երկիր լողում նավերը՝ բարձած փայտով, մսո...

Պարֆենի

Մտ-ն *մտով*-ն է: Այս սննդարար բառի վրա տարեգրությունն ընդհատվում է 150 տարով: Հետագա 150 տարիները պարզապես կտրել-հանել են: Քիչ էր մնում ասեի՝ *անդող ձեռքով,* բայց ձեռքն այստեղ կապ չունի. կարծում եմ՝ ձեռքը հենց դողում էր: Բայց դա արդեն ոչ թե եղբայր Մելետիի, այլ եղբայր Գալակտիոնի ձեռքն էր: Էջերի ծվենները ցցվել են կազմից, հաշմանդամի ծայրատ ոտքերի պես:

Կայսերական բռնազավթման ժամանակաշրջանը նկարագրող թերթերը, շատ տարիներ անց, հրամայել էր պոկել կղզու Կառավարության նախարար Աթանասը: Պարզվել էր՝ այդ թերթերը հերոսական անցյալի էջեր չեն: Աթանասի համար անհասկանալի կերպով՝ տարեգրությունն ամփոփում էր ոչ հերոսական անցյալի իննսունհինգ էջ:

Այնպես պատահեց, որ նախարարն այցելել էր վանք, և այնտեղ նրան ցույց էին տվել տարեգրությունը: Քիթը խոթել էր մատյանն ու հանդիպել կայսրության կազմում Կղզու հայտնվելու դրվագին: Եղբայր Գալակտիոնը, որն այդ ժամանակ տարեգիրն էր, հետագայում նկարագրում է, թե նախարարն ինչպես ճգվեց ու շարժեց բեղերը: Այդպիսի պատմությունը նրան չէր բավարարում:

- Մկրա՛տը,- միայն շրթունքներով հրամայեց նա:

Մկրատ բերեցին, և Աթանասը գլխով ասեց Գալակտիոնին.

- Կտրի՛ր:

Գալակտիոնը շփոթված նայեց նախարարին:

- Բայց սա, ինչպես ասում են, պատմություն է... Չէ՞ որ հետաքրքիր է՝ ինչպիսին կա...

- Հապա՛,- գոռաց նախարարը:

Գալակտիոնը գործի անցավ: Ճռթոցով բացեց մատյանը, այնպես, որ կռնակն անբնական փքվեց: Մտածեց, որ հակաբնական բան է կատարվում: Այդպես կալանավորի ձեռքերն են ոլորում:

Մատյանը սեղմեց սեղանին ու վրան երկու ձղոն դրեց, որ չփակվի: Ձեռքն առավ մկրատը, ինչպես ձին կրտողն է դանակ վերցնում... Այդ պահին Գալակտիոնին թվում էր՝ ամորձատում է պատմությունը:

Կտրեց 94 թերթ, իսկ առաջինը մնաց մատյանում, որովհետև դարձերեսին նախորդ գլխի ավարտն էր:

Նախարար Աթանասը մատը տնկեց բոցկլտացող վառարանին.

- Վառի՛ր:

Եղբայր Գալակտիոնը կտրածն էջ առ էջ գցեց վառարանը: Թերթերը նախ ոլորվեցին՝ կրակից տնքալով ու դիմադրելով նրան: Հետո բռնկվեցին անասելի պայծառ, ասես տալիս էին իրենց մեջ կուտակած ողջ լույսը, այնպես, որ տառերը հստակ կարդացվում էին նույնիսկ տարածության վրա, իսկ հետո կրակն անմնացորդ խժռեց ամբողջը:

Նախարարը Գալակտիոնին չէր շտապեցնում. նրան դուր էր գալիս հետևել տեքստի տառապալից վախճանին:

- Եթե պատմությունը հերոսական չի,- մտախոհ ասաց նա,- ուրեմն պատմություն չի:

Նա շրջվեց ուղեկցողների կողմն ու իր գյուտից ուրախացած՝ գոռաց.

- Լսո՞ւմ եք, դատարկախոսնե՛ր. եթե պատմությունը հերոսական չի, ուրեմն պատմություն չի: Գրի՛ առեք:

Ձեռագիր մատյանի էջերի ոչնչացումը ներսից վառեց Գալակտիոնին: Հիմա նա գերեզմանում է, և այդ կրակը մարել է: Նախարար Աթանասն էլ է գերեզմանում: Նրա մահը կարելի է տարաշխարհիկ համարել, քանի որ կոկորդիլոսի մասնակցությամբ եղավ: Կոկորդիլոսն էլ է մեռած:

Քսենիա

Եթե լավ մտածենք, ապա *ապագոնյան ծանր լուծը* մեր ժողովուրդը բավական թեթև ու նույնիսկ համարյա արժանապատվորեն

տարավ: Եթե չլիներ ապագոնյան և կղզու լեզուների էական տարբերությունը, ապա, ճիշտն ասած, լուծն այնքան էլ նկատելի չէր լինի:

Այո՛, մենք սովորում էինք ապագոներենը. օտար լեզվի իմացությունը դեռ ոչ մեկին չի վնասել: Ասեմ, բնավ վատ լեզու չէ: Նույնիսկ մի տեսակ մեղմ է կղզու լեզվից, և մեղմությամբ ասես ներողություն է հայցում զավթիչի դերի համար. դրա համար չէր հորինվել:

Ես ապագոնյան ներկայությունը միայն սև գույնով չէի պատկերի: Մենք կայսրության *ծայրագավառ* էինք. դա ճիշտ է: Բայց իմաստային շեշտը կարելի է նաև այլ կերպ դնել՝ *կայսրության* ծայրագավառ: Ամենայն նորը, որ կար աշխարհում, ստանում էինք կայսրության հետ միասին: Պետք է ասել, որ զավթիչները որոշակի լայնախոհություն էին դրսևորում:

Մենք հասկանում էինք դա: Ու ողջ հոգով չէինք սիրում նրանց:

Երբ Նիկիֆորի զորքերը գրավեցին Կղզին, Պարֆենին ինձ ասաց, որ կթողնի իշխանությունը: Գտնում էր, որ իրավունք չունի մասնակցելու Կղզու կառավարմանը: Նույնիսկ մտածում էր ընդհանրապես Կղզին լքելու մասին: Եվ դրա մասին ասաց կայսերը:

Իմանալով Պարֆենիի անբասիր ազնվությունը՝ Նիկիֆորը նրան խնդրեց մնալ: Անկասկած է, որ կայսրն ինքը անբասիր ազնիվ չլինելով՝ մյուսների մեջ գնահատում էր այդ հատկությունը: Փորձը հուշում էր, որ այդպիսի մարդիկ կանխատեսելի են և նրանցից պետք չէ նենգություն սպասել: Ասենք, կղզիաբնակների համար էլ, կարծում էր Նիկիֆորը, ընթացիկ հարցերում ավելի լավ է գործ ունենալ նրանց հետ, ում վարժվել են:

Պարֆենին չէր պատրաստվում ականջ դնել կայսեր կարծիքին: Եվ եպիսկոպոսն էր այն մարդը, որը ստիպեց նրան փոխել նախնական ծրագրերը: Եվսեբին իշխանին հիշեցրեց, որ Ագաֆոնի մարգարեությունը Կղզու բարօրությունը կապում է մեր ամուսնության հետ, և կայսեր իշխանությամբ այդտեղ ոչինչ չի փոխվել: Այդպես Պարֆենին դարձավ կայսերական կուսակալ:

Այդ տարիներին մեզ միշտ որևէ մեկը գաղտնալսում էր: Այսօրվա

զարմանահրաշ էլեկտրոնիկայի բացակայության պայմաններում այն ժամանակ ոչ վատ արդյունքներ էր տալիս նաև պատին սեղմած սովորական գավաթը: Չնայած՝ լսողների որսն այնքան էլ հարուստ չէր, քանզի գերազանցապես զբոսնելիս էինք զրուցում: Զբոսանքները սիրեցինք հենց այդ ժամանակ, որովհետև ազատ կարելի էր խոսել միայն Պալատից դուրս: Մեր Պալատում վխտում էին լրտեսները, և նրանց ականջներն անչափավոր գաղտնալսումից միշտ ուռած ու կարմիր էին: Համենայնդեպս, հիմա ինձ այդպես է թվում:

Կղզիաբնակներն այն ժամանակ չէին էլ ենթադրում գաղտնի ոստիկանության, կանոնավոր կերպով Մեծ երկիր ուղարկվող զեկուցագրերի, այն ամենի մասին, որի համար կայսրությունը, ցանկանալով հնարավորինս երկար գոյատևել, չէր ծուլացել հոգալ: Դա նրան օգնեց հարյուր հիսուն տարի. պատմական չափանիշներով այնքան էլ երկար ժամանակամիջոց չէ:

Օտարերկրյա տիրապետության վերջին տարիներին արդեն պարզ էր, որ կայսրությունը փլուզվում է: Կայսրության կազմի մեջ մտած մյուս երկրների հանգույն՝ Կղզում էլ ապստամբություն սկսվեց: Դա վերջին ու համեմատաբար խաղաղ ապստամբություններից մեկն էր կայսրության դեմ: Այսպես ասած՝ հավուր պատշաճի: Որ հասցնես ապստամբել, քանի դեռ կայսրությունը չի կործանվել:

Պարֆենին կայսերական զորքերին արգելեց ուժով ճնշել ապստամբությունը, և նրան լսեցին: Իսկ երբ կայսրությունը դադարեց գոյություն ունենալ, բոլոր համաքաղաքացիներին կոչ արեց մարդասիրաբար վերաբերվել ապագոնյան զինվորներին, ապա ուտելիք ու վերադարձի համար նավեր տվեց նրանց:

Աչքս ընկավ Պարֆենիի գրածին: Ահա հիշատակում է նախարար Աթանասին: Ինչի՞ նախարար էր: Հիմա միանգամից չես էլ հիշի: Ուշագրավ անձնավորություն է. չնայած և՝ բառի ոչ լավ իմաստով:

Մի անգամ Պարֆենիին հարցրի.

- Աթանասն իսկապե՞ս կարծում էր, որ տեքստը կտրելով՝

կթաքցնի պատմությունը: Չէ՞ որ բազում այլ աղբյուրներ կան: Մի՞թե մտածում էր, որ ոչ ոք չի իմանա ապագոնացիների մեկուկեսդարյա տիրապետության մասին:

- Ոչ, իհարկե,- պատասխանեց Պարֆենին:- Դա նշան էր, որ այդպիսի պատմություն չպիտի լինի:

Հեռանալիս նախարարը հետաքրքրվեց՝ չի՞ հայտնաբերվել մարգարեությունը, որ Պրոկոպին հանել էր մատյանից: Գալակտիոնը տարածեց ձեռքերը:

- Ափսո՛ս,- ասաց Աթանասը:- Ափսոս, որ Պրոկոպին դավաճան դուրս եկավ:

Հայացքս սահում է Պարֆենիի մանր, բայց համաչափ ձեռագրի վրայով... Ահա և իմ գրածը. մեր ձեռագրերը նմանվել են իրար: Այդպես լինում է նրանց հետ, ովքեր երկար միասին են ապրում: Նմանվում են ձեռագրերը, արտաքինը, զգացողությունները, մտքերը: Ընդհանրապես՝ մարդիկ: Երկուսից մեկը հեռանում է՝ մյուսին թողնելով համատեղ վաստակածը: Հեռանում է երկրորդը. և երկուսից մնում է միայն ձեռագիրը, գրոտած էջերը: Որոնք հեշտությամբ կարող են վառվել:

<…>

Գլուխ տասնչորսերորդ
ՊԱՐՖԵՆԻ ԵՎ ՔՍԵՆԻԱ

Ես՝ բազմամեղ վանական Նեկտարիս, շարունակում եմ իմ երկար պատմությունն ու հոգու ցնծությամբ հայտնում, որ Ապագոնյան կայսրությունն ընկավ: Երբ Կղզուն վերադարձվեց անկախությունը, մեր երկրի քաղաքացիները կամեցան, որ առաջվա պես իրենց կառավարի իշխան Պարֆենին, քանզի սիրում էին նրան:

Իշխանն իրեն դրսևորել էր որպես իմաստուն տիրակալ և բարեսիրտ մարդ՝ թե՛ իր միանձնյա տիրապետության տարիներին, թե՛ կայսեր կուսակալի պաշտոնում: Շատերը Կղզում ողջ մնացին միայն նրա հովանու շնորհիվ, բայց դրա մասին իմ նախորդները գրել են՝ պատմելով կայսրերի կառավարման մասին:

Պարֆենիի խնդրանքով Կղզու ազատագրումից հետո հայտարարվեց համատեղ կառավարում՝ իշխանուհի Քսենիայի հետ: Եվ չնայած առաջ էլ իշխանությունը միանձնյա նրանը չէր, իշխանակցության մասին հայտարարությունը, նրա կարծիքով, պետք է որ ավելի շատ համապատասխաներ Ագաֆոն Ապագայատեսի մարգարեությանը: Բացի այդ, նրանց ամուսնությամբ միավորվել էին երկու իշխանական ծյուղերը, և համատիրակալությունն այդ միավորման ակնառու մարմնացումն էր:

Ապագոնյան զորքերը հեռացան, և նրանց հեռանալը նույնքան անարյուն էր, որքան ժամանակին մուտքն էր եղել: Եվ նրանց մուտքի, ապա, երկար ժամանակ անց, նաև հեռանալու վկաները տխրությամբ գիտակցեցին, որ 150 տարով մեծացել են: Բայց այդպիսիք շատ քիչ էին, քանզի դիմավորողների մեծ մասը, ինչպես որ բնական կարգն է, վաղուց պառկած էին գերեզմանում: Ասենք, նավ էլ բարձրանում էին բնավ նրանք, ովքեր ժամանակին նավերից

իջել էին: Բնականաբար, նավերն էլ էին փոխվել և այդ ժամանակ արդեն շոգենավեր էին: Նույնիսկ կայսրերն էին փոխվել, որոնցից յուրաքանչյուրին, որպես Կղզու տիրակալի, տարեգրության մեջ առանձին գլուխ է նվիրված:

Քսենիա

Ավա՛ղ, ավա՛ղ: Ութերորդ գլխին հիմա տասնչորսերորդն է հաջորդում, և արդեն ոչինչ չես շտկի: Խեղճ Մելետին, ինչպես և նրա հետնորդները, որ գրել էին հատված գլուխները, չէին պատկերացնի, որ տարիներ անց ինչ-որ մեկը կվառի տարեգրության էջերը:

Եվ արդյո՞ք սարսափելի մահը, որ վրա հասավ Աթանասին, պատիժ չէր պատմությունը վառելու համար: Քամահրելու համար ապրած ժամանակը, որն, այո՛, հավերժություն չէ, բայց չէ՞ որ նույնպես ինչ-որ բանի համար տրվում է: Չխոսելով արդեն այն մասին, որ Աթանասի դեպքում դա անմահի մահ է: Այն դեպքում, երբ այդպիսի անունով նա կարող էր եթե ոչ հավերժ, ապա առնվազն երկար ապրել:

Կառքերի, սանրվածքների, զգեստների և այլ անկարևոր երևույթների մասին նույնպես խոսվում է նախորդ գլուխներում: Դրանք ինքնուրույն նշանակություն չունեն և իմաստ են ստանում միայն որպես ժամանակի նշաններ: Այդպես վերստասյունը, որքան էլ խայտաբղետ ներկած լինի, միայն մի խնդիր ունի՝ նշել ճանապարհը:

Նորաձևություն բառով մեր կյանք մտնողը կոչված է բոլորիս ցույց տալու, թե որքան արագ է շարժվում ժամանակը: Ես նրանցից եմ, ում համար նորաձևությունն անէական է, այսինքն ուղիղ իմաստով՝ գոյություն չունի: Հագուստս միշտ միագույն է, եթե, իհարկե, չի կեղտոտվել, և մեկ ձևվածքի, եթե պատահմամբ չեն քանդվել կարերը:

Ի՞նչ եմ մտածում ես՝ անարժան միաբան Նեկտարիս, նայելով արագահոս ժամանակին: Ընթացքն առավել նկատելի է, երբ տեսնում ես ավարտն այն իրադարձությունների, որ սկիզբ են առել ոչ երեկ, ոչ այսօր, այլ, ասենք, հարյուր հիսուն տարի առաջ: Դեռ երեկ

թվում էր՝ պատմությունն ընդմիշտ քարացել է, այսուհետ բաղադրվելու է զուտ մանր դեպքերից, քանզի ողջ նշանակալին մեկընդմիշտ է հաստատվել: Բայց երկու դար էլ չի անցնում, և ողջը աշխարհը կուլ տված կայսրությունը փլուզվում է, և ներսից, ինչպես հեքիաթային կենդանու որովայնից, անվնաս ելնում են ոչ մեծ տերություններ: Ո՛չ դաժան պատերազմներ, ո՛չ նենգ դավադրություններ, իսկ կայսրությունն, ահա, կործանվել է:

Այն կործանել է ժամանակը: Ինչպես լեռնապարներն են հալչում, իսկ սրագագաթ ժայռերը մաշվում ալիքներից՝ կայսրություններն էլ փլուզում է հոսող ժամանակը: Ժամանակի շարժումը ալիքաձև է: Ուրեմն քանի անգամ պիտի խփի, որ ժայռակտորը գլաքար դառնա:

Հարցն ավելորդ է, քանզի քանի անգամ պետք է, այնքան էլ կխփի. համբերատար է ժամանակը: Ժամանակը շտապելիք չունի: Մեզ է հատուկ շտապելը, չնայած եթե կյանքին նայենք պատմական չափումով, ապա մենք էլ չէինք շտապում:

Շտապո՞ւմ էինք, արդյոք, արագ ազատվել ապագոնյան տիրապետությունից: Ո՛չ, որովհետև չէինք զգում մեր անազատությունը. այն իր վրա էր առնում իշխան Պարֆենին՝ մեն-մենակ՝ մեր ողջ երկրի համար: Ու ստացվում էր, որ նրա թիկունքում մեզնից յուրաքանչյուրն արդեն ազատ էր: Հիմա եկել է ողջ Կղզու ազատության ժամանակը, ուրեմն ինչո՞ւ չգիտենք ինչպես վարվենք մեր ազատության հետ: Պատում է ինձ անողոք ծերությունը, և սրա պատասխանն արդեն ես չեմ տալու:

Բարեպաշտ Պարֆենիի և Քսենիայի համատեղ տիրապետության երկրորդ տարում իմաստնագույն անապատական Նեկտարին զառամելով, ինձ՝ անարժան Իլարիիս նշանակեց հետևելու ժամանակներին ու տարիներին:

Ասաց.

Պատմությունն ավելի ու ավելի ինքնահաճ է դառնում, և ես արդեն չեմ կարողանում տիրապետել նրան: Իսկ դու, եղբա՛յր, փիլիսոփա ես. գուցե մի բան հասկանաս:

Ինչ փիլիսոփա եմ ես և ինչ պիտի հասկանամ: Դրա և շատ այլ բաների մասին ասացի ծերունազարդ սրբահորը, բայց նա խուլ էր իմ փաստարկների հանդեպ: Վաղուց արդեն քիչ բան էր լսում:

Նույն տարում Կղզում չտեսնված դեպք պատահեց. դիվական ուժերը ոտնձգեցին իշխանական զույգի դեմ: Ծովեզերքին էր, ուր ամուսինները մեկնել էին ամռանը: Մանրամասն լրտեսելով նրանց սովորույթները՝ Լեոնիդ անունով չարագործն իրիկնային զբոսանքի պահին իշխաններին դարանակալել էր Ծովի ափին: Ավելի ճիշտ՝ առանձնակի լրտեսելու կարիք էլ չուներ, քանզի բոլորը գիտեին, որ Նորին Պայծառափայլություն իշխանները երեկոներն իջնում են ծովի օդ շնչելու: Հայտնի էր նաև, որ տնից դուրս էին գալիս առանց թիկնազորի:

Լեոնիդը, որն իր զոհերին սպասում էր ծեր կաղնու բնի ետևը, ընդառաջ ելավ ինքնաշեն ռումբը ձեռքին: Ու քանի որ, ի տարբերություն, բարեպաշտ ամուսինների, խուճապի մեջ էր, ռումբն ընկավ ձեռքից ու պայթեց:

Պարֆենին ու Քսենիան, դեռ չհասկանալով՝ ինչ է կատարվում, նետվեցին օգնելու վիրավորին, որի երկու ոտնաթաթերը կտրվել էին: Քսենիան հանեց գլխաշորը, երկու կես արեց և ուզում էր վիրակապել ոտքերը, ավելի ստույգ՝ ինչ դրանցից մնացել էր, բայց Լեոնիդը մոտ չթողեց նրան: Ոտքերը ողջ ուժով խփում էր գետնին և անհասկանալի ինչ-որ բան գոռում, և մսի ու շորի փերթերի արանքից ծերմակին էին տալիս մերկացած ոսկորները: Հետո ցավից գիտակցությունը կորցրեց, իսկ երբ ուշքի եկավ, նրան հարցրին, թե ինչու էր հրաժարվում օգնությունից: Հիշյալ Լեոնիդը պատասխանեց, որ սարսափում էր պատժից, քանզի մտածում էր, որ իրեն ուզում են սպանել:

Հետագայում Նորին Պայծառափայլություն իշխաններն այցելեցին նրան դարմանատանը: Բուժման ծախսն էին բերել ու նվերներ, ու նաև հարցրին՝ ինչն էր իրենց հանդեպ նրա ատելության պատճառը:

Եվ Լեոնիդը պատասխանեց, որ ատելություն չունի, և իրեն ռմբահարության է մղել պարտքի զգացումը: Նա ցանկացած իշխանություն

ու իշխանավորի դիտում էր որպես բացահայտ չարիք և արժանի համարում ոչնչացման: Իսկ որ իշխանական զոյգը համընդհանուր սեր էր վայելում, վիրավորի աչքին ծանրացուցիչ հանգամանք էր, քանզի կարող էին վարանել ոչնչացման ենթակա թշնամու առաջ:

Պարֆենի

Հիշում եմ մեր հանդիպումը ոտնակորույս Լեոնիդի հետ: Կարծես թե *ոտնակորույս* հիվանդանոցի բժիշկ Լեոնն ասաց: Ըստ երևույթին դա նրան շատ էր դուր եկել, քանի որ անընդհատ կրկնում էր: Մի պահի ինձ ու Քսենիային պարզ դարձավ, որ բժիշկ Լեոնը թունդ հարբած է: Ես հակված չեմ խիստ գնահատելու բժշկի մեղքը. ի վերջո, ես ու Քսենիան առանց զգուշացնելու էինք եկել: Նա մի քանի անգամ կրկնեց, որ եթե իր հիվանդը ոտնակորույս չլիներ, ապա ավարտին կհասցներ գործն ու համենայնդեպս կպայթեցներ մեզ:

- Կպայթեցնեի,- արձագանքի պես կրկնեց Լեոնիդը:

- Բայց հիմա, ոտնակորսվելով, չի պայթեցնի,- ժպտաց բժիշկ Լեոնը:

Լեոնիդը թոթվեց ուսերը: Քսենիան նրա ձեռքն առավ ափերի մեջ.

- Մենք ձեզ ներում շնորհելու հրամանագիր ենք արձակել:

Արցունքի կաթիլն իջավ Լեոնիդի այտով: Արցունքի մի քանի կաթիլ էլ բժշկի այտերով սահեցին.

- Դա պարզապես... Դուք դրանով մեզ բոլորիս... ոտնազրկեցիք:

Լեոնիդը լուռ էր:

- Այդ կարգի որոշումները...,- բժիշկ Լեոնը աղմուկով մաքրեց քիթը:- Հիմա նա ձեզ ոչ մի դեպքում չի պայթեցնի:

- Կպայթեցնեմ,- ասաց Լեոնիդը:

Այս ցավալի դեպքով բացվեց մահափորձերի շարքը Կղզում: Նախկին դարաշրջաններում պատահում էր, որ չարագործները սպանում էին ատելի մարդկանց՝ կրակելով անկյունից կամ, ասենք,

գավաթը թույն լցնելով: Ընդամին, առաջնորդվում էին իրական, թեկուզ և մեղավոր զգացմունքով: Իսկ վերջին ժամանակները Կղզին հեղեղած հարձակումներում արդեն զգացմունքներ չկային, միտքն էր իշխում, հոռի, անզգա միտքը:

Զգացմունքն ու կիրքը ներդաշնակ պիտի լինեն, որ զսպեն իրար: Եթե բաղադրիչներից մեկը բացակայում է, սպասիր մեծ դժբախտությունների:

Ռմբաձիգներից մեկը դատարանում ասաց.

Ես սառն եմ մեքենայի պես:

Որտեղի՞ց մեզ այս աղետը: Ինչպե՞ս հայտնվեց: Ո՞չ, արդյոք, այն բազմաթիվ մեխանիզմների հետ, որ մտան մեր կյանք՝ քայքայելով կղզիաբնակ մարդկանց սովոր մեղմությունը: Ռմբաձիգները պայթեցրին ոստիկանական գնդապետի, բանակային գեներալի, *Կղզու թերթի* խմբագրին, որը սատարում էր իշխանության հանդեպ վստահությանը, ինչպես և փոստային գերատեսչություն տնօրենին, որն օգնում էր տարածելու թերթերը: Սակայն չարագործների կարևորագույն նպատակը Նորին Բարձրություն Պայծառափայլ իշխաններին սպանելն էր, որոնք մարմնավորում էին ցանկացած իշխանություն երկրում:

Ցավալին այն է, որ *առաջադիմական* շրջանակներում ընդունված էր չարագործներին ոչ թե չարագործ անվանել, այլ ավելի լավ կյանքի մարտիկներ: Թե ինչպիսին էր այդ կյանքը և գլխավորը՝ ինչով էր վատ ներկայիս կյանքը, ոչ ոք, ներառյալ և հիշյալ մարտիկները, չգիտեին: Գուցե այդ պատճառով մարտիկները շուտով դադարեցին խոսել ավելի լավ կյանքի մասին ու փոխարինեցին նոր կյանքով: Որ ավելի լավն է լինելու՝ այն ժամանակ շատերն էին կասկածում, որ նոր կլինի՝ չէր կասկածում ոչ ոք:

Իշխող զույգի հանդեպ ինը մահափորձ կազմակերպվեց: Ռմբաձիգները ռումբեր էին նետում ու տեղադրում, սակայն ժամանակի ընթացքում սկսեցին նաև կրակել մոտ ու հեռու տարածություններից, ինչը ռմբաձիգներին կարծես թե հատուկ չէ: Իսկ այն պահից, երբ նրանց սկսեցին մարտիկներ կոչել, սպանության գործիքի

ընտրությունը խիստ ընդլայնվեց. կարող էին գործի դրվել և՛ հրացաններ, և՛ ատրճանակներ, և՛ դանակներ, ասենք, նաև վերոհիշյալ ռումբերը: Դրանք նույնպես չէին բացառվում:

Մարտիկների ետևից, փառք Արարչին, գալիս էին պահապան հրեշտակները՝ անձնազոհ կերպով խափանելով, կամ էլ ժամանակից շուտ պայթեցնելով ռումբերը: Հրեշտակային ջանքերով կրակողների ձեռքերը սկսում էին դողալ կամ էլ ավազահատիկ էր ընկնում աչքերը: Սակայն մարտիկների հնարամտությունն անսպառ էր, և սպանության նորանոր եղանակներ էին գտնում, ինչը, թող ասվածն առաջադեմ մարդկանց զայրույթը չհարուցի, նրանց իսկական չարագործներ էր դարձնում: Բայց և այնպես սույն աղետը ժամանակի ընթացքում սկսեց մարել:

Պարֆենի

Հետաքրքիր է, թե եղբայր Իլարին ինչպես է գրում առաջադիմության մասին: Այդ բառը նոր-նոր էր նորաձև դառնում, և տարեգիրը հնարավորինս խուսափում է: Բառն ակնհայտորեն դուր չի գալիս նրան. Կղզում այն հայտնվել էր առաջին ռումբերի հետ:

Հիշում եմ մեր մի զրույցը Իլարիի հետ: Այն ժամանակ ասաց, որ գլխավոր պատմական իրադարձությունը Քրիստոսի մարդեղացումն է: Այն արդեն կատարվել է, և համընդհանուր պատմությունն այլևս լուրջ խնդիրներ չունի:

- Հիմա դա Քրիստոսից հեռանալու համընդհանուր պատմություն է,- ասաց Իլարին:

- Հեռացում բոլո՞ր իմաստներով,- ճշտեցի ես:

Նա գլխով արեց.

- Հնարավոր է, որ նույնիսկ այդպես. Քրիստոսից ընդհանրական հեռանալու պատմություն: Հիմա հույսը անձնական պատմությունն է:

Երբ մի ուրիշ անգամ Իլարին ասաց, որ պատմությունը սխալ ուղով է գնացել, Քսենիան հարցրեց՝ այդ դեպքում ինչո՞ւ է գրում:

- Ես գրում եմ սխալի պատմությունը,- պատասխանեց եղբայր Իլարին:

Այսօր ես ու Քսենիան հիշեցինք նրան: Նա ընդմիշտ հեռացավ մեր կյանքից: Փոքր-մոքր, շեկ նոսր մորուքով: Այդպիսի տեսք ունեին առաջադիմության թշնամիները:

Պարֆենիի և Քսենիայի համատեղ կառավարման տասներորդ տարում Կղզում երկաթուղի կառուցեցին: Ձգվում էր Հյուսիսից Հարավ՝ իրար կապելով մեր տերության երկու մասերը: Իշխող զոյգը ինձ՝ խոնարհ տարեգրիս, հրավիրեց բացմանը, և մենք այդ ուղին կտրեցինք ծամփորդական զրույցի մեջ: Ճանապարհն անցնում էր Անտառով, որ ժամանակին Հյուսիսի ու Հարավի ծակատամարտի վայրն էր եղել:

Եվ մտածեցի՝ ինչ հեշտ է հիմա կտրել-անցնել այդ Անտառը: Պարզապես պատկեր է պատուհանից, իսկ այն հեռավոր պատերազմի ժամանակ սպառնում էր վտանգով ու մահով: Ահա, մտածում էի, նույն գնացքով գնում են իրար ատողների ժառանգները, և ատելության հետք իսկ չի մնացել: Միայն համատեղ ընթացքի ուրախությունը: Վագոնները քարշում էր երկաթյա նժույգը՝ մեզ պատելով ծխով ու շոգիով: Իր հզորությամբ ուղևորների վախն էր հարուցում, բայց դրա հետ միասին՝ և հպարտություն մարդկային ոգու վեհության համար, որն իր գյուտով միավորել էր այսքան տարբեր մարդկանց:

Արդեն յոթ տարի պայթյուններ չկան, հաշվում էի ընթացքում, և եթե անդորրը պահպանելու համար պետք է միավորվել շոգեքարշի շուրջը, թող այդպես լինի: Ի վերջո, հիմա բոլորը խոսում են *առաջադիմության* մասին: Գուցե և, հակառակ սպասումների, պարզվի, որ տեխնիկայի առաջընթացի միջոցով են մեղմվելու չար սրտերն ու պայծառանալու մթագնած ուղեղները:

Բարեմիտ Պարֆենիի ու Քսենիայի իշխանության տասներկուերորդ տարում ոմն Մաքսիմ որպես հյուսն աշխատանքի ընդունվեց պալատում: Մաքսիմը կարողանում էր փայտի ամբողջական կտորից աթոռ տաշել, և մինչ օրս նրա աթոռները վարպետությամբ անգերազանց են:

Իսկ որ վերջին ժամանակներս սկսել են նախապատվությունը

տալ վիեննական ձկած աթոռներին, ապա դա ոչ մի կերպ չի ստվերում Մաքսիմի աթոռների գեղեցկությունը, հակառակը, նույնիսկ ընդգծում է: Իսկ ամրության մասին ընդհանրապես ավելորդ է խոսել. ի՞նչ ասես չէին քաշել աթոռները նշյալ Մաքսիմի ձեռքից. էլ թռիչքներ անկյունից անկյուն՝ նրա բարկության պահին, էլ պայթյուն, որ հենց ինքն էլ կազմակերպել էր:

Չնայած, թաքցնելու չի. արժանին մատուցելով համատարած հրապուրանքին՝ նա վիեննական աթոռներ էլ էր սարքում: Լավ սովորել էր ձկել փայտը, կատարելապես տիրապետում էր այդ արհեստին, սակայն ամբողջական փայտի կտորից աթոռ սարքելու սերը դրանից չէր մարել:

Ի տարբերություն վիեննականի՝ Մաքսիմի աթոռներն անվնաս մնացին: Հյուսնը արդեն այս աշխարհում չէ, իսկ նրա ստեղծագործությունները դեռ դրված են Պալատի սրահներում և արհեստանոցում, որտեղ նա բազում զարմանահրաշ իրեր էր պատրաստել: Ինչ նյութեր ասես չէին հասցնում վարպետին օգնականները՝ էլ փայտի տարբեր տեսակներ, էլ քարեր, և նույնիսկ երկրի երեսին այլևս գոյություն չունեցող կենդանիների քարացած ոսկորներ:

Եվ միայն վառոդն էր, որ չէին բերում օգնականները, և հենց վառոդն էլ, ըստ էության, պայթեցվեց: Ինչպես հետագայում պարզվեց՝ վառոդը փոքր քանակներով պալատ էր բերել հենց ինքը՝ Մաքսիմը: Այդ օրերին նա փորագրազարդ վահանակներ էր պատրաստում իշխանական սեղանատան վերնասրահի համար:

Հրաժարվելով օգնականներից՝ հյուսն Մաքսիմը, բոլորի աչքից հեռու, վառոդը պարկերն էր լցնում, ու տեղավորում պայթեցման գործի տեսանկյունից հարմար տեղերում: Բուն պայթյունը Մաքսիմը նշանակել էր իշխանական ճաշին, որը միշտ մոտավորապես նույն ժամին էր:

Չարագործի նշանակած պայթյունի օրը Քսենիան վատ էր զգում: Նորին Պայծառափայլ իշխանները ժամանակին չեկան ճաշի, բայց հյուսն Մաքսիմը դա չգիտեր: Պայթյունը հնչեց, երբ սեղանատանը միայն սպասավորներն էին: Քսանվեց մարդ զոհվեց: Արնաթաթախ

հոգեառը դեսուդեն էր նետվում սեղանատան ավերակների մեջ: Պոկված ձեռքերի ու գլուխների, թափված ծեփի կտորների արանքում հույս ուներ գտնել այն, ինչ պետք է մնացած լիներ Պարֆենիից ու Քսենիայից, բայց չէր գտնում:

Մոտեցող թիկնազորը տեսնելով՝ չարագործը փորձեց փախչել: Եթե չփորձեր, արյան ու ալեբաստրի մեջ թաթախված Մաքսիմին պայթյունի զոհի տեղ կդնեին, ոչ թե մեղավորի: Իսկ փախչելով մատնեց իրեն և անմիջապես բռնվեց: Լսելով, որ պայծառափայլ իշխանները փրկվել են, պայթեցնողը դադարեց դիմադրել և ընդհանրապես հուսալքվեց: Դեռ օրը չավարտված՝ խոստովանեց ամեն ինչ ու նաև ցույց տվեց, թե ինչպես է բերել ու որտեղ է տեղավորել վառոդը:

Կղզու օրենքներով Մաքսիմը ենթակա էր իշխանական դատին: Յոթ շաբաթ սպասում էր, բայց այդպես էլ դրան չհասավ: Դատի տանելու օրը ամբոխը փողոցում չարագործին խլեց պահակախմբից: Մի քանի վայրկյանից մեղադրյալը մեռած էր: Այդպես ավարտվեց Մաքսիմի կյանքը, մարդու, որն իր մեղքերի համար հատուցում ստացավ երկրային ու երկնային կյանքում, որի սպանված տաղանդի մասին վկայում են պահպանված աթոռներն ու այլ կահավորանք:

Եվ նայելով Մաքսիմի հետ պատահածին՝ կասկածեցի, որ տեխնիկական առաջընթացը նպաստում է մարդկանց առաջադիմությանը: Երկրորդը գոյություն ունի առաջինից անկախ, կամ, անկեղծ ասած, ավելի շուտ ընդհանրապես գոյություն չունի: Շոգեքարշը ճանապարհը հարմարավետ է դարձնում, բայց ճամփորդներն իրենք լավը չեն դառնում:

Քսենիա

Այդ մարդուն ես ու Պարֆենին պիտի դատեինք: Մեր պատմության մեջ քչերն էին դատապարտվել մահապատժի, բայց հենց այդ էին պահանջում Կղզու քաղաքացիները: Որքան էլ նողկալի լիներ Մաքսիմը, համոզված էինք, որ մարդը որպես Աստծո արարած չի

կարող զրկվել կյանքից: Մենք չէինք նրան տվել այդ կյանքը, և մենք չէ, որ պիտի խլեինք:

Մյուս կողմից՝ քսանվեց սպանվածն ինքնին հրեշավոր էր: Բացի այդ, զոհերից յուրաքանչյուրը բազում հարազատներ ուներ, որոնք անընդհատ և,- որ կարևոր է,- բարձրագոչ հատուցում էին պահանջում: Այդ ամենը, միասին վերցրած, դաժանացնում էին հասարակական տրամադրությունները: Ես ու Պարֆենին չգիտեինք ինչպես հաղթահարել այդ ընթացքը և, եթե անկեղծ լինենք, այնքան էլ չէինք ձգտում դրան:

Լուծումն ինքն իրեն եկավ: Երբ կալանավորին տանում էին դատարան, ամբոխը փողոցում զինաթափեց պահակախումբը: Մաքսիմին տեղում սպանեցին: Նրա մարմինը,- չգիտես ինչու՝ մերկ,- մինչև գիշեր ընկած էր արյունով ողողված սալարկին: Մահացածն անճանաչելի էր. այսպես եմ ասում, որովհետև նրան մի քանի անգամ տեսել էինք կենդանության օրոք: Ծառայողների թվում նրան էլ էինք Ծննդյան նվերներ տվել ու նույնիսկ երիցս համբուրվել Զատկին: Մյուսներից տարբերվում էր առանձնակի նրբագեղությամբ ու նաև սևաթույր մազերը գեղեցիկ հատող ճերմակ մազափնջով: Այդ փնջով էլ ճանաչեցինք մերկ պառկածին, որ ասես արնաթաթախ մսի կտոր լիներ:

Ստիպված էինք գալ դեպքի վայր, որովհետև ամբոխը մարմինը չէր հանձնում պահակախմբին: Նույնիսկ մեր գալուց հետո շարունակում էին քացահարել, ու ճերմակ մազափունջը անկամ վեր-վեր էր թռչում ամեն հարվածի հետ: Պահնորդները շատ էին, բայց մարմինն ուժով խլելու փորձ չէին անում: Իսկ երբ մարմինը դեռ կենդանի մարդ էր, ինչպես պարզվեց, պահնորդները քիչ էին եղել՝ ընդամենը երկու հոգի:

Պահակախմբի պետին հարցրի՝ թե ինչու չէր նախատեսել հարձակման հնարավորությունն ու ընդամենը երկու մարդ էր դրել կալանավորի հետ: Պահակախմբի պետը սկսեց պատասխանել, բայց այդ ժամանակ խլացնող սուլոց լսվեց. շոգեքարշն անցնում էր ուղեկամրջով: Գոլորշու փերթերը, չգիտես ինչու, ոչ թե վեր էին բարձ-

ռանում, այլ հանդարտ սահում էին ներքև, տարածվում մեր ոտքերի տակ, ինչպես պահակապետի բառերը:

Երբ գնացքն անցավ, նա դեռ բացատրում էր, բայց Պարֆենին ձեռքի շարժումով ընդհատեց: Ինձ շշուկով ասաց, որ պահակախմբի պետն, ընդհակառակը, ամեն ինչ նախատեսել է: Նրան թվացել էր, որ մեզ ազատում է դժվար ընտրությունից: Գուցե հենց այդպես էլ կար:

Նայելով Մաքսիմին՝ հիշեցի, թե ինչպես էի խաչհամբուրվում նրա հետ: Հիշեցի, որովհետև ի տարբերություն բոլոր նրանց, որոնց այտերին հպվում էի այդ օրը, նրա մորուքը զարմանալիորեն փափուկ էր: Միայն նա չքերծեց դեմքիս մաշկը: Ես այն ժամանակ դրա մասին պատմեցի Պարֆենիին, և նա ժպտաց: Եվ միայն դրանից հետո հասկացա, թե ինչու էր ժպտում, ու ես էլ ժպտացի: Իսկ հետո կարմրեցի: Իսկ մյուս օրը գնացի խոստովանության:

Պարֆենին մոտեցավ Մաքսիմից մնացածին և ինչ-որ բան շշնջաց նրան, որ ոչ ոք չլսեց: Իսկ ես կողքին էի ու լսեցի. *Ինչի՞ համար:* Ու մտքում հարցրի նույնը: Ապրիլյան տաք գիշերվանից, վառվող մոմերի բույրից, այդ փափուկ գրկախառնություններից հետո՝ ինչի՞ համար: Մեռած Մաքսիմն այս հարցին արդեն չէր կարող պատասխանել, բայց ինձ թվում է՝ չէր կարող պատասխանել նաև երբ ողջ էր:

- Այս ինչ ժամանակներ են,- այդ երեկո ինձ հարցրեց Պարֆենին:- Նրանք սիրում և ատում են գաղափարները: Ո՛չ մարդկանց:

- Եվ անհասկանալի է՝ ինչ կարելի է հակադրել դրան,- ասացի ես:- Պատի՞ժ: Ա՞յլ գաղափարներ:

- Իմ կարծիքով՝ համբերություն:

- Մեզնից գործնական միջոցներ են սպասում:

Նա ձեռքերը դրեց ուսերիս.

- Որքան էլ տարօրինակ է, հենց համբերությունն էլ ինձ ամենագործնական միջոցն է թվում:

Պարֆենիի և Քսենիայի իշխանության տասնհինգերորդ տարում Կղզու քաղաքներով ու գյուղերով շրջում էր գեղջուկ Պյոտրը, տոնա-

վաճառներում ցուցադրում իր որդի Եվսեբիին և դրանով հաց վաստակում իր ու նրա համար: Պյոտրը հայտարարում էր, որ հարգարժան հասարակությանը ցույց կտա շնագլխին, քանզի Եվսեբիի դեմքն ամբողջովին մազածածկ էր:

Տոնավաճառներում շատերը կասկածում էին, սակայն, որ Եվսեբին իսկական շնագլուխ է: Չնայած դեմքին առատ մազ էր աճում, ականջները մարդկային էին, այն դեպքում, երբ սբ. Քրիստափոր Շնագլխի ականջները սրբապատկերներում հենց շան ականջներ են: Բացի այդ, չնայած տոնավաճառում Եվսեբին հաչում էլ էր, հետո պանդոկում անցնում էր մարդկային խոսքի, ընդ որում՝ բավական կոպիտ, ասենք, օղու շշից էլ շան պես չէր կոնծում: Եվ շատերն էին վիճում այդ կապակցությամբ՝ չհասկանալով՝ արդյո՞ք Եվսեբին նախանշան է:

Իսկ երկրորդ դեպքն անվիճելի էր ու ոչ մի լավ բան չէր խոստանում: Գլխավոր հրապարակ ելավ մի էգ ավանակ ու խոսեց մարդկային ձայնով.

Հեղափոխությունը պատմության շարժիչ ուժն է:

Մի քիչ միտք անելով՝ ավելացրեց.

Մենք ոչինչ չունենք կորցնելու, բացի մեր շղթաներից:

Դրա մեջ վատ նախանշան ու սպառնալիք տեսնելով՝ ոմանք առաջարկում էին մահու ծեծ տալ ավանակին, բայց իշխանի և իշխանուհու հրամանով կենդանուն ուղարկեցին կրկես, որտեղ նա արտահայտվեց ընդամենը մեկ անգամ: Խոսքը հանելուկային էր, բայց արդեն ոչ այդքան չարագուշակ.

Բանականությունը գոյություն է ունեցել միշտ: Բայց ոչ միշտ՝ բանական ձևի մեջ:

Սրանով էլ ավանակի խոսքը սպառվեց, ու շրթուքներից միայն զռռոց էր արձակվում: Արտասովոր էր հնչում, թվում էր՝ նույնիսկ ոչ էշավարի, և նրա մեջ ակնհայտ լսվում էր պայքարի պատրաստակամությունը:

Պարֆենիի և Քսենիայի քսաներորդ տարում *ցույցեր* սկսվեցին՝ նախկինում չտեսնված բան: Քանզի այդ իրադարձության անվան-

ման մեջ կղզիաբնակները որոշակի դիվականություն էին լսում, սկզբում չհաջողվեց մասնակիցների լուրջ քանակ հավաքել: Բայց ակնհայտորեն բառն իսկապես անդենական ուժ ուներ, քանզի գործն աստիճանաբար շարժվեց մեռյալ կետից: Կամ գուցե, հակառակը, այդ կետին էր ուղղվում. այստեղ ամեն ինչ հայեցակետից է կախված:

Հասկանալով, որ միայն ռումբ պայթեցնելով նոր աշխարհ չես կառուցի, նոր կյանքի մարտիկները հայտնագործեցին ցույցերը՝ որպես շատ ավելի ավերիչ ռումբեր: Նրանց ռումբերին քչերն էին համակրում, քանզի մարդու բնությունը մերժում է սպանությունը: Շատ ավելի խելամիտ է, մտածեցին մարտիկները, զբաղվել մարդու բնությամբ:

Մարդու բնությունը դժվար է փոխել, բայց մարդկանց բնույթը հեշտությամբ փոխվում է: Բավական է միայն նրանց հավաքես մի տեղ, կսկսեն հնազանդվել: Ամբոխի մեջ առանձին կամքեր չկան, ամբոխը միայն ընդհանուր կամք ունի, որը կարելի է կառավարել:

Այդպես են մտածում նրանք:

Ցույցերը դևերն են կազմակերպում: Այսպես եմ մտածում ես:

Ժամանակի ընթացքում ավելի ու ավելի հաճախ էին ցույցեր անում, համարյա ամեն օր: Մասնակիցների թիվը նույնպես աճեց: Տեսնելով, որ ոչ ոք չի խոչընդոտում, մարտիկներն սկսեցին ավելի ու ավելի կոշտ արտահայտվել, իսկ հավաքի վայրերն ավելի ու ավելի մոտ նշանակել Պալատին: Ասես չնկատելով՝ ինչ է կատարվում, իշխանությունը ոչինչ չէր ձեռնարկում:

Եվ մի օր էլ քարեր թռան Պալատի վրա, ու քաղաքային պահակազորը շարվեց շենքի շուրջը: Նույն օրը, չնայած հորդորներին, հավաքվածների առաջ ելավ իշխան Պարֆենին: Ամբոխից մեկը քար շպրտեց ու քարը դիպավ իշխանի ուսին: Պահակազորի պետը հրամայեց բռնել նետողին: Չարագործին երկար փնտրելու կարիք չեղավ. հանձնեցին կողքի մարդիկ: Նրանք չէին սպասում, որ գործը կհասնի քարանետման, բայց ինչպե՞ս կարող էր սահմանափակվել զուտ խոսակցություններով:

Պահակազորն ուզում էր վերջնականապես կարգուկանոն հաստատել, բայց Պարֆենին արգելեց: Մտավ ամբոխի ամենախիտ տեղն ու հարցրեց, թե հատկապես ինչն է հուզում մարդկանց: Մի քանի ձայն լսվեց, որոնք պահանջում էին Պարֆենիի հրաժարումն իշխանական գահից: Իսկ երբ իշխանը հարցրեց, թե ինչ իշխանություն կուզեին տեսնել և ինչ են սպասում իրենից, հոդաբաշխ պատասխան չստացավ:

Նրան սկսեցին պատմել երաշտ ամիսների մասին և, հակառակը, անձրևոտ ամիսների մասին, անտառային հրդեհների և անբերության մասին: Եվ այդ ժամանակ իշխան Պարֆենին մոտեցավ իրեն պատասխան տված այրերին և ասաց.

Գիտե՞ք մի իշխանություն, բացի երկնայինից, որ այդ աղետներից կազատեր Կղզին:

Եվ երբ նրա հետ խոսող այրերը, պատասխանեցին, ամբոխի մեջ սկսեցին ժպտալ ու հետո նույնիսկ բացահայտ ծիծաղեցին, քանզի բոլորն էին հասկանում, որ այդպիսի իշխանություն երբևէ չի եղել երկրի երեսին: Դրանից հետո ամբոխը ցրվեց խաղաղությամբ: Բայց հաջորդ օրը ավելի մեծ թվով նորից հավաքվեցին իշխանական Պալատի առաջ:

Եվ ամեն անգամ ամբոխն՝ ավելի ու ավելի մեծ ու մեղադրանքներն ավելի ծանր էին դառնում: Արդեն խոսք չկար երաշտի մասին: Իշխանական զույգին մեղք էին դնում, որ իբր կողոպտել են պետական գանձարանը: Այդպիսի խոսքերից հետո արդեն ոչ ոք չէր ժպտում, և կրկին քարեր թռան Պալատի պատուհաններին:

Ու քիչ-քիչ բոլորին պարզ դարձավ, որ ամբոխն առաջնորդ ունի՝ Կասյան անունով ու Ծլդիկ մականունով: Նա իսկապես էլ շիլ էր: Ու բավական ճաղատ, բայց ամենից ավելի՝ չարացած: Կասյանը քարեր չէր նետում, բայց ճառերը քարից ծանր էին, քանզի դրանցից հետո ներկաների աչքերը լցվում էին ցասումով:

Ամենաանհանգիստ օրերից մի օր Պարֆենին կրկին ելավ ամբոխի առաջ: Լսելով գանձարանը մսխելու և անձնական անազնվության մեղադրանքները՝ հարցրեց՝ որտեղի՞ց մարդկանց այդ տեղե-

կությունները: Եվ ամբոխը բացվեց ու առաջ թողեց Կասյանին:

Մայրցամաքային թերթերը, բարակ ձայնով ասաց Կասյանը, տեղեկություններ են հրապարակում Կղզու իշխանավորների թալանի մասին: Նշվում է, որ իշխանի կալվածքն անհավատալի փոքր է: Վերևներում կանգնած մարդը, ասենք՝ նույն իշխանը, չի կարող այդքան փոքր կալվածք ունենալ: Եզրակացությունը մեկն է. նա թաքցնում է տվյալներն իրական ունեցվածքի մասին, որ հանկարծ իր հարստացման աղբյուրները չբացահայտվեն:

Եվ իշխանը, գունատվելով, պատասխանեց Կասյանին.

Այո՛, կալվածքս մեծ չէ, քանզի հաճախ է պատահել, որ պետական կարիքների համար ստիպված ծախսել եմ սեփական գումարներս:

Ծլդիկը նայեց ներկաներին, իբր ոչ թե իր, այլ նրանց անունից է խոսում.

Եվ ուրեմն, իշխա՛ն, գուցե ներկայացնե՞ս այդ դեպքերը: Եվ ինչո՞ւ առաջ չէիր խոսում դրանց մասին:

Որովհետև, պատասխանեց Պարֆենին, որոշ բաների մասին հարկ չէ խոսել: Բայց քանի որ իմ փողերը գայթակղության քար են դարձել քեզ համար, կասեմ՝ դրանք ծախսվել են երաշտի ու հեղեղումների օրերին, երբ կղզու գանձարանը դատարկ էր: Գանձապետարանն արդեն կատարել է ծախսած փողերի հաշվարկը, և վաղը այն կհրապարակվի:

Հաջորդ օրը թերթերում հայտնվեց փորձությունների օրերին արված ծախսերի հաշվետվությունը, որից հետևում էր, որ իշխանի անձնական միջոցներն օգտագործվել են հաց գնելու, հրդեհներից տուժածների համար տներ կառուցելու և բազում այլ նպատակների վրա, որոնց թվարկման համար թերթերին պետք էր եղել տասնյոթ լրացուցիչ էջ:

Այդ տեղեկությունները հուսահատության մատնեցին նոր կյանքի մարտիկներին՝ իրենց սիրած արտահայտությամբ՝ պայթած ռումբի ազդեցություն թողնելով: Տեղեկությունները քննարկում էին, զարմանում, և սերը իշխանական զույգի հանդեպ արտակարգ

աձեց: Դա տեսնելով՝ մարտիկներն ընկճվեցին և իրենց գործը տանուլ տված համարեցին: Եվ որքան մեծ եղավ նրանց զարմանքը, երբ հաջորդ օրը նույնքան ժողովուրդ հավաքվեց ցույցի:

Երեք ամիս անց նոր դժբախտություն պատահեց: Կասյանը հավաքված ժողովրդի ներկայությամբ իշխանին մեղադրեց շնանալու և դեռահաս, ընդ որում՝ թուլամիտ կույս աղջիկ Լուկերյային պղծելու մեջ: Այս անգամ հրապարակն ասես անծայրածիր մարդկային ծով լիներ: Զայրացած ամբոխից արդեն միայն քարեր չէին թռչում, մի քանի կրակոց էլ հնչեց:

Չնայած թիկնազորի առարկությանը, իշխանը նորից կանգնեց մարդկանց առաջ: Հետո մտավ ամբոխի մեջ ու շրջապատվեց բոլոր կողմերից, քանի որ թիկնապահներին նրա ետևից չթողեցին: Երեք անգամ սկսեց խոսել, բայց Կասյանի մարդիկ ամբոխից պատասխանում էին հարայհրոցով ու սուլոցներով: Ժողովուրդը, սակայն, պատասխան էր սպասում իշխանից, ու բղավողներին ստիպեցին լռել:

Պարֆենին միայն մի բանի կարող էր հուսալ՝ հավաքվածների հավատն իր հանդեպ: Հուսալ նրանց երբևէ չխաբածի իրավունքով: Երբ կատարյալ լռություն հաստատվեց, նա ասաց.

Ինչում ինձ մեղադրում են, սուտ է:

Այդ ասելով՝ Պարֆենին շրջվեց, որ վերադառնա Պալատ, և ամբոխը ճեղքվեց նրա առաջ: Անցնում էր, ու մարդիկ ոչ մի ձայն չարձակեցին: Եվ այդ լռությունը հրաշքի պես էր: Եվ այն, որ նրան թույլ տվեցին հեռանալ, նույնպես ասես հրաշք փրկություն լիներ:

Հաջորդ օրը Լուկերյան ենթարկվեց բժշկական զննության: Պարզվեց, որ կույս է:

Ցույցերը շարունակվում էին: Խառնակության վեցերորդ ամսին Պարֆենին վերջին անգամ դուրս եկավ ամբոխի առաջ: Հարցրեց.

Ինչի՞ եք սպասում:

Եվ բազմահազարանոց հրապարակը միաբերան պատասխանեց.

Նորի՛ն:

Պարֆենին խոնարհեց գլուխը ի նշան համաձայնության:

Երկու օր անց, իրիկնաժամին Նորին Բարձր Պայծառափայլություններն իշխանական Պալատում հանդիպեցին խռովարարների ներկայացուցիչների հետ: Նրանց կարելի է հենց այդպես կոչել, քանի որ Պալատի շուրջը անկարգություններ էին սկսվել, իսկ պահակազորն այդպես էլ կարգուկանոն հաստատելու հրաման չէր ստանում: Պալատում հավաքվածները նստեցին ողջ գիշեր և ամբողջ հաջորդ օրը, ու հրապարակի մարդիկ էլ չէին ցրվում:

Երրորդ օրը, գիշերվա դեմ, պալատի առմուտքին հայտնվեցին Պարֆենին, Քսենիան, Ելդիկն ու նրա զինակիցներից մի քանիսը: Սպասելով, որ լռություն հաստատվի, Պարֆենին դիմեց ամբոխին.

Կղզու ժողովո՛ւրդ, դուք նորն եք ցանկանում: Այլ ձայներ չլսելով՝ դա համարում եմ ժողովրդի կամքն ու հրաժարվում իշխանությունից, որով օժտված էի: Ձեր ներկայացուցիչների առաջարկով այսուհետ Կղզին կկառավարի իշխանուհի Քսենիան:

Երբ հրապարակում բարձրացած աղմուկը լռեց, Քսենիան խոնարհվեց հավաքվածներին: Ռոպեական լռությունից հետո ասաց.

Հանուն Կղզու բարօրության ես ընդունում այդ իշխանությունը:

Հետո խոսք առավ Կասյանը, որը չուներ կողքին կանգնած իշխանական զույգի արժանապատիվ պահվածքը: Եվ բառերն էլ իր պես մանր ու հապճեպ էին: Նա անսպասելի կրքոտությամբ սկսեց ամբոխին հավաստիացնել, որ այդպիսի լուծումը կբավարարի ապստամբած ժողովրդին:

Ոմանց կարող էր թվալ, որ նորը եկել է հնի տեսքով, բայց արդեն այն ժամանակ պարզ էր, որ այդպես չէ, բնավ այդպես չէ: Շատերն ամբոխի մեջ լալիս էին: Նախ և առաջ նրանք, որոնց ձայները չէին լսվել, քանզի, վախից դրդված, չէին արտաբերվել: Բայց չէ՞ որ միայն նրանք չէին լալիս:

Արցունքներ էին հոսում իշխանի հանդեպ սիրուց ու կարեկցանքից, գալիք անհայտությունից ու, չգիտես ինչու, հնչած *բավարարել* բառից, որը լավագույնս էր վկայում, որ նորը եկել է:

Գլուխ տասնհինգերորդ
ՔՍԵՆԻԱ

Քսենիայի իշխանության առաջին տարում եկավ երկար սպասված անդորրը: Ակնհայտ էր, որ զինակիցների հետ չկարողանալով պայմանավորվել նոր տիրակալի վերաբերյալ, Ծլդիկ մականունով Կասյանը Քսենիայի կառավարման մեջ համարյա թե իր փրկությունն էր տեսնում: Հուրախություն շատ շատերի, այլևս ցույցեր չէին լինում: Հնարավոր է, որ նոր կյանքի մարտիկները կորցրել էին բոլոր ուժերը, իսկ գուցե և վախենում էին արագ հաղթանակի պարագայում կիսել իշխանությունը: Ամեն դեպքում, անդորրը խիստ ժամանակավոր էր թվում:

Քսենյան իմաստուն տիրուհի էր: Երկար տասնամյակներ միտումնավոր մնացել էր ամուսնու ստվերում, բայց առաջ էլ գաղտնիք չէր, որ նրա դատողությունները որոշիչ էին Պարֆենիի համար: Եվ եթե մարտիկները մտածում էին, որ համաձայնելով կնոջ տիրապետությանը, վճռական քայլ են արել իշխանությունը վերցնելու ուղղությամբ, ապա սխալվում էին: Քայլը հակառակ ուղղությամբ էր արվել, գուցե և՝ ոչ մեկ քայլ:

Քսենիայի գահ բարձրանալուց շատ չանցած բոլորին պարզ դարձավ, որ նա ամուսնուց խիստ է: Քսենիան Պարֆենիից զգույշ էր ընդունում որոշումները, ու երբեմն նույնիսկ թվում էր, որ ավելորդ զգուշավորություն է ցուցաբերում, բայց որոշումն ընդունելով՝ այլևս երբեք չէր հրաժարվում դրանից ու հետևում էր, որ ամեն ինչ անվերապահ կատարվի:

Քսենիա

Ահա թե, պարզվում է, ինչպիսին եմ. իսկ նոր կյանքի մարտիկները չգիտեին: Եվ տարեգիր Իլարին էլ չգիտեր:

Տեսա ինչպես էր ժպտում Պարֆենին այս տողերը կարդալիս: Նա գիտե՛ր:

Իսկ ես հասկանում էի, որ ամեն ինչ թռչում է գրողի ծոցը: Որ կգա օրը, երբ ոչ ինձ՝ խստավարիս (ա՛յ քեզ Իլարի), ոչ էլ իմ հրամաններին ոչ ոք չի ենթարկվի: Դրա համար պետք չէր մարգարե լինել. պատմության ընթացքը ընդհանուր գծերով երևում էր: Այն հնարավոր է դանդաղեցնել, բայց ոչ կանգնեցնել:

Երբ այդ տխուր երեկոյան հավաքվել էինք Ծլդիկի հետ, նա շատ բան պատմեց: Հետը էլի մի քանի տիպեր կային, բայց հիմնականում ինքն էր խոսում: Ձայնը՝ բարակ, ինչ-որ ռուսական մեղեդու պես էր հնչում... Այո՛, *Իշամեղվի թռիչքը:* Նա հենց իշամեղվի պես էլ պտտվում էր մեր շուրջը, փոքրիկ, ճարպիկ, շիլ: Զգալի ճաղատացած:

Չգիտեմ՝ իշամեղուները ճաղատանո՞ւմ են, բայց հենց ճաղատն էր Կասյանին դարձնում կատարյալ իշամեղու: Նա խոսում էր, իսկ Պարֆենին գլխով էր անում, ու պարզ չէր՝ համաձայնո՞ւմ էր Ծլդիկի հետ, թե պարզապես գլուխն էր օրորում այդ խելագար երաժշտության չափով: Պարֆենին անխռով էր:

Նախօրեին ամբողջ գիշեր խոսել էինք, թե ինչ ենք անելու: Նա գտնում էր, որ պետք է զիջել ամբոխի պահանջներին՝ արնահեղությունից խուսափելու համար: Ես պատասխանում էի, որ ամբոխը պահանջներ չունի, պարզապես ներկա է, իսկ խոսել պետք է նրանց հավաքած ավազակախմբի հետ:

- Բայց ինչո՞ւ է ներկա այդ ամբոխը,- առարկեց Պարֆենին:- Ուրեմն դա իրենց ամբոխն է: Պայմանավորվենք նրանց հետ, ում կուղարկեն հրապարակից:

Սեղմվեցի նրա ուսին:

- Բայց նրանց հետ անհնա՛ր է պայմանավորվել: Ձեռքդ տվիր՝ մատդ կպոկեն: Թե՞ հակառակը... Մի խոսքով, հասկացար ինձ:

- Այ հենց դրա համար էլ կառաջարկենք մատը: Հետո՝ կնայենք:

Նրանք իսկապես ձեռքը չպոկեցին: Զինակիցների վրա Ծլդիկի նետած հայացքներից հանկարծ հասկացա, որ նրա գլխավոր թշնամիները հիմա դրանք են: Այնպե՛ս էր նայում նրանց, մեղմ ասած՝ շիլ: Զարմանալիորեն հեշտ համաձայնեց իմ իշխանությանը... Ասենք, հենց ինքն էլ առաջարկեց:

Մենք էլի ահագին մանրամասներ քննարկեցինք, և նա շարունակում էր պտտվել մեր շուրջը: Ծիծաղելի էր նա: Ես զգում էի նրա աներևակայելի եռանդն ու հասկանում, որ այդ միջատը խիստ ցավոտ է կծում՝ օտար լինի, թե յուրային: Եվ նոր կյանքի մարտիկները նույնպես դա հասկանում էին:

Նոր կյա՞նք: Այդ բառակապակցությունը լսելիս ինձ խեղդում է վիրավորվածությունը ներկա կյանքի համար, որը բնավ վատը չէր: Ներկան տանուլ է տալիս ապագային, ինչպես իրականությունը՝ երևակայականին: Եվ այստեղ հորդորներն անիմաստ են. ապագան անսահման պաշարներ ունի: Այդ հետո նրան կարելի է համեմատել ներկայի հետ, միայն թե անիմաստ է: Ուշ է լինում:

Պարֆենի

Երեկ արտասովոր հյուր ունեինք՝ հռչակավոր Ժան-Մարի Լեկլերը, ֆրանսիացի կինոռեժիսոր: Վերջին տարիներին որոշակիորեն տարվել էինք կինոյով, ու Լեկլերը մեզ դուր էր գալիս: Մանավանդ նրա *Մարդն առանց կենսագրության* ֆիլմը: Դա մի լրտեսի պատմություն է, որն ամեն անգամ նոր տեղում պետք է սերտի իր նոր կենսագրությունը:

Կարող է, պատկերացրեք, հիշել իր չեղած կենսագրության ցանկացած մանրամասն՝ հոր աչքերի գույնը, քրոջ տարիքը, հյուրասենյակի որ անկյունում էր դաշնամուրը: Դա ինչ-որ մեկի իրական կյանքն էր, անքննելի ճշգրտությամբ մանրամասներ, որոնք նա սոսնձում է իր վրա: Օժտված էր արտակարգ հիշողությամբ, կարող էր մտապահել հազարավոր մանրամասներ:

Այդ հիշողությունը չար կատակ է խաղում նրա հետ և ինչ-որ կենսագրության վրա մարդը կոտրվում է. մոռանում է սեփական կենսագրությունը: Առաջվա պես անգիր հիշում է բոլոր մանրամասներն ու իրադարձությունները, բայց դրանք խառնվում են գլխում, ինչպես սուրճն ու կաթը: Ստիպված է վաղաժամ անցնել թոշակի: Մեկուսանալով քաղաքամերձ տանը՝ նա մինչև օրերի վերջը մտաբերում է իր բազմապատկված կյանքը:

Իսկ հիմա ամենածիծաղելին. այդ Ժան-Մարին պատրաստվում է կենսագրական ֆիլմ նկարել իմ ու Քսենիայի մասին: Ասաց՝ բայոփիք: Երկու բառերի կցում է. biographical և picture. բայոփիք: Զուտ այդ բառի համար կարելի էր հրաժեշտ տալ նրան. եթե Լեկլերը չլիներ:

Պարզվեց՝ նրան ոգեշնչել էր *Կղզու Պատմությունը:* Ֆիլմը, Լեկլերի մտահղացմամբ, կարող էր կոչվել *Պարֆենի և Քսենիա:* Առանց պայմանավորվելու՝ ես ու Քսենիան ցածրաձայն, բայց հստակ ասացինք՝ *ոչ:* Եվ այդ ժամանակ Լեկլերը ծնկի եկավ մեր առաջ:

Անտանելի՛ էր: Մեծն Լեկլերը՝ մեր առաջ ծնկաչոք. ինչպես մեր ծառաներից որևէ մեկը վաղուց անցած Միջնադարում: Ես ու Քսենիան ասացինք.

- Կմտածենք:

Եվ այդ ժամանակ այդ մարդը գրկեց մեր ոտքերը՝ ձգտելով ստանալ մեր *այոն:* Որն էլ, ի վերջո, ես հնչեցրի, քանզի, ինչպես պարզվեց, Քսենիան ավելի խիստ է:

Լեկլերը ցնծում էր: Գոռում էր, որ աշխարհում ոչ մի ռեժիսոր պատմական ֆիլմի նկարահանման ընթացքում այսպիսի խորհրդատուներ չի ունեցել:

Մենք՝ խորհրդատո՞ւ: Դա հաջորդ անակնկալն էր, որ Լեկլերը պահել էր մեզ համար: Գլուխը կորցրածը մազերի համար չի տխրում. մենք դրան էլ համաձայնեցինք: Ու դարձանք խորհրդատու:

Քանի որ տեղեկությունները մեզ մատուցվում էին սալյամիի սկզբունքով, ֆիլմի աշխատանքները սկսելու մասին իմացանք խո-

սակցության ավարտին: Ստացվում էր, որ մի շաբաթից ռեժիսորն իր թիմով ձեռնամուխ է լինելու նկարահանումներին:

Մենք ակնարկեցինք սցենարի մասին: Սցենա՞ր: Լեկլերը հետ ու առաջ էր ճոճվում՝ ասես պատրաստվելով նորից մեր ոտքերն ընկնել, բայց ինչ-որ բան հետ էր պահում: Ինքը սովորական իմաստով սցենար չունի: Այո՛, նախապատրաստական նյութեր կան, բայց ոչ ավելին: Իր բոլոր ֆիլմերն այդպես է նկարել:

Լեկլերին հարցրի՝ իսկ ինչպե՞ս է աշխատում առանց սցենարի: Շատ պարզ: Գալով նկարահանման հրապարակ՝ սուրճ է խմում դերասանների հետ: Մեկ առ մեկ ասում է՝ ինչպես շարժվել և ինչ խոսել:

- Ստեղծագործությունը պետք է սկսվի և ավարտվի նկարահանման հրապարակում: Վե՛րջ,- ռեժիսորը շմփացրեց ազդրին:

Եվ վերջինը: Արդեն դռան մեջ՝ Լեկլերը կարծես ինչ-որ բան հիշեց: Լեյտենանտ Կոլոմբոյի վերջին հարցը: Չէի՞նք համաձայնի խորհրդտվության համար մեկնել Փարիզ: Մեզ (մի պահ մտքի մեջ ընկավ՝ բառ փնտրելով) իշխանավարի կընդունեն:

Մեծ ռեժիսորի բեմադրության մեջ մենք միայն այդ տեսարանին չարձագանքեցինք: Կմտածենք: Դժվար է միանգամից որոշել: Մեր տարիքում... *Տարիք* բառի վրա Լեկլերը քրքջաց, և դա կարծես միակ շեղումն էր սցենարից, որը, մեր հյուրի ասելով, ինքը չի ունենում: Նա իրար անցավ, գրկեց մեզ՝ իրեն ճանապարհողներին, և ասաց.

- Ի՞նչ տարիք:

Քսենիայի իշխանության յոթերորդ տարում ավարտվեց Գրադարանի շինարարությունը, որը գեղեցկությամբ ու վեհապանծ տեսքով համարժեք էր Պալատին: Նույնիսկ ավելի բարձր էր Պալատից ու դարձավ Քաղաքի ամենաբարձր շենքը: Սյունաշարի երկարությամբ դրվեցին անցյալի մեծերի անդրիները, որպեսզի նրանց անուններն անհիշատակ չմնան՝ Պլատոն, Արիստոտել, Հերոդոտոս, Հոմերոս և Ագաֆոն Ապագայատես:

Կանխատեսո՞ւմ էր, արդյոք, Ագաֆոնն այդպիսի պատիվ: Նա

բարձունքից նայում էր հավաքվածներին՝ ասես ստուգելով՝ կատարվո՞ւմ են իր կանխատեսումները: Նրա անթարթ հայացքի ներքո Գրադարան բերվեցին գրքերը՝ մասամբ գնված Մեծ երկրում, մասամբ՝ կղզիաբնակների ընծան: Վանքը մեծ թվով ձեռագրեր հանձնեց, բայց դրանց մեջ Ագաֆոնի մարգարեությունը չկար, ինչը, կարծում եմ, Ագաֆոնին այնքան էլ չզարմացրեց:

Գրադարանի բացման օրը գրանցվողների հսկա հերթ շարվեց: Հերթն այնքան մեծ էր, որ պարզ դարձավ՝ գրանցումը մի օրում չի ավարտվի, և մի շաբաթում՝ նույնպես: Այդ օրը գրանցվեց ճիշտ այնքան մարդ, որքան տեղավորում էր Գրադարանի Մեծ սրահը:

Եվ մի ամբողջ երեկո գրանցվածները նստել ու կարդում էին իրենց բաժին հասած գրքերը, ու շատերը, ընթերցանությանը վարժ չլինելով՝ կարդալիս շարժում էին շրթունքները: Ոմանք էլ մատները սահեցնում էին տողերի վրայով, որովհետև ընդհանրապես կարդալ չգիտեին: Տողից տող էին անցնում ու ժպտում՝ ուրախանալով գրքերին առնչվելու և աղի արցունք թափում՝ ցավելով իրենց անգրագիտության համար, և այդ երեկո իրենք իրենց երդվեցին, որ կարդալ կսովորեն:

Ամենահարգարժան քաղաքացիներին տուն գիրք տանելու հնարավորություն տրվեց, բայց նրանք չօգտվեցին դրանից, քանզի այնտեղ իրենց ո՞վ կտեսներ գիրք կարդալիս: Նրանց, ինչպես և բոլորին, դուր էր գալիս Գրադարանի լուսավորյալ լռությունը, թերթվող էջերի շրշյունն ու հին մատյանների հոտը: Ժամանակի ընթացքում ընթերցողներն սկսեցին սրտի մղումով գիրք ընտրել, բայց գրքերը, մեկ է, չէին բավականացնում: Եվ շարունակում էին գիրք գնել Մեծ երկրում, և դա կղզիաբնակների՝ համատարած գրագիտության ձգտման առաջին նշանն էր:

Բարեպաշտ Քսենիայի իշխանության իններորդ տարում Քաղաքում գործարկվեց տրամվայը: Դրանից առաջ, մեկ տարվա ընթացքում թուջե ուղեգծեր էին գցում ու էլեկտրալարեր ձգում: Տրամվայը նույնպես Մեծ երկրից բերեցին, քանզի նման բան Կղզում չէր արտադրվում: Յոթ վագոն գնվեց՝ ազատ արվեստների թվով, և մեկնե-

լու կետը նշանակվեց Գրադարանի հրապարակը, և այդպիսի մեկնակետը շատ բան էր խոստանում:

Բոլոր յոթ վագոնները տարագույն էին ու մեկնում էին ծիածանի գույների հերթականությամբ: Վերջին կանգառը քաղաքային դարպասն էր, որը վաղուց չէր փակվում, որովհետև համարյա Քաղաքի կենտրոնում էր, իսկ կցապատերն անպես էին քայքայվել, որ ի վերջո քանդեցին: Բոլոր վագոններում զանգի ոտնակ կար, ու տրամվայներն անընդհատ զանգահարում էին: Եվ զանգահարությունն այդպես շարունակվեց, մինչև Քաղաքի յուրաքանչյուր բնակիչ կարողացավ առնվազն մեկ անգամ զանգ տալ:

Շատերն էին սիրում երթևեկել տրամվայի տանիքին, այլ կերպ ասած՝ իմպերիալի վրա: Բարձրությունն ու թարմ օդը գլխապտույտ էին առաջացնում, իսկ երկրորդ հարկի պատուհաններից ներս նայելը միայն բորբոքում էր այդպես երթևեկելու կիրքը: Իմպերիալի նստարանները վագոնի երկայնքով էին, ու երթևեկողները մեջք մեջքի էին նստում: Նստածների առաջ բացվող բնական տեսարանը հենց պատուհաններն էին: Ժամանակի ընթացքում, սակայն, երկրորդ հարկի պատուհանների հանդեպ հետաքրքրությունը մարեց, քանզի կար նաև առաջին հարկը, որի պատուհաններից կարելի էր ներս նայել առանց իմպերիալ բարձրանալու:

Ոմանք արդեն ծառայության էին գնում տրամվայով, ու ստիպված էին շատ ավելի վաղ դուրս գալ տնից. միշտ չէ, որ տրամվայի երթուղին անցնում էր ծառայության վայրի մոտով: Հասնելով վերջին կանգառ՝ իջնում էին տրամվայից, կառք բռնում կամ ոտքով հասնում այնտեղ, որտեղ պետք էր սկսել աշխատանքային օրը:

Բնակիչները չէին հասկանում՝ ինչպես է շարժվում այդ շինությունը, և դա առանձնահատուկ պատկառանք էր ծնում տրամվայի հանդեպ, ինչը խորանում էր նրանով, որ տրամվայը չէր կարող շրջվել այն կողմ, որտեղ ուղեգծեր չկային:

Շրջադարձի այդ անկարելիությունը կղզիաբնակներին հիշեցնում էր նշանավոր պատմությունը Կիտովրասի մասին, որը միայն ուղիղ գծով էր քայլում: Քաղաքում բոլորը գիտեին, որ երբ Կիտով-

ռասին Երուսաղեմի փողոցներով տանում էին Սողոմոնի մոտ, ստիպված էին նրա ճանապարհին քանդել տները. այնքան շիտակ էր Կիտովրասի ուղին, և այնքան անհնար էր նրա համար շրջադարձը: Իսկ երբ պիտի քանդեին աղքատ այրու տունը, նա արցունքն աչքերին դիմեց Կիտովրասին՝ խնդրելով շրջանցել: Եվ Կիտովրասը խղճաց նրան ու շրջանցեց տունը՝ կողոսկրը ջարդելու գնով:

Մեծարանքի է արժանի ճանապարհից չշեղվողը, բայց այդ արժանիքը մթագնում է հանուն մերձավորի զոհողության գնացողի համեմատությամբ: Այդ ողբերգական, բայց լուսավոր պատմության շողքն ընկնում էր տրամվայի վագոնների վրա, և նրանց ընթացքը Քաղաքով բոլորին հիշեցնում էր ճշմարիտ անձնվիրության ու գթասրտության մասին:

Ցույցերն այդ տարիներին համարյա դադարել էին, այլևս պայթյուններ չէին լսվում, ու երկար սպասված խաղաղությունը պատել էր ողջ Քաղաքն ու Կղզին: Կղզիաբնակներն այնքան սիրեցին Գրադարանն ու տրամվայը, որ պայքարը նոր կյանքի համար պակաս հրապուրիչ էր թվում, քան ընթերցվող գրքերի շրշյունն ու տրամվայների զնգոցը:

Ինքնաշարժ վագոնը դեռ երկար ժամանակ հիացմունք ու զարմանք էր հարուցում: Կարելի է հիշել, որ գնացքը նույնպես ինքնաշարժ էր, բայց մեծ էր այդ գնացքը, շոգեքարշն էր քաշում նրան, ու չգիտես ինչու՝ դա շատ ավելի քիչ էր բորբոքում երևակայությունը: Տրամվայը մենակ էր: Եվ իր ողջ ուժը, թվում է, պարփակում էր զուտ իր մեջ. շոգի չի արձակում, իսկ էլեկտրալարերը, որոնցից կենսական հոսանք էր ստանում, խորհրդավոր և ընդհանրապես անբացատրելի էին:

Երազելով գտնել այդ զարմանահրաշ մեքենայի գաղտնիքը՝ շատերը գնում էին Գրադարան: Այդպես տրամվայն ու Գրադարանը անքակտելիորեն կապված մի բան դարձան, միասնական ուղի դեպի պայծառ ապագան, շատ ավելի պատվարժան ու հանդարտ, քան այն ուղին, որն առաջարկում էին նոր կյանքի մարտիկները:

Նրանց սկսեցին մոռանալ. չէ՞ որ Կասյանն ու զինակիցները ոչ մի նման բան չէին կարող առաջարկել:

Քսենիայի տասնմեկերորդ տարում քաղաքային նավահանգստում հանդիպեցին մի ծովագնաց ու մի շինական: Զրույց չէին փնտրում, բայց այնպես եղավ, որ սկսվեց. ո՞չ այն պատճառով, որ զրուցելու լավագույն տեղը կղզու նավահանգիստն է: Խոսքը խոսք բերեց, ու պարզվեց, որ ծովագնացի հայրը ջրահեղձ է եղել փոթորիկի ժամանակ: Շուտով իմացվեց նաև, որ պապն էլ է նավարկելիս զոհվել: Եվ այդ ժամանակ հողագործն ասաց.

Հավատա ինձ, ո՛վ ծովագնա՛ց, քո տեղը լինեի, երբեք ծով դուրս չէի գա:

Եվ ծովագնացը հարցրեց շինականին, թե ինչպես է մահացել նրա հայրը:

Մահացել է իր անկողնում՝ պատասխանեց շինականը: Զավակներով ու տնեցիներով շրջապատված: Հարցին, թե պապն ինչպես է մահացել, շինականը պատասխանեց, որ նույնպես իր անկողնում:

Եվ ծովագնացն ասաց.

Իմացիր, ուրեմն, եղբա՛յր, որ քո տեղը լինեի, երբեք անկողին չէի մտնի:

Պատմությունը չի պահպանել նրանց անունները, քանզի շատերն են հանդիպում նավահանգստում, որոնց անունները հիշողությունը չի կարող պահել: Բայց մնում են նրանց բառերը, որոնք կարևոր են անուններից: Եվ այդ բառերը ոչ իրենց ուժն են կորցնում, ոչ գեղեցկությունը նրանից, որ արտասանողներն անանուն են մնացել: Բառերն անուն չեն պահանջում:

Ոմանք ասում էին, որ խոսակցությունը ոչ թե Կղզում է եղել, այլ Մեծ երկրում: Ոմանք էլ պնդում են, որ իրականում ոչ մի խոսակցություն էլ չի եղել և հորինվել է մի անհայտ քարոզչի կողմից: Սակայն բառերի համար այդ ամենը նշանակություն չունի: Նրանք ապրում են իրենց կյանքով՝ հայտնվելով այնտեղ, ուր կա իրենց կարիքը, և հնչում են տարբեր մարդկանց շրթունքներից, և ոչ ոք չի տիրում

նրանց, քանզի չկա բառերի սեփականության իրավունք:

Ինչ-որ մեկի ասածը հաճախ վերածվում է բոլորի սեփականության, և օտար բառերը մերն են դառնում: Պատահում է նույնիսկ, որ ոչ թե մարդիկ են բառեր ծնում, այլ հակառակը, այնպես որ, պետք չէ զարմանալ, եթե միաժամանակ մի քանի նավահանգիստներում հանդիպեն ծովագնացն ու շինականը և նրանից միջև լինի վերոբերյալ զրույցը:

Քսենիայի կառավարման տասներկուերորդ տարում բացվեց Համալսարանը: Գիտելիքների ձգտումը, որին սկիզբ էին տվել Գրադարանը, տրամվայը, իսկ դրանից առաջ՝ գնացքը, անխուսափելի էր դարձրել Համալսարանի բացումը: Համալսարան հաճախում էր գերազանցապես երիտասարդությունը, բայց՝ ոչ միայն: Փորձով իմաստնացած և իշխանությամբ օժտված հասուն այրերը նույնպես գալիս էին դասախոսություններին:

Կասյանն ու զինակիցները հանդես եկան ի պաշտպանություն կանանց իրավունքների, իսկ նոր կյանքի առավել անհամբեր մարտիկները որոշեցին որևէ բան պայթեցնել, որ սատարեն կանանց՝ լուսավորության իրենց ձգտումներում: Սակայն համալսարանական ղեկավարությունը, տեսնելով կանանց ձգտումն առ գիտություն, Համալսարանը մատչելի դարձրեց նաև նրանց համար:

Վախենալով, որ միջամտելու հարցում կուշանան, մարտիկները համենայնդեպս պայթեցրին նախապատրաստած ռումբերը, բայց, ի ցավ նրանց, զոհերի թիվը մեծ չէր:

Շտապողականությունը, հետո ասում էին նրանք, լավ բանի չի բերում:

Եվ դա, ասում էին, թող դաս լինի մեզ համար:

Քանի որ գործը վերաբերում էր կանանց հարցին, ռմբաձիգները կանայք էին, սակայն չարագործության հեղինակները, մոռանալով, թե ինչի համար էին պայթում ռումբերը, որոշեցին, որ այդուհետ պայթեցնելու են միայն տղամարդիկ:

Սույն անհաջողությունը, ասում էին, լավագույն վկայությունն է, որ կանայք պետք է սովորեն:

Համալսարանի առաջին դասախոսները շոգենավով ժամանեցին Մեծ երկրից: Երբ պրոֆեսորական շոգենավը կառանվեց նավամատույցում, նրանց դիմավորեց հսկա բազմությունը: Դասավանդվող առարկաների թվում էր հայրենի պատմությունը, ընդ որում, դասախոսների մեջ էի նաև ես՝ մեղսական Իլարիս, և դա հպարտությամբ էր լցնում սիրտս, քանզի ես էլ էի դարձել պրոֆեսոր:

Անդրծովյան պրոֆեսորները սկզբում տարակուսանքով էին նայում վրաս, քանզի պատմության գոյությունն իսկ մեր Կղզում կասկածելի էր թվում նրանց: Սակայն ծանոթանալով տարանջատ պատմական գրություններին, որ արվել էին մեր երկրի տարբեր անկյուններում, ինչպես և Կղզու ընդհանրական պատմությանը նվիրված սույն տարեգրությանը, փոխեցին իրենց կարծիքը:

Սակայն դա նրանց հետ չպահեց *Կղզու Պատմության* վերաբերյալ դիտողություններից ու առաջարկներից: Անցնող տարիների նկարագրությունն ու տարեգիրների մտահանգումները պրոֆեսորներին ժամանակավրեպ էին թվում, իսկ տարեգրության լեզուն կոչում էին անդրջհեղեղյան: Վերոբերյալ մոտեցումները տարիների հետ, ասում էին, միայն խորացել են և անհաշտ հակասության մեջ մտել թափ հավաքող առաջադիմության հետ:

Բանն ավարտվեց նրանով, որ մի ոչ այնքան գեղեցիկ օր *Կղզու պատմագիտական ընկերության* նիստին պրոֆեսորները պահանջեցին գիտության արդի տվյալներին և առաջադիմության ընդհանուր հոսքին համապատասխան վերախմբագրել պատմությունը: Բայց ես՝ սակավամիտ Իլարիս, հրաժարվեցի վերախմբագրել պատմությունը՝ հայտարարելով, որ այդ տեսքով է փոխանցվել մեզ նախնիներից և դարեդար այդպիսին էլ կմնա:

Դուք խավարամիտ եք՝ ասացին պրոֆեսորները: Վարեք ձեր մամռոտած պատմությունն, ինչպես կուզեք: Իսկ մենք նորը կգրենք: Եվ չմտածեք, խնդրեմ, թե ձեր պատմությունը տարբերվում է մերից, քանզի ամեն ինչ ենթակա է ընհանրական օրենքներին, որոնք ձեզ ակնհայտորեն ծանոթ չեն:

Հենց այդ ժամանակ էլ նրանց պնդումով բանավեճ կազմակերպվեց, որի ընթացքում ուժերիս ներածով պատասխանում էի տրվող հարցերին:

Ի՞նչ է պատմությունը՝ հարցրին ինձ պրոֆեսորները:

Պատմությունը, պատասխանեցի, Բարու և Չարի պայքարն է, որ տարվում է մարդկանց ձեռքով:

Իսկ, ձեր կարծիքով, ի՞նչը կարելի է պատմական իրադարձություն համարել:

Ես, ոչ մի վայրկյան չհապաղելով, ասացի.

Այդպիսին կարելի է համարել մի ուժի ցանկացած հաղթանակը մյուսի հանդեպ, քանզի այդ հաղթանակների և պարտությունների հարաբերակցությունն է որոշում ժողովրդի հոգևոր վիճակը:

Այս երկու թեզերն են ընկած, ասացին նրանք, ձեր հիմնարար մոլորությունների հիմքում, քանզի պատմությունը նկարագրում է ոչ թե Բարու և Չարի պայքարը, այլ պատճառների ու հետևանքների անընդմեջ շղթան: Իսկ պատմական է այն իրադարձությունը, որը փոխում է պատմության ընթացքը: Բարի եղեք, եղբա՛յր Իլարի, զբաղվել պատճառահետևանքային շղթաների կառուցումով, հակառակ դեպքում ձեզ կարգելենք դասավանդել Համալսարանում:

Չէի ուզում նեղացնել գործընկերներիս, սակայն, խոնարհ հնազանդության ոգով առլեցուն, հայտնեցի նրանց, որ նշված շղթաների կառուցումն անիմաստ է, քանզի դրանք կազմվում են միայն մեզ հայտնի օղակներից, այն դեպքում, երբ օղակների հիմնական մասն անտես է բոլորին:

Դա չէ՞, արդյոք, պատճառը, հարցրի ես, որ ունենք նույն շրջանի բազմաթիվ պատմություններ, որոնք հակասում են իրար: Ասենք, դուք էլ, հարգելինե՛ր, ոչ մի շղթա չեք կառուցում: Ձեր մեթոդին հետևողը, ինչը մագնիսական կկոչեմ, օղակներն ընտրում է՝ հարմարեցնելով արդեն պատրաստի շղթային: Ինձ թույլ կտամ նկատել, որ նյութին լավ տիրապետելու դեպքում դա այնքան էլ բարդ չէ:

Դուք Միջնադարի հետաքրքիր արդյունք եք, ասացին պրոֆեսորները, բայց ձեր ազդեցությունը չհասունացած ուղեղների վրա ան-

հանդուրժելի է: Եվ այդ պատճառով դուք վտարվում եք Համալսարանից:

Իմ պաշտպանությամբ հանդես եկավ իշխանուհի Քսենիան՝ վրաս պարզելով իշխանական աջն ու հարգարժան ընդդիմախոսներին ստիպելով հաշտվել իմ ներկայության հետ: Եվ դա զարմանալի չէ, քանզի և՛ նա և, և՛ նրա բարեմիտ ամուսինը նույնպես Միջնադրի արդյունք են, ուրեմն ինչպե՞ս չպաշտպաներ ինձ:

Իսկ ես, ոչ մեկին ոչինչ չասելով, հավաքեցի իրերս ու խոր գիշերով հեռացա Վանք:

Իշխանական զույգը փորձեց հաշտեցնել ինձ ու պրոֆեսորներին և հակադիր կողմերին հավաքեց Պալատում: Անիմաստ վեճերը չբազմապատկելու համար միանգամից ասացի, որ հրաժարվում եմ պատճառահետևանքային շղթաներ կառուցել, որոնք ամեն ոք կառուցում է ըստ իր հակումների ու խնդիրների:

Այդ շղթաներում, հարցրի ես, որտե՞ղ է Բարու և Չարի հակամարտությունը, որն էլ հենց պատմության շարժիչ ուժն է:

Ասացի.

Ես՝ բազմամեղ Իլարիս, հեռանում եմ Համալսարանից իմ ազատ կամքով ու վերադառնում Վանք, որ շարունակեմ պատշաճ կերպով շարադրել պատմությունը:

Ես բացատրեցի, որ այդ գործը, որին նվիրված եմ արդեն տևական ժամանակ, ինձ ավելի սրտամոտ է: Որ վանական հանդերձն ավելի հարազատ է պրոֆեսորական թիկնոցից: Ես Նորին Բարձր Պայծառափայլությանց օրհնությունը խնդրեցի պատմությունը շարունակելու համար և ստանալով՝ մինչև գետին խոնարհվեցի նրանց:

Իշխանները գրկեցին ինձ և ասացին.

Սիրեցյալ եղբայր Իլա՛րի, շարունակիր վարել պատմությունը քո սրտի կանչով և առանց պատճառահետևանքային շղթաների: Բարին և Չարը, ի տարբերություն պատճառների ու հետևանքների, առավել տեսանելի են:

Եվ հեռանալուց առաջ ներկաներին հիշեցրի Ագաֆոն Ապագա-

յատեսի մարգարեության մասին՝ ասելով, որ միակ խորհուրդս պրոֆեսորներին հետևյալն է՝ փնտրել այն, քանզի գտածոն շատ բան կպարզի պատմության մեջ:

Իսկ պրոֆեսորները ժպտում էին, ոմանք էլ՝ նույնիսկ ծիծաղում, սակայն իշխան Պարֆենին հրամայեց վերջ տալ ծիծաղին: Սրահով անցնելիս լսեցի ինչ-որ մեկի ձայնը, որն ասում էր, թե հեռանում է հին պատմությունը, և իրենց՝ պրոֆեսորների պարտքն է՝ ստեղծել նորը:

Եվ գլուխս ձայնին դարձնելով՝ պատասխանեցի, որ պատմությունը ոչ մի տեղ էլ չի հեռանում, ու փեշս կառչեց սեղանից, ու պատռվող կտորի ձայն լսվեց: *Ահա պատռվեց հանդերձն իմ,* առկայծեց մտքումս, և դա ոչ մի լավ բան չէր խոստանում:

Քսենիա

Մենք Փարիզում ենք: Պե՞տք է, արդյոք, ասել, որ Ժան-Մարին համոզեց:

Համոզելը, իմ կարծիքով, նրա գլխավոր շնորհն է:

Ճիշտն ասած, համոզելու կարիք էլ չկար. շատ էինք ուզում գնալ Փարիզ: Կյանքն այնպես էր դասավորվել, որ երբեք չէինք եղել այնտեղ, և Մեծ երկիր էլ այցելել էինք ընդամենը մեկ-երկու անգամ՝ բանակցությունների: Առաջ ընդհանրապես քիչ էինք ճամփորդում. այդպիսի ժամանակներ էին: Փարիզի մասին կարդացել էինք, հետո տեսել բացիկների վրա, ավելի ուշ՝ հեռուստացույցով: Այն մեր գիտակցության մեջ ապրում էր որպես սքանչելի երազանք, բայց այդպես էլ մինչև վերջ պարզ չէր՝ իրականում այդպիսի քաղաք գոյություն ունի՞:

Գոյություն ունի: Մենք նստած ենք Մեծ բուլվարների սրճարաններից մեկում: Դեպի այգին նայող բաց պատշգամբում. հանդիսատեսի տեղերն են:

Մեզ լուսանկարում են: Ձախից աջ՝ մեզ ուղեկցողող մսյո Բենարը, Պարֆենին ու ես: Բենարը գլխով է պատասխանատու մեզ հա-

մար. բոլորի ներկայությամբ նրան այդպես ասաց Լեկլերը: Մսյո Բենարը մեզ խնդրում է իրեն Դոմինիկ ասել:

Սոսու տերևների արանքով թափանցում է մայիսյան արևը, լուսաբծերը դողում են մեր դեմքերին: Վերևում ծփծփում են ծածկի ծայրերը: Կտավի թեթև ձայն: Կտավ ու մուգ կարմիր: Խառնվում է ոսկուն՝ գովազդային պաստառ ողջ այգով մեկ. Թութանհամոնի գանձերը:

Դոմինիկը մեզ համար սուրճ ու կրուասաններ է պատվիրում: Ջուր: Խնդրում եմ նաև թուղթ ու գրիչ բերել: Նրանք զրուցում են, ես՝ գրում: Եթե չգրեմ, կմեռնեմ հոյզերի առատությունից: Անցորդները ժամանակ առ ժամանակ նայում են ինձ: Նրանք չեն շտապում:

Կատարյալ ռիթմ է՝ անշտապ, բայց և առանց ծույլ դանդաղկոտության: Այդ ռիթմից դուրս չընկնել արդեն կարող ենք միայն նստած վիճակում: Անցավ ժամանակը, երբ մենք էլ էինք անշտապ քայլում մայթով: Ափսո՛ս: Երևի պետք էր հեռանալ Կղզուց ու քայլել ճիշտ նրանց պես՝ ուսապարկը մեջքին, մազափունջն անփույթ հետ տալով, ժպտալով սեփական մտքերին: Կղզում ուրիշ կերպ են քայլում:

Մի քանի հոգի ինքնագիր են խնդրում. մեր այցի մասին այստեղ գիտեն բոլորը: Բայց դրա հետ մեկտեղ՝ իրարանցում չկա: Նրանց զարմացնում է մեր տարիքը, հին ժամանակն ընդհանրապես զարմացնում է նրանց: Ինձ սիրելի է նրանց հարգալից հետաքրքրվածությունը: Մենք ասես մասն ենք այն ամենի, որ Փարիզն առաջարկում է մայիսին, Թութանհամոնի պես մի բան:

Հիշեցի Իլարիին և նրա աներեր դիմադրությունը պրոֆեսորներին: Երեկ քնելուց առաջ հյուրանոցում բարձրաձայն կարդացինք նրա զարմանալի պատմությունը դրա մասին: Լալիս էինք:

Իլարին մահացել է ավելի քան յոթանասուն տարի առաջ: Նա այդպես էլ չտեսավ Փարիզը. տարօրինակ, տարօրինակ միտք, որ միայն այստեղ կարող էր մտածվել: Հետաքրքիր է՝ տեսնելը կազդե՞ր նրա նշանավոր ոճի վրա: Կարծում եմ՝ ոչ:

Առանց նրա մեզ մենակ ենք զգում:

Բարեպաշտ Քսենիայի կառավարման տասնութերորդ տարում ցույցերը վերսկսվեցին: Ո՛չ Գրադարանը, ո՛չ Համալսարանը, ո՛չ էլ նույնիսկ տրամվայը չէին կարողացել բարելավել բնակչության բարքերը, ինչպես կարող էր թվալ առաջին ժամանակներում: Նոր կյանքի համար պայքարը շարունակվում էր, միայն թե հիմա անիմանալի կյանքը ավելի հաճախ *ավելի լավ* էր կոչվում: Այդ բառը մի տեսակ աննկատ փոխարինեց առաջինին, բայց եթե փողոցում որևէ մեկին հարցնեին, թե նորն ինչու է ավելի լավ, չէր կարողանա պատասխանել:

Փոփոխությունների կիրքը միավորել էր բոլորին՝ արհեստավորից մինչև համալսարանական պրոֆեսորները: Ցույցերն ավելի ու ավելի մարդաշատ էին դառնում, և եթե առաջ պահակազորը կարողանում էր դիմակայել մարդկային տարերքին, ապա հիմա արդեն չէր էլ փորձում: Իշխանուհի Քսենիան ասես ծուղակում լիներ: Այդ վշտալի օրերին այցելելով Վանք՝ ինձ ասաց.

Եթե զորքերին հրամայեմ ամբոխը հետ մղել Պալատից, պատերազմ կսկսվի: Իսկ եթե շարունակեմ ոչինչ չանել, այս ամենը կավարտվի հեղաշրջումով:

Կասյանն ու մարտիկները իշխանությունից վճռական գործողություններ էին սպասում: Եվ այդ գործողությունները մոտեցնում էին նրանով, որ քարեր էին նետում Պալատի և այլ շենքերի պատուհաններին, որտեղ տեղավորված էր կղզու իշխանությունը: Կրկնվում էր այն, ինչ եղել էր տասնութ տարի առաջ, միայն մեկ տարբերությամբ. իրադարձությունները մեծ թափ էին ստացել և գործողություններն ավելի կատաղի էին:

Քաղաքային դարպասների մոտ կազմակերպված ցույցերից մեկին եկավ քահանայապետ Գերոնտին՝ Կղզու եպիսկոպոսը: Մարմնով զառամած, բայց հոգով ամուր՝ քահանայապետը դարպասների մոտ կանգնեց բարձր սալ քարի վրա ու դիմեց ամբոխին:

Ասաց.

Ատելությունը Կղզում անցել է բոլոր հնարավոր սահմանները:

Մարդիկ, որ սկզբում չէին լսում ու նույնիսկ սուլում էին եպիսկոպոսին, շուտով սկսեցին հանդարտվել:

Նաև ասաց.

Հավատացեք ինձ, զավակնե՛րս, որ ատելությամբ ոչինչ բարի հնարավոր չէ ստեղծել, զի ատելությունը սորուն է ավազի պես, և վրան կանգնած ամեն ինչ կկործանվի:

Եվ որպե առ որպե ձայնը ամրանում էր, և մարդկանց համակրանքն էր աճում ասվածի հանդեպ, քանզի բոլորը հասկանում էին Գերոնտիի իրավացիությունը: Թվում էր՝ քարին կանգնած եպիսկոպոսը փակում է դարպասները դեպի այնտեղ, որտեղից արդեն վերադարձ չկա: Իհարկե, դա միայն թվում էր, քանզի քաղաքային պարիսպներն արդեն գոյություն չունեին, իսկ դարպասներից միայն քարերի կույտ էր մնացել: Շատերը, սակայն, աչոք տեսնում էին, թե հսկա փեղկերն ինչպես նորից կախվեցին ծխնիներից ու եպիսկոպոսի ձեռքի շարժմանը հետևելով՝ սկսեցին դանդաղ գոցվել:

Քահանայապետը մի ուսանելի պատմություն հիշեց, թե ինչպես չորս բարեմիտ գազաններ, երաժշտական գործիքներ վերցնելով, որոշեցին քառյակով նվագել: Քանի որ պատմությունը նոր էր ու Կղզում ոչ ոք չէր լսել, հավաքվածների ուշադրությունը սրվեց: Քահանայապետը պատմում էր երաժշտություն արարելու՝ գազանների անհաջող փորձերի մասին և նույնիսկ ցույց տվեց, թե յուրաքանչյուրն ինչպես էր փորձում նվագել: Մի պահի քարը շարժվեց տեղից, ու Գերոնտին սկսեց անշտապ տեղը փոխել՝ գազանների շարժումները պատկերելով: Գազանները տեղփոխ էին լինում՝ հուսալով, որ դրանից կծնվի երկար սպասված երաժշտությունը:

Ամբոխի մեջ ծիծաղ լսվեց, և դա բարի ծիծաղ էր: Մարդիկ դեռ չգիտեին՝ ուր է տանում եպիսկոպոսը, բայց պատմությունն ինքնին դուր էր գալիս նրանց: Վերջում երևակայական փողը փչելով՝ Գերոնտին միանգամից մռայլվեց: Տրտմեց նաև ներկայացման շարունակությանը սպասող ամբոխը:

Տարածության մեջ տեղաշարժվելը ոչնչի չի բերում՝ ասաց

եպիսկոպոսը: Հատկապես երաժշտության: Ամեն ոք պիտի սովորի իր գործիքը նվագել:

Մի պահ լռելով՝ ավելացրեց.

Նրանից, որ տրորում եք փողոցների սալարկը, կյանքն ավելի լավը չի դառնա: Կոչում եմ ձեզ անհապաղ ցրվել, ու թող յուրաքանչյուրն իր գործով զբաղվի, զի գործերն այդ օրհնված են Աստծուց: Միայն ամբոխի շարժումն է, որ չունի Աստծո օրհնությունը, զի արդյունքն այդ դեգերումների տրոհումն ու եղբայրասպանությունն է:

Այս խոսքին մեկը քար նետեց եպիսկոպոսի վրա: Նետումն այնքան էլ դիպուկ չէր, ու քարը սուլեց-անցավ քունքի մոտով: Գերոնտին ակամա քայլ արեց առաջ, սայթաքեց ու ընկավ քարից:

Չմահացավ: Երբ բարձրացրին, աչքերը փակ էին, բայց կյանքը դեռ մարմրում էր նրա մեջ: Եպիսկոպոսին տարան ամբոխի միջով: Առջևից հանդիսավոր քայլում էր ինչ-որ մեկը՝ քահանայապետի խույրը ձեռքին, և ամբոխը ճեղքվում էր նրա առաջ, ինչպես ծովը՝ Մովսեսի: Գերոնտիի բաց գլուխը ճոճվում էր քայլքին համընթաց, ու ճերմակ հերքը ամեն վայրկյան ավելի էր կարմրում: Եպիսկոպոսին բարձրացրին մոտեցած տրամվայի սրահ: Ինքնագնաց մեքենան առանց կանգառի սլացավ Գրադարանի կողմը, որից ոչ հեռու վերջերս բացվել էր քաղաքային բուժարանը:

Քար նետողին բռնեցին: Մի քանի տղամարդ էին պահում նրան, արտաքինից դատելով՝ արհեստավորներ: Բռնվածի աչքերը սարսափով լի էին: Մի պահ բոլորը քարացան անբարբառ կարկամության մեջ: Բռնվածը հանկարծ պոկվեց իրեն պահող ձեռքերից ու գոռաց: Աղաղակն անբառ էր, բայց խորտակեց այն փխրուն լռությունը, որ չարագործի հույսն էր: Նրան տապալեցին գետնին ու ոտքի տակ առան: Եվ այնտեղ, արյունով ողողված սալարկի վրա էլ նա հրաժեշտ տվեց իր՝ ոչ մեկին չջերմացրած կյանքին: Ասում են, որ կողքին տեսել էին Կասյանին ու զինակիցներին: Բայց նրանք չէին միջամտել:

Հաջորդ օրը Վանքում պատարագ մատուցեցին եպիսկոպոս Գերոնտիին առողջության համար, և Վանքը չէր տեղավորում քահա-

նայապետի համար աղոթող մարդկանց: Պատարագներն ամենօրյա դարձան: Ու երբ մի օր քահանայապետն ուշքի եկավ, հույս հայտնվեց, որ կապաքինվի: Սպասավորող վանականների օգնությամբ նա նստեց անկողնում և ասաց,որ ներում է քար նետողին, բայց հետո նորից կորցրեց գիտակցությունը:

Եվս մի շաբաթ պառկելով՝ քահանայապետը կրկին բացեց աչքերն ու այս անգամ չփակեց ամբողջ օրը: Շրջապատողներին պատմեց, որ տկարության բոլոր օրերին հետևել է Կյանքի և Մահվան պայքարին, և Կյանքն իրեն ասել է, որ ների չարագործին, որովհետև դա իրեն՝ Կյանքին, նոր ուժ կտա պայքարի համար: Երբ ներումի խոսքերն ասված էին՝ քահանայապետը որոշ թեթևացում զգաց: Իսկ անկողնում ևս մի շաբաթ մնալուց հետո զգաց, որ ազատ շնչում է ու հասկացավ, որ Կյանքը հաղթել է Մահին:

Դրա մասին լսելով՝ Կասյանն ու զինակիցները նոր ցույց կազմակերպեցին քար նետողի հիշատակին: Նրան հանուն ապագայի պայքարի զոհ հռչակեցին, որովհետև (ասաց Կասյանը) եպիսկոպոսը ողջ է, իսկ սպանվածը՝ մեռած: Մի ողջ և մի մեռյալ ունենալով (հարցրեց Կասյանը) կարելի՞ է, արդյոք, զոհ հռչակել ողջին: Կասյանի խոսքը վերամբարձ էր, ու ոչ բոլորը հասկացան, բայց ցույցի եկան, որովհետև խոսքն իսկապես էլ մեռած մարդու մասին էր: Չէ՞ որ հայտնի է՝ մեր երկրում առանձնակի հարգանք ունեն մեռյալների հանդեպ:

Երբ արդեն մեծ բազմություն էր հավաքվել, պարզվեց, որ հանգուցյալի անունը Միխեյ էր: Հայտնի դարձան նաև Միխեյի վշտալի կյանքի մանրամասները. վաղ էր որբացել ու շարունակ ծեծի էր ենթարկվում Դոմնա անունով հորաքրոջ կողմից: Ականատեսներ ձարվեցին, թե Դոմնան ինչպես էր թուջե կճուճով խփում նրա գլխին, ինչից Միխեյի միտքը զգալի դանդաղել էր, չնայած մինչ այդ էլ արագ չէր:

Հավաքվածների առաջ հանդես եկավ Կասյանն ու Դոմնայի ծանր ձեռքը նեխած ռեժիմի ձեռք կոչեց: Այդ կենդանի պատկերը զարգացնելով՝ Կասյանի զինակից Մարկելը թուջե կճուճը համեմա-

տեց հիշյալ ռեժիմի ձեռքին գտնվող զենքի հետ և կոչ արեց գրավել զինապահեստները:

Նահատակ Միխեյի ճակատագրով ալեկոծված ամբոխը շարժվեց դեպի պահեստները: Առաջին շարքում մի քանի արհեստավորներ էին, որոնց հարվածներն էլ հենց վերջ էին դրել Միխեյի կենսական ուղուն: Նրանք ցավում էին, որ չեն իմացել Դոմնայի արարքների մասին, բայց, ամենագլխավորը, այն մասին, թե ինչ ռեժիմ էր կանգնած նրա թիկունքին: Պահակազորի դիմադրությանը հանդիպելով՝ ամբոխը փորձեց անցնել հարձակման, բայց արագ հետ շպրտվեց:

Դիմելով ամբոխին՝ Կասյանը բացատրեց, որ նեխած ռեժիմի ձեռքը դեռ ամուր է, ուստի ավելի լավ է առայժմ դրա տակ չընկնել: Նա մարդկանց տարավ հարևան փողոցները, և կարելի էր հույս ունենալ, որ այս անգամ ամեն ինչ բարեհաջող ավարտվեց: Ամբոխը ողջ գիշեր մնաց փողոցում և անսովոր լուռ էր:

Լուսաբացից անմիջապես առաջ Կասյանն ու Մարկելը ընտրեցին ամենապինդ տղամարդկանց ու կրկին տարան պահեստների վրա: Ցերեկվա դիմակայությունից հոգնած պահակազորը զարմանալիորեն քնով էր անցել: Նրանց քունը բացատրվում էր նաև վախի բացակայությամբ, քանզի պահակազորից ոչ մեկի մտքով չէր անցնում, որ լավագույն երազների ժամին կհարձակվեն քնած մարդկանց վրա:

Խնդիրը կարճ բացատրելուց հետո Կասյանը զինակիցներին կոչեց գրոհի, իսկ ինքը պահ մտավ մոտակա դարպասատակերից մեկում: Զինակիցները շփոթվեցին, քանզի սպասում էին, որ կգնա իրենց հետ ու կվարի գրոհը: Բայց Կասյանը բացատրեց, որ նրանք ապստամբության ձեռքերն են: Իսկ գլուխը վտանգից զերծ պիտի լինի: Հիմնավորելով դա՝ հիշեցրեց, թե ինչպես էին խփում Միխեյի անպաշտպան գլխին, և դրա հետ անհնար էր չհամաձայնել:

Պահեստները զարմանալիորեն արագ գրավեցին: Քնած պահակազորը դիմադրություն ցույց չտվեց ու զինաթափվեց: Դրա մասին տեղեկանալով՝ Կասյանը դուրս եկավ դարպասատակից ու

կրկին ընդունեց հրամանատարությունը՝ այդպիսով գլուխը վերամիավորելով ձեռքերին:

Առաջին միտքը, որ եկավ այդ գլուխը՝ ամբոխը զինելն էր: Ապստամբներն իրար ետևից բացեցին զինարկղերն ու հրացանները բաժանեցին աշխատավորներին, և նրանց հերթը վերջ չուներ, որովհետև լսելով, որ հրացան են բաժանում, մարդիկ սկսեցին հավաքվել ողջ Քաղաքից: Կեսօրին Քաղաքն արդեն զինված էր: Իշխանությունը լռություն էր պահպանում:

Պահակազորի տասնմեկ սպաներին հրամայելով դուրս գալ շարքից՝ Կասյանը նրանց տարավ պահեստների դիմացի շարահրապարակ: Նաև ուղեկցող պահնորդներ նշանակեց: Դրանք նույնիսկ զինակիցներ չէին, այլ հասարակ մարդիկ, որ այդտեղ էին եկել այդ գիշեր: Սպաներին շարելով մռնչացող ամբոխի առաջ՝ ասաց, որ չփորձեն փախչել, ու պահնորդներին հրամայեց նշանի առնել նրանց: Պահակախումբը պատարաստակամ կատարեց հրամանը, քանզի զենքը կախարդում է: Պահնորդների աչքերում այդ պատմական իրադարձությանը մասնակից լինելու ուրախությունն էր շողում:

Կալանավորվածներից բավական տարածություն հեռանալով՝ Կասյանը բոցաշունչ ճառով դիմեց ամբոխին: Թվարկելով արնարբու ռեժիմի հանցագործություններն ու հիշեցնելով հանուն ազատության պայքարի առաջին զոհին՝ նա սպաներին անցյալի ստվերներ կոչեց, իսկ նրանց դիմաց կանգնած ամբոխին՝ ապագայի շողեր: Ծունչը տեղը բերելով՝ նայեց պահնորդներին ու կարճ հրամայեց.

Կրա՛կ:

Անսպասելիությունից համարյա բոլոր պահնորդները կրակեցին: Սպաներից հինգը սպանվեցին միանգամից, մնացածը աղաղակելով գալարվում էին գետնին: Եվ այդ ժամանակ Կասյանը հրամայեց վերջ տալ նրանց: Պահնորդները սարսափած նետեցին զենքն ու խառնվեցին ամբոխին, իսկ ամբոխը համր կանգնել էր՝ զինված ու խլացած վիրավորների աղաղակներից: Ոչ ոք, ներառյալ

նույնիսկ կրակողները, չհասկացան՝ ինչ կատարվեց:

Սարսափը պատեց Կասյանին, քանզի զգաց, որ զայրույթի ալիքներ են անցնում մարդկային ծովի վրայով: Չգիտեր՝ ինչով է փոխարինվելու այդ լռությունը, եթե մի քանի վայրկյան էլ տևի: Ու գոռաց, որ իրեն հավատարիմ մարդիկ վերջապես վերջ տան վիրավորներին: Եվ երբ դա արվեց ու վրա հասավ կատարյալ լռությունը, մի ծիչ լսվեց ամբոխից.

Ինչի՞ համար:

Հոտառությունը Կասյանին հուշում էր, որ կհաղթի, եթե պահպանի խոսքի անխռովությունը, և ցածրաձայն պատասխանեց.

Ոչ թե *ինչի՞ համար,* այլ՝ *ինչո՞ւ:* Հայացքը սահեց ամբոխի վրայով: Որ այլևս չդիմադրեն մեզ: Չհամարձակվեն նույնիսկ մտածե՛լ դրա մասին:

Երեկոյան տեղեկություն եկավ, որ քաղաքային կայազորն ապստամբել ու անցել է խռովարարների կողմը: Երբ Կասյանին հայտնեցին, որ զինվորները սկսել են եղբայրանալ քաղաքի բնակչության հետ, մեկնեց կայազոր և ընդունեց հրամանատարությունը: Եղբայրացողները հարբած էին, քանզի, փառաբանելով ազատության արշալույսը, թալանել էին իշխանական գինու մառանները: Ավագ սպաներին կապկպած գտան նկուղում: Կասյանի հրամանով նրանք հենց այնտեղ էլ գնդակահարվեցին:

Բայց այդ ժամանակ արդեն Քաղաքին էին մոտենում կառավարությանը հավատարիմ զորքերը: Ծրջանցիկ ճանապարհով նրանց ընդառաջ հանվեց ապստամբերի կողմն անցած կայազորը, ինչպես և զինված բնակչության մի մասը, որը կռվելու ցանկություն էր հայտնել: Հաջորդ առավոտ զորքերն արդեն կանգնած էին դեմ դիմաց:

Քսենիա

Այդ գիշեր կառավարությունը հավաքվեց Պալատում: Հրավիրվել

էր նաև Կղզու Ֆելդմարշալ Կլավդիանը: Մենք տեղյակ էինք կատարվող ամեն ինչի մասին, բայց չէինք միջամտում, որ չբարդացնենք առանց այն էլ ծանր վիճակը:

Ֆելդմարշալն ասաց, որ ինձ հավատարիմ զորքերը մինչև գիշերվա վերջ կմոտենան Քաղաքին: Նա վառեց ծխամորճն ու ավելացրեց, որ դրանք իր լավագույն զորամասերն են և ծնկի կբերեն ցանկացածին՝ լինեն զինված քաղաքացիներ, թե բանակին դավաճանած կայազոր: Ֆելդմարշալը ներկաներին հավաստիացրեց, որ դրանք լավ վարժեցված զորքեր են՝ ի տարբերություն կայազորի, որի հիմնական զբաղմունքը շքերթներին երթաքայլելն էր:

Ֆելդմարշալի թավշյա ձայնն ու հատկապես ծխամորճից բարձրացող ծխի օղակները վստահություն էին ներշնչում:

- Միայն հրամայեք, Ձերդ Բարձր Պայծառափայլությո՛ւն, և կարգուկանոնը կվերականգնվի:

Ես հակված էի տալ այդ հրամանը, բայց խոսք վերցրեց Պարֆենին:

- Կարգը կվերականգնվի: Այսո՛ր: Իսկ վա՞ղը, վաղը չէ մյուս օ՞րը, մնացա՞ծ օրերին: Իմ կարծիքով՝ պետք է համաձայնության գալ խռովարարների հետ:

- Խռովարարները բանակցություններն իբրև մեր թուլություն կդիտեն,- ասաց Կլավդիանը:

- Իսկ ապստամբներին ճնշելը մեր հաղթանակը չի լինի,- առարկեց Պարֆենին:- Բնակչությունը զինված է և ագրեսիվ, իսկ մենք չենք կարող մեկական դասակ պահել ամեն փողոցում:

Պարֆենիի ասածից բորբոքվեցի:

- Բայց սա խռովությո՛ւն է: Դու առաջարկում ես թքել օրենքի վրա ու սիրաշահել հանցագործներին: Հարց է ծագում, ուրեմն ինչի՞ համար է այդ օրենքը և ինչի՞ համար է պետությունը:

Պարֆենին գունատվեց, ու ես խղճացի նրան: Միշտ գունատվում էր, երբ հուզված էր լինում: Նայում էր գետնին: Ցածր ասաց.

- Դեպքեր են լինում, երբ պետությունն անզոր է պաշտպանելու օրենքը: Այդպիսի դեպքերում պետությունը կարող է մեկ բան՝ մի

կողմ քաշվել և անիմաստ արյուն չթափել: Խռովությունը երկրում չէ՝ հոգիների մեջ է, իսկ այնտեղ բանակը հաղթել չի կարող:

Ֆելդմարշալը ծխամորձը թափ տվեց բուխարու մեջ:

- Ա՛խ, Ձերդ Բարձր Պայծառափայլությո՛ւն,- նա խոնարհում արեց Պարֆենիին:- Այդ ամենը փիլիսոփայություն է,- դարձավ ինձ:- Հրաման տվեք, և ես կսանձեմ այդ հոգիները: Կամ կուղարկեմ դժոխք:

- Այստեղ դու ես որոշում,- ինձ ասաց Պարֆենին:- Իմ խորհուրդն է՝ թույլ տալ այդ մարդկանց ապրել ըստ իրենց հակումների:

Չէի նայում Պարֆենիին, բայց զգում էի նրա հայացքն ինձ վրա:

- Այստեղ ամեն ինչ ես եմ որոշում: Եվ վաղը դուք կլսեք իմ որոշումը:

Բոլորը դուրս եկան, ու ես մնացի մենակ: Երբեք առանց Պարֆենիի որոշում չէի կայացրել:

Ու սիրտս սեղմվեց: Ու լաց եղա:

Առավոտյան Կասյանն ու զինակիցները հրավիրվեցին Պալատ: Հանդիպումը նման չէր տասնութ տարի առաջվանին: Հիմա Կասյանն իրեն գլխավորի պես էր պահում: Հավաքվածներին հայտարարեց, որ ժողովուրդը հանրապետություն է պահանջում:

Բոլորը գիտեին, որ ժողովուրդը ոչինչ էլ չի պահանջում, քանզի նույնիսկ այդպիսի բառ չգիտեր ու պարզապես տվայտում էր: Ինչպես շուտով պարզվեց՝ հանրապետությունը Կասյանին էլ պետք չէր. նա միայն իշխանության անկումն էր տենչում, որ հետո վերցնի անկյալին: Կասյանը հայտարարեց, որ անհրաժեշտ են համընդհանուր ընտրություններ, և առարկություն չլսեց:

Մեկ ժամ անց նա հայտնվեց Գլխավոր հրապարակում ու բարձրացավ տրամվայի իմպերիալի վրա: Ազդարարեց, որ շուտով ընտրություններ են լինելու, և այսուհետ ամեն ոք ազատ է քվեարկելու ում համար կուզի: Եվ այդ լուրն ընդունվեց ամբոխի ցնծությամբ, և ավելի լավ կյանքի սպասողները վեր էին նետում գլխարկները, իսկ ոմանք նույնիսկ կրակում էին, նույնպես վեր:

Բայց ամբոխը հանկարծ լռեց, որովհետև իմպերիալ բարձրացավ քահանայապետ Գերոնտին:

Իմ կարծիքով՝ ուզում է, որ իրեն ընտրեն, խոսքն ամբոխին նետեց Կասյանը, և ամբոխն իրար անցավ:

Մարդկային ծովը խաչակնքելով՝ Գերոնտին ասաց.

Ո՛չ, ես չեմ ուզում, որ ինձ ընտրեն, որովհետև մի պատմություն եմ հիշում գազանների մասին: Գիտեք, չէ՞, ինչքան եմ սիրում գազանների մասին պատմությունները:

Եպիսկոպոսը սկսեց պատմել մի ագռավի մասին, և ինձ, որ կանգնած էի այնտեղ, թվաց այդպիսի սկիզբ ինչ-որ տեղ արդեն լսել եմ: Անհոգ թռչունը պանիրը կտուցին նստել էր եղևնու ծյուղին: Ներքևում, եղևնու տակ, որոշ հանգամանքների բերումով հայտնվեց աղվեսը:

Ասա՛, քույրի՛կ, ագռավին դիմեց աղվեսը, պատրաստվո՞ւմ ես քվեարկել նոր կյանքի օգտին: Ագռավը լուռ էր: Գերոնտիի ծերմակ մազերը ծփում էին քամուց:

Մտածում էի, ասաց աղվեսը, իմաստուն խորհուրդ կտաս, որ կարողանամ ճիշտ ընտրություն անել: Բայց ագռավն ակնհայտորեն չէր շտապում կիսվել իմաստնությամբ:

Ինձ համար այնքան կարևոր էր քո լուսավորյալ կարծիքը՝ Գերոնտիի ձայնով գեղգեղաց աղվեսը: Ներքևից վերև նայեց լռող ագռավին: Եպիսկոպոսը շրթունքներին տարավ խաչը և ինքն էլ մի պահ լռեց՝ ցույց տալով, թե ինչպիսին է իսկական լռությունը:

Պարզապես դու, ագռա՛վ, պատասխան չունես՝ ասաց աղվեսը: Դրա համար էլ չես կարող ասել՝ կքվեարկե՞ս նոր կյանքի համար: Ո՛չ՝ կռռաց ագռավը: Ես չեմ քվեարկի նոր կյանքի համար: Այս բառերի հետ պանիրն ընկավ բերանից ու հայտնվեց խորամանկ աղվեսի թաթերի մեջ: Ագռավը տրտմեց: Նստել իր եղևնու ծյուղին ու մտածում էր տեղի ունեցածի մասին: Ափսոսում կորցրած պանիրն ու փորձում էր հասկանալ իր սխալը: Անընդհատ նույն հարցն էր կրկնում՝ իսկ եթե ասեի՝ այո՞:

Հրապարակը պատասխանեց քրքիջով, որովհետև ագռավի հիմարությունը նրանց ծիծաղելի էր թվում: Բայց եպիսկոպոս Գերոնտին չէր ծիծաղում:

Հարցրեց.

Կարծում եք՝ միայն ագռավնե՞րն են այդքան հիմար: Ո՛չ, նման բան պատահում է նաև մարդկանց հետ: Մանավանդ երբ վերածվում են ագռավների:

Ամբոխից կրակոց հնչեց, ու Գերոնտին, բազրիքից կառչելով, դանդաղ սահեց իմպերիալի փայտամած հատակին: Կասյանը հանեց թաշկինակն ու սրբեց ճակատին ցայտած մի քանի կաթիլ արյունը: Սկսված իրարանցումն ու հրաձգությունը նրան ստիպեցին արագ իջնել իմպերիալից: Տրամվայը պոկվեց տեղից՝ տանելով Գերոնտիի մեռած մարմինը:

Հաջորդ օրը մեծաթիվ բազմության ներկայությամբ նշանակվեց ընտրությունների օրը: Կղզու բնակիչները թեկնածուներ առաջադրեցին, որոնց թվում էր, պարզ է, նաև Կասյանը: Պետք էր թեկնածուներից ընտրել ամենաարժանավորին:

Բայց շուտով պարզ դարձավ, որ Կասյանը ամենաարժանավորների թվին չի պատկանում: Անկասկած էր, որ ընտրողները նրան այդպիսին չէին համարում: Ժողովրդական երախտամոռությունից վշտացած Կասյանը ընտրությունների նախորդ գիշերը զինված մարդկանց հետ խուժեց պալատ և կալանքի տակ առավ իշխանական զույգին: Պարֆենիին ու Քսենիային արդեն ոչ ոք չէր պաշտպանում:

Առավոտյան Կասյանն իրեն Կղզու միանձնյա տիրակալ հռչակեց:

Պարֆենի

Նույն օրը մահացավ մեր սքանչելի Իլարին. սիրտը կանգնել էր: Կարծում եմ՝ նրան թվացել էր, որ պատմությունը մոլորվել է: Ինչ-որ խորխորատներ մտել: Եվ այնտեղ նրան ուղեկցել չէր ուզում:

Տարեգրությունը հանձնվեց Իլարիի աշակերտ եղբայր Գալակտիոնի տնօրինությանը:

Գլուխ տասնվեցերորդ
ԿԱՍՅԱՆ

Ես՝ անտաշ մտոք և անուսում Գալակտիոնս, վկայում եմ.

Կղզու Մեծ Հեղափոխության առաջին տարում մեծ փոփոխություններ սկսվեցին: Կարող էին ավելի մեծ էլ լինել, եթե Կասյանին հաջողվեր մահապատժի ենթարկել իշխանական զույգին, ինչպես երազում էր:

Կղզու բնակիչներին ուղղված առաջին իսկ ուղերձում հայտարարելով նորի գահակալման մասին՝ նա անհապաղ անցավ նախկիններին: Անուններ չտալով՝ Կասյանը կղզիաբնակներին հայտնեց, որ դեպի նորածին նոր կյանքի կոկորդն են ձգվում անցյալի ոսկրոտ ձեռքերը, որոնք պետք է կտրել:

Մարդիկ ալեկոծվեցին՝ անմիջապես հասկանալով, թե ում նկատի ունի: Տոնելով նորի գալուստը՝ կղզիաբնակները, այնուամենայնիվ, հիշում էին, որ այդ ձեռքերն այնքան էլ ոսկրոտ չեն եղել: Չէին վիճում այն հարցում, որ շողշողուն ապագան լավ է մռայլ անցյալից, բայց պատրաստ չէին բաժանվել Նորին Բարձր Պայծառափայլություններից, որոնց սիրում էին:

Տեսնելով, որ հուզումներ են սկսվում՝ Կասյանը հայտարարեց, թե չէր պատրաստվում մահապարտել իշխաններին, իսկ ոսկրոտ ձեռքերն ընդամենը վերացական պատկեր է: Նկատի ունենալով նշյալ զույգի վաղնջական տարիքը՝ Կասյանն առաջարկում էր նրանց ողջ թողնել որպես թանգարանային նմուշ՝ վտարելով Պալատից, իսկ ծառայողական շինությունն օգտագործել որպես Կղզու պատմության թանգարան:

Անհապաղ հրապարակվեցին նաև նոր իշխանության դեկրետները:

Առաջին: Իշխանական Պալատը, ինչպես և կղզու վերնախավի կացարանները հանձնվում էին լուսավոր ապագայի մարտիկներին:

Երկրորդ: Ամենակարճ ժամկետներում անհրաժեշտ էր հուշարձան կանգնեցնել Հեղափոխության զոհերին, որոնց ներկայացնում էր նահատակ Միխեյը:

Երրորդ: Վանքը օտարվում էր հօգուտ պետության, որը նոր հավատ ուներ՝ հավատ առ Ապագան: Իսկ Պայծառակերպության տաճարը հայտարարվում էր Պայծառ Ապագայի տաճար:

Չորրորդ: Թվագրության մեջ մտցվում էր նոր դարաշրջան, ու տարիների հաշվարկն այդուհետ տարվելու էր Կղզու Մեծ Հեղափոխության տարվանից:

Հինգերորդ: Կղզու հեղափոխական ղեկավարությունը պատերազմ էր հայտարարում Ֆրանսիային և բոլոր ճշմարիտ հայրենասերներին կոչում համախմբվելու ղեկավարության շուրջը:

Բոլոր դեկրետների տակ նույն ստորագրությունն էր. *Նորին Գերպայծառ Ապագայություն Կասյան:*

Պարֆենի

Մենք նստած ենք Լյուքսեմբուրգյան այգում, մեր ոտքերը փաթաթված են պլեդով: Քսենիան՝ աչքերը փակ, գարնանային փարիզյան արևի տակ:

Ամենածիծաղելին այն է, որ այդ պատերազմը հիմա էլ շարունակվում է: Լիարժեք Հարյուրամյա պատերազմ, որի վերաբերյալ դեկրետը կարծես այդպես էլ մոռացել են չեղարկել: Բարեբախտաբար Փարիզում այդ ռազմական գործողությունների մասին քչերը գիտեն:

- Հետաքրքիր է, Ծլդիկն ինչո՞ւ այն ժամանակ պատերազմ հայտարարեց,- հարցնում է Քսենիան:

- Որ բոլորը համախմբվեն իր՝ Ծլդիկի շուրջը:

Քսենիան աչքերը փակ ժպտում է:

- Իսկ ինչո՞ւ Ֆրանսիային:

- Որովհետև Ֆրանսիան հեռու է:

Մեր կողքով (մամլվող շաքարի խշրտոց) մանր խծի վրայով անցնում են հեծանվորդները: Բեռնատեղերին՝ տարատեսակ ոչ զինվորական մանրուք. պայուսակներ, ծրարներ մոտակա սուպերմարկետից, ծաղիկներով թաղարներ, թերմոսներ: Պուդել՝ գլխին ժապավեն:

Մեր հարցում Նորին Գերպայծառ Ապագայությունն, իհարկե, ահռելի սխալ թույլ տվեց: Ինչպես պատմեցին մեզ հսկող զինվորները, սկզբում քննարկվել էր մեր ճակատագրական անկումը սանդուղքից: Երկուսով իջնում էին, երկուսով սայթաքեցին ու մեռան: Կասյանի տեսանկյունից՝ ի՞նչը կարող էր ավելի բնական լինել: Ներքնահարկ տանող աստիճանները քարից էին, սայթաքուն, զույգով սանդուղքը հաղթահարելը՝ վտանգավոր...

Ինչո՞ւ ծրագրածը չէր հասցրել մինչև վերջ: Կարծում եմ՝ թատրոնի հանդեպ կիրքն էր խանգարել, առավել ևս՝ սերը Ֆրանսիայի հանդեպ: Գենետիկ հիշողությունն այն հարյուրամյակի, երբ Կղզում ֆրանսերեն էին խոսում: Ելդիկը շարունակում էր երազել մեր մահապատժի մասին, բայց երազվում էր գիլյոտինը, գլորվող գլուխը. դրանից քչին համաձայն չէր: Նրա յուրաքանչյուր քայլի մեջ հուշվում էր ֆրանսիական հետքը: Կարծում եմ, որ Ֆրանսիայի հեռու լինելու հետ միասին, պատերազմ հայտարարելու մեջ մեղքի բաժին ունի նաև նրա հանդեպ սերը:

Ասում են, որ վաղ պատանության տարիներին Կասյանը եկել է Փարիզ՝ քաղաքը նվաճելու: Բայց նրա ծվծվան ձայնն այնտեղ պարզապես կորել է քաղաքային աղմուկի մեջ: Հիմա նվաճման երկրորդ փորձն էր. պակաս հավանական, քան առաջինը:

Եթե չլիներ Ֆրանսիան, առաջին իսկ գիշերը մեզ առանց գիլյոտինային որևէ նրբանկատության կսպանեին նկուղում: Իսկ հետո արդեն մեզ պաշտպան էին կանգնել մարդիկ, որոնց մեջ ցանկացած հանգամանքներում մարդկային մի բան մնում է:

Արևն անցնում է ամպերի տակ, և անմիջապես ցրտում է: Դոմի-

նիկն առաջարկում է մեքենան մեզ հենց այգում մատուցել. թույլտվություն ունի: Մենք հրաժարվում ենք այդ պատվից ու քայլում դեպի ելքը: Ճանապարհին ինքնագիր հավաքող կանայք են հանդիպում, բայց Դոմինիկը կանխող շարժում է անում. *non, madame:* Շարժումը զուսպ է, բայց սպառիչ: Կարծում եմ՝ Շլդիկն ամեն ինչ կտար այդ ունակության համար, բայց դրա համար պետք է ծնվել Փարիզում:

Լյուքսեմբուրգյան այգու մուտքի մոտ Դոմինիկն առաջարկում է նստել մեքենան, բայց մենք (Հերակլեսի երկրորդ սխրանքը) ասում ենք, որ ոտքով կհասնենք հյուրանոց: Ձեռքի շարժումը միաժամանակ զարմանք ու հիացմունք է արտահայտում: Պանթեոնի բացված համայնապատկերին մեր նրբավար բարեկամն ասում է, որ ըստ աստիճանակարգի մեզ հարկ է տեղավորել այնտեղ, ոչ թե հյուրանոցում: Շնորհակալություն հայտնելով՝ խոնարհում եմ գլուխս.

- Հրաշալի ընկերախումբ կլիներ:

- Ափսոս միայն, որ համատարած հանգուցյալներ են,- ժպտում է Քսենիան:

Դոմինիկը կարմրում է:

- Կներեք:

Այդ հանգամանքը հաշվի չէր առել:

Ի դեպ ասած, մեր Պայծառ Ապագայի Տաճարը չէ՞ որ հեռու ազգականն է Պանթեոնի, որտեղ սկզբում հեղափոխականներն էին ննջում: Ճիշտ է, հետո նրանց դուրս հանեցին:

Մեզ մոտ էլ են հանել:

Նորին Գերպայծառ Ապագայությունը հռչակվել է Կղզու Նախագահ, իսկ Նախագահի տեղակալ է նշանակվել նրա զինակից Աթանասը, որին կարևորագույն պաշտոն էր վստահվել կառավարությունում՝ պատմության և պայծառ ապագայի նախարար: Քանզի Հեղափոխության հետևանքով պայծառ ապագան որոշ առումով դարձել էր ներկա, կառավարության առաջին իսկ նիստում նա առաջարկեց իր պատասխանատվության ոլորտն առնել նաև ներկան:

Բայց Կասյանը, նախարարի ելույթն ընդհատելով, նկատեց, որ ներկայով զբաղվում է միայն ինքը: Համաձայնելով, որ պայծառ ապագան եկել է՝ Կղզու Նախագահը վստահություն հայտնեց, որ այդ ապագան կարող է ավելի պայծառ լինել, և որ նախարարն այդ հարցում անելիք կունենա: Ասում են՝ Աթանասը կարմրել էր, բայց չէր համարձակվել վեճի բռնվել Նախագահի հետ:

Վանքը պետությանը հանձնելու նպատակով ժամանելով այնտեղ՝ Աթանասը պահանջեց բերել *Կղզու Պատմությունը*՝ հպանցիկ ծանոթանալու: Պատմությունը նախարարին չբավարարեց, հատկապես այն մասով, որտեղ նկարագրվում էր ապագոնացիների 150-ամյա տիրապետության շրջանը:

Մեծ ժողովուրդը չի կարող այսպիսի պատմություն ունենալ՝ ասաց Աթանասը: Այլ կերպ ասած՝ ժողովուրդն այդպիսի պատմությամբ չի կարող մեծ լինել, այն դեպքում, երբ ակնհայտորեն մեծ է: Ինչ է հետևում սրանից:

Ես՝ մեղավորս, չգիտեի:

Աթանասը ձեռքը դրեց մատյանին.

Սրանից հետևում է, որ պատմությունը պետք է համապատասխանեցնել ժողովրդի մեծությանը:

Իսկ երբ համարձակվեցի նկատել, որ մեր պատմությունն այնպիսին է, ինչպիսին տրվել է Աստծուց, պատասխանեց, որ Աստված նախկին ընկալմամբ այլևս գոյություն չունի: Եվ երբ հարցրի Աթանասին, թե ինչ է Աստված նոր ընկալմամբ, պատասխանեց.

Պայծառ Ապագան:

Մեկ շաբաթ անց Պալատում Գերագույն խորհրդի նիստ գումարվեց՝ նվիրված անցյալին և ներկային: Ինձ էլ էին կանչել: Առաջինը ելույթ ունեցավ Կղզու Նախագահ Կասյանը և ներկաներին հայտնեց, որ *ցանկացած ժողովրդի կյանքում կա անցյալ, ներկա և ապագա:* Չկարողանալով հաղթահարել հիացմունքը՝ Գերագույն խորհրդից մեկը պահանջեց այդ բառերը ներառել պատմության դասագրքում, իսկ հետագա պատմական ստեղծագործությունները սկսել դրանցով:

Նախագահ Կասյանն ուզում էր վիճարկել այդ առաջարկը՝ նշելով, որ ինքը ավելի վառ դատողություններ էլ է արել, որոնք կարող է արագ հրապարակել, սակայն Գերագույն խորհուրդն անհրաժեշտ համարեց հավերժացնել Նախագահի բոլոր մտքերը, որպեսզի ոչ մեկը չկորսվի սերունդների համար: Տեսնելով, որ Խորհուրդն անսասան է, Կասյանը ստիպված էր համաձայնել:

Զինակիցների ուշադրությունից ոգեշնչված՝ Նախագահը նրանց պարգևեց մի ավելի վառ ասույթ, որը հավանության նոր պայթյուն առաջացրեց. *պատմությունը միայն անցյալը չպիտի արտացոլի:* Կասյանի մտահղացմամբ՝ պատմաբաններն այդուհետ պետք է նկարագրեին նաև ապագան, քանզի, վերջին հաշվով, այն դառնում է անցյալ: Նա կոչ արեց ապագան դարձնել պատմության հատուկ բաժին:

Զարգացնելով Նախագահի միտքը՝ Աթանասն առաջարկեց ապագայի վերաբերյալ բաժինը կոչել *մարգարեություն:* Բայց այստեղ նրան խիստ շշպռոց էր սպասում:

Մարգարեությունը, ասաց Կասյանը, իր էությամբ հակագիտական է, *իսկ մենք զբաղվում ենք գիտական կանխատեսումով, որը միակ ճիշտն է, որովհետև ճշմարիտ է:*

Պատմաբաններին հանձնարարվեց նվիրվել ապագայի գիտական կանխատեսմանը՝ անհարկի չհրապուրվելով անցյալով ու նույնիսկ ներկայով, որը չափազանց մոտ է անցյալին:

Իսկ ինձ՝ բազմամեղ Գալակտիոնիս, պատվիրեցին մնալ անցյալի պահապան և ժամանակ առ ժամանակ շտկել այն չափով, որ անհրաժեշտ կլինի ներկային:

Ապագոնյան տիրապետությանը վերաբերող արձանագրությունները ոչնչացնելու Աթանասի հանձնարարականը Խորհրդի որոշումով իրավացի և պատմականորեն ողջամիտ ճանաչվեց: Այդ շրջանի մասին ցանկացած հիշատակում այդուհետ արգելվում էր ու դիտարկվում որպես պետական հանցագործություն:

Նշյալ վերափոխություններին հետևելով՝ ես՝ հանգուցյալ Իլարիի հավատարիմ աշակերտս, խորին կարեկցանք էի զգում համալսա-

ռանական պրոֆեսորների հանդեպ: Բայց հետագա իրադարձությունները ցույց տվեցին, որ իզուր էի անհանգստանում այդ հետազոտողների համար: Շուտով նրանք մի համախոսական հրապարակեցին, որով անցյալի դերը պատմության մեջ չափազանցված էր հայտարարվում, իսկ ապագայի նշանակությունը՝ նվազեցված:

Ստեղծված վիճակի պատասխանատվությունը դրվում էր Իլարիի վրա, որը պնդում էր, թե պատմությունը ցավալիորեն հեռանում է իր բարձրագույն կետից: Իսկ պրոֆեսորները, հակառակը, գտնում էին, որ պատմության բարձրագույն կետն առջևում է: Ճիշտ այդ կետում նրանց գիտական միտքը համընկնում էր Կասյանի ուսմունքին: Պրոֆեսորները հիշյալ ուսմունքի ոգով հայտարարեցին գիտության նոր ծյուղի ստեղծման մասին՝ *գիտական կանխատեսության,* որը պատճառահետևանքային շղթաների հիման վրա պետք է նկարագրեր այն իրադարձությունները, որոնք անպայման կատարվելու էին:

Դա չէր նշանակում, թե բոլոր գիտնականները միատեսակ էին մտածում: Նշանավոր պրոֆեսոր Ֆուկեն, որ Կղզի էր ժամանել Ֆրանսիայից, ի լուր ամենքի հայտարարեց, որ անցյալով զբաղվում է պատմությունը, իսկ ապագայով՝ ուտոպիան: Այդ մարդը հրաժարվում էր գիտական ճանաչել կանխատեսումը:

Ի պաշտպանություն կանխատեսման գիտականության՝ նրան բացատրեցին, որ այն հիմնվում է երկու համազոր կետերի՝ նոր դարաշրջանի սկզբի ու նրա վերջի վրա: Սկիզբը Հեղափոխությունն էր, իսկ վերջը՝ *Կատարյալ Ներդաշնակությունը:* Այդ երկու կետերի առկայության դեպքում բավական է միայն գիծ քաշել նրանց միջև, և գալիք իրադարձություններն ավելի պայծառ կդիտվեն, քան անցյալ իրադարձությունները: Այդ կախարդական գիծը պրոֆեսորները *զարգացման գիծ* էին կոչում:

Կասկածներով բռնված ֆրանսիացին Կատարյալ Ներդաշնակության անխուսափելիության գիտական ապացույց պահանջեց ու խոստացավ, որ այդպիսին ստանալով՝ ինքը՝ Ֆուկեն, կհարի այդ տեսությանը:

Պրոֆեսորների պատասխանը գիտականորեն հակիրճ էր ու խոսում էր մեն- միակ, բայց նրանց արտահայտությամբ՝ սպանիչ ապացույցի մասին. Կատարյալ Ներդաշնակության գալուստը հավաստվում էր Կասյանի հանձարեղ ուսմունքով:

Պրոֆեսորների պատասխանն ակնհայտորեն ահռելի տպավորություն էր թողել ֆրանսիացու վրա, քանզի առարկություններ չհետևեցին: Իսկ ապացույցը սպանիչ անվանելը մսյո Ֆուկեին ստիպեց նավակ վարձել ու գիշերվա քողի տակ թաքուն լողալ Մեծ երկիր: Հաջորդ օրը կղզու թերթերը հայտնեցին, որ պողպատյա փաստարկով ճզմված՝ պրոֆեսոր Ֆուկեն փախել է:

Կասյանի հանճարեղության հանդեպ իր վերաբերմունքը նա արտահայտեց՝ հասնելով ֆրանսիական ափ: Վախենալով, որ տարեգրության իմ շարունակությունը օտար ձեռքերում կհայտնվի, չեմ կրկնի ֆրանսիական ռադիոյով լսածս: Միայն ասեմ, որ Ֆուկեն ճզմված մարդու նման չէր և իրեն բավական առույգ էր պահում:

Կասյանի տեսությունը զարգացնելու փորձ արեց անցյալի և ապագայի նախարար Աթանասը: Խոսքը *Ժամանակի հոսքի* համալսարանական դասընթացի մասին է, որը նա ներկայացրեց Կղզու Գիտությունների ակադեմիայի նիստին ու հեղափոխական անվանեց: Առաջարկի էությունը հանգում էր նրան, որ իրադարձությունների ընթացքի շարադրումը սկսվում է Կատարյալ Ներդաշնակությունից և աստիճանաբար գնում դեպի քարի դար: Այդպիսի կառուցվածքով՝ դասընթացի սկիզբ ու հիմք էր դառնում ապագան, և միայն հետո, անհամեմատ փոքր ծավալով, հայտնվում էր անցյալը:

Այդ ելույթն անմիջապես դատապարտեց անձամբ Կասյանը: Ընդհատելով նախարարին՝ Նորին Գերպայծառ Ապագայությունն Ակադեմիայի ուշադրությունը հրավիրեց նրա վրա, որ ժամանակի հոսքն, ըստ Աթանասի, հետընթաց է: Կասյանը նախարարի հայացքները հակագիտական համարեց և նրան մեղադրեց Ֆուկեի գաղափարները գաղտնի շրջանառելու, ինչպես և Կղզու զարգացումը դեպի քարի դար ուղղելու թաքուն ցանկության մեջ:

Աթանասը երկչոտ առարկեց, որ իր հայեցակետն ընդհանուր ոչինչ չունի Ֆուկեի հորինվածքների հետ, քանզի ընդունում է Կատարյալ Ներդաշնակության գոյությունը: Բայց Նորին Գերպայծառ Ապագայությունը հերքեց նախարարին, ինչպես ընդունված է ասել, երկու բառով. նա Աթանասի հայացքները *ֆուկեականության զկռտոց* անվանեց: Աթանասը, դեռ ելույթի թերթիկները ձեռքին, անսպասելիությունից իսկապես էլ զկռտաց, ինչով անուղղակիորեն հաստատեց Կասյանի իրավացիությունը: Նորին Գերպայծառ Ապագայությունը ձեռքը պարզեց նախարարի կողմն ու ներկաներին զգուշացրեց, որ ուրացող Աթանասի ասածը դեռ կզկռտա հայրենական գիտության վրա և՝ ոչ մեկ անգամ:

Մերկացումից հետո բոլորը սպասում էին Աթանասի անհապաղ անկմանը, բայց այդպես չեղավ: Լայնախոհություն ու ներողամտություն դրսևորելով՝ Նորին Գերպայծառ Ապագայությունն Ակադեմիայի նիստից հետո Աթանասին հրավիրեց միասին գնալ Գազանանոցում նախատեսված մշակութային միջոցառմանը: Նախարարն ուրախացավ՝ դա բարի նշան համարելով:

Գազանանոցից Կասյանը վերադարձավ մենակ: Առավոտյան թերթերը լույս տեսան սգո շրջանակներով և պատմության ու պայծառ ապագայի նախարարի անժամանակ մահվան մասին ազդագրով: Թերթերը մանրամասներ չէին հայտում՝ սահմանափակվելով ժլատ հաղորդագրությամբ, որ նախարարին կերել է կոկորդիլոսը:

Չնայած հանգուցյալի ուրացմանը՝ Կասյանը համակղզիական սուգ հայտարարեց և կարգադրեց հանդիսավոր հուղարկավորություն կազմակերպել: Քանի որ Աթանասից ոչինչ չէր մնացել, դագաղ դրեցին նրան կերած կոկորդիլոսին. նախարարին ուտելուց հետո երկկենցաղն անհապաղ մահապարտվել էր: Մի բուռ հող գցելով ընկերոջ գերեզմանին՝ Կասյանը մի կաթիլ արցունք չէ, որ հեղեց նրա վրա:

Ասաց.

Սխալվում է նա, ով կարծում է, թե մենք Աթանասին ենք թաղում...

Կասյանը հայացքը պտտեց կանգնածների վրայով: Մենք թաղում ենք մի ողջ դարաշրջան:

Անցյալի և ապագայի հարցերի քննարկումը որոշեցին սպառված համարել: Կղզին ընթանում էր Հեղափոխությունից դեպի Կատարյալ Ներդաշնակություն *զարգացման գծով:*

Քսենիա

Արդեն մի շաբաթ Փարիզում ենք: Երեկ Ժան-Մարիին հարցրի, թե երբ ենք սկսելու օգնել նրան: Ծիծաղեց և ասաց, որ մեր ներկայությունն արդեն իսկ ահռելի օգնություն է: Այդպիսի պատասխանն ինձ զարմանալի թվաց: Սցենարը չենք կարդացել, որովհետև չկա, բայց ինչո՞ւ են մեզ հրավիրում ստուդիա: Գուցե ստուդիան է՞լ չկա:

Չհամբերելով՝ մեր ռեժիսորին հարցրի նաև դրա մասին: Նորից ծիծաղեց: Շարունակ ծիծաղում է այդ ժան-Մարին: Ասաց, որ ստուդիա կգնանք վաղը: Փարիզի արվարձաններից մեկում է:

Վաղ առավոտյան Դոմինիկը եկավ մեր ետևից: Ճանապարհին ցույց էր տալիս տեսարժան վայրերը: Իմ դեպքում՝ անիմաստ զբաղմունք. ոչինչ չեմ մտապահում: Ավելի հետաքրքիր է պարզապես նայեմ փողոցներին ու շարժեմ երևակայությունս: Գլխով էի անում Դոմինիկի պատմածի չափին ներդաշնակ: Բայց չէի լսում:

Հասնելով ստուդիա՝ նստեցինք էլեկտրամեքենա: Ղեկին Ժան-Մարին էր: Անցնում էինք միջնադարյան դղյակների, ռմբակոծությունից ավերված տների մոտով, նույնիսկ մի աֆրիկյան գյուղ կար: Մեր նկարահանման հրապարակը հեռվից ճանաչեցինք՝ իշխանական Պալատով:

Կղզիաբնակների միջնադարյան հագուստներով մարդիկ սուրճ են խմում: Ձիանոցի հոտ է գալիս. սայլերին լծված ձիեր և հեծյալներին սպասող ձիեր: Մեզ հրավիրում են ռեժիսորական սեղանիկի մոտ ու սուրճ առաջարկում: Ժան-Մարին ներկայացնում է մեզ: Ծափահարություններ: Հետո ներկաներն առանձին-առանձին են ողջունում մեզ, ու մենք սեղմում ենք նրանց ձեռքերը:

Վերջինը մոտենում է ութ տարեկան մի տղա: Մազերը հավաքված են գլխարկի տակ: Գեղարվեստորեն դուրս պրծած մազափնջից երևում է, որ շիկահեր է:

- Սա դուք եք,- Պարֆենիին ասում է ռեժիսորը:- Եվ անունը նույնպես Պարֆենի է:

Նկարահանումների ընթացքում Ժան-Մարիի բոլոր դերասանները կրում են իրենց կերպարների անունները, նույնիսկ կյանքում: Ես կարդացել եմ դրա մասին: Կատարյալ վերամարմնավորում:

Պարֆենին ձեռքը պարզում է տղային:

- Քանի՞ տարեկան ես:

- Ծուտով ութ կդառնամ: Իսկ դո՞ւ:

- Երեք հարյուր քառասունյոթ:

- Ուրեմն արդեն թոշակի՞ ես:

Պարֆենին շոյում է նրա այտը: Տղան այտը սեղմում է ուսին, ու Պարֆենին ձեռքը հետ է քաշում:

- Նա զարմանալիորեն համահունչ է,- բացատրում է Ժան-Մարին:

Պարֆենին ժպտում է անվանակցին:

- Ուզում ես դերասա՞ն դառնալ:

- Այո՛... Կամ էլ իշխան: Բայց դա դժվար է:

- Չէ հա՛: Բավական է միայն, որ քեզ որդեգրենք:

Տղան մտախոհ գլխով է անում. հայացքը վճիտ է: Պարֆենիի աչքերն արցունքոտվում են քամուց: Ես նրա համար երեխա չծնեցի ու կարծում եմ՝ իզուր:

Երբ նկարահանումը սկսվում է, փոքրիկ Պարֆենին դուրս է գալիս Պալատից՝ ձեռքին մի ծխացող խանձող: Մոտենալով պատին՝ ինչ-որ ծիծաղելի մռութ է նկարում: Բերանը մի քիչ ծռվել է կողքի, ու տղան փորձում է ջնջել գծի ծայրը: Ոչինչ չի ստացվում, բերանի անկյունը քսմսվում-բռնում է դեմքի կեսը: Տղան դեն է նետում խանձողն ու նայելով իր ստեղծագործությանը՝ քորում է քիթը: Քիթը մոխրագույն է դառնում:

Փոքրիկ Պարֆենին անցնում է հրապարակով: Գլխավերևում

ճախրող տեսախցիկը հետևում է, թե տղայի ձեռքն ինչպես է սահում սայլի փայտե կողով: Դիպչում է ձիու սանձին: Ձին կախում է գլուխը, ու տղան շոյում է նրան: Օգնականը բեռնարկղից մի կատվաձագ է արձակում, որը մի քանի քայլ հեռանում է: Տղան շարունակում է շոյել ձիուն:

- Կատո՛ւն,- բարձրախոսով հիշեցնում է Ժան-Մարին:

Պարֆենի-կրտսերը բարձրացնում է կատվաձագին, մոխրագույն քիթը քսում նրա քթին: Նրա հետ վերադառնում է ձիու մոտ ու կատվիկին մոտեցնում ձիու մռութին: Կատվիկը վախից կորացնում է մեջքը: Ձին, մի քիչ միտք անելով, երկար լեզվով շոյում է կատվիկի մորթին:

- Մենք այն ժամանակ, չգիտես ինչու, կատուներ չունեինք,- ասում է Պարֆենին,- բայց հասկանում եմ, որ դա կարևոր չէ:

- Կարևոր չէ,- աչքը նկարահանման հրապարակից չկտրելով՝ հաստատում է Ժան-Մարին:

Ձիու կողքին հայտնվում է մի վաճառական ու սանձը բռնելով՝ ինչ-որ տեղ է տանում: Դրանից մի վայրկյան առաջ օգնականը ճարպկորեն մի ընկույզ է դնում փայտամած կամրջակին, ու սայլի անիվը խշրտոցով անցնում է ընկույզի վրայով: Տեսախցիկը տխուր կենտրոնանում է ճզմված ընկույզի վրա:

Պալատից ելքը նկարահանվում է չորս անգամ: Տղան չորս անգամ նկարում է պատին, որն ամեն անգամ մաս-մաքուր է, չորս անգամ ցրված անցնում է հրապարակով ու դիպչում ձիու սանձին: Կատվիկը վախ է խաղում, իսկ ձին լիզում է նրան նախկին մտախոհությամբ: Սայլը շարժվում է տեղից՝ ճանապարհին երիցս հանդիպելով կենդանություն առած ընկույզին: Ռեժիսորը երբեմն կարճ հայացք է նետում Պարֆենիին.

- Կյանքի անվերջանալի կրկնություն: Դուք ձեզ Փյունիկ չե՞ք զգում:

Պարֆենին ժպտում է.

- Ավելի շուտ՝ երգեհոնիկ:

Կղզու Մեծ Հեղափոխության չորրորդ տարում Պալատի հրապարակում կանգնեցվեց Ապստամբության զոհերի հուշարձանը: Միխեյի կերպարը հավերժացրել էին բրոնզի մեջ: Վաղաժամ հեռացած հերոսը քանդակված էր երկքղանցք կոստյումով, որպիսին կենդանության օրոք չէր կրել: Ասում էին, որ քանդակագործը սկզբում ցանկացել է Միխեյին մերկ կանգնեցնել հրապարակում, բայց Կասյանը կարգադրել է հագցնել հերոսին:

Ասես պատրաստվելով թռիչքի՝ Միխեյը հենվել էր աջ ոտքին, ձախն արդեն կտրված էր գետնից, իսկ վեր պարզած աջ ձեռքը պահում էր աստղը: Ետևից, չտեսնված չափերի կծուծը ձեռքին, գաղտագողի պատվանդանին էր մոտենում գաճաճ Դոմնան՝ մարմնավորելով անիծյալ անցյալը: Դոմնայից բացի, այդ անցյալը մարմնավորում էին կոկորդիլոսները, որոնց քանդակագործն արձակել էր հուշարձանի պատվանդանին: Նրանք բացել էին երախները՝ սպառնալով կուլ տալ ցանկացածին, ով հավատում է պայծառ ապագային:

Կոկորդիլոսներին պատկերելու միտքը նույնպես Կասյանինն էր: Դրա մեջ կարելի կլիներ տեսնել պատմության և պայծառ ապագայի նախարարի ճակատագրի մարմնավորումը, եթե չլիներ այն հանգամանքը, որ արձանը ձուլվել էր դեռ նրա ողբերգական վախճանից առաջ: Մնում է միայն ենթադրել, որ Աթանասի ճակատագիրը Կղզու Նախագահն իմացել էր գիտական կանխատեսման կարգով:

Կղզու Մեծ հեղափոխության հինգերորդ տարում Նախագահ Կասյանը ավտոմեքենա գնեց, *ռոլս-ռոյս* անունով: Կղզիաբնակներն այդ ժամանակ արդեն վարժվել էին ավտոմոբիլային երթևեկությանը, ու մեր ճանապարհներով տարբեր մակնիշների մեքենաներ էին սլանում: Բայց ռոլս-ռոյսի անիվն առաջին անգամ էր դիպչում մեր հյուրընկալ հողին, քանզի սույն ավտոմոբիլի գինը գերազանցում էր բոլոր խելամիտ սահմանները: Խոսելով խելամիտ սահմանների մասին՝ ստիպված եմ նկատել, որ երբեք նման մեքենաներ չեմ գնել, այնպես որ, մոտավոր եմ դատում խելամտության

աստիճանի մասին. ի վերջո, այստեղ՝ Կղզում մենք ի՞նչ գիտենք ռոլս-ռոյսերի մասին: Հայտնի է միայն, որ պետական առումով կարևոր գնումը կատարելու համար ստիպված էին, իհարկե, կրճատել մյուս՝ պակաս կարևոր ծախսերը: Կրճատումների մասին չհայտարարվեց, բայց դրանք անկասկած զգացին հիվանդանոցներում, դպրոցներում ու գրադարաններում:

Վեցերորդ հեղափոխական տարում սկսեցին պատկերազարդել Պայծառ Ապագայի Տաճարը: Խորանում աշխատում էին Կղզու Նախագահին պատկերող որմնանկարի վրա: Աջից պատկերվում էր Միխեյի կերպարը՝ գողեգող մոտեցող Դոմնայով, իսկ ձախից հառնելու էր Աթանասը՝ գազազած կոկորդիլոսով:

Պատկերազարդման պատասխանատու էր նշանակվել Մարկելը, որը Կասյանի աջ ձեռքն էր դարձել: Զարմանալի չէ, որ Տաճարի գավթում զետեղվեց նաև կոկորդիլոսին նիզակահարող հեծյալ Մարկելի կերպարը, քանզի Մարկելը նա էր, ով մահապարտել էր նախարարին կուլ տված երկկենցաղին:

Օրերից մի օր պատկերազարդումը տեսնելու եկավ Կղզու Նախագահը: Տաճարի երեք գլխավոր որմնանկարները նայելով՝ վերադարձավ գավիթ ու Մարկելին հարցրեց, թե կոկորդիլոսի վանդակում որտեղից է հայտնվել ձին: Մարկելը պատասխանեց, որ գազանանոցում անկասկած կան ձիեր, որոնցից մեկն էլ ինքն օգտագործել է սողունին հաղթելու համար:

Կասյանը, որին թվացել էր՝ Մարկելն ուզում է գերազանցել իր փառքը, մոտ կանչեց այդտեղ գտնվող մշակույթի և գազանանոցների նախարարին ու հարցրեց՝ ճի՞շտ է, որ գազանանոցում ձիեր կան: Նախարարը, որ զգուշավոր ու կյանքում չափավորությունը գնահատող մարդ էր, պատասխանեց, որ իրեն վստահված հաստատություններում ձիեր կան, չնայած՝ խիստ աննշան թվով: Ապա, նկատելով Կասյանի չար հայացքը, ավելացրեց, որ նույնիսկ այդ աննշան թիվը բացառապես պոնիներ են:

Դե ինչ, ասաց Նորին Գերպայծառ Ապագայությունը, ուրեմն մեր

բարեկամ Մարկելին կպատկերենք պոնի նստած, քանզի *արվեստում մենք առաջին հերթին գնահատում ենք ռեալիզմը:*

Նախագահի խոսքն անհապաղ արձանագրվեց քարտուղարի կողմից: Շարունակելով որմնանկարի արվեստագիտական մեկնաբանությունը՝ Կասյանը հավելեց, որ կոկորդիլոսի վանդակում տեղավորվել կարող էր միայն պոնին, բայց երբեք՝ մարտական նժույգը, որը ջանացել են պատկերել սրբանկարիչները: Ռեալիզմի վերաբերյալ Կասյանի բառերը քարտուղարը սուրհանդակի հետ ուղարկեց *Թևավոր խոսքերի բառարանի* խմբագրական խորհրդին: Մի քիչ միտք անելով՝ ուղարկեց նաև դիտողությունն այն մասին, որ կոկորդիլոսի վանդակում տեղավորվել կարող է միայն պոնին: Ու չսխալվեց. ռեալիզմի և առեղծվածայինի միահյուսումը լայն ժողովրդականություն ապահովեց այդ դարձվածքի համար:

Հեռանալուց առաջ Կղզու Նախագահը հանդիպեց նաև Ապագայի Պահապանների հետ, որոնք փոխարինել էին Վանքից վտարված միաբաններին: Լսելով նորաստեղծ հաստատության գործունեության մասին հաշվետվությունը՝ Կասյանն անսպասելի հարցրեց Գերագույն պահապանին.

Ինձ ինչի՞ց է վիճակված մեռնել:

Այդ բառերի վրա բոլորը գլուխները կախեցին, իսկ Մարկելն ասաց.

Դուք պարզապես չեք կարող մեռնել, Ձերդ Գերպայծառ Ապագայությո՛ւն, քանզի դուք անմահ եք:

Բայց Կասյանը, ասես Մարկելին չլսելով, կրկնեց.

Հարցնում եմ՝ ինձ ինչի՞ց է վիճակված մեռնել:

Եվ այդ ժամանակ Ապագայի Գերագույն Պահապանը պատասխանեց.

Ձերդ Գերպայծառ Ապագայությո՛ւն, դուք մահ կընդունեք ձեր ռոլս-ռոյսից:

Կասյանը ոչինչ չասաց և ուղեկցողներով շրջապատված լուռ դուրս եկավ Տաճարից:

Մի քանի օր անց Կղզու Նախագահի ռոլս-ռոյսը քշեցին պալա-

տական գարաժ: Կարգադրվեց ամենայն մանրամասնությամբ խնամել ավտոմեքենան: Շարժակազմի մասերը պետք էր յուղել և, բաքերը լավագույն բենզին լցնելով, ամեն շաբաթ ավտովազքեր կազմակերպել խծուղով, որպեսզի ռոլս-ռոյսը չժանգոտեր ու փչանար: Իսկ Նախագահին *իսպանո-սյուիզի* մակնիշի ավտոմեքենա տրամադրվեց, ոչ այնքան շքեղ, որքան ռոլս-ռոյսը, սակայն բարձր ղեկավարի արժանապատվությունը նույնպես չվիրավորող:

Արդեն այդ մեքենայով Կղզու Նախագահն այցելեց Համալսարան: Նախկին պրոֆեսոր-պատմաբանները, որ հիմա գիտական կանխատեսման մասնագետներ էին, որոնց հասցրել էին *կանխատեսիչներ* կոչել, Նորին Գերպայծառ Ապագայությանը պատմեցին իրենց աշխատանքի մասին: Զեկուցեցին Կղզու Նախագահին, որ իրենց հետազոտությունները երբեք այդքան ստեղծագործական բնույթ չեն կրել, և դա զուտ ճշմարտություն էր:

Նրանք պատճառահետևանքային շղթաներ էին կառուցում դեռ տեղի չունեցած իրադարձությունների գիտական կանխատեսման հիմքի վրա: Կանխատեսիչների ներքին վեճերը կատաղի էին, քանզի յուրաքանչյուր հետազոտող իր շղթան էր կազմում, որտեղ հորինված իրադարձություններն իրադարձություններ էին ծնում, և գոյություն չունեցող պատճառները բերում էին նույնպիսի հետևանքների:

Յուրաքանչյուրը ներկայացնում էր իր շղթան և ապացուցում, որ ամեն ինչ հենց այդպես էլ կարող էր լինել: Կիրառման մեջ էին դրվում և՛ մեջբերումներ Կասյանից, և՛ բանաստեղծություններ, և՛ նույնիսկ մնջախաղ, և դրանից քննարկումը խիստ գրավիչ էր դառնում ու լիքը ժողովուրդ հավաքում: Միակ բանը, որ միավորում էր բոլոր տեսակետները, եզրակացությունն էր, որ ապագան պայծառ է լինելու: Քննարկան ընթացքում հաղթած տեսությունը լրացվում էր այլ տեսությունների պատեհ դրույթներով, և հասարակությանն էր ներկայացվում գիտնականների կոլեկտիվ իմաստնության պտուղը:

Որոշ ժամանակ հետևելով քննարկմանը՝ Կասյանը վիճողներին հարցրեց.

Ինչ է կոնստանտը:

Հարցը փակուղու մեջ դրեց բոլոր հետազոտողներին, բացի միայն ռեկտորից, որը բարբառեց.

Ձերդ Գերպայծառ Ապագայությո՛ւն, կոնստանտը դուք եք:

Հաճույքից կարմրելով՝ Կղզու Նախագահը հետաքրքրվեց, թե ինչ խնդրանքներ ունի Համալսարանը: Պատասխանը կոնստանտի մասին հարցը համալսարանի վերնաճակատին զետեղելու իրավունքի խնդրանքն էր: Իրավունքը տրվեց:

Ամփոփելով հանդիպման արդյունքները՝ Կասյանը խոստովանեց, որ *կոնստանտ* բառի հետ ծանոթացել է Համալսարանի ճանապարհին մաթեմատիկայի դասագիրքը թերթելիս: Հարցրել էր, որովհետև չգիտեր բառն ինչ է նշանակում: Ռեկտորն այդտեղ էլ իրեն չկորցրեց՝ հայտարարելով, որ Նախագահին հատուկ իմաստնության պարագայում շատ հեշտ է չտեսնել սեփական հարցի խորությունը: Կասյանը, մի քիչ հապաղելով, գլխով արեց ու հայտնեց, որ ինքը *դոմինանտ* բառի հետ կապված այդպիսի պատմություն արդեն ունեցել է:

Չնայած հանդիպումը սրտառուչ էր ու կոնստանտի որոնումների հետ կապված հետազոտությունների նոր ուղղությունը գտնված՝ պրոֆեսորների երջանկությունը կատարյալ չէր: Սպասում էին, որ ռեկտորը աշխատավարձի բարձրացում կխնդրի, բայց նա այլ խնդրանք հնչեցրեց:

Աշխատավարձը կոնստանտ չէ, ավելի ուշ պրոֆեսորներին ասաց ռեկտորը, երբևէ այն էլ կաճի:

Երեք օր անց Համալսարան մտնող յուրաքանչյուրին դիմավորում էին ոսկյա տառերը.

Ինչ է կոնստանտը:

Նորին Գերպայծառ Ապագայություն Կասյան

Այս կերպ արված գրառումը չէր հստակեցնում՝ Կասյանի անունը հեղինակի՞ն է մատնանշում, թե՞ հարցի պատասխանն է:

Հեղափոխության ութերորդ տարում Կասյանը հիշեց իր ռոլս-ռոյսի մասին: Եվ հարցրեց՝ ինչ վիճակում է իր կողմից այնքան գնա-

հատված ավտոմոբիլը: Եվ պատասխանն էր՝ ավտովազքերից մեկի ժամանակ ռոլս-ռոյսը ջարդուփշուր է եղել: Եվ տխրեց Նախագահը, և ցանկացավ տեսնել իր ավտոյի բեկորները, և գնաց պալատական գարաժ:

Ծռմռված մետաղի կույտը տեսնելով՝ Կասյանի աչքերը լցվեցին արցունքով, և նրան ուղեկցող Մարկելը բոլորին կարգադրեց դուրս գալ, որպեսզի Նորին Գերպայծառ Ապագայությունը կարողանա հրաժեշտ տալ ռոլս-ռոյսին: Ինքը՝ Մարկելը, անձնազոհաբար մնաց աջակցության կարիք ունեցող Նախագահի հետ:

Հրաժեշտը բավական երկարեց, բայց դա բնական էր թվում, քանզի բոլորը գիտեին, թե Նորին Գերպայծառ Ապագայությունը որքան էր կապված իր ավտոմոբիլին: Իսկ երբ գարաժի դռները բացվեցին, ներս մտածները տեսան, որ Նախագահը մեռած է: Փակ դռների ետևում տեղի ունեցածի մասին գիտենք Մարկելի պատմածից:

Կասյանը ոտքը դրեց շարժիչի ճմռթված կափարիչին և արցունքների միջից ծիծաղելով ասաց.

Սուտ էր ամենը, որ կանխագուշակում էին Ապագայի Պահապանները:

Ասաց.

Այս ավտոմոբիլի՞ց պիտի ընդունեի իմ մահը:

Այս բառերի վրա կափարիչի տակից մի օձ դուրս սողաց, փաթաթվեց Նորին Գերպայծառ Ապագայության վզին ու խայթեց ականջը:

Իմ թանկագին զինակից Մա՛րկել, խայթվածի պես ճչաց Կասյանը: Ես այլևս քեզ չեմ լսում: Եթե դու լսում ես ինձ, ապա ասում եմ, որ ժամերս հաշված են, ու ստիպված միտքս հակիրճ եմ շարադրում: Համոզված եմ, որ չկա քեզնից արժանավոր, ազնիվ ու խորամիտ մարդ:

Այստեղ, պատմողի վկայությամբ, Նախագահը համենայնդեպս չէր դիմացել ու տվել էր իր՝ Մարկելի բարեմասնությունների մանրամասն նկարագիրը, որը վերջինս իրեն հատուկ բնատուր համես-

տությունից դրդված՝ չհրապարակեց: Միայն ասաց, որ Մարկելի արժանիքները թվարկելով՝ Կասյանը ձեռքը դրել էր նրա ուսին և հայտնել.

Վերոնշյալ պատճառներով քեզ եմ իրավահաջորդ նշանակում և կտակում մեր սիրելի Կղզին:

Իր նախամահու ողջերթի խոսքն արտաբերելով՝ Նախագահը, Մարկելի ասելով, կարկամել ու մեռած տապալվել էր գետնին:

Կասյանի ականջից իսկապես էլ արյուն էր հոսել, առատ արյուն: Ներս մտածները իրար մեջ շշնջում էին, որ օձի կծածը սովորաբար այդքան արյունոտ չի լինում: Դա լսելով՝ Մարկելն առարկեց, որ խոսքը ավտոմոբիլային օձի մասին է, օձի ամենաթունավոր տեսակի, որը կենում է, ինչպես բոլորը գիտեն, շարժիչի կափարիչի տակ:

Մշակույթի և գազանանոցների նախախարի հարցին, թե օձին ինչպես հաջողվեց հասնել Նախագահի ականջին, Մարկելը, աչքերը շողացնելով, պատասխանեց, որ ուրիշ օձեր էլ գիտի, որ հասել են այդ ականջին ու կաթացրել իրենց թույնը:

Իսկ իրականում ամեն ինչ շատ պարզ բացատրություն ուներ. կափարիչի տակից օձի շրշոցը լսելով, Նորին Գերպայծառ Ապագայությունը կռացել էր՝ այդպես ականջը դնելով հարվածի տակ: Ինչ վերաբերում է ղեկավար աշխատողների՝ օձից խայթվելուն, ապա, ինչպես հետո հայտարարեց Համալսարանի ռեկտորը, նման դեպքերը պատմության մեջ հազվագյուտ չեն:

Կղզում համաժողովրդական սուգ հայտարարվեց: Թերթերի արտակարգ համարները ծանուցում էին, որ ի կատարումն հանգուցյալ Նախագահի կամքի՝ Կղզու նոր Նախագահ է հռչակվել Մարկելը: Ըստ երևույթին, այդպիսի ծանուցումն ինչ-որ մեկին երկիմաստ էր թվացել, որովհետև Նախագահի կամքի մասին հետագա հիշատակումներից *հանգուցյալ* բառը դուրս թողնվեց:

Գլուխ տասնյոթերորդ
ՄԱՐԿԵԼ

Կղզու Մեծ Հեղափոխության ութերորդ տարում հիմնվեց Ժողովրդական Խորհուրդ, որի կազմում ընդգրկվեցին Կղզու արժանավորագույն այրերն ու տիկնայք: Թանկարժեք գումարներ չծախսելու համար, որոնց պակասն ավելի ու ավելի էր զգում կառավարությունը, որոշվեց Խորհրդի կազմն ընտրել պարզեցված կարգով՝ փողոցներում հարցում անելու միջոցով:

Ըստ էության, հենց փողի սակավությունն էլ հուշեց Խորհուրդ հիմնելու միտքը. որպեսզի ժողովրդական դժգոհությունը չկենտրոնանար գերագույն տիրակալի վրա, այլ համաչափ բաժանվեր տարբեր ուղղություններով: Խորհուրդն օժտված էր Կղզու Նախագահի հրամանագրերին հավանություն տալու անսահմանափակ իրավունքով:

Ֆրանսիայի հետ պատերազմի մասին վերջին տարիներին հասցրել էին մոռանալ, բայց Մարկելը բնակչությանը հիշեցրեց, որ պատերազմը պատերազմ է, և այն ոչ ոք չի չեղարկել: Հենց պատերազմն էլ դարձավ գանձարանի վերջնական ցամաքելու պատճառը: Երբ ցամաքման գործընթացն ավարտվեց ու նախկին իշխանության փողերը վերջացան, Նախագահ Մարկելը նոր փողեր տպելու երջանիկ միտք հղացավ, և դա առաջին հրամանագիրն էր, որին հավանություն տվեց նորաստեղծ Խորհուրդը:

Դեպի նոր կյանք՝ նոր փողերով՝ հռչակեց Մարկելը, որը հոգու խորքում նույնպես թևավոր մտքեր ծնելու երազանք ուներ: Դա անսպասելի էր, քանզի հանրությունը վարժվել էր, որ բոլոր անմահ ասույթները Կասյանինն են: Աննկատ մնալով՝ Մարկելի խոսքերը

թևավոր չդարձան ու կարճ ժամանակ օդում կախվելուց հետո իջան գետնին:

Նոր փողերի վրա Կասյանի դիմանկարն էր, ինչպես և նրա խոսքը. *փողն օժտված է գնողունակությամբ:* Քանի որ թղթադրամների վրա Կասյանն էր հավերժացել, նոր դրամական միավորը համանվանվեց նրան ու *կասյան* կոչվեց: Մեկ կասյանը հավասար էր հարյուր ֆրանսիական ֆրանկի:

Լավորակ թղթի վրա տպված կասյանները հուսալի փողեր էին, այն առումով, որ շարքից դուրս չէին գալիս, իսկ զոհված Նախագահի դիմանկարի բազմակի շփումներից գույները միայն թնդանում էին: Ինչ վերաբերում է նրա թևավոր խոսքին, ապա այստեղ որոշ բարդություններ ծագեցին, որովհետև այդ փողերը գնողունակությունը կորցնում էին աննկարագրելի արագությամբ: Կղզիաբնակների աշխատավարձը բարձրացավ, բայց դրանով ավելի ու ավելի քիչ բան էին կարողանում գնել:

Շուտով կասյանի ու ֆրանկի հարաբերակցությունը հավասարվեց հազարի, բայց ոչ հօգուտ կասյանի: Մեկ տարվա ընթացքում այդ հարաբերակցությունը հասավ միլիոնի, և աշխատավարձը Կղզում արդեն միլիոններով էր հաշվվում: Սույն հանգամանքը նախագահ Մարկելին թույլ տվեց մեր պետությունը կոչել *Միլիոնատերերի Կղզի:*

Հեղափոխության տասնհինգերորդ տարում զինապահեստների մոտ, մեծ բազմության ներկայությամբ բացվեց Կասյանի հուշարձանը: Որպես նմուշօրինակ օգտագործվել էր *Լառքոնի* քանդակը, որը Մարկելը մի անգամ տեսել էր բացիկի վրա: Կղզու Նախագահը կարգադրեց իր նախորդին քանդակահատել մարմարի մեջ, բայց առանց որդիների ու միայն մեկ օձով: Կասյանի բերանը բաց էր: Արձանն անմահացրել էր այն պահը, երբ սողունով փաթաթված Կասյանը հասցնում է տալ ժառանգորդի անունը և անհրաժեշտաբար արագ թվարկել նրա արժանիքները:

Քանդակագործությամբ չսահմանափակվելով՝ Մարկելը ուշադրության կենտրոնում էր պահում նաև գեղանկարչությունը: Ժամա-

նեց Պայծառ Ապագայի Տաճար ու կարգադրեց Կասյանին նվիրված ևս մի որմնանկար նկարել: Այդ նպատակով կարևորագույն արվեստագիտական որոշում կայացվեց արդեն գոյություն ունեցող որմնանկարներն օգտագործելու մասին:

Նախագահը կարգադրեց օձից գայթակղվելու տեսարանում շեվյոտե կոստյում հագցնել Ադամին ու գլխի տեղը վերանկարել Կասյանի գլուխը: Եվայի տեղում պատկերվելու էր ինքը Մարկելը՝ ֆրակով, ցիլինդրով ու թեթև ձեռնափայտով: Գյուղում մեծացած, միայն յուղով փայլեցրած երկարաձիտներ ու անթևնոցներ տեսած Նախագահը թույլություն ուներ նման բաների հանդեպ: Երկու պատմական անձանց համար ֆոն էին դառնալու ճակատագրական խնձորենու տակ կիտած ռոլս-ռոյսի բեկորները: Պատկերը բավական հաջող ստացվեց, քանի որ օձը ծառն ի վեր սողում էր բեկորներից: Մարկելի վկայությամբ՝ այդ ամենը շատ էր հիշեցնում գարաժի դեպքերը:

Բացի այդ, *Գեորգիի և օձի հրաշքի* որմնանկարում Գեորգիի գլուխը փոխարինվեց Մարկելի գլխով, իսկ օձը՝ կոկորդիլոսով: Դա Մարկելի հին երազանքն էր: Իսկ պոնիով որմնանկարը պարզապես հրամայեց ծածկել ներկի շերտով:

Քսենիա

Օրվա առաջին կեսն անցկացրինք ստուդիայում, որտեղ նկարվում էր դանակախաղի դրվագը: Ինչպես հայտնի է՝ իշխանուհի Գլիկերիան մահապատժի էր ենթարկել Պարֆենիի վրա դանակ նետած տղային: Եվ ահա, Ժան-Մարին նախընտրել էր հրաժարվել այդ տեսարանից:

- Կտրված գլուխ, որ տալիս է մարդասպանի անունը, դուք, կարծում եմ, հասկանում եք...,- Ժան-Մարին աննկատ աչքով արեց ինձ:- Հարվածի տակ չընկնենք:

- Չընկնենք,- քաղաքավարությունից դրդված համաձայնեցի ես:

Նկարահանումներից հետո համենայնդեպս հարցրի Ժան-Մա-

րիին, թե նրան ինչով դուր չի գալիս խոսող գլուխը:

Ժան-Մարին տրորեց ականջը:

- Գիտե՞ք ինչ... Չասեմ թե ես ռեալիզմի մեծ ջատագով եմ, բայց եթե բայոփիք ենք նկարում, պետք է հետևենք ժանրի որոշ կանոնների:

Իմ ժպիտը տեսնելով՝ ավելացրեց.

- Գիտեք, չէ՞, նույնիսկ ընդունում եմ, որ գլուխը խոսել է, բայց մենք ելնում ենք իրականության մասին ընդունված պատկերացումներից: Իրականությունն այն չէ, ինչ եղել է, այլ այն, հավանականության տեսանկյունից, ինչը կարող էր լինել:

Այդ տեսանկյունից ես ու Պարֆենին հայտնվում ենք իրականության սահմաններից դուրս: Իսկ գուցե իսկապես էլ գոյություն չունե՞նք: Երբեմն ինձ թվում է՝ վաղուց արդեն մեռել ենք...

Ի դեպ, ռեալիզմի մասին: Ելդիկը մի անգամ հայտնվելով կղզու Պատկերասրահում՝ հենց դրա մասին էր խոսում: Այն մասին, որ իմպրեսիոնիստների կտավները նման չեն իրականությանը: Նա այդ ամենը կրկնում էր նաև հետագայում, երբ սկսեց ծախծխել իմպրեսիոնիստներին: Իսկ եթե նման լինեին, հետաքրքիր է, կծախե՞ր:

Ինձ միշտ զարմացրել է, որ հենց ռեալիզմն այդքան հարազատ դարձավ հեղափոխականներին: Դա առավել ևս զարմանալի էր նրանով, որ նրանց երազած պայծառ ապագան ընդհանրապես չէր հարադրվում իրականությանը: Արդեն Ելդիկի մահվանից հետո ինչ-որ մեկը պեղեց-գտավ նրա արտահայտությունն այն մասին, որ *իրականությունը պետք է իրական լինի,* և այդ անմահ ասույթը նախասահմանեց իշխանության վերաբերմունքը արվեստի հանդեպ:

Ասես կանխազգալով իր ֆանտասմագորիկ վախճանը՝ Ելդիկն արվեստում տրորում-բացում էր ռեալիզմի ճանապարհը, և արվեստի ցանկացած տեսակի համար որևէ իմաստուն խոսք ուներ: Գեղանկարիչներին խորհուրդ էր տալիս ավելի հաճախ վերապատկերել լուսանկարները, իսկ գրողներին՝ արտագրել հավաստիագույն տեքստեր, օրինակ, նիստերի արձանագրությունները: Ծուտով

առաջատար նկարիչների կտավներն արդեն անհնար էր տարբերել լուսանկարներից, իսկ գրականության մասին չես էլ ուզում խոսել. այդ տեքստերը բոլորին հայտնի են:

Այն, ինչ սկզբում անհաջող կատակ ու Կասյանի ճաշակի պաթոլոգիկ բացակայություն էր թվում, սկսեց ավելի ու ավելի լուրջ տեսք ստանալ: Խնդիրը լուրջ էր թեկուզ նրանով, որ հաղթանակած Պայծառ Ապագան ողջ ուժով նոր կրոն էր ստեղծում:

Այդ ամենից ակնհայտորեն ծծմբի հոտ էր գալիս: Եվ այն, որ մանր չարք Շլդիկը Պայծառակերպության տաճարում Պանտոկրատորի տեղն էր գրավել, հաստատում էր հին միտքը, որ սատանան Աստծո կապիկն է: Մենք ծիծաղում էինք, քանի դեռ կարող էինք ծիծաղել, բայց մեր ծիծաղն աննկատ փոխվեց ոռնոցի:

Իլարին ժամանակին պատմության մասին գրել էր որպես Բարու և Չարի պայքարի: Այդ օրերին թվում էր՝ Չարը վերջնականապես հաղթել է, ու հիմա ծավալվում է հրեշավոր *հակապատմությունը,* որն ընդհանուր գծերով կրկնում է նախկին պատմության իրադարձությունները: Այն ամենը, որ մեզ վիճակվեց ապրել այդ տարիներին՝ նոր կրոնի հիմնումը, Հյուսիսի ու Հարավի բաժանումը, ասես հին ֆիլմի նեգատիվ լիներ. սևը դառնում էր սպիտակ ու՝ հակառակը: Անիրականը՝ իրական:

Պարֆենի

Չնկատեցի՝ ինչպես սկսվեց նկարահանումը: Ահա ես, դեռ փոքր, դանակ եմ խաղում: Դեմքս՝ խոշոր պլանով: Մտախոհ փորում եմ քիթս: Ժան-Մարիի տեսանկյունից՝ այդպես պիտի վարվի տիպական երեխան: Համենայնդեպս, դանակախաղով զբաղվողը: Չհասունացած մանկական գիտակցության և այդքան ոչ մանկական զբաղմունքի հակադրություն՝ ահա այն՝ զարմանահրաշ վաղնջականը: Այդպիսի Միջնադար մեզ պետք չէ. դրա մասին են խոսում ռեժիսորի դեմքի արտահայտությունն ու ձայնը:

Ծովափից ինձ ձայն է տալիս Քսենիան: Շրջվում եմ ու դրանով

փրկվում ստույգ մահից: Դանակը խրվում է նախաբազուկս: Լեկլերին հարցնում եմ՝ Քսենիայի ձիչը կմտնի՞ ֆիլմի մեջ: Ռեալիզմի կշեռքով կշռվելով՝ ձիչն, իհարկե, կարող է մերժվել. աղջիկը ծովափին է եղել՝ մայրաքաղաքից համարյա երկու օրվա հեծյալ ճանապարհ: Այդպիսի տարածության վրա ընդհանրապես չեն ճչում:

Ժան-Մարին ժպտում է. իհարկե, այդ դրվագը կմտնի, ի՞նչ զարմանալի բան կա դրա մեջ: Հեռազգացության սովորական դեպք: Բուն ճիչը նկարահանվում է Տոսկանայում, ծովափին: Ժան-Մարին ինձ հարցնում է կոնկրետ մանրամասների մասին, որոնք, նրա կարծիքով, դեռ չեն բավականացնում ֆիլմին: Կարո՞ղ եմ որևէ բան ավելացնել:

Այո՛, թերևս: Խոտերին՝ աշնանային խաշամ: Բույրը հարբեցնում է: Մի կաղնու տերև եմ վերցնում ու տանում քթիս: Փակում եմ աչքերս: Ծշնջում եմ՝ թոշնած տերև: Ինձ համար ամենայն հին այդ ժամանակից կապվում է այդ տերևի հետ: Ծառի տակ կաղիններ էլ են թափված: Հարթ կեղևներով: Եվ, իհարկե, նույնպես թարշամած. խշրտում են ոտքի տակ:

Մի վանական է անցնում: Լայնաթափ է քայլում, իսկ գլուխն իմ կողմն է դարձրել:

Տեսնելով, որ ինչ-որ բան եմ շշնջում՝ հարցնում է.

- Աղոթո՞ւմ ես:

- Տերևները,- ասում եմ,- թոշնել են: Բայց կանաչ են եղել:

Վանականը՝ կանգ չառնելով.

- Մի վախեցիր, պատանյա՛կ, քայլիր աշնան տերևների վրայով, քանզի նրանք արդեն մեռել են:

- Ու ես է՞լ կմեռնեմ,- հարցնում եմ:

- Իհարկե:

Նրանից, որ վանականը շարունակում է քայլել, գլուխն ավելի ու ավելի հետ է դառնում:

- Հարյուր ութսուն աստիճա՞ն,- հարցնում է Ժան-Մարին:- Տպավորիչ կադր է, ու մենք իրավունք չունենք անտեսել:

Ընդմիջում է հայտարարվում: Մինչ մենք ճաշում ենք, օգնական-

ները թափված տերևներ են բերում ու շաղ տալիս նկարահանման հրապարակում: Բիֆշտեքսը կտրելով՝ Ժան-Մարին ուշադիր հետևում է տերևների հետ տարվող աշխատանքին: Դանակն ապակեձայն թխկացնում է ափսեին:

- Բնականություն չկա,- ատամմաքրիչը բերանը տանելով՝ ասում է օգնականներին:- Եթե կուզեք՝ անփութություն: Տերևներն իրենց ուզածի պես են թափվում, ճի՞շտ է:

Նայում է ինձ: Գլխով եմ անում՝ հաստատելով, որ՝ այո՛, տերևներն այդպիսի հատկություն ունեն:

Ճաշից հետո ռեժիսորը Պարֆենի-կրտսերին կանգնեցնում է կաղնու տակ ու քննաբար զննում վանական խաղացող դերասանին.

- Դուք կարողանո՞ւմ եք հարյուր ութսուն աստիճան շրջել գլուխը:

Դերասանը բացասաբար օրորում է գլուխը: Պարզ է, որ իննսունից ոչ ավելի:

- Իսկ ընդհանրապես ի՞նչ եք կարողանում:

Հայտարարվում է ևս մեկ ընդմիջում, որի ընթացքում իսկական վանական են բերում: Նա առանց դժվարության ցուցադրում է անհրաժեշտ հատկությունը. քառասուն տարի՝ վանքում, տեսահորիզոնը լայն է, ու միայն այդքանը չի, որ գիտի:

Պարֆենի-կրտսերը գետնից վերցնում է կաղնու տերևը: Ամեն ինչ ստացվում է առաջին փորձից: Ավարտական *նկարված է*-ից հետո տղան հարցնում է.

- Ես է՞լ կմեռնեմ:

- Ասացի, չէ՞, որ կմեռնես,- պատասխանում է վանականը:

- Իսկ ես կարծում էի նրան էիք ասում, ում դերը խաղում եմ:

Վանականը պատասխանում է առանց գլուխը շրջելու.

- Ես դա ցանկացածին կասեմ:

Պայծառ ապագան, որը Կղզի էր բերել Հեղափոխությունը, տարեցտարի պակաս պայծառ էր դառնում: Նույնիսկ սկսեցին ձայներ հնչել, որ պայծառ ապագան մնացել է անցյալում: Նախագահ Մար-

կելը դրանք խելագարության ձայներ կոչեց՝ ընդգծելով, որ ապագան ոչ մի կերպ չի կարող անցյալում լինել:

Ընդսմին, Կղզում սկսեցին սպառվել պարենի պաշարները, և Նորին Գերպայծառ Ապագայություն Մարկելը հրամայեց գյուղացիներից խլել պարենի ավելցուկները: Սեփական փորձով ծանոթ լինելով գյուղական կյանքին՝ Մարկելը նշում էր նաև տեղերը, որտեղ այդ ավելցուկները կարող էին թաքցվել: Գյուղից գյուղ էին անցնում զինված ջոկատներն ու խլում՝ ինչ կարող էր ավելցուկ թվալ:

Մեծ Հեղափոխության տասնութերորդ տարում Կղզու մաքուր երկնքում հանկարծ ամպեր խտացան: Ոչ մի կաթիլ անձրև չթափեցին ու ոչ մի կայծակ չարձակեցին, բայց գերանդիավոր պառավի տեսք էին ստացել:

Մարկելը հանդես եկավ գիտական բացատրությամբ, որ դա մթնոլորտային երևույթ է՝ օդի զանգվածների շարժման հետևանք: Բայց մթնոլորտային երևույթը չէր ցրվում, և Կղզու գլխին կախվելու երրորդ օրը աերոպլան բարձրացավ երկինք: Մի քանի անգամ պտտվելով երևույթի շուրջը՝ աերոպլանը հասավ առավելագույն բարձրակետին, որը գերանդու շեղբի ծայրն էր: Եվ նախանշանի հետ տեխնիկայի պայքարին հետևող ողջ կղզիաբնակ ժողովուրդը պարզորոշ տեսավ, թե ինչպես շեղբի վրա շողաց վառ բռնկումը: Աերոպլանը ցնցվեց ու սկսեց կորցնել բարձրությունը: Հետո օդային մեքենան պտտանկման մեջ ընկավ ու սկսեց սրընթաց մոտենալ գետնին: Եգիպտացորենի դաշտում գետնին խփվելու պահին ողջ Կղզու տները դողացին, իսկ Պայծառ Ապագայի Տաճարում որմնանկարից պոկվեց Նախագահ Մարկելի նորապատկեր գլուխը: Ծովի կողմից արտասովոր զանգահարություն լսվեց, որ ասես ջրի տակից էր գալիս: Մի քանի վայրկյանից ամեն ինչ խաղաղվեց, պառավի ուրվականը լուծվեց երկնքում, և բոլորը հասկացան, որ դա սովի նախանշանն էր: Ինչ վերաբերում է Նախագահի գլորված գլխին, ապա դա էլ ընկալվեց որպես նրա ճակատագրում կատարվելիք փոփոխությունների նշան: Ոչ լավագույն փոփոխությունների:

Բնակչության հայացքների հակագիտականությունից ապշած՝

Նախագահ Մարկելը շտապեց հանդես գալ հանգստացնող հայտարարությամբ: Տեղեկացրեց, որ կատարվածի մեղավորը օդաչուն է. ինքնաթիռը դիպել էր ամպեղեն գերանդուն, այն դեպքում, երբ սուր առարկաներին մոտ թռչել կտրականապես արգելվում էր: Չնայած համահունչ էր գիտության վերջին տվյալներին՝ Մարկելի հայտարարությունն անզոր էր վերադարձնել անդորրը: Գյուղացիները վերջնականապես դադարեցին մթերք վաճառել, ու երկնային պառավի գերանդին սկսեց սուլոցով իջնել հերթով բոլոր տների վրա:

Մյուս աղետը, որ թափվեց այդ տների վրա, *հատուկ ջոկատներն* էին, որ Կղզու ղեկավարությունը սկսեց ուղարկել մայրաքաղաքին հարող քաղաքներն ու գյուղերը: Ջոկատների մասնագիտացումը գերազանցապես գնդակահարություններն էին. նրանց, ովքեր չէին ցանկանում բաժանվել պարենի ավելցուկներից: Մարդիկ բացատրում էին, որ ավելցուկները շա՛տ վաղուց վերածվել են կարիքի, և բացատրությունների պատասխանը գնդակն էր: Նորին Գերպայծառ Ապագայություն Մարկելի արտահայտությամբ՝ *բանավեճերի ժամանակն անցել էր:* Բանավեճերի ժամանակն անցել է՝ կրկնում էին գնդացիրները, և դա նոր Նախագահի ամենաթևավոր խոսքը դարձավ:

Հեղափոխության քսաներորդ տարում հիմնվեց Աշխատանքային Ճամբարը: Համալրվում էր գերազանցապես գյուղացիներով, որոնցից խլվել էին պարենի ավելցուկները: Նախագահ Մարկելը դրա մեջ գթասրտության դրսևորում էր տեսնում. քանզի ի՞նչ էին անելու գյուղացիներն իրենց գյուղերում առանց ուտելիքի: Նրան՝ ծագումով գեղջուկին պատասխանը պարզ էր. ոչի՛նչ:

Ճամբարը Կղզու այն մասում էր, որտեղ Անտառը մոտենում է Ծովին: Վերաբնակեցվածների խնդիրը անտառ հատելն ու Ծովով Մեծ երկիր ուղարկելն էր: Եվ երբ Մարկելը հղացավ Ճամբարի միտքը, չորս հազար գյուղացի անհապաղ ուղարկվեց Անտառ: Բայց Անտառում կացարանների հետ կապված դժվարություններ ծագեցին. չէ՞ որ դրանք այդ կողմերում սահմանափակվում են անտառապահնե-

րի տնակներով: Տեղում պարզ դարձավ, որ այդ տնակները բավարար չեն չորս հազար եկվոր տեղավորելու համար, ինչպես որ բավարար չէր ուտելիքը, որ տնակներում թողնում էին անտառապահները:

Եվ երբ Ճամբարի պետը դրա մասին զեկուցեց Կղզու Նախագահին, նա խիստ զայրացավ: Ասաց.

Խավար անցյալի աստվածը, որին մենք չեղարկեցինք, հինգ հացով կերակրեց հինգ հազար մարդու:

Ասաց.

Եվ մի՞թե դու, հասնելով Պայծառ Ապագային, չե՞ս կարող նույնքան հացով կերակրել ընդամենը չորս հազարին:

Կարող եմ, պատասխանեց Ճամբարի պետը, միայն վախենում եմ, որ քաղցածները դրանով չեն կշտանա, քանզի ես աստված չեմ:

Այդ ժամանակ Նախագահ Մարկելը նրան հիշեցրեց, որ Անտառում վայրի կենդանիներ կան, ինչպես և հատապտուղներ, սնկեր, նաև՝ մամուռ ու ծառի կեղև: Վերջապես խոտ կա, որով վաղնջական ժամանակներից սիրում է սնվել կղզու ժողովուրդը:

Եվ Ճամբարի պետն ապշած էր Նախագահի իմաստնությունից, և փառք տվեց նրան, և մեկնեց իրագործելու: Քանզի Ճամբարի միտքը Մարկելը հղացել էր դեկտեմբերին, սնկերը, հատապտուղներն ու խոտը կերակրացանկից ստիպված էին ժամանակավորապես հանել, փոխարենը Անտառում եղևնու կոներ ու կաղին կար, որ Նախագահը հաշվի չէր առել:

Վերաբնակները ստիպված ձմեռեցին իրենց փորած գետնատնակներում: Ապրիլին պարզվեց, որ ճամբարականների թիվը կրճատվել-հասել է հինգ հարյուրի: Տեղեկանալով դրա մասին՝ Ճամբարի պետը թեթևացած շունչ քաշեց, քանզի տարբերություն կա, չէ՞, չորս հազարին ու հինգ հարյուրին կերակրելու մեջ: Սակայն մայիսին ևս չորս հազար մարդ բերեցին, բայց պետն այստեղ էլ չընկճվեց՝ որոշելով, որ հիմա արդեն ձեռք բերված փորձը կօգնի:

Հեղափոխության քսաներեքերորդ տարում ուրիշ ամպեր սկսեցին կուտակվել երկրի գլխին: Դրանք հայտնվում էին Կղզու Հարա-

վային մասում, որը դեռ պահպանում էր հին պատերազմի հիշողությունը: Հիշում էին ոչ այնքան պատերազմը, որքան նրան ուղեկցող սովը, քանզի դրա մասին պատմությունները փոխացվում էին սերնդեսերունդ: Ընտանեկան ավանդություններում ու հիշողության մեջ ընդմիշտ դրոշմվել էին հյուծվածների մահն ու վերապրածների տառապանքները:

Հիշողությամբ, ինչպես մամլակով սեղմված Հարավի մարդիկ սկսեցին ջոկատներ կազմել ու պատրաստվել մայրաքաղաքի վրա արշավանքի: Երդվում էին հրապարակներում, որ թույլ չեն տա կրկնությունը մի քանի դար առաջ տեղի ունեցածի: Հավասարապես հրաժարվում էին խավար անցյալից և պայծառ ապագայից՝ առաջարկելով կենտրոնանալ ներկայի վրա:

Պալատում նստած Նախագահ Մարկելն արագ հասկացավ, թե ուր է տանում այդ կենտրոնացումը և հատուկ ջոկատներ ուղարկեց Կղզու հարավ: Որոշվեց, որ զորքը կգնա երկաթուղով: Բայց երկաթուղային տրանսպորտի հարմարավետությունն ու արագությունը չէր չեղարկում հարձակվողների ճանապարհին հիմա ու նախկինում աճած գլխավոր խոչընդոտը՝ Անտառը:

Գնացքները ստեղծված չէին խուսավարման համար, ինչպես և հետընթացի, ինչը կարող էր փրկել ուղևորներին, երբ առաջին իսկ գնացքը կանգնեցվեց Անտառում: Տեղի ունեցածի մասին Մարկելը կարող էր միայն ենթադրել, քանի որ ուղարկվածներից ոչ մեկը չվերադարձավ:

Եվ այդ ժամանակ նա հավաքեց Հյուսիսի բնակիչներին ու հայտարարեց, որ նրանցից խլված ողջ պարենն իրականում տեղափոխվել է Հարավ: Ասաց նաև, թե իբր այդ պայմանով են հարավցիները համաձայնել հյուսիսցիների հետ մնալ միասնական պետության մեջ: Այդպես ասաց Մարկելը, բայց մեծ կասկածներ կային, թե դա ճիշտ է, քանզի նման բան հարավցիների մտքով երբեք չէր անցել:

Մինչև այդ ժամանակները Կղզու երկու մասերն արդեն այնքան էին սերտաճել, որ բաժանման միտքն անգամ, հանգուցյալ Կասյա-

նի արտահայտությամբ, անմտածելի էր մտածել: Բայց Մարկելն ասաց ինչ ասաց, և նրա բառերը, թև առնելով, թռան-հասան Կղզու Հարավ ու մարդկանց ստիպեցին մտածել, և այդ աղետալի իմաստով՝ իսկապես թևավոր դարձան: Դարձան հրեղեն թռչուն, որը հրդեհեց ողջ Հարավն ու սկիզբ դրեց մեծ փորձանքների:

Պարֆենի

Նկարահանումների համար կինոխմբի հետ թռանք Տոսկանա: Իտալիայի այդ անկյունը զարմանալիորեն հիշեցնում է Կղզու հարավային ծովեզերքը: Ես ու Քսենիան ապրում ենք վիլլայում, որը տրամադրել է մի ռուս մեկենաս՝ Ժան-Մարիի ընկերն ու ֆիլմի հովանավորներից մեկը: Այդտեղ է ապրում նաև Ժան-Մարին, կինոխմբի մյուս անդամները տեղավորվել են մոտակա հյուրանոցներում:

Վիլլան բլրի զառիկող լանջին է, շրջապատված պուրակով: Զբոսանքի ժամանակ Նորին Բուսաբանական Մեծություն Քսենիան անուն առ անուն թվարկում է ծառերը՝ իտալական սոճի, հաճարենի, ակացիա, քարեկաղնի: Ժան-Մարին զարմանքով է նայում նրան: Հանում է հեռախոսն ու մեզ խնդրում կանգնել ծառերից մեկի տակ:

Ընտրում ենք ակացիան: Մենք ու ծառը արդեն երկվորյակներ ենք. կնճիռներ, հոդեր, կեռիկ-մատներ: Նույնքան ծուռումուռ՝ ծառն իջնում է դեպի ծով, ձևացնում է, թե իջնում է: Կարևոր է, որ Ժան-Մարին մեզ չշփոթի նրա հետ: Նկարահանման կետ փնտրելով՝ անցնում է ինչ-որ թփի ետև: Պպզում է: Իսկ մենք դեռ կանգնած ենք ակացիայի տակ: Մեր փայտացման վիճակը մոտ է սահմանայինին: Նկարվա՛ծ է:

Ճաշից հետո նստած եմ հյուրասենյակում: Ցուցափեղկ-պահարաններում՝ տեղական հնագիտական գտածոների հավաքածուներ. սևացած մետաղադրամներ՝ փիրուզագույն փառով, մատանիներ, աներևակայելի չափերի արծաթե կոճակներ: Մենք այն ժամանակի վկաներն ենք, երբ կոճակները ճռթոցով կոճկվում էին: Մեզ

նույնպիսի կոճակներ ենք զգում. կարող էինք դրված լինել նույն ցուցափեղկում:

Նստել, թերթում եմ տարեգրությունը, որը կազմողների մեծ մասին ճանաչում էինք: Նրանք պատմության մեջ փնտրում էին Բարին ու Չարը: Վայելում եմ նրանց զարմանահրաշ խոսքը: Տարեգիրներն այն պահպանել են, իսկ ես ու Քսենիան՝ ոչ. մենք զարգացել ենք ժամանակի հետ: Այսպես, թե այնպես՝ նմանվել ենք նրան, ընդունել նրա կերպն ու խոսքը:

Տարեգիրները փոփոխությունների իրավունք չունեին. գետը պիտի հայես ափին նստած: Գետի հետ հոսող այսօրվա պատմաբանները դա չեն հասկանում: Ժամանակին համաքայլ ընթացողները: Հոսողը նկարագրելու համար անշարժ կետ է հարկավոր՝ Բարու և Չարի հատման տեղում: Այդ զույգը տարբեր հագուստներ է փոխում, բայց նրանց էությունն անփոփոխ է:

Զգում եմ, որ սկսում եմ քնել և անցնում եմ ննջարան: Երկար նայում եմ քնած Քսենիային: Եթե նա առաջինը հեռանա, ի՞նչ եմ անելու:

Հարավցիները հաշված շաբաթներում ստեղծեցին իրենց բանակը և ուժով բացելով զինվորական պահեստները՝ զինեցին մարդկանց: Հենց այդ շաբաթներին, ելույթ ունենալով Հյուսիսի սոված բնակչության առաջ, Նախագահ Մարկելը նկարագրում էր, թե հատկապես ինչ և ինչ քանակի սննդամթերք է պահվում Հարավում: Նրա ասելով՝ նույնիսկ ամենահետին հարավային կրպակում ավելի շատ ուտելիք կար, քան ողջ տառապող Հյուսիսում: Ընդհանուր առմամբ ճշմարտությանը չհամապատասխանող այդ խոսքում ճշմարտության որոշ հատիկ կար, որովհետև Հարավում չէին կարողացել խլել մարդկանց վերջին ունեցածը և հատուկ ջոկատները չէին հասել այնտեղ:

Սննդամթերքի մասին բազմակի ու կրակոտ ելույթներն իրենց գործն արեցին: Հյուսիսցիները մեծ բազմությամբ կամավորագրվում էին, ինչի շնորհիվ առանց այն էլ ոչ փոքր կառավարա-

կան բանակը զգալիորեն աճեց: Ծուտով այդ բանակը շարժվեց դեպի Հարավ:

Զորքը չէր շտապում: Գլխավոր հրամանատարը, որպիսին Մարկելը նշանակել էր իրեն, հասկանում էր, որ պարտվելու իրավունք չունի, քանզի դա ամեն ինչի վերջը կլիներ: Բայց հասկանում էր նաև, որ հաղթանակ էլ չպիտի լինի. չէ՞ որ հաղթանակն ավարտում է պատերազմը, որն այդպիսի դժվարությամբ սանձազերծել էր Մարկելը, և նրա համար անսահմանափակ իշխանություն էր ապահովում: Այդ ամենից բացի, պատերազմի ավարտը պատերազմողների համար կբացահայտեր, որ Հարավում էլ ուտելիք չկա:

Մարկելի վիճակում ամենատխուրն այն էր, որ չէր կարող նաև մայրաքաղաքում մնալ, որտեղ հազարավոր զինված մարդիկ ամեն պահի կարող էին զենքն ուղղել նրա դեմ:

Ռազմարշավի իմաստը շարժումն էր որպես այդպիսին, տևական, եթե կարելի է՝ անվերջանալի շարժումը: Գլխավոր հրամանատարի դրությունը Մարկելին երկանիվ հեծանիվ էր հիշեցնում, որը վերջերս էր վարել սովորել ու որից չէր ընկնում միայն քշելիս:

Անտառով վաղուց արդեն լայն խճուղի էր բացվել, որի շուրջը շարվել էին գյուղերը: Զորքն այդպիսի տեղանքով կարող էր անարգել առաջ գնալ: Խճուղով դեպի Հարավ ճեղքելու բոլոր հնարավորություններն ունենալով՝ Մարկելն իրեն զրկեց ուղիղ ընթացքի ուրախությունից: Զորքը շարժվեց դեպի արևելք և Անտառը շրջանցելու զորաշարժ սկսեց:

Որպեսզի այդ ընթացքը զորքին աննպատակ չթվար, Գլխավոր հրամանատարը կարգադրեց կողոպտել ճանապարհին ընկած գյուղերը: Ավարը մեծ չէր, սակայն բարձրացնում էր զինվորների մարտական ոգին: Որ դրանք դեռ Հյուսիսի գյուղերն էին, հարձակվողների վճռականության վրա ոչ մի կերպ չէր ազդում. ամենաթողության ոգին արբեցնում էր, և այդ տարօրինակ շարժումը սկսում էր դուր գալ նրանց:

Իսկ երբ զորքը ոտք դրեց Կղզու Հարավային մասում, պարզվեց,

որ հանդիպող բոլոր գյուղերը դատարկ են: Զորքը ոչ միայն պարենից զրկվեց, այլև հաղթանակներից, ու ոգին սկսեց մարել: Կառավարական բանակի ուղին առանց այն էլ անտառային ճանապարհ էր հիշեցնում, իակ հիմա արդեն նման էր ամպրոպի տակ ընկած հարբեցողի քայլքին: Զորքը սկսեց տրտնջալ:

Եվ այդ ժամանակ Մարկելի հրամանով բանակն անսպասելի փոխեց մարտավարությունն ու ուղիղ գնաց թշնամու վրա: Զորավար Մարկելը տառացի էր հասկացել *ուղիղ* բառը. այն համընկնում էր կարմիր գծին, որը շտաբային քարտեզին տարել էին բազմաթիվ լեռնաշղթաների, կիրճերի, լճերի, ջրվեժների, ոչ մեծ գետերի և ամենագլխավորը՝ լայնահուն ու անհանգիստ Գետի վրայով: Հարցին, թե ինչպես են հաղթահարելու այդ բոլոր բնական արգելքները, զորավարն անփոփոխ պատասխանում էր, որ հենց այդպես էլ հաղթահարելու են՝ բնականորեն:

Քարտեզի վրա գիծը հասնում էր ընդհուպ հարավցիների պաշտպանական ամրություններին: Հիմա արդեն Մարկելի ռազմավարական մտահղացումները ո՛չ յուրայիններն էին հասկանում, ո՛չ օտարները: Երկու կողմն էլ կասկածում էին, որ ուղեղը խախտվել է: Կասկածն ուժեղացավ, երբ կառավարական զորքը, աներևակայելի արգելքներ հաղթահարելով, մարտի մեջ մտավ հարավցիների հետ:

Ի զարմանս անձամբ Գլխավոր հրամանատարի՝ առաջին մարտում նրա զինվորները հաղթեցին: Նրանք անցան Գետն ու կռվի մեջ մտան իրենց հուսահատության ողջ ուժով, ինչպես և արշավանքի ընթացքում զարգացած՝ սպանելու սովորությամբ: Հարավցիների զորքն այդպիսի փորձ չուներ և չէր դաժանացել: Բայց առաջին մարտից հետո փորձառությունը հայտնվեց:

Հարավի բանակը գլխավորում էր գեներալ Պոլիկարպը, որը դեռ երեկ կառավարական զորքերի Գլխավոր շտաբի կազմում էր: Պոլիկարպը ծնվել ու մեծացել էր Հարավում: Հասկանալով, որ պատերազմ է պատրաստվում, գաղտնի մեկնեց հարենիք ու սկսեց կազմակերպել պաշտպանությունը: Երբ դրա մասին լուրը հասավ

Գլխավոր հրամանատարին, գեներալ Պոլիկարպը հեռակա դատապարտվեց գնդակահարության:

Քանի որ հեռակա գնդակահարությունը գործուն միջոց չէ, գեներալն առավել վճռականությամբ շարունակեց իր գործը: Կառավարական զորքերի արտասովոր զորաշարժերը բավարար ժամանակ էին տալիս դրա համար: Մինչև առաջին բախումը ոչ նա, ոչ զորքը պատրաստ չէին արյունոտ գոտեմարտի. հակառակորդի զորքը նրանց համար դեռ յուրային էր: Քաղաքացիական պատերազմը սովորաբար հեշտ չի սկսվում, բայց սկսվելով՝ արդեն շարունակվում է առանձնակի դաժանությամբ:

Երկրորդ մարտում գեներալ Պոլիկարպը հաղթանակ տարավ, բայց մարդասիրաբար պահեց իրեն: Կարող էր ոչնչացել Գետից նահաջող թշնամու զգալի մասը: Լաստերին կանգնածներն ու Գետը լողալով հաղթահարողները լավ թիրախներ էին, որովհետև շարժումը դանդաղ էր ու կանխատեսելի: Մնում էր միայն վերալիցքավորել հրացանները կամ փոխել գնդացրի ժապավեններն ու կրակել:

Պոլիկարպը դա չարեց: Երբ Գետի սև ջրերը փշաքաղվեցին գնդակներից, հրամայեց դադարեցնել կրակը: Պոլիկարպն այդ մարտում տեսել էր թշնամիների դեմքերը, որոնցից շատերին առաջ անուն առ անուն գիտեր: Գեներալը սթափ գնահատեց իրավիճակն ու Մարկելի բանակին թույլ տալով նահանջել՝ Գլխավոր հրամանատարի պլանների փոփոխություն չէր սպասում: Գեներալ Պոլիկարպը չէր ցանկանում լարել չարի զսպանակը և հույս ուներ, որ Աստված ու ժամանակը հնարավորություն կտան խաղաղությամբ լուծելու հարցը:

Այդպես Մարկելին հաջողվեց շահել երկու ամիս, որոնք ստացան *Գետի Մեծ դիմակայություն* անունը: Երբ մտքերի խռովությունը բանակում վտանգավոր թափ առավ, նա գրոհի հրաման տվեց, և զինվորները սկսեցին ջուրն իջեցնել լաստերն ու նավակները: Հակառակ ափից շուրջօրյա հետևում էին Գետին, ու ջրի վրա լողամիջոցների հայտնվելը դիմավորեցին փոթորկալի կրակով: Գետը այդպիսի օրերին կարմրում էր:

Գլխավոր հրամանատարը ոգևորիչ պարապմունքներ նշանակեց. մայրաքաղաքից ժամանած Ապագայի Պահապաններն ամեն երեկո պատմում էին, բնականաբար, ապագայի մասին: Իրենց հետ բերած *կախարդական լապտերով* Պահապանները զինվորներին ծանոթացնում էին Պայծառ Ապագայի Տաճարի որմնանկարներին, ինչպես և հիշարժան վայրերին, որտեղ մանկությունն էր անցկացրել անժամանակ հեռացած Նախագահ Կասյանը:

Նաև մարտակոչ արձակվեց՝ *Վրեժ լուծենք Կասյանի համար,* որով պետք է մտնեին ջուրն ու, եթե հաջողվեր, ափ ելնեին: Մարտակոչի իմաստն այնքան էլ պարզ չէր, որովհետև Նախագահի մահվան մեղավորներին դժվար թե պետք էր հակառակ ափին փնտրել, ու նաև՝ ովքե՞ր էին այդ մեղավորները: Օ՞ձը: Ռոլս-ռոյս արտադրողնե՞րը: Կասյանի վախճանը կանխագուշակած Պահապանե՞րը: Կամ գուցե (և այդ հարցը ավելի ու ավելի հաճախ էր հնչում) Մարկելն ի՞նքը: Մարտակոչը լավ էր նստում լեզվին ու հեշտ արտաբերվում էր: Դա բավական էր, որ գոռային:

Կասյանի կերպարի, ինչպես և նրա մանկության մանրամասների հանդեպ զորքի ուշադրությունն օրերի հետ նկատելի թուլացավ: Ասենք, վրեժի մասին բառերն էլ դատարկ փորով ավելի ու ավելի վատ էին աղաղակվում: Ոգևորիչ պարապմունքներին զինվորներն ավելի հաճախ էին խնդրում պատմել ուտելիքի մասին, որն իբր մյուս ափին էր:

Ի վերջո դադարեցին որևէ բան պատմել, բացի ուտելիքից, իսկ կախարդական լապտերը միայն պալատական խոհանոցի ճաշատեսակների նմուշներ էր ցուցադրում: Այդ նպատակով մայրաքաղաքում պատվիրեցին նշված ճաշատեսակների լուսանկարները, որոնք (լուսանկարները, ոչ թե ճաշատեսակները) շտապ հասցնում էին գործող բանակի տեղակայման վայր: Նկարները ուղեկցվում էին կարճ ու չար մակագրությամբ. *Ահա թե ինչ են ուտում Հարավում:* Հենց այդ պատկերներն էր ճառագում կախարդական լապտերը ամենապատասխանատու ճակատամարտերից առաջ:

Իսկ երբ պալատական խոհանոցի առաջարկները սպառվեցին,

Ապագայի Պահապանները հիշեցին երկրորդ հակառակորդին, որի հետ վաղուց արդեն հյուծող, թող որ առայժմ անտեսանելի, պատերազմ էր գնում: Փարիզյան ռեստորանների ճաշատեսակների լուսանկարներ պատվիրեցին: Կադրում հայտնված ֆրանսերեն գրառումները բացատրվում էին հակառակորդի հետ հարավցիների դավադրությամբ: Չինվորներին խոստանում էին Հարավի դեմ հաղթանակից հետո գրավել Փարիզը՝ իր բոլոր խոհարարական նրբություններով:

Ճաշատեսակների նոր բաժինն ուսումնասիրելով՝անձնակազմը սկսում էր ոռնալ: Նայողները կասկածում էին, թե երբևէ կհասնեն Փարիզ, ու համաձայն էին ուտել հակառակ ափին: Վատն այն էր, որ հակառակ ափը նույնքան անմատչելի էր, որքան Փարիզը: Ստամոքսի ամենախորքերից, որը լիքն էր նույնիսկ այդ սոված ժամանակներում, դեպի Մարկելի գլուխը սկսեց բարձրանալ գիտակցումը, որ խռովություն է սկսվում: Եվ այստեղ նա դիմեց մի միջոցի, որ բոլոր նախկիններից անսպասելի էր:

Պարֆենի

Երեկոյան եկավ վիլլայի տերը՝ Արտեմի Նիկիտինը: Ընթրում ենք նրա և Ժան-Մարիի հետ: Նիկիտինը թեթև քաթանե պիջակով է, առանց փողկապի. այդպիսի տեսք ունենում են ֆրանսիացի պրոֆեսորները:

Ֆրանսերեն շնորհակալություն է հայտնում, որ իջևանել ենք իր տանը: Հույս ունի, որ ոչնչի պակաս չենք զգում: Քսենիան ասում է, որ այստեղ դժվար է որևէ բանի պակաս զգալ: Արտեմին պատասխանում է գլխի կիսախոնարհումով: Ինձ դուր է գալիս այդ *կիսա*-ն. ծայրահեղություններ չեմ սիրում:

Ժան-Մարին պատմում է հաջորդ օրվա նկարահանումների մասին: Նա սովոր է ուշադրության կենտրոնում լինել, և դա թեթևացնում է մյուսների կյանքը: Խոսում է իր փոքրիկ գյուտերի մասին, որոնք կներկայացվեն վաղը. տեսախցիկի անսովոր դիտանկյուն ու

համապատասխան լուսավորություն: Նրան միայն եղանակն է անհանգստացնում (նշան մատուցողին, որ ռիզոտտոն դուր է եկել): Նրան շատ է անհանգստացնում եղանակը, բայց այդտեղ ոչինչ չի կարող անել նույնիսկ Արտեմին: Տանտիրոջ դեմքը չափավոր ցավ է արտահայտում:

Ժան-Մարիի հայացքը կենտրոնանում է ռիզոտտոյի նոր բաժնի վրա: Այն հայտնվել է ոչմիտեղից: Բարձրագույն մակարդակ. բութ մատը՝ ի պատիվ մատուցողի: Միակ բանը, որ չի կարողանում գտնել իր ֆիլմերի համար, լավ մատուցողն է: Իսկապես, չի կատակում: Եթե կուզեք՝ ամենադժվար դերը՝ *ծաշը մատուցված է* հայտարարելն է: Արտահայտվելու տարածությունն այնքա՛ն փոքր է: Ռեժիսորական դանակի ցուցումով՝ սև ձիթապտուղներ են հայտնվում նրա ափսեում: Ընդսմին, այդ երկու բառի մեջ պետք է լինի ամեն ինչ՝ և՛ *Ֆիգարոն այստեղ-Ֆիգարոն այնտեղ,* և՛ *կտրվող լարի ձայն,* և՛, *գուցե, լինել, թե չլինել:*

Արտեմին բաժակը խփում է իմ ու Քսենիայի բաժակներին:

- Տարեգրությունը թողել էիք հյուրասենյակում: Մանրանկարից դատելով՝ Հյուսիսի ու Հարավի Պատերազմի էջի վրա...

Քսենիան գլխով է անում.

- Տարօրինակ պատերազմ է, ճի՞շտ է:

- Կարելի՞ է մի հարց,- Արտեմին հայացքը դարձնում է ինձ:- Ինչո՞ւ այն ժամանակ փրկեցիք Նախագահ Մարկելին: Եթե ընդառաջ չգնայիք, ամեն ինչ կավարտվեր նրա կործանումով ու դիկտատուրայի վախճանով: Կներեք, եթե անքաղաքավարի եղա:

Պատմության վերաբերյալ հարցերը միշտ անքաղաքավարի են: Հակառակ դեպքում ոչ մի իմաստ չէին ունենա: Նույն հարցն այդ օրերին ինձ տվեց նաև Քսենիան: Ձևացնում եմ, թե մտածում եմ հարցի վրա, չնայած իրականում չեմ էլ մտածում: Ամեն ինչ որոշել էի դեռ այն ժամանակ:

- Ես մարդկանց էի փրկում կոտորածից: Իսկ դիկտատուրան ամեն դեպքում կմնար՝ Մարկելով, թե առանց:

Լեկլերը մի քանի կում գինի է խմում ու զննում շիշը.

- Վաթսունչորս թվի պորտվեյն... Բռա՛վո:

- Իմ կարծիքով, մեր հյուրերն ավելի տարիքովն էլ են խմել,- Արտեմին նորից շրջվում է մեր կողմը:- Ինձ համար դա հարց է Ռուսաստանի պատմությունից: Եթե Ստալինը երեսունականներին անհետանար, դիկտատուրա չէ՞ր լինի: Ինչի՞ հետ էին կապված նրա սկիզբն ու վերջը:

Լավ հարց է:

- Պատմության ռիթմի:

Ավելի լավ պատասխան չունեմ:

Քսենիա

Մարկելը մեզ մոտ եկավ գիշերով և ասաց.

- Ես ուզում օգնություն խնդրել ձեզնից:

Նա երբեք օգնություն չէր խնդրում: Եվ ընդհանրապես՝ չէր խնդրում: Ինչ պետք էր՝ խլում էր, իսկ այստեղ, ըստ երևույթին, հասկացել էր, որ այդպես այլևս չի ստացվում ու դժվար է անվերջ բռնել կյանքի կոկորդը:

Այդ ժամանակ մեզ տեղափոխել էին Քաղաքային Դարպասի մոտ գտնվող կոմունալ բնակարան, ու Մարկելը եկավ այնտեղ: Նստել էր կոմունալ խոհանոցում, քանի որ սենյակում միայն մահճակալն էր տեղավորվում: Հարևանները մոտ էին ուշագնացության: Պրիմուսին դրված թեյնիկը անմռունչ եռում էր, որովհետև ոչ ոք չէր համարձակվում մոտենալ ու վերցնել: Թեյնիկի տակ կրակը Պարֆենին անջատեց: Լուռ լսում էր Գլխավոր հրամանատարին, իսկ նա անդադար խոսում էր: Ոչ մի կերպ չէր կարողանում կանգ առնել: Երևում էր՝ վախենում է Պարֆենիի *ոչ*-ից:

Մտա սենյակ՝ երրորդ գավաթը բերելու: Միջանցքում հարևաններից ոչ ոք չկար: Մուտքի դռանը կանգնած էին երկու ժամապահ: Վերադառնալով խոհանոց՝ վառեցի մեր պրիմուսն ու թեյ դրեցի: Իր խնդրանքը շարադրելիս Մարկելը չէր նայում Պարֆենիին: Հայացքը

սառել էր էլեկտրալարերի հյուսակին, որով մտախոհ իջնում էր ուտիճը:

Տեսա ինչպես իր սենյակից դուրս նայեց թեյնիկի տերը՝ Լուկյանը: Մեր միջև վաղուց ալարկոտ պատերազմ էր գնում. Լուկյանը մեզ մեղադրում էր կերոսին գողանալու, զուգարանում իր նստոցն օգտագործելու և իր խոհանոցային լամպը վառելու մեջ: Կանգնած տեղից չէր տեսնում, որ իր պրիմուսն անջատված է, ու տառապում էր կերոսինի վառվելուց: Բնականաբար՝ մնացորդի, որ դեռ չէինք հասցրել գողանալ: Չարախնդությունը պատեց ինձ:

Մարկելը հանկարծ ընդհատեց ու խոսքն ու մատը պարզեց ուտիճին.

- Ձեզ պետք է ազատել այսպիսի հարևաններից:

Ասես միջանցքամուց քշված՝ Լուկյանն անհետացավ դռան ետևում: Հաջորդ պահին ինչ-որ բան խլաձայն փուլ եկավ այնտեղ:

Մարկելը միջնորդություն էր խնդրում: Պարզվում է՝ դեմ էր արնահեղությանը: Բնածին խաղաղասիրությունն էր նրան բերել Պարֆենիի մոտ, քանզի Նորին Բարձր Պայծառափայլությունը (Պարֆենիի զարմացած հայացքը) միակն է, ում երկու կողմն էլ վստահում են: Իսկ երբ Նախագահը ներկաներին հիշեցրեց, որ *երանելի են խաղաղարարները,* թույլ ժպիտ խաղաց Պարֆենիի շրթունքներին: Երկար տարիների ընթացքում առաջին անգամ թևավոր խոսք էր լսում, որը Կասյանինը չէր:

Սակայն Գլխավոր հրամանատարը միայն խաղաղություն չէ, որ փնտրում էր. մտահոգ էր նաև հացի համար: Հասկանալով, որ խաղաղությունն առանց հացի չի փրկի իրեն, նա ինձ ու Պարֆենիին համոզում էր պարենային օգնության խնդրանքով դիմել համաշխարհային հանրությանը:

Մարկելը չէր փորձում մեզ գնել. բավականաչափ գլուխ էր հանում մարդկանցից: Մեր պարգևը մարդկային կյանքերն էին լինելու, և նրանց մասին Կղզու Նախագահը խոսում էր Պարֆենիի արտահայտություններով: Ինձ թվաց՝ որոշ դարձվածքներում նույնիսկ լսում եմ Պարֆենիի ձայնը: Մտածում էի, որ ոչ մի տեղ նոր իշխա-

նությունը այնպես չի առաջադիմել, որքան նմանակման մեջ:

Թափը չթուլացնելով՝ Գլխավոր հրամանատարը խոստացավ նաև, որ անմիջապես կդադարեցնի պատերազմը Ֆրանսիայի հետ, և դա, նրա կարծիքով, պետք է փոխարկվեր երախտապարտ Փարիզի շռայլ օգնությանը:

Այո՛, խորամանկ Մարկելը չէր փորձում մեզ գնել: Պարզապես հպանցիկ ակնարկեց ինձ ու Պարֆենիին սպասող փոքրիկ նվերի՝ առանձին բնակարանի մասին: Իբր պատահական հիշեց՝ ուտիճին նայելիս:

Նախագահի խոսքը, ինչպես որ ամեն ինչ այս աշխարհում, ի վերջո ավարտվեց: Ես թեյ լցրի գավաթները, ու Մարկելը մի քանի կում արեց: Թեյի հետ ոչինչ չունեինք հյուրասիրելու: Ուժ չունենալով դիմանալու վրա հասած լռությանը՝ Մարկելը սկսեց սեղանին մի հին քայլերգ թմբկահարել: Պարֆենին լռում էր:

Գլխավոր հրամանատարը մի գիշերով վերադարձավ մայրաքաղաք և հանդիպեց Պարֆենիի ու Քսենիայի հետ: Չգիտեմ ինչ խոսակցություն էին ունեցել, բայց հաջորդ օրը Պարֆենին ժամանեց զորքերի տեղակայման վայր: Նրա ժամանումը համընդհանուր ցնծություն առաջացրեց: Հիշեցնում էր Պայծառ Ապագային նախորդած հին բարի ժամանակները: Հին: Եվ բարի:

Պարֆենին դիմեց զորքերին և ասաց, որ ցանկացած պատերազմ ավարտվում է խաղաղությամբ, և ինքը եկել է խոսելու ոչ թե պատերազմի, այլ խաղաղության մասին: Ականատեսները պնդում են, որ եթե այդ պահին Պարֆենին իրեն Գլխավոր հրամանատար հռչակեր, անկասկած կդառնար:

Սակայն Պարֆենին այդպես չարեց: Երկու թիավարների հետ նավակ նստեց ու դիմեց դեպի Գետի հանդիպակաց ափ: Այնտեղ արդեն գիտեին՝ ով է նավակում, ու եռակի *ուռայով* դիմավորեցին Պարֆենիին: Գեներալ Պոլիկարպը պատվի առավ Նորին Բարձր Պայծառափայլությանն ու զեկուցեց, որ Հարավի զորքը պատրաստ է լսել նրան:

Պարֆենին հակիրճ էր.

Դիմում եմ ձեզ ոչ թե իշխանության իրավունքով, քանզի այդպիսին չունեմ, այլ իրավունքով սիրո և ըստ Ագաֆոնի մարգարեության: Հյուսիսն ու Հարավը դարեդար ապրել են միասին ու միասին անցել բազում փորձություններով: Եվ հիմա պետք է խաղաղության ճանապարհներ փնտրենք: Դրա համար եմ եկել:

Ագաֆոն Ապագայատեսի անունը պատահաբար չէր հնչել: Այն հարավցիներին հիշեցնում էր, որ Պարֆենի ու Քսենիայի բարեպաշտ ամուսնությունը Կղզու միասնության, գուցե և գոյության գրավականն էր: Հարավցիները հասկանում էին նաև, որ հարուստ Հյուսիսից անջատվելը բազում դժվարություններ է հարուցելու իրենց համար: Բացի այդ, երկու կողմերն էլ մահացու հոգնել էին, իսկ մահացու հոգնածությունը պատմության մեջ ծանրակշիռ պատճառ է բանակցությունների համար: Եվ դրանք սկսվեցին:

Պարֆենին օրը մի քանի անգամ կտրում էր Գետը: Հետո այն սկսեցին կտրել հակամարտող ուժերի ներկայացուցիչները: Պարֆենին այդ ընթացքում կապվեց Մեծ երկրի տերությունների հետ և օգնություն խնդրեց: Մարկելի հետ ոչ ոք չէր էլ խոսի, բայց իշխանին համաձայնությամբ պատասխանեցին: Մի քանի շաբաթ անց դեպի Կղզին լողացին պարենով բարձված առաջին նավերը: Եվ եկավ օրը, երբ կամավոր զենք վերցրած մարդիկ, սկսեցին վերադառնալ իրենց տները:

Նախագահ Մարկելը տեսնում էր, թե ինչպես է աստիճանաբար կարգավորվում կյանքը, բայց դա թեթևություն չբերեց նրան: Անհանգիստ միտքն արդեն որսում էր նոր վտանգը, որը կապվում էր գեներալ Պոլիկարպի ուժեղանալու հետ: Պոլիկարպի դիրքը Հարավում անսասան էր, ու Մարկելը խիստ վտանգավոր համարեց գեներալին թողնել այնտեղ: Նա Պոլիկարպին կրկին տեղափոխեց մայրաքաղաք, որ գիշերուզօր հսկողության տակ պահի: Իսկ երբ գեներալը ժամանեց, Նախագահի համար պարզ դարձավ, որ նա մայրաքաղաքում ավելի վտանգավոր է:

Մարկելը պակաս չէր վախենում նաև իշխանական զույգից:

Պարֆենիին ու Քսենիային, որոնց կյանքն անցնում էր կոմունալ բնակարանում, առաջվա պես Նորին Բարձր Պայծառափայլություններ էին կոչում, այն դեպքում, երբ իրեն՝ Պալատում կենող Մարկելին, Նորին Գերպայծառ Ապագայություն չէր անվանում արդեն համարյա ոչ ոք: Նախագահը զգում էր, որ նախագահում է, քանի դեռ իշխանները թույլ են տալիս, ու դրանից քունը կորցրեց:

Հյուսիսի ու Հարավի պատերազմն ավարտված էր: Մնում էր մի ուրիշ անավարտ պատերազմ, որը, չնայած և աղետներ չէր բերում, բայց թեկուզ և անվանական պատերազմ լինելով, տագնապի ալիքներ էր ծնում: Հակառակ Նախագահի խոստումների՝ Ֆրանսիայի հետ այդպես էլ խաղաղության դաշն չկնքվեց: Մարկելը չէր պնդում, թե դա անհնար է, ասում էր միայն, որ Ֆրանսիայի հետ խաղաղության ժամանակը պարզապես չի եկել:

Հեղափոխության քսանհինգերորդ տարում մի դեպք պատահեց, որն ալեկոծեց ամբողջ Կղզին: Փողոցն անցնող գեներալ Պոլիկարպին իր տան դիմաց մահացու հարվածեց մի ավտոմեքենա: Կառավարական մահախոսականում գրված էր ճակատագրական պատահականության մասին, որն ընդհատել էր այդ խիզախ մարդու կյանքը:

Շատ շուտով նաև վկաներ հայտնվեցին, որոնք պնդում էին, թե ավտոմեքենան երկու անգամ է խփել գեներալին: Երբ առաջին վրաերթից հետո գեներալը կարողացել էր վեր կենալ, վարորդը հետընթաց էր արել ու թափ առնելով՝ երկրորդ անգամ խփել Պոլիկարպին: Դրա հետ կապված՝ շատերի մտքում հարց ծագեց, թե այստեղ որքանով է կարելի խոսել ճակատագրական պատահականության մասին:

Ասում են, որ իշխան Պարֆենին ընդունելություն էր խնդրել Նախագահից և ամենայն խստությամբ այդ հարցը դրել նրա առաջ: Հանդիպման հաջորդ օրը նոր մահախոսական հրապարակվեց, որտեղ արդեն խոսք չկար ճակատագրական պատահականության մասին և պնդում էր արվում, թե ճակատագիրն ակնհայտորեն *հետապնդում էր* գեներալին:

Պոլիկարպին վրաերթի ենթարկած ավտոմոբիլը չգտան, ինչը գիտակ մարդկանց տեսանկյունից՝ ծանապարհ էր բացում նոր ճակատագրական պատահականությունների համար, և բոլորը պետք է հիշեին դրա մասին, հատկապես իշխան Պարֆենին: Նույն մարդիկ, ձայնն իջեցնելով, ասում էին, որ Մարկելը լավ հիշողություն ունի ու ոչինչ չի մոռանում:

Նախագահը չէր մոռացել նաև, որ հողի ցնցվելուց *Գեորգիի և օձի հրաշքի* որմնանկարից թափվել էր իր՝ Մարկելի նորապատկեր գլուխը: Եվ օրերից մի օր գնաց Պայծառ Ապագայի Տաճար, որ տեսնի՝ վերականգնե՞լ են որմնանկարի կորսված գլուխը, բայց գլուխն առաջվա պես չկար: Տարակուսած Նախագահը բացատրություն պահանջեց Ապագայի Պահապաններից: Պահապանները պատասխանեցին, որ գլուխը մի քանի անգամ վերականգնել են, բայց կրկին թափվել է:

Հարցվածները, թե սա ինչ կարող է նշանակել, կարծիք հայտնեցին, որ պայծառ ապագայում արտադրվող ծեփն ամուր չէ, այն դեպքում, երբ խավար անցյալում շատ ավելի ամուր էր: Կասկածելով, որ ծշմարտությունը թաքցնում են իրենից՝ Մարկելը գունատվեց և ուղիղ հարց տվեց.

Չի՞ կարող, արդյոք, այդ փաստը նշանակել, որ պետք է բաժանվեմ իմ գլխից:

Դե ինչ, պատասխանեցին Պահապանները, այդպիսի մեկնաբանությունը բացառված չէ և նույնիսկ մեծապես հնարավոր է, դրա համար էլ նպատակահարմար ենք համարում գլուխը ձեռքերով բռնած պահել:

Այդ ժամանակից սկսեցին նկատել, որ Մարկելը ժամանակ առ ժամանակ ձեռքը տանում է գլխին՝ ասես ստուգելով նրա առկայությունը, ասես նրան թվում էր՝ գլխի ու մարմնի կապը թուլացել է: Հիմա ձգտում էր ավելորդ անգամ չպտտել գլուխը ու շրջվում էր ողջ մարմնով: Այդ պտույտները հեշտացնելու համար կարգադրեց նախագահական աշխատասենյակում սովորական բազկաթոռը փոխարինել պտտվողով:

Իր տագնապները պատմելով թիկնազորի պետ Վլասին, որին վստահում էր, ինչպես ինքն իրեն, Մարկելը նրան պարտավորեցրեց անբացակա լինել իր կողքին, այն դեպքի համար, եթե գլուխը սկսի անջատվել մարմնից: Նման հանգամանքներում, սովորեցնում էր Վլասին, պետք է գլուխը սեղմել ուսերին ու մինչև չխկոց լսելը պտտել ժամացույցի սլաքի հակառակ ուղղությամբ:

Որ Նախագահի գլխի հարցում ինչ որ բան այն չէ, սկսեցին կռահել նաև ուրիշները: Եվ նրանց ենթադրություններում զարմանալի ոչինչ չկար, քանզի ցանկացած շինություն մտնելով՝ Կղզու Նախագահն առաջին հերթին հայելի էր պահանջում, որ հավաստիանա՝ գլուխը դեռ տեղում է:

Կղզու Մեծ Հեղափոխության քսանյոթերորդ տարում, երբ Մարկելը Վլասի ուղեկցությամբ մտավ իր աշխատասենյակ, այնտեղ հայելի չգտավ: Հետո պարզվեց, որ հայելին տարել էին վերականգնելու, քանի որ իշխանական հայելիների վենետիկյան ապակին տեղում վերակագնելու ենթակա չէր:

Հայելու բացակայությամբ Նախագահին թվաց, որ գլուխը սկսել է անջատվել մարմնից, ու Վլասը պատրաստ էր երդվել, որ հենց այդպես էլ կար: Հիշելով նախանշված գործողությունների մասին՝ թիկնազորի պետն անմիջապես սկսեց միջոցներ ձեռնարկել: Աներևակայելի ջանքերի գնով Վլասին հաջողվեց նշված գլուխը զգալի պտտել ժամացույցի սլաքի հակառակ ուղղությամբ: Չխկոցի հետ տեսավ, որ Նախագահը մեռած է:

Բուժզննությամբ պարզվեց, որ գլուխը պետք էր պտտել ժամացույցի սլաքի ուղղությամբ, բայց Վլասը ճշգրիտ կատարել էր Նախագահի հրամանը: Իսկ երբ հարցրին՝ հանգուցյալը մահվանից առաջ որևէ բան ասե՞լ է, թիկնազորի պետը պատասխանեց, որ ասել է: Հանգուցյալի ձայնը հուզմունքից խզվում էր: Օրինել էր իրեն՝ Վլասին, զբաղեցնելու Կղզու Նախագահի պաշտոնը: Նշանակալի բառերն արտաբերվել էին վերջին վայրկյանին: Անմիջապես չխկոցից առաջ:

Գլուխ տասնութերորդ
ՎԼԱՍ

Նախագահ Մարկելի մահվանից հետո Կղզին կառավարում էր Նախագահ Վլասը: Այդ մարդը մեղվապահի որդի էր և ուներ եկեղեցական-ծխական դպրոցի երկու դասարանի կրթություն: Դառնալով Մարկելի թկնապահը՝ բարձրացել էր, բայց չէր գոռոզացել: Ընդհանրապես, չնայած իր սարսափազդու ծառայությանը, Վլասը չար մարդ չէր: Ու ստոր էլ չէր: Վլասի մեջ տեսնելով այդ գծերը՝ Նախագահ Մարկելը նրան մոտեցրեց իրեն ու միայն նրան էր վստահում: Եվ Վլասի մեղքը չէր, որ պատասխանատու պահին ճիշտ ուղղությամբ չէր պտտել Նախագահի գլուխը:

Կղզու բնակիչները Վլասին ճանաչելով որպես պահպանության պետի, սպասում էին, որ նրա պաշտոնակալությունից հետո շատերը կկիսեն Մարկելի ճակատագիրը: Սակայն դառը փորձով իմաստնացած Վլասը շատ զգույշ էր ու միայն ծայրահեղ անհրաժեշտության դեպքում էր պտտում գլուխները: Ավելին, նույնիսկ մի քիչ բարելավեց Ճամբար տեղափոխված անձանց կեցությունն ու ավելացրեց նրանց պարենային բավարարումը:

Կղզու Մեծ Հեղափոխության քսանութերորդ տարում Վլասի կինը՝ Գլաֆիրան, աղջիկ պարգևեց նրան: Ի հուշ Նախագահի՝ մեղվանոցում անցկացրած մանկության՝ երեխայի անունը Մելիսսա դրեցին: Արտակարգ աշխույժ երեխա էր, շատ էր ուտում, շատ էր ճչում, խաղալիքները դուրս էր շպրտում օրորոցից: Գլաֆիրան ու Վլասը խանդաղատանքով էին հետևում մանկանը, որի առաջին ատամը նշանավորվեց պետական հրավառության մեկ համազարկով: Հաջորդ ատամները նշվեցին, համապատասխանաբար, երկու, երեք և ավելի համազարկերով:

Համազարկերի թիվը բնական կարգով աճում էր և համեմատական էր ստնտուի տառապանքների աճին, որի կուրծքը երեխան կծոտում էր: Ատամների թիվը, դրա հետ և համազարկերի քանակը, աճում էր աներևակայելի արագությամբ: Իսկ երբ համազարկերի թիվը հասավ երեսունվեցի, Կղզու բնակիչներն այլևս չէին թաքցնում զարմանքը: Սակայն Մելիսսայի ձերմակատամ ժպիտն այնքան հմայիչ էր, որ երեխայի ատամների աննշան ավելցուկը ոչ մեկին չէր անհանգստացնում:

Հեղափոխության երեսունհինգերորդ տարում Կղզու Նախագահը, ի տարբերություն իր նախորդների, անդրադարձավ մշակույթի խնդիրներին: Գրողների հետ հանդիպմանը հարցրեց, թե ժամանակակից գրականության մեջ ինչպես է արտացոլված մեղուների թեման: Լսելով, որ մեղուները մինչ օրս անտեսված են գրողների կողմից՝ Վլասը վշտացավ ու հավաքվածներին համառոտ պատմեց մեղուների աշխատասիրության, կնոջ և մոր հանդեպ նրանց վերաբերմունքի, ինչպես և փեթակները ծխահարելու մասին:

Պատմության ավարտին դահլիճն անասելի ոգեշնչված էր: Բոլորի վրա առանձնակի տպավորություն էր թողել Վլասի ամփոփիչ արտահայտությունը. *մեղուն բոլորիս ուսուցիչն է:* Այդ չորս, թվում է, պարզ բառերը սպառիչ կերպով սահմանեցին մեղվի դերը ցանկացած գրողի կայացման գործում: Նախագահի ելույթից ոգևորված՝ ներկաները նրան հավաստիացրին, որ նախահեղափոխական վերաբերմունքը մեղվի հանդեպ այսուհետ արմատապես կփոխվի:

Կղզու Մեծ Հեղափոխության երեսունյոթերորդ տարում Համալսարանում բացվեց մեղվաբուծության ֆակուլտետ: Նույն տարում լույս տեսավ *Փեթակ* ընտանեկան տարեգրության առաջին հատորը: Նախատեսված էր, որ հրատարակությունը բազմահատոր է լինելու, քանի որ նախնական մտահղացմամբ պետք է ներկայացվեին փեթակի բոլոր մեղուների գրական դիմանկարները: Առանձնյակներին նվիրված հատորները պետք է բաշխվեին Կղզու գրողների միջև: Իսկ երբ պարզվեց, որ փեթակը միջինը բնակեցված է 60-80 հազար շերտավոր աշխատավորներով, որոշվեց կենտրոնանալ ամենահետաքրքիր ծակատագրերի վրա:

Պարֆենի

Նկարահանումները պետք է սկսվեին դեռ երեկ չէ առաջին օրը, բայց արդեն երրորդ օրն է՝ անդադար անձրև է գալիս: Նստել ենք վիլլայում ու նույնիսկ չենք կարողանում դուրս գալ զբոսնելու: Երբեմն ելնում ենք փակ պատշգամբ և ականջ դնում, թե անձրևն ինչպես է թմբկահարում կտավե ծածկին: Ժամանակ առ ժամանակ գալիս է վիլլայի աշխատողներից մեկնումեկը ու Т-աձև հարմարանքով բարձրացնում ջրի ծանրությունից կախ ընկած ծածկը: Ջուրը փոքրիկ ջրվեժի պես թափվում է քարե ջրհորդանի մեջ:

Այստեղ առանձնակի ոչինչ չկա, բայց նույնիսկ այդ փոքրիկ պատկերն ափսոս կլիներ ընդմիշտ կորցնել: Մեզ դեռ ինչքա՞ն է թողնված լսելու անձրևը: Հետևելու ջրհորդանի ջրապտույտին: Մեր տևող կյանքի ընթացքում ամեն ինչ արդեն այնքան անգամ ենք տեսել, որ նույնիսկ մի տեսակ անհարմար է սգալ հրաժեշտը: Տարօրինակ արարած է մարդը. որքան շատ է ստանում, այնքան ավելի է ուզում:

Երեկ ընթրիքին դարձյալ հանդիպեցինք Արտեմիի հետ: Օգտվելով Լեկլերի բացակայությունից՝ երկար զրուցեցինք: Արտեմին հարցրեց, թե իմ կարծիքով, ո՞րն է միջնադարի ու ներկայիս մարդկանց գլխավոր տարբերությունը:

Իմ հայացքը: Ավելի ու ավելի է մշուշվում, և այդտեղ արդեն ոչինչ չես անի:

- Գուցե, ժամանակի զգացողությունը,- ասում եմ:- Այնտեղ ժամանակը դանդաղ է, ինչպես ստորջրյա նկարահանման մեջ: Առկայծող. մերթ ժամանակ է, մերթ՝ հավերժություն:

- Իսկ ինչպես եք զգում ժամանակը հիմա՝ որպես ա՞յն, թե՞ ներկայիս:

- Հիմա՞: Որպես այն: Որից քամել են ողջ հավերժությունը:

Անձրևը պատուհանից այն կողմ ուժեղանում է, և ապակին՝ աղոտանում:

- Ուրեմն ձեզ այստեղ օտա՞ր եք զգում:

- Ո՛չ...,- պատասխանում եմ:- Թերևս՝ ոչ: Ինձ օտար կզգայի, եթե, ասենք, այն ժամանակից ցատկ անեի այս ժամանակը: Եթե ինձ-նից, ինչպես տարեգրությունից, խլեին հարյուր հիսուն տարի: Բայց չէ՞ որ բոլոր տարիները,- ընդհուպ ներկայիս,- ապրել եմ, ինչպես ասում են, առանց ընդմիջման:

Հասկանում եմ, թե տարեգիրներն ինչու էին այդպես վախենում, որ ժամանակի մի մասը կկորչի, ինչու էին այդպես գնահատում անընդհատությունը: Հաշվում էին յուրաքանչյուր գահակալություն, որպեսզի անցած ճանապարհին ոչ մի տրոհում չլիներ, անգամ մի ճաք չհայտնվեր: Հակառակ դեպքում չկա պատմության միասնա-կանություն, և քո մի մասն այնտեղ է, իսկ մյուսը՝ այստեղ: Հիմնա-կանում, իհարկե, այնտեղ:

- Կներեք, տանջեցի ձեզ...,- Արտեմին ափը դնում է Քսենիայի ձեռքին:- Ի՞նչ է սովորեցնում երկարակեցությունը:

Քսենիան ափը դնում է նրա ձեռքին: Փոխադարձ համակրանքի երեք աստիճան:

- Սովորեցնում է նրան, որ ամեն ինչ կրկնվում է. այս կամ այն տեսքով- Քսենիան մի պահ միտք է անում:- Սովորեցնում է սպասել աղետների. դրանք այնքան շատ են... Երիտասարդ ժամանակ դա չես հասկանում: Եվ ինչ-որ պահի ապրելը սարսափելի է դառնում:

- Եվ որքան տարիներն առաջանում են,- նկատում եմ,- այնքան ավելի սարսափելի է: Արդյո՞ք ծերունական թուլամտությունը պաշտ-պանություն չէ: Գթասրտություն չէ:

Սեղանին է մոտենում Լեկլերը: Հետաքրքրվում է՝ ինչի մասին ենք խոսում:

- Կյանքի՞: Նեղ թեմա է:

Ծիծաղում է: Աղցան են դնում նրա ափսեում:

Կյանքի մասին: Մեր կյանքում,- հանդգնորեն երկար,- այնքան շատ այլ կյանքեր են տեղավորվել, որ մի տեսակ անհարմար է ասել: Մենք հետևում էինք՝ նրանք ինչպես են անցնում: Նրանցից յուրաքանչյուրը:

Նա: Դեռ երեկ՝ պարմանի, նեղիրան, արագ: Քրքջում էր: Վեր

թռչելով՝ հընթացս խնձոր պոկում ծառից: Պատմում նոր սիրո մասին: Ձկնավաճառ կնոջ հոգու հետ խաղում: Իսկ այսօր, խնդրեմ՝ հաստլիկ, ճերմակած, չնայած դեռ պինդ: Եվ էլի ինչ-որ բան է պատմում: Իսկ հաջորդ օրը իմանում ես, որ այլևս չկա: Լուռ է:

Նէ: Սանրվում էր նախասրահում՝ ներկայացումից առաջ: Սանրը պայուսակը դնելով՝ հայելու մեջ ժպտում էր ինչ-որ մեկին: Արդեն զբաղեցրած բազկաթոռների շարքով անցնում էր իր տեղը, և բոլորը հերթով վեր էին կենում, և իրենից առաջ լողում էր իր օծանելիքի բույրը: Նստելով՝ ձեռքի շարժումով հետ էր գցում մազերը, խոսում արագ ու հուզված: Հիմա նա էլ է լուռ: Եվ մեր տեսած հարյուրավորներ են լռում: Տարբեր կերպ էին ապրում, բայց լռում են միատեսակ:

Ինչքա՛ն հանդիպումներ ու բաժանումներ ենք ունեցել, ընծաներ ու կորուստներ: Թանկ մարդուն հանդիպելիս դեռ չգիտես, չէ՞, որ պարգև է, որ կյանքի ուղեկից է, բայց երբ հրաժեշտ ես տալիս, հասկանում ես, որ ահռելի կորուստ էր: Այնպես որ, ստացվում է, կորուստներն ավելի շատ են:

Հիշում ենք բոլոր դեմքերը, որ հասցրել ենք սիրել, բոլոր բառերը, ձայները, շարժումները: Այնքան մարդու ենք հրաժեշտ տվել, որ հրաժեշտը դարձել է մեր հիմնական զբաղմունքը, իսկ նրանք հեռանում ու հեռանում են՝ ամեն անգամ մեզ թողնելով մեր մենության մեջ: Կասեի՝ *երկմենության* մեջ:

Վլասը մեղուների մասին հատորները կարդում էր լույս տեսնելուց առաջ և անդադրում ուշադրությամբ: Գովելով գրողական աշխատանքը՝ Նախագահը նաև դիտողություններ էր անում: Մեղվապահի սուր աչքն, օրինակ, նկատել էր, որ երրորդ հատորում գրողը շփոթել է երկու մեղուներին և մեկին վերագրել այն, ինչ մյուսի բաժինն էր:

Վեցերորդ հատորում նույն հերոսուհու արտաքինը սկզբում ու վերջում տարբեր կերպ էր նկարագրվում: Առաջին դեպքում ասվում էր, որ մեղուն լավիկն էր ու մինչև խոր ծերություն սիրուն թաթիկներ ու ամուր թևեր ուներ: Իսկ երկրորդ դեպքում տեղեկացվում էր, որ

նշված անձնավորությունը մանկուց կաղ էր, թափթփված, իսկ բեղիկներից միշտ ծաղկափոշու մնացորդներ էին կախվում: Ժամանակի ընթացքում ավելի հաճախ էր հարբում նեկտարով, ուռուցվորել ու կյանքը մաշում էր բոռերի հետ: Այսպես ընկնելով՝ այլևս չէր թռչում, այլ ծույլ սողում էր փեթակի տանիքին:

Յոթերորդ հատորում Վլասի դժգոհությունը հարուցեց փեթակի ինչ-որ բնակչուհիների բարակ իրանի մասին հիշատակումը: Այդպիսի արտահայտությունը վկայում էր, որ գրողը լավ չի տարբերում մեղուներին ու կրետներին: Բայց և այնպես, չնայած առանձին վրիպումներին, Նախագահը գոհ էր կղզիաբնակ գրողների աշխատանքից:

Այդ գրքերի ընթերցումը Վլասի համար բացահայտեց կղզու գրականության կախարդական աշխարհը: Եվ կատարվեց անսպասելին. նա հանկարծ ընթերցողից վերածվեց գրողի: Պայքարի տարիներին քերականությունը մոռացած Նախագահը խուսափում էր անձամբ գրելուց: Միշտ կողքին էր գրագիրը, որը ճշգրիտ արձանագրում էր նրա ասածները: Տիրակալի դեմքին մելամաղձոտ արտահայտություն տեսնելով՝ գրագիրն անմիջապես հանում էր գոտուց կախած թանաքամանը, ինչպես և գրիչ ու թուղթ, քանզի գիտեր, որ հիմա կսկսվի իր աշխատանքը: Չասենք, թե նախագահի խոսքը հորդում էր լայնահուն գետի պես. լեռնային վտակի հանգույն էր՝ ժլատ ու հատվածական: Նրա մեջ լսվում էր քարերի դղրդոցն ու սահանքադռների գվվոցը:

Հայրս ասում էր.

Մեղուն մեր նախնին է: Ու հարգված էր դեռ եգիպտացիների մոտ:

Ասում էր.

Երբ մարդիկ մեռնում էին, մեղու էր դուրս թռչում բերանից: Հոգին էր, ուրեմն, դուրս թռչում: Հոգի՞ն, հասկանո՞ւմ եք:

Եվ փարավոնին մեղուների տիրակալ էին կոչում: Ես էլ կուզեի այդպես կոչվել, գեղեցիկ է, չէ՞:

Բայց ցավոտ են կծում: Ես միտակ շապիկով էի ման գալիս ու բո-

բիկ: Եվ ահա մի անգամ քիչ էր մնում կծոտելով սպանեին, բայց հայրս վրա հասավ:

Գոռում եմ.

Ախր կարող էին կծելով սպանե՛լ:

Իսկ նա.

Ու ճիշտ կանեին: Դու, ասում է, մեղվին չես զգում:

Կղզու Մեծ Հեղափոխության քառասունհիգերորդ տարում Վլասը նոր տիտղոս ընդունեց. Մեղուների Տիրակալ: Այդ անվանումը վեհացնում էր կղզիաբնակներին, քանզի Կղզում բոլորը, մեծից փոքր, գիտեին, թե ինչ է նշանակում մեղվի կերպարը: Սակայն նոր տիտղոսի իմաստը զուտ պատկերավոր չէր. Կղզու բնակչության նշանակալի մասն այդ ժամանակ արդեն զբաղվում էր մեղվաբուծությամբ:

Մեղրը, մոմը, ինչպես և ծաղկափոշին, մայրակաթը, մեղվի թույնը, բոռերի սերունդը, փեթակում սատկած մեղուները ահռելի քանակներով արտահանվում էին Մեծ երկիր ու եկամուտի կարևոր աղբյուր դառնում պետության համար: Բայց այդ եկամուտն անմնացորդ ծախսվում էր մնացած բոլոր ապրանքների վրա, քանի որ համարյա ուրիշ ոչինչ Կղզում չէր արտադրվում:

Այդ նույն ամառ Մեղուների Տիրակալի դուստր Մելիսսան փախավ տնից՝ մի երկտող թողնելով, որ իրեն չփնտրեն: Դստեր կամքին հակառակ՝ Վլասը կարգադրեց գտնել աղջկան: Կղզու զորքը երկու ամիս սանրում էր Անտառը, որովհետև Տիրակալին թվացել էր՝ փախստականը հենց այնտեղ պիտի թաքնված լինի:

Բոլորն Անտառ են փախչում, այն ժամանակ ասաց Վլասը՝ հիշելով, որ այդպես էին վարվում մեղվանոցը լքած մեղվաընտանիքները:

Ու չնայած Վլասի կին Գլաֆիրան, դստերը ճանաչելով, ասում էր, որ զվարճանքների բացակայության բերումով նրան Անտառում պետք չի փնտրել, ոչ ոք չհամարձակվեց առարկել Մեղուների Տիրակալին: Մելիսսային փնտրում էին Անտառում:

Բայց Վլասի դուստրը հայտնաբերվեց Քաղաքում, որտեղից, ինչ-

պես պարզվեց, չէր էլ հեռացել: Կապվելով նշանավոր ձեռնածու Վալդեմարի հետ՝ թաքնվում էր նրա տանը: Վալդեմարը Մելիսսային թաքցրել էր իր օգնական աղջիկներին սղոցելու արկղում: Պարզվեց նաև, որ սիրահարված զույգը մի գիշեր պսակվել է Պայծառ Ապագայի Տաճարում: Մոլորության մեջ գցելով տաճարական Պահապաններին՝ Մելիսսան նրանց ասել էր, որ պսակադրությունը հոր ցանկությունն է: Պսակադրվողները երեք անգամ պտտվեցին գրակալի շուրջը, համբուրեցին Նախագահ Կասյանի դիմանկարն ու գնացին իրենց գործին:

Տեղեկանալով դրա մասին՝ Տիրակալը գազազեց, բայց արդեն ոչինչ անել չէր կարող: Բայց համենայնդեպս նաև ուրախ էր, որ անառակ դուստրը վերադարձել է: Վերջապես, Վլասը պարզապես վախենում էր նրանից, ու երբ աղջիկը խնդրեց, որ չբզզա, հանդարտվեց:

Տարիների ընթացքում *Փեթակ* ընտանեկան տարեգրությունը համալրվեց բազմաթիվ նոր հատորներով: Տարեգրությունն ընթերցելու համար Մեղուների Տիրակալը ստիպված էր հրաժարվել բազում պետական պարտականություններից: Վլասը, որ առաջ հակում էր զգում արտերկրյա գրքերի հանդեպ (Հավամրգու մեղր), ժամանակի ընթացքում համոզվեց, որ հայրենական գրականությունից լավը չկա:

Համաշխարհային գրականությունը մակերեսային էր թվում՝ կենսականորեն կարևորին օտար: Տիրակալի վերջին հիասթափությունը *Մեղրամոմե մարդն* էր, որից մեղրամոմի մասին որևէ նոր բան չիմացավ: Մոտավորապես այդ ժամանակ դադարեց թերթել *Հյուսիսային մեղվի* հավաքածուներն ու կենտրոնացավ բացառապես *Փեթակի* վրա:

Հեղափոխության քառասունութերորդ տարում Պայծառ Ապագայի Տաճարը վերանվանվեց Հեղափոխական Պարսի Տաճարի ու ռեստավրացիայի ենթարկվեց: Մեղուների Տիրակալը չէր մոռացել դստեր գաղտնի պսակադրությունը, ու վերափոխությունները զերծ չէին խստությունից:

Դրա հետ միասին, ընդգծելով ժառանգորդության կապը նախորդների հետ, Վլասը հանել չտվեց նրանց դիմանկարները, միայն հրամայեց պատկերել մեղուների տեսքով: Միակ ազատ պատին ծավալեցին արջի դեմ մեղուների պայքարի համայնապատկերը: Առանձնակի մանրակրկտությամբ արտացոլված էին հետախույզ-մեղվուհիների սխրանքները, որոնք աներկյուղ ներդրվում են թշնամու որջում ու պարսին զգուշացնում վտանգի մասին:

Քսենիա

Չորս օր ստիպված էինք սպասել լավ եղանակի: Այսօր արթնացա լուսաբացին և անմիջապես հասկացա, որ օրն արևոտ է լինելու: Նարնջագույն գունդը, ասես կորցրածը հետ բերելով, մի քանի րոպեում բարձրացավ ջրից: Պատշգամբում կարդում էի՝ նայելով նրան: Գունդը շարունակում էր բարձրանալ, բայց արդեն ոչ այդքան արագ: Ժամը տասին նկարահանման հրապարակում էինք:

Եվ այնտեղ տեսա ինձ՝ ութամյա, շեկլիկ աղջնակ, ոչ մանկական նուրբ դեմք: Երգ էր լսվում: *Մազերդ՝ չինծած ցորեն... Չէ՛, մանգաղ չտեսած ցորեն...* Մոռացել եմ: Իսկ հետո այսպես. *աչքերդ՝ առավոտի երկինք:* Երգը ստույգ մեկին չէր նկարագրում, բոլորինն էր: Ու բոլորը ձգտում էին համապատասխանել:

Արձակ բրդե պարեգոտ, տակից՝ նուրբ քաթանե շապիկ: Մի քանի կոճակով կոճկած կանգուն մետաքսե օձիք: Ոսկյա բանվածքով զարդանախշ, մարգարտե ուլունքաշար, վերին եզրով՝ կարմիր դիպակ. ահա այսպիսի օձիք: Ներսում,- ամրության համար,- կեչու կեղևի շերտիկ: Իմ տառապանքի կեչակեղևը. ո՞նց էր խանգարում, սեղմում կոկորդս: Օձիքը կենդանի արարած էր թվում, որը մի օր խեղդելու էր ինձ:

Մոտենում եմ Քսենիա աղջնակին: Իսկական անունը չգիտեմ, ասենք, չեմ էլ ուզում իմանալ, որովհետև ինձ եմ մոտենում: Արձակում եմ օձիքի երկու վերին կոճակները.

- Այսպես ավելի լա՞վ է:

- Լավ է, մադա՛մ:

Հանդերձարարը հոգոց հանելով խնդրում է (ո՞ւմ) կոձկել օձիքը. հորաքույր Կլավդիայի սիրած զբաղմունքն էր: Ներկաներին բացատրում է, որ կոձակները Միջնադարում պետք է կոձկված լինեն: Հատուկ ոչ մեկին չի նայում: Ի գիտություն ասում եմ, որ Միջնադարում կոձակներս չէի կոձկում: Հանդերձարարը հարգալիր գլխով է անում. արեց՝ ինչ կարող էր:

Ահա Քսենիան քայլում է՝ ուղիղ դիմացը նայելով: Ձախից, նրա ընթացքին զուգահեռ, ուղեգծերով սահում է տեսախցիկը: Աջից, ծովի համապատկերին՝ կաթնավաճառ կինը, ջրաղացպանը, դարբինն ու ձկնավաճառը: Մի շարքով. տպավորիչ անբնական կադր: Խորդուբորդ ատամներ, կեռիկ քթեր: Հանգուցավոր մատներով քորում են մազակալած այտերը. բոլորը, բացի կաթնավաճառից: Աղջկա ընթացքն անվերջ է: Կագնածները գլուխները շրջում են նրա ետևից: Աղջիկը Միջնադարի զորատես է անում: Մազերը՝ չինձած ցորեն...

Ասես ծովից՝ հայտնվում է հորաքույր Կլավդիան. դա նրա ոձն է:

- Խորհրդավոր խորքերի՞ց ելար,- հարցնում է աղջիկը:

Ափակոծության աղմուկը խանգարում է. Կլավդիան չի լսում: Ոտնեոտ է անում մարի սագի պես, ժամանակ առ ժամանակ կանգնում, որ շունչ առնի: Տեսախցիկը հետևում է նրան՝ որսալով հորիզոնի բլուրները. կապույտ ու անշարժություն: Հորաքրոջ հետույքի երկու բլուրները, հակառակը, անշտապ հզոր շարժման մեջ են: Կլավդիան փեշը բռնած քայլում է կոձերին հասնող ջրի միջով: Քսենիան կտրուկ շրջվում ու ճչում է.

- Դանա՛կը:

Մեր ձայները միաձուլվում են մեկ աղաղակի մեջ: Կլավդիայի դեմքին շփոթմունք է հայտնվում: Բոլորը շրջվում են այն կողմ, ուր թռավ ճիչը: Այնտեղ միայն կապույտ երկինքն է. քո աչքերի պես: Իմ աչքերի:

Սիրտս սեղմվում է: Երկու բժիշկ ինձ տանում են շտապ օգնության մեքենայի մոտ, դնում պատգարակին: Պարֆենի՛... Ո՞ւր է Պարֆենին: Զգում եմ նրա հպումը: Նստած է ոտքերիս տակ: Մեքենան դանդաղ

շարժվում է տեղից: Զարմացնելով լեզվի պատմաբաններին՝ ոտքերի մասին հարցս Կլավդիային հնչում է արդեն առանց մեզ:

Ցավն աստիճանաբար թուլանում է: Մենք հիվանդանոց չենք գնում, այլ՝ վիլլա. Արտեմին լավ բժիշկ ունի:

Ընթրիքին Ժան-Մարին հարցնում է՝ ավելի լա՞վ եմ զգում: Արտեմին մտախոհ ինչ-որ բան է նկարում անձեռոցիկին: Այո՛, լավ եմ:

Իսկ այնտեղ շատ ավելի լավ էր: Մի քանի վայրկյան ապրեցի մանկության մեջ: Իսկ հիմա մազերս ձյուն են, իսկ աչքերս... Ինչի՞ նման են աչքերս:

- Շատ գեղեցիկ աղջիկ էր,- ասում եմ:- Ես այդպիսին չէի: Թմբլիկ էի, կարմրաթուշ:

Զգում եմ Արտեմիի հայացքը: Նկարելիս մեկ ինձ է նայում, մեկ անձեռոցիկին.

- Այն ժամանակ այլ պատկերացումներ էին գեղեցկության մասին: Ժան-Մարին նկարում է այսօրվա պատկերացումներով:

- Որ հանդիսատեսին հասկանալի լինի՝ իշխան Պարֆենին ինչու է այդպես ուժգին սիրում ձեզ,- ծիծաղում է Լեկլերը:- Եվ գլխավորը՝ այդքան երկար:

Արտեմին սեղանի վրայով ինձ է տալիս իմ դիմանկարով անձեռոցիկը: Նայում եմ: Զարմանալիորեն լավ նկար է: Մազերս ձերմակ են ձյան պես: Աչքերս՝ մոխիր:

Հեղափոխության քառասունիններորդ տարում հանգչեց եղբայր Գալակտիոնը: Մահվանից քիչ առաջ ինձ՝ Աստծո ծառա Ինոկենտիիս, օրհնեց շարունակելու տարեգրությունը: Դա իմ ապաշխարությունն էր, քանզի ժամանակն ու իրադարձությունները պետք է արձանագրել այնքան ժամանակ, մինչև Տերը չդադարեցնի դրանք:

Նույն ամառ բարձր դիրքի հասավ Վլասի դուստր Մելիսսան: Նրա համար մեղուների գործերով կոմիսարի պաշտոն հիմնվեց: Մեզնից հեռու տերություններում այդ պաշտոնը գուցե և երկրորդական է, բայց այստեղ շատ բան էր նշանակում, և Կղզում դա հասկանում էին բոլորը:

Արդեն առաջին տարին չէ, որ լուրեր էին պտտվում, թե Մեղունների Տիրակալը վաղուց ոչ մեկին չի տիրակալում, և ավելի ու ավելի է փակվում իր մեջ՝ հեռանալով պետական գործերից: Մելիսսայի նշանակումը դրա ակնհայտ ապացույցն էր: Պատմում էին նույնիսկ, որ Վլասը հրամայել է բոռի զգեստ կարել իր համար ու թևերը քարշ տալով՝ դրանով է պտտվում Պալատում: Գիշերն էլ, ասում էին, մտնում է ննջարանում կառուցած փեթակն ու Գլաֆիրային ստիպում անել նույնը, ասելով, որ առանց մայր մեղվի փեթակը փեթակ չի: Հանդիսավոր ընդունելություններին, որոնց Մեղունների Տիրակալը դեռ պարտավոր էր մասնակցել, ժամանակ առ ժամանակ անցնում էր բզզոցի: Եվ բոլորին պարզ էր, որ այդպիսի մտայնությամբ նրա համար ավելի ու ավելի դժվար էր պետություն ղեկավարելը:

Արդեն շատերն էին Մելիսսային Կղզու միանձնյա տիրակալ կոչում, բայց դա չափազանցություն էր: Իրականում իշխանությունը նրա հետ կիսում էր խորհրդավոր ամուսին Վալդեմարը, որը զարգացման և աճպարարության նախարար էր նշանակվել: Նա բառի բուն իմաստով ստվերում էր մնում՝ ոչ մի կերպ ցույց չէր տալիս իր ներկայությունը: Իսկ երբ կարիքը զգացվում էր, աղավնաթևերի ծափծափումի տակ հայտնվում էր ցիլինդրից: Վալդեմարը վաղուց արդեն չէր սղոցում օգնական կանանց. այդ գործը տեղափոխել էր կղզու գանձարան:

Նրա աճպարարության առանձնահատկությունն այն էր, որ մեկ անգամ չքանալով՝ դրամական միջոցներն այլևս չէին հայտնվում: Եվ եթե առաջ կախազարդերը, ժամացույցներն ու թղթադրամները վերադառնում էին տերերին, ապա հիմա ամեն ինչ փոխվել էր: Վալդեմարը հարգարժան հասարակությանն ապշեցնում էր չքացման արվեստով: Առաջարկում էր հետևել իր ձեռքերին, բայց դա անպտուղ գործ էր. չափազանց շնորհալի էր մարդը: Շատ արագ անհետ հալվեցին բանակային ռոճիկը, ճանապարհների նորոգման փողերն ու նույնիսկ կղզու ծախսերի գլխավոր տողը՝ մեղուներին պահելու միջոցները:

Կղզու Մեծ Հեղափոխության հիսուներորդ տարում մեծ հանդիսություններ էին նախատեսվել, քանզի տոնվում էր Պայծառ Ապագայի գալստի հոբելյանը: Մելիսսան կարգադրեց հիշարժան օրվա առթիվ հուշադրամ հատել: Մի երեսին Նախագահ Կասյանի կիսադեմն էր, մյուսին՝ մեղուներ արձակող Տիրակալ Վլասը: Կղզու բոլոր քաղաքացիներն այդպիսի հուշադրամներ ստացան:

Հոբելյանի օրը Գլխավոր հրապարակը, ինչպես և հարակից փողոցները լեփ-լեցուն էին: Թնդանոթի կեսօրվա զարկի հետ Պալատի պատշգամբում բոռի նոփ-նոր հանդերձով հայտնվեց Տիրակալ Վլասը: Մի կողքին կանգնեց մեղուների գծով կոմիսարուհի Մելիսսան, մյուս կողքին՝ զարգացման և աճպարարության նախարար Վալդեմարը:

Առաջինը ելույթ ունեցավ Վալդեմարը՝ ասելով, որ երկիրը Մեծ Հեղափոխության 50-ամյակը դիմավորում է նոր նվաճումներով ու հաղթանակներով: Ու չնայած զարգացումը մի փոքր դանդաղել է (չմոռանաք, որ պատերազմում ենք Ֆրանսիայի դեմ), աճպարարության բնագավառում պետությունը հասել է աննախադեպ բարձունքների: Ի հաստատումն ասածի՝ նախարարը հավաքվածներին առաջարկեց հանել հոբելյանական դրամներն ու պահել ափին:

Հետևեք ձեռքերին՝ ասաց Վալդեմարը:

Ճտտացրեց մատները, ցիլինդրից հանեց աղավնուն, և նույն պահին դրամները չքացան ներկաների ափերից:

Ծափահարություններ չհետևեցին:

Մի ոչ մեծ գաղտնիք բացեմ ձեզ՝ ժպտաց նախարարը: Դուք իմ ձեռքերին էիք հետևում, ձեր ձեռքերին պիտի հետևեիք:

Չնայած ձեռնածության մասնակի բացատրությանը, դրամները տերերին չվերադարձան:

Վալդեմարից հետո խոսք առավ Մելիսսան: Նշելով, որ Պայծառ Ապագայի վրա հասնելուց հետո երկիրը փառավոր ճանապարհ է անցել, կոմիսարուհին համաքաղաքացիներին կոչ արեց իմաստավորել դա՝ դեպի նոր բարձունքներ գնալու համար: Այս բառերի վրա Մեղուների Տիրակալը թափահարեց թևերն ու բզզաց: Իսկ Մելիս-

սան գլխով արեց՝ մի տեսակ խրախուսելով հոր ձգտումը դեպի վեր:

Անցած հիսուն տարում Պայծառ Ապագան հասցրել է դառնալ անցյալ՝ շարունակեց Մելիսսան: Այդպիսին է ժամանակի հատկությունը: Ոմանք կարող են ասել, թե այդ անցյալը, ինչպես և ներկան, այնքան պայծառ չեն, որքան կուզեինք: Հարկ եմ համարում հիշեցնել բոլորին, որ Մեծ Հեղափոխությունը Պայծառ Ապագա էր խոստանում ու պահել է խոստումը:

Մելիսսան երկար նայեց բազմությանը.

Ապագան առաջվա պես Պայծառ է մնում:

Հրապարակը թնդաց ծափահարություններից: Ցնծությունն ուժգնացավ, երբ պատշգամբի բազրիքին մոտեցավ Մեղուների Տիրակալը: Թևերը թափ տալով՝ Վլասը ականջ էր դնում ամբոխի ոռնոցին ու ժպտում: Դեռ երբեք այդպիսի բազմաքանակ պարս չէր տեսել: Այդ պահին արևը դուրս եկավ ամպերի տակից, ու Տիրակալը նրան պարզեց ձեռքերը:

Մեղվին հատուկ է ձգտել արևին՝ բացառիկ հստակ բարբառեց նա:

Կղզիաբնակները, որ վաղուց հոդաբաշխ խոսք չէին լսել Տիրակալից, արձագանքեցին նոր ծափերով ու աղաղակներով:

Վլասն անսպասելի ճարպկությամբ ոտքը գցեց բազրիքի վրայով ու ճչաց.

Թռչո՛ւմ ենք:

Հրապարակի վրայով ճախրելով՝ խոսքը շողշողաց արևի տակ: Ու մինչ կլուծվեր երկնքում, Վլասը հասցրեց քայլ անել դեպի օդեղեն տարածություն: Մելիսսան ու Վալդեմարը նետվեցին նրա կողմը, բայց արդեն ուշ էր:

Վլասի թռիչը կարճատև էր: Թռչողի երջանիկ բզզոցն ընդհատվեց խուլ թմփոցով:

Բազրիքի վրայով կռանալով՝ կոմիսարուհին ու նախարարը Պալատի մարմարե աստիճաններին տեսան Մեղուների Տիրակալի մեռած մարմինը:

Գլուխ տասնիններորդ
ՄԵԼԻՍՍԱ

Մեղուների Տիրակալ Վլասի մահվանից հետո իշխում էր նրա դուստր Մելիսսան: Հանգուցյալի վերջին տարիներին այնպես էին վարժվել նրա կառավարմանը, որ Մելիսսային գերագույն իշանությամբ օժտելն անխուսափելի էր թվում: Նա վերադարձավ պետության գլխի սովորական տիտղոսին ու հիմա կոչվում էր Կղզու Նախագուհի: Պետք է նկատել, որ չնայած իր անվանը, Մելիսսան հոր համեմատությամբ շատ ավելի քիչ ուշադրություն էր հատկացնում մեղուներին:

Մեծ Հեղափոխության հիսունմեկերորդ տարում Կղզում սարսափելի երկրաշարժ եղավ: Կարճ տևեց, բայց հետևանքներն ահռելի էին: Գլխավոր ցնցումները Հարավում էին, Լեռան շուրջը: Եվ առաջին անգամ, որքան կղզիաբնակների հիշողությունը բավում էր, Լեռան գագաթին ծուխ երևաց, իսկ բոլորին հայտնի էր, որ Լեռան արթանանալը Կղզուն սպառնում է վերջնական կործանումով:

Երկրաշարժը մեծ ավերներ գործեց, և տուժել էին ոչ միայն հասարակ մարդկանց տները, այլ նույնիսկ Պալատի մի մասը: Փլվել էր կողաշենքը, որտեղ Մեղուների Տիրակալն ապրում էր կնոջ՝ Գլաֆիրայի հետ: Տարերքի հարվածները ծեր կնոջը գտել էին արտաքնոցում: Բայց առաստաղը Գլաֆիրայի համար բարենպաստ էր փլվել: Կաղնե հեծաններն այնպես էին երկտակ ծալվել, որ արանքում մի փոքրիկ բացվածք էր մնացել: Հենց այդ բացվածքում էլ երջանիկ կերպով հայտնվել էր Գլաֆիրան: Երբ այրուն ազատեցին, դողում ու ցնցվում էր: Ոչինչ չէր հասկանում և անընդհատ կրկնում էր, որ ոչ մի մեղք չունի և ընդամենը ուզում էր ջուր թափել:

Վնասվել էր նաև Պայծառ Ապագայի Տաճարը: Պահապանները պատմում էին, որ Պայծառ Ապագայի դարաշրջանից շատ առաջ կառուցված Տաճարը զարմանալիորեն ամուր էր: Հիմնական ցնցումներին անկորուստ էր դիմացել: Մի քանի ժամ անց, կրկնացնցումներից, այսպես կոչված՝ հետցնցումներից Տաճարում թափվել էին հեղափոխության հաղթանակից հետո պատերին հայտնված բոլոր որմնանկարները: Եվ երբ փոշին նստեց, Պահապանների ապշած աչքերի առաջ հառնեց Պայծառակերպության Տաճարը՝ իր նախաստեղծ տեսքով:

Հրաշափառ իրադարձության մասին անմիջապես զեկուցեցին Նորին Պայծառափայլ Ապագայություն Մելիսսային: Ժամանելով դեպքի վայր՝ Նախագուհին Պահապաններին կարգադրեց իրեն մենակ թողնել Տաճարում և երեք ժամ ու երեսուն րոպե մնաց այնտեղ: Պահապանները, որոնց դիրքը երկրաշարժի հետևանքով նույնպես խարխլվել էր, բանալու անցքից հետևում էին նրան և ավելի ուշ պատմեցին, որ Մելիսսան մի տեղ չէր կանգնում, այլ պտտվում էր Տաճարում, խոսում սրբապատկերների հետ:

Նախագուհին դուրս եկավ պայծառացած և ի լուր ամենքի հայտարարեց, որ Տաճարն այսուհետ նվիրված է ոչ թե Պայծառ Ապագային, այլ Քրիստոսի Պայծառակերպությանը: Լուրն անմիջապես տարածվեց Կղզում ու մեծ ուրախություն պատճառեց բնակիչներին: Պարզվեց, որ շատերը ողջ կյանքում աղոթել էին դրա համար՝ իրենց բնակարանների սենյակները դարձնելով տնային մատուռներ:

Եվ վանքը լցվեց միաբաններով, որոնք մինչ այդ թաքուն էին սպասավորում, իսկ վանահայր նշանակվեց հարյուր տասնիննամյա հայր Գեորգին, որը հիշում էր նախկին վանական փառքն ու միաբանների համակյաց կյանքը: Եվ փառք տալով մեր Տեր Հիսուս Քրիստոսին՝ հայր Գեորգին ասաց.

Պետք էր մի լավ թափ տալ կղզու իշխանություններին, որ կրկին բացեին այս մենաստանը:

Իսկ ես՝ մեղավորս, որ այնտեղ էի անցյալի պահապանի պաշտոնով, վանականի կարգով շարունակեցի կեցությունս:

Քսենիա

Կարծում եմ՝ իրավացի էր հայր Գեորգին. չլիներ երկրաշարժը, ամենայն հավանականությամբ, ամեն ինչ կմնար առաջվա պես: Սակայն երկրակեղևի ցնցումները,- ներողություն կալամբուրի համար,- ցնցեցին Մելիսսային, և նա արեց այն, ինչը դեռ երեկ չէր պատրաստվում անել. Տաճարը վերադարձրեց Եկեղեցուն:

Պետական կարգի մեջ փոփոխություններ չեղան. համենայնդեպս այդպես էր թվում: Բայց այդ իրադարձությանը նայելով տարիների հեռվից՝ կարելի է պնդել, որ այն դարձավ փոփոխությունների սկիզբ: Մելիսսան զարմանալի կերպով հիշեցնում էր մորը՝ Գլաֆիրային, որը ցանկացել էր մաքրել կեղտերը: Հասարակություն վերադարձնելով Եկեղեցին՝ Նախագուհին նույնպես յուրատեսակ երկրաշարժ արեց, որն ի վերջո կուլ տվեց Պայծառ Ապագան՝ իր ձերբակալություններով, սպանություններով ու աշխատանքային ճամբարներով:

Ինչ վերաբերում է ինձ ու Պարֆենիին, ապա Մարկելի խոստացած բնակարանն այդպես էլ չստացանք ու շարունակում էինք ապրել կոմունալ բնակարանում: Ճիշտ է, Մարկելի այցից հետո մեր կյանքը մի քիչ թեթևացել էր: Լուկյանը, որ մեզ ավելի էր նեղում, քան բոլոր հարևանները միասին վերցրած, հեզ ու խոնարհ էր դարձել: Այլևս չէր հետաքրքրվում, թե զուգարանի որ նստոցն ենք օգտագործում, չէր հարցնում, թե ինչ լամպ ենք վառում խոհանոցում, և նույնիսկ չէր ստուգում իր նավթի չափը պրիմուսում:

Տարիների հետ պրիմուսներն էլ անհետացան: Մեր ընդհանուր խոհանոցում չորս գազօջախ դրեցին՝ ութ տիրոջ համար: Հիմա գազօջախների տակ ապրում էր Զայկա կատուն, որն ընդհանրապես չէր համապատասխանում իր անմեղ անվանը:

Զայկան հետևողական մարդատյաց էր: Գազօջախին մոտեցողին դիմավորում էր չար ֆշշոցով, իսկ ավելի հաճախ չանչում էր: Ոչ ոք չգիտեր, թե հատկապես որ գազօջախի տակ է այդ պահին հանգստանում Զայկան. կարողանում էր լարվածության մեջ պահել

բոլորին: Բոլորին, բացի Պարֆենիից, որին չգիտես ինչու առանձնացնում էր ու երբեմն նույնիսկ կարող էր քսմսվել ոտքին:

Զայկային հանդուրժում էին առնետ որսալու արտակարգ ունակության համար: Եթե նա չլիներ, իմ կարծիքով, առնետներն ի վերջո մեզ կվտարեին բնակարանից: Մինչև Զայկան թրև էին գալիս սեղանների վրա, կրծում ալյուրի տոպրակներն ու ուտում ամեն ինչ, որ կարելի էր ուտել: Սեղաններից թռչում էին խուլ թմփոցով, ինչից երբեմն արթանանում էինք գիշերը: Այդ դժվար ժամանակների մասին հիշում էինք Զայկայի սիրային արշավանքների շրջանում, մանավանդ գիշերները: Գազօջախների տակ կատվի բացակայությունը նշանակում էր, որ անհնար է լինելու գիշերը գնալ զուգարան. ի տարբերություն Զայկայի՝ առնետները մեզնից չէին վախենում:

Բնակարանային մյուս աղետը ուտիճներն ու փայտոջիլներն էին: Եվ այստեղ անզոր էր նույնիսկ Զայկան: Փայտոջիլներից ժամանակի ընթացքում մի կերպ ազատվեցինք, բայց ուտիճները մեզ կոմունալ բնակարանում ուղեկցեցին մինչև նրա կյանքի վերջին օրը: Եռջուր էինք լցում մահճակալների կցատեղերին, շրիշակների երկայնքով տարատեսակ թունադեղեր շաղ տալիս, բայց ուտիճներն արագ վարժվում ու նույնիսկ սկսում էին սնվել դրանցով:

Մի անգամ Լուկյանը հարցրեց, թե ուտիճների դեմ ինչպես էինք պայքարում Պալատում: Եվ երբ ասացինք, որ Պալատում ուտիճներ չկային, թերահավատ նայեց մեզ: Կյանքում երբեք այնպիսի տեղ չէր տեսել, որտեղ ուտիճներ չլինեին:

Պարֆենի

Ընթրիքից հետո Ժան-Մարին ասում է, թե չի հասկանում՝ ինչպես կարելի էր Պալատից հետո վարժվել կոմունալ բնակարանին: Պատասխանում եմ, որ բավական արագ վարժվեցինք: Իսկ պալատական կյանքը, իհարկե, հիշում էինք. ինչպես կինոն են հիշում: Մի բան, որ եղել է ոչ այստեղ ու ոչ մեզ հետ:

- Իսկ դու կկարողանայի՞ր ապրել կոմունալ բնակարանում,- Ար-

տեմիին հարցնում է Ժան-Մարին:- Քո իշխանական պայմաններից հետո:

Արտեմին ուսերն է թոթվում:

- Ապրել եմ: Երեխա ժամանակ:

Լեկլերը խնդրում է իրեն կոմունալ կյանքի մի քանի կադր տրամադրել: Ես ասում եմ, որ դա ձանձրալի է, որ դրա մասին հարյուրավոր անգամներ գրել են, ու մեր կյանքը նկարագրվածից ոչնչով չէր տարբերվում:

- Չէ՞ր տարբերվում,- Ժան-Մարին բարձրացնում է գավաթը, ու մենք բաժակ բաժակի ենք խփում:- Ուզում եք ասել, որ բոլոր կոմունալ բնակարաններում նախկին իշխաննե՞ր էին ապրում:

- Որոշ իմաստով՝ այո,- ասում է Քսենիան:- Միայն տեսնեի՛ք մեր հարևաններին:

Ժան-Մարին նայում է Արտեմիին:

- Իսկ դո՞ւ ինչ էիր զգում: Զզվա՞նք, ատելությո՞ւն շրջապատողների հանդեպ, հուսահատությո՞ւն:

Արտեմին անձեռոցիկը տանում է շրթունքներին:

- Զզվանքը բթանում է: Ատելությո՞ւն: Երբ կանգնած ես զուգարանի ընդհանուր հերթում, դժվար է ատելություն զգալ, ավելի շուտ՝ հոգնածություն,- Արտեմին ժպտում է ինձ ու Քսենիային:- Ճի՞շտ է:

Ճիշտ է: Հուսահատություն էլ էր լինում, իհարկե, բայց լինում էին նաև ուրախության պահեր: Մեր սենյակում փակվելով՝ երեկոները նստում էինք հին բազմոցին ու ռադիոյով դասական գրականության ընթերցումներ լսում՝ մշակված, հնաոճ ձայներով: Պատուհանից այն կողմ թափվող անձրևի ֆոնին, անիվների թաց աղմուկի տակ: Կամ էլ պարզապես նստում ու լռում էինք:

Մեկ է, կար մեզ արտաքին աշխարհից բաժանող սահմանը: Այդ սահմանը կարող էր լինել նույնիսկ ընդհանուր խցում, չխոսելով արդեն կոմունալ բնակարանի մասին, որտեղ, այսպես, թե այնպես, մեր սենյակն ունեինք:

- Իսկ առնետնե՞րը, փայտոջիլնե՞րը, ուտիճնե՞րը,- չէր հանդարտվում Ժան-Մարին:

Պատկերացրեք՝ նրանք երբեմն մարդկանցից քիչ էին տհաճություն պատճառում: Այնքան էլ հաճելի հարևանություն չէ, իհարկե, բայց ստորություն չկար նրանց մեջ: Ուտիճներն իրենք իրենց չէին, չէ՞, ապուրի կաթսան ընկնում:

Ասենք, հարևաններն էլ, եթե մտածենք, այդքան վատը չէին: Պայծառ Ապագայի սանձարձակությունների օրերին միասին Զատիկ էինք նշում: Կուլիչներ էինք թխում: Մեկը օղի էր բերում, մյուսը՝ երշիկ, ու բոլորով,- ո՛վ կարող էր մտածել,- նստում էինք ընդհանուր սեղանի շուրջը:

- Մենք այդ տարիները որպես դժբախտ ժամանակ չենք դիտում,- ասում է Քսենիան:- Եթե դա չլիներ մեր կյանքում, մեր ժողովրդի մասին ոչինչ չէինք իմանա:

Լեկլերի հայացքը սառչում է պատուհանից այն կողմ ինչ-որ բանի վրա.

- Ուզում եմ այնպիսի դրվագ գտնել, որ հասկանալի լինի հանդիսատեսին՝ դուք Նորին Բարձր Պայծառափայլություններ էիք մնում նույնիսկ կոմունալ բնակարանում:

Քսենիան կցում է ափերը:

- Գեղեցիկ է: Բայց ես, օրինակ, կռվում էի հարևանուհու հետ, իսկ Նորին Բարձր Պայծառափայլությունը մեզ բաժանում էր: Չեք պատկերացնի, թե ինչ տգեղ դրվագ էր:

- Հենց դրա համար էլ կյանքը դրվագին հանգեցնելը ճիշտ չէ,- ասում է Արտեմին:

Քսենիան դեմքը թաղում է ափերի մեջ, ու ձայնը խուլ է հնչում.

- Կյանքը մանրացնում է մարդուն, ինչպես խոհանոցային կոմբայնը:

Ես շոյում եմ նրա ուսը:

- Այնպես ես խոսում, ասես այդ կես դարն այնտեղ զուտ կռիվ ես արել: Պարզապես այդ օրը նյարդերդ վերջնականապես չդիմացան:

Հետագայում, երբ Եվրոպայի օգոստափառ ընտանիքները մեզ բնակարան նվիրեցին Քաղաքում ու տնակ՝ Ծովեզերքին, հաճախ

էինք հիշում մեր հարևաններին: Հիմա էլ ենք հիշում:

Եթե ասեմ՝ զգում էինք նրանց պակասը, երևի մեղք գործեմ ճշմարտության դեմ. միայն հիմա, երբ այլևս այս աշխարհում չեն, նրանց բացակայությունը դիտում ենք որպես անդառնալի կորուստ: Ու չնայած լրացում չենք փնտրում, կորուստը մնում է կորուստ: Մեր կյանքի անդարձ հեռացած հերթական մասը: Եվ հիմա, երբ մեր կյանքը կարծես հենց միայն այդ զբաղմունքից է բաղկացած՝ սգում ենք այդ մարդկանց կորուստը:

Տեսնես հիմա ո՞ւմ հետ են կռվում:

Իսկ այդ ընթացքում՝ նոր փորձություններ էին սպասում Նախագուհի Մելիսսային: Երբ Կղզու բնակիչներն ուշքի եկան Մեղուների Տիրակալի զոհվելուց ու դրան հաջորդած երկրաշարժից հետո, հիշողությունը նրանց վերադարձրեց հոբելյանական հանդիսություններին, ու հասկացան, որ տոնակատարության օրը զրկվել են հուշադրամներից:

Ինչ-որ մեկն ասաց, թե զարգացման և աճպարարության նախարարը դրանք խորհրդավոր կերպով տեղափոխել է իր ննջարանն ու տեղավորել բարձերի մեջ: Նորությունը տարածվեց հողմի արագությամբ, և շուտով արդեն Պալատի առաջ հսկա ամբոխ էր հավաքվել. մարդիկ փափագում էին վերադարձնել իրենց փողերը: Արնահեղությունից խուսափելու համար Նախագուհի Մելիսսան կարգադրեց խռովված ժողովրդի հինգ ներկայացուցչի թողնել իր ու Վալդեմարի ննջարան:

Ներկայացուցիչներին թույլատրվեց պատռել ննջարանում առկա բոլոր տասնվեց փետրաբարձերն ու ստուգել պարունակությունը: Մեկ ժամ տևած տքնաջան որոնումներից հետո ներկայացուցիչները դուրս եկան հավաքվածների առաջ: Դեմքերը բմբլված էին, ինչը թաքցնում էր ակնհայտ շփոթմունքը, քանզի բարձերի մեջ փող չէր հայտնաբերվել:

Բայց և այնպես, դրամների չքանալը ակնհայտ էր, ու գազազած հանրության ճնշման տակ Մելիսսան ստիպված էր հետաքննու-

թյուն նշանակել: Բացի այդ, որոնման ենթակա էին նաև բանակային ռոծիկը, ծանապարհների նորոգման ու մեղուների կեցության միջոցները: Հուշադրամները պալատական բարձերի մեջ տեղափոխելը հաստատող ոչ մի թուղթ չհայտնաբերվեց: Գտնվեցին միայն դրանք շվեյցարական բանկերից մեկը փոխանցելու թղթեր: Այնտեղ էին հանգրվանել նաև մնացած որոնվող միջոցները:

Այդ բոլոր օրերին Վալդեմարը սսկվել էր ցիլինդրի տակ, բայց մի առավոտ Մելիսսան նրան այնտեղ չգտավ: Մեկ ամսից զարգացման և ածպարարության նախարարի հետքը հայտնաբերվեց Կղզու հարավում: Հայտնի դարձավ, որ Վալդեմարը հանդիպել է մի շարք անձանց հետ, որոնք բացահայտ հանդես էին գալիս Հարավը Հյուսիսից անջատելու օգտին:

Այդ անձանցից մեկը՝ ոմն Վարվառա, գլխավորում էր Հարավային ազատագրական ընկերությունը, ինչը խիստ անբարենպաստ տպավորություն թողեց Նախագուհու վրա: Վալդեմարի և Վարվառայի *եռանդուն խորհրդակցությունների* մասին կարծ հաղորդագրությունները վերջնականապես հունից հանեցին Մելիսսային: Դեռ կարող էր աչք փակել ամուսնու պետական դավաճանության վրա, բայց ամուսնական դավաճանությունը ներման ենթակա չէր:

Հպարտությունը հաղթահարելով՝ Մելիսսան մանրամասն խրատական նամակ գրեց Վարվառային, որտեղ նկարագրում էր Վալդեմարի բոլոր բացասական հատկություններն ու խորհուրդ տալիս գործ չունենալ նրա հետ: Նամակի վերջում հետևում էր նախազգուշացումն առ այն, որ իր սովորությանը հավատարիմ, Վալդեմարն, ի վերջո, կսղոցի Վարվառային:

Պատասխանը կարծ էր ու ցնցող: Եվ այն ստորագրել էր ոչ թե Հարավային ազատագրական ընկերության ղեկավարը, այլ նրա տեղակալուհի Վասսան: Նամակում սառն ու չոր հայտնվում էր, որ Վալդեմարի մեջ դեռ սղոցելու հակումներ չեն նկատվել, քանզի նա այլ կարգի հնարքներ է առաջարկել Վարվառային:

Նամակը կարդալով՝ Մելիսսան կարկամեց: Մի քանի օր մտմտում էր պատասխանը ու հասկացավ, որ պատասխանել տվյալ

դեպքում կարելի է միայն գործողությամբ: Նախագուհին պետական դավաճան հայտարարեց Վալդեմարին ու Վարվառային և նրանց կալանավորելու հրաման ստորագրեց: Բայց երբ հրամանը հանձնում էր Պահակազորի պետին, որոշակի անվստահություն նկատեց: Նորին Գերպայծառ Ապագայության հարցին, թե ինչն է տատանվելու պատճառը, Պահակազորի պետը պատասխանեց, որ ստորագրված հրամանը դժվար է կատարել, քանզի հարավային շրջաններն այլևս չեն ենթարկվում իրեն:

Ինձ թվում էր, ասաց Մելիսսան, որ խռովարարությունն անվերադարձ անցել է: Բայց պարզվում է...

Նախագուհին լռեց՝ նայելով Պահակազորի պետի աչքերի մեջ:

Ձերդ Գերպայծառ Ապագայությո՛ւն, այն հեռացել էր վերադարձի խոստումով՝ կրունկները շխկացնելով՝ զեկուցեց պետը:

Իսկ Վալդեմարը Հարավում գտնվելու կարճ ընթացքում հասցրել էր հմայել տեղի բնակչությանը: Դա այն հմայությունը չէր, որի մասին գրում են սև մոգության դասագրքերում. դրա համար նախկին նախարարը խիստ անկայուն էր ոգով և չուներ անհրաժեշտ սևեռումը: Հարավի բնակիչներին բավական էր, որ նա ձեռնածություն էր անում և անընդհատ խոսում:

Վալդեմարի ճառերը շատրվանում էին ցիլինդրից հորդող անվերջանալի մետաքսյա թաշկինակի նման: Պատմում էր, թե ինչպես է մտքի ուժով փողերը տեղափոխում մի բանկից մյուսը, ու խոստանում էր հարավցիներին փոխանցել շվեյցարական բանկիրների բոլոր պահուստները: Խոստանում էր այնպիսի բնական պայմաններ ստեղծել, որ Հյուսիսի նավթը գաղտնի ստորգետնյա ուղիներով հոսի Հարավ:

Պատրաստվում էր չորացնել ճահիճները Անտառի հարավային մասում, չնայած դա հեշտ գործ չէր: Այդ խնդիրը կատարելու համար պետք էր հետ շրջել Գետը: Այ այստեղ Վալդեմարը ոչինչ չէր խոստանում: Լռում էր՝ հասկանալ տալով, որ իր համար էլ սահմաններ կան: Բայց նույնիսկ խոստացածը լիուլի բավական էր հարավցիների սրտերը նվաճելու համար:

Վալդեմարն իր պատմություններն ուղեկցում էր ձեռնածության զարմանալի հնարքներով: Որոշ հանդիսատեսների ժամացույցները հանում էր մյուսների գրպաններից, ձեռքի շարժումով վերականգնում կտոր-կտոր արած թղթադրամներն ու բոլորի աչքի առաջ սղոցում կանանց, առանց դույզն-ինչ վնաս պատճառելու: Այդ հնարքները, նրա պատմությունների հետ, մոգական ազդեցություն էին թողնում մարդկանց վրա: Իսկ գլխավոր ձեռնածությունն այն էր, որ ոչ ոք չէր կասկածում պատառոտած ժապավենի պես գույնզգույն հոսող այդ պատմությունների հավաստիությանը: Վալդեմարը հաշված շաբաթների ընթացքում հմայել էր Հարավի բնակիչներին, որոնք պատրաստ էին ուր ասես գնալ նրա ետևից: Եվ Վալդեմարը նրանց տարավ Հյուսիս:

Քսենիա

Երկու շաբաթ առաջ Տոսկանայից վերադարձանք տուն: Իտալիայում անցկացրած օրերին նկարահանվեց առաջին դրվագը:

Լսելով, որ վերադարձել ենք՝ մեզ մոտ եկավ խմբագիր Ֆիլիպը: Ուզում է մեր գրառումները հրատարակել անմիջաբար տեքստում՝ առանձնացնելով ուրիշ տառատեսակով: Պարֆենին դեմ է ուրիշ տառատեսակին: Ավելորդ խայտաբղետություն չի սիրում իմ Պարֆենին: Անճաշակություն է համարում:

- Բայց ձեր տեքստն ինչպե՞ս առանձնացնենք տարեգիրների տեքստից,- հարցրեց Ֆիլիպը:

Պարֆենին մտածեց և ասաց.

- Պարզապես կարելի է պարբերությունն ավելի խորքից սկսել: Կարելի է նաև չառանձնացնել. մեծ հաշվով՝ նույն տեքստն է:

Ֆիլիպը չհավատաց նրան:

Իսկ երեկ չէ առաջին օրը առանց զգուշացնելու թռավ-եկավ Ժան-Մարին: Ավարտել էր դրվագի փորձնական մոնտաժն ու ցանկանում էր ցույց տալ մեզ: Տարօրինակ է. քանի դեռ նկարահանում-

ներ էին, թվում էր՝ մեր մասին է: Բայց նայեցինք... Ֆիլմը լավն է, ինչ-պես Լեկլերի բոլոր ֆիլմերը: Բայց չես հասկանում՝ ում մասին է: Ինչ-որ մեկի, որ ծնվել և ապրում է Ժան-Մարիի ներսում:

Դիտումից հետո հարցրեց, թե ինչ տպավորություն ստացանք:

- Գեղեցիկ է,- ասաց Պարֆենին:- Գուցե նույնիսկ ավելի, քան կյանքում:

Ժան-Մարին հարցրեց, թե ինչն է մեզ անհանգստացնում: Ասաց, որ պատրաստ է շտկել մանրամասները: Ես պատասխանեցի, որ հենց մանրամասների հարցում ամեն ինչ կարգին է: Նա նկատելի տխրեց:

- Ի՞նչն այնպես չի:

- Կյանքը,- ժպտաց Պարֆենին:- Ընդհանրապես կյանքը:

Հետո գնացինք Ծով՝ զբոսնելու: Մեզ ընդառաջ էր գալիս, այո՛, հորաքրոջս հիշեցնող մի կին:

- Կլավդիան,- առանց զարմանքի ասաց Ժան-Մարին:

Նա մեզ մինչ օրս հանգիստ չի տալիս իր խրատներով: Ամեն ան-գամ հայտնվում է, ինչպես առաջին անգամ, նոր կերպարով, բայց մենք անսխալ ճանաչում ենք Կլավդիային: Ինչպե՞ս առանց նրա:

Թևանցուկ անելով Պարֆենիին՝ հորաքույրս հուզված ինչ-որ բան է բացատրում: Ցույց է դալիս ջրից դուրս պրծած քարը: Պարֆե-նին հարգալիր գլխով է անում: Հրաժեշտ տալիս համբուրում է նրա ձեռքը:

- Ի՞նչ էր ասում այդ կինը,- Պարֆենիին հարցնում է Ժան-Մարին:

- Հորդորում էր ջուրը չմտնել այդ քարերի մոտ: Ասում էր, որ հենց այդտեղ ջուրը մտնելու հիմարություն է ունեցել ու հետո դժվարու-թյամբ է դուրս եկել: Քիչ է մնացել ջարդի ոտքերը:

Ժան-Մարին մտախոհ նայում է հեռացող Կլավդիային.

- Ջարդելը՝ չի ջարդել, բայց լավ ծռել է:

Հեղափոխության հիսուներկուերորդ տարում, մայիս ամսի քսա-ներկուսին հարավցիների զորքը շարժվեց դեպի Հյուսիս: Ազատա-սիրությունից եռ գալով՝ հարավցիները երկօրյա արագ զորաշար-

ժով դուրս եկան Հարավային մեծուղի, որը Կղզու երկու մասերի պայմանական սահմանն էր: Առաջին անգամն էր, որ քաղաքացիական պատերազմը սկսում էին հարավային կողմից:

Զորքը կամավորական էր, վատ զինված, անվարժ ու միանգայն համահունչ Գլխավոր հրամանատարին, որպիսին միաձայն ընտրվել էր Վալդեմարը: Նրա ջոկատների սրընթաց շարժումը սահմանին փոխարինվեց կատարյալ անշարժությամբ. սահմանի մյուս կողմում հարձակվողներին սպասում էր Կղզու՝ մարտունակություն ճառագող կանոնավոր բանակը:

Ֆելդմարշալ Սերապիոնի հրամատարությամբ գործող զորքը բացարձակ հավատարմություն էր դրսևորում Մելիսսայի հանդեպ, որին համարում էին իրենց Սքանչելի Տիկինը: Սերապիոնը բարձրահասակ էր, ճերմակահեր, իմաստուն ու քչախոս: Հեռադիտակով զարմացած հետևում էր սահմանին արդեն մի քանի օր աղմկող հասարակությանը: Հարավցիների ամենօրյա զբաղմունքը անկախությանը ձոնված բոցաշունչ ճառերն էին, որոնք ընդմիջվում էին առատ հուզահեղումներով:

Զինվորների մարտական ոգին բարձրացնելու համար Վալդեմարը ազատագրական բնույթի ձեռնածություններ էր անում: Վզնոցի սովորական կտրատումը՝ երջանիկ ավարտով (վզնոցը ողջ և առողջ վերադառնում էր տիրոջը) նա եզրափակում էր Կղզու դրոշն իրեն բերելու բարձրագոչ պահաջով: Դրանից հետո հայտնվում էր անբնական մեծ մկրատը, որը հնարավոր էր օգտագործել միայն երկու ձեռքով: Երկու զինվոր ձգում էին Կղզու դրոշը, և Գլխավոր հրամանատարը զորքի խրախուսական աղաղակների ներքո այն երկու կես էր անում:

Սպասում եք, որ այս երկու կեսերը կմիանա՞ն: Իզուր: Դրանք ոչ ոք չի կարող միացնել: Նույնիսկ ես:

Այդ հնարքն այնպիսի հաջողություն ուներ, որ Վալդեմարը ստիպված ցուցադրում էր օրը մի քանի անգամ: Արդեն պետք չէր ոչինչ ասել: Բառերը հայտնի էին բոլորին ու խմբային էին արտաբերվում: Գլխավոր հրամանատարին մեկ շաբաթում հաջողվեց

այնքան դրոշ կտրատել, որ նորերը ստիպված բերում էին Հարավի ամենահեռավոր անկյուններից:

Դրա հետ միասին՝ զորավարը չէր շտապում շարունակել հարձակումը: Ստացած զեկուցագրերը նրան ավելի ու ավելի էին համոզում, որ կանոնավոր բանակի հետ մարտում ձեռնածության վրա հույս դնել չի կարող:

Նույն օրերին Վալդեմարն իրեն ազատ հայտարարեց Կղզու Նախագուհի Մելիսսայի հետ պսակից: Հարավցիներին ուղղված ռադիոուղերձում պատմեց այդ կնոջ հանդեպ բազմամյա սիրո, ինչպես և այն մասին, որ գուցե այսուհետ էլ սիրեր, եթե չլիներ նրա կայսերական էությունը: Մելիսսայի կողմից ազատատենչ Հարավը ձնշելու միտքն օրեցօր ձնշում էր իր ուղեղը, սիրտը և մնացած ամեն ինչ, որ կարելի է ձնշել, այնպես որ, ինքն արդեն անկարող էր անկողին կիսել Նախագուհու հետ: Հարավի հանդեպ սերը Վալդեմարի մեջ ուժեղ էր Մելիսսայի հանդեպ սիրուց: Եվ նա արեց իր ընտրությունը, և ահա այստեղ է:

Նորին Գերպայծառ Ապագայությունը որսում էր փախստական ամուսնու մասին ցանկացած նորություն և ծայրից ծայր լսեց այդ հաղորդագրությունը: Դրա վերաբերյալ Մելիսսայի տեսակետն անհայտ մնաց, քանի որ Վալդեմարի վերջին բառերից կաթվածահար եղավ: Նախագուհին բերանով որսում էր օդը, և մարդկային խոսքի փոխարեն խղճալի մնչյուն էր ելնում բերանից:

Նորին Գերպայծառ Ապագայությունը բժիշկների ջանքերով մի կերպ ոտքի կանգնեց, բայց խոսքի ունակությունն այլևս չվերադարձավ: Խոսքի հետ Մելիսսային լքեց նաև պետական գործերի հանդեպ հետաքրքրությունը: Ոչպետական գործերը Նախագուհուն նույնպես չէին հետարքրքրում, և այլևս ոչինչ չէր գրավում նրա ուշադրությունը, ռադիոյից բացի: Գիշերուզօր նստում էր ողջ ուժով միացված ռադիոընդունիչի առաջ: Ձայնն այնքան բարձր էր, որ լսվում էր ոչ միայն Պալատի բոլոր սենյակներում, այլև մոտակա փողոցներում:

Հենց այդ բարձր ձայնով էլ Վալդեմարը մեկ շաբաթ անց եթերում

հայտարարեց, որ ամուսնանում է Հարավային ազատագրական ընկերության ղեկավար Վարվառայի հետ: Գլխավոր հրամանատարն իրազեկում էր ռադիոլսողներին, որ ի դեմս Վարվառայի՝ ինքը այսուհետ միավորվում է Հարավի ազատագրական շարժման հետ: Վալդեմարը պատմեց նաև, թե ազատագրական շարժման հանդեպ սերն ինչպես է իր մեջ վերափոխվել Վարվառայի հանդեպ սիրուն, բայց Մելիսսան դա արդեն չէր լսում: Նրան գտան հաղորդման ավարտից հետո, երբ արդեն հեռարձակվում էր *Liberta* երգը: Նախագուհու գլուխը հանգչում էր սեղանին, ձեռքի մեջ սեղմվել էր ռադիոնդունիչի ալեհավաքը, իսկ հոգին օրորվում էր ռադիոեթերի միջին ալիքների վրա:

Տեղեկանալով Նախագուհու մահվան մասին՝ գլխավոր հրամանատար Վալդեմարը հայտարարեց, որ հաջորդ օրը սկսում է հարձակումը: Անհապաղ հաղթանակ տենչացողները պահանջեցին հարձակումը սկսել ոչ թե հաջորդ օրը, այլ անմիջապես, քանի դեռ իշխանությունը շփոթված է: Բայց Վալդեմարը պատասխանեց, որ այսօր շուտ է, իսկ վաղը չէ մյուս օրը ուշ կլինի: Բացատրությունը հանելուկային էր, դրա համար էլ բավարարեց բոլորին:

Իսկ իրականում Վալդեմարը սպասում էր, որ կանոնավոր բանակը Նախագուհու մահվան լուրն առնելուն պես ցիրուցան կլինի: Սակայն բանակը չփախավ: Հակառակը, ի հիշատակ անժամանակ հեռացած Նախագուհու որոշեց վերականգնել կարգուկանոնը տերության մեջ ու մռայլ սևեռումով պատրաստվում էր մարտի: Ոմանք նույնիսկ տեսնում էին եթերի ալիքների վրա լողացող ու վրեժի կոչող Մելիսսային:

Լսելով կանոնավոր բանակի տրամադրությունների մասին՝ հարավցիների զորավարը վիատվեց: Ասում էին՝ ներքին դող էր զգում՝ հասկանալով, որ նախկին կինն իրեն դիմակայում է նույնիսկ մահից հետո, և այդ հետմահու հակազդեցությունն իսկապես վախեցնում էր Վալդեմարին: Տիրական դարձավ միտքը, որ պատիժը գալու է Մելիսսայի՝ ժամանակին իրեն շոյած և իրենից համբուրված ձեռքից:

Գլխավոր հրամանատարը դիմեց զորքին՝ հայտարարելով, որ նոր ի հայտ եկած հանգամանքների բերումով հարձակումը հետաձգվում է, բայց նրան արդեն ոչ ոք չէր լսում: Ազատատենչ կամավորները պատրաստվում էին գրոհի: Նրանք Վալդեմարի համար միայն մի տեղ էին տեսնում՝ զորքի գլուխն անցած, ինչպես և վայել է զորավարին:

Գլխավոր հրամանատարը ողջ գիշեր ցնցվում էր դողից: Ատրճանակ բռնած ձեռքը ժամանակ առ ժամանակ ճգվում էր քունքին, բայց ինչ-որ բան համենայնդեպս հետ էր պահում նրան: Հաջորդ առավոտ հակառակորդները հաղթահարեցին իրենց բաժանող վերջին հարյուր մետրերը: Հիմա արդեն դեմ դիմաց էին կանգնած Հարավային մեծուղու երկու կողմից:

Ֆելդմարշալ Սերապիոնը Վալդեմարին առաջարկեց հանձնվել: Ձայնը վստահ ու հանգիստ էր: Ընկճված Վալդեմարն ինչ-որ անհոդաբաշխ բան պատասխանեց և նույնիսկ առաջարկեց խաղաթղթերով ածպարարություն ցույց տալ: Հարավցիների զորքը իրենց Գերագույնի պահվածքն անպատշաճ գտան, ու շարքերով խուլ տրտունջ անցավ:

Սերապիոնը նայեց ժամացույցին ու հայտարարեց, որ հարվցիների բանակը մեկ ժամ ունի հանձնվելու համար:

Հիմա ժամը տասնմեկն է, ասաց Սերապիոնը, տասներկուսին կրակ եմ բացում:

Մարտի պատրաստ զինվորների ասելով՝ դեռ երբեք ժամանակն այդքան շոշափելի ու լարված չէր եղել: Լռությունը խախտում էր միայն Վալդեմարի քրթմնջոցը, որը զորքին համոզում էր ժամանակավոր նահանջել: Սահմանված ժամկետից տասնհինգ րոպե առաջ Սերապիոնի բանակում շարժում սկսվեց ու սկսեցին շխկալ փակաղակները:

Հենց այդ ժամանակ փոշու ամպ հայտնվեց Հարավային մեծուղու վրա: Թվում էր՝ կանգնած է տեղում, քարացած հողմապտույտի պես, բայց մի քանի րոպե անց պարզվեց, որ մոտենում է: Երկու

կողմից զորքերը գլուխները դարձրին ամպի կողմը, ասես այնտեղից կարող էր գալ փրկությունը:

Եվ եկավ:

Բաց ավտոմոբիլում նստած էր Նորին Բարձր Պայծառափայլություն իշխան Պարֆենին: Առաջինը ավտոմոբիլին մոտեցավ ֆելդմարշալ Սերապիոնը: Պատվի առնելով՝ ծեր իշխանին օգնեց իջնել մեքենայից: Ավտոմոբիլին մոտեցավ նաև Վալդեմարը: Իրեն անկախ ու անտարբեր էր պահում, բայց ականատեսներն ասում են՝ դեմքի արտահայտությունը երջանիկ էր:

Ֆելդմարշալի վրանից բազկաթոռ բերեցին: Երբ Պարֆենին նստեց, ամենաբարձրահասակ զինվորներից մի քանիսը բարձրացրին ու վեր պարզած ձեռքերին պահեցին բազկաթոռը: Իշխանի համար բարձրախոս բերեցին:

Խաղաղություն ձեզ, ասաց Պարֆենին: Ես պատասխանատու եմ բոլորիդ համար: Իմն է պարտքը, քանզի ինքներդ, ավաղ, ձեզ համար պատասխան չեք տալիս: Վշտով համակված՝ ասում եմ ձեզ. վերադարձեք ձեր տները և գրկեք ձեր կանանց ու երեխաներին, քանզի եթե նրանք կորցնեն ձեզ, ապա ի՞նչ իմաստ կունենա մնացյալ ամեն ինչ:

Թեթևացման ընդհանուր հոգոց լսվեց: Այնքան ուժեղ էր, որ մեծուղու երկու կողմում ծառերը ճոճվեցին: Բայց Վալդեմարը, որին չէր դիպել այդ շունչը, դուրս եկավ մեծուղու կենտրոն: Թողնելիք տպավորությամբ մտահոգ՝ այդ երերուն մարդը որոշել էր աներերություն ցուցադրել: Նրան բերեցին Կղզու դրոշն ու մեծ մկրատը: Կտրելով դրոշը՝ նա սպասում էր, որ իր զորքը կարտաբերի սովոր բառերը: Բայց զորքը լռում էր, և ինքն արտաբերեց բառերը:

Վրահաս լռության մեջ Վալդեմարը գլխից վեր պարզեց դրոշի երկու կեսերն ու կրկնեց, որ դրանք այլևս ոչ ոք չի կարող միացնել, ու հանձնեց Պարֆենիին: Իսկ Պարֆենին, առնելով կտորի երկու կեսերը՝ դրեց իրար վրա: Եվ երբ կրկին բացեց, նրա ձեռքերի մեջ բոլորը տեսան Կղզու ամբողջական դրոշը:

Եվ երկու բանակի զինվորները հասկացան, որ արտակարգ բան

է կատարվել, և գլխարկները հանած՝ կանգնել էին լռության մեջ: Իսկ հետո, առանց մի խոսքի, ինչպես որ պատվիրել էին՝ վերադարձան իրենց տներն ու գրկեցին իրենց կանանց ու երեխաներին:

Հաջորդ առավոտ ֆելդմարշալ Սերապիոնը հայտարարեց, որ Կղզու Նախագուհի Մելիսսայի մահվան բերումով ստանձնում է իշխանությունը երկրում:

Անիշխանությունից վատ բան չկա, ասաց Սերապիոնը, քանզի այն մարդու մեջ բացում է ամենամթին խորխորատներն ու կյանքը դարձնում դժոխք:

Ֆելդմարշալը հայտնեց նաև, որ իշխանությունը վերցնում է մեկ տարով, մինչև կղզիաբնակների ակնկալիքներին համապատասխան տիրակալ կընտրվի: Ինքը՝ Սերապիոնը սպայի խոսք է տալիս, որ ուղիղ մեկ տարուց, ոչ մի օր ավելի, վայր կդնի լիազորություններն ու կգնա հանգստի:

Գլուխ քսաներորդ
ՍԵՐԱՊԻՈՆ

Մեծ Հեղափոխության հիսուներկուերորդ տարում Տիրակալ Սերապիոնի առաջին հրամանագրով ներում շնորհվեց Հարավային մեծուղու խռովության բոլոր մասնակիցներին: Տիրակալի երկրորդ հրամանագրով Կղզուն վերադարձվեց նախկին թվականությունը: Այդպիսով հիսուներկուերորդ հեղափոխական տարին Սերապիոնի կառավարման առաջին տարին դարձավ: Առաջինն ու միակը՝ ըստ Տիրակալի խոստման:

Բոլոր կղզիաբնակները չէ, որ կարողացան ըմբռնել թվականության փոփոխությունները, այնպես որ, նույնիսկ սկսեցին ձայներ հնչել, թե Սերապիոնն իրենց ապրած հիսունմեկ տարիները խլել է մեն-միակ նպատակով՝ որ երկիրը զրկի Պայծառ Ապագայից ու վերադարձնի խավար անցյալ: Այդպիսիներին Սերապիոնը պատասխանում էր, որ ապագան խլել անհնար է, քանզի այն գոյություն ունի միայն երևակայության մեջ: Իսկ ինքը՝ Սերապիոնը, իր գործի բերումով կատարելապես զուրկ է երևակայությունից ու զբաղվում է ներկայով: Հարկ է հիշել նաև անցյալի մասին, որպեսզի նրա սխալները չկրկնվեն և պատմությունն արատավոր շրջան չգծի:

Իսկ Վալդեմարը փախավ արտասահման՝ չհավատալով ո՛չ շնորհված ներմանը, ո՛չ էլ նրան, որ Սերապիոնը կթողնի իշխանությունը: Արտասահմանից հակադարձելով Սերապիոնին՝ նա առաջարկեց Կղզուն հավելել ապրելիք հիսուն տարիները, որպեսզի առանց ավելորդ ջանքեր գործադրելու քայլ անեն ապագա: Ի հաստատումն՝ փախստակը, տարատեսակ գովեստներ շռայլելով, վկայաբերում էր արտասահմանյան կենսակերպի փորձը: Բայց Սերապիոնը տեղեկացրեց Վալդեմարին, որ չապրած տարիները

փորձ չեն պարունակում, ուստի դրանք հավելելն անիմաստ է:

Կարելի է երեխային մեծահասակ հայտարարել, ասաց Սերապիոնը, բայց դա կիմաստնացնի՞ նրա միտքը և կամրացնի՞ նրա հոգին:

Նա ժողովրդին համեմատում է երեխայի հետ՝ Մեծ երկրից վրդովվում էր Վալդեմարը: Դա ժողովրդական իմաստնության մերժում է և, ուրեմն, անվստահություն ժողովրդավարության հանդեպ:

Ֆելդմարշալը չէր մերժում ժողովրդավարությունը, բայց և չէր հավատում նրա անսահման հնարավորություններին: Սերապիոնը գտնում էր, որ ժողովրդավարական կենսակերպը պատասխանատվության զգացում է պահանջում յուրաքանչյուր մարդկային հոգուց: Նման բան ինքը մեր Կղզում չի տեսել:

Երբ ողնաշարը չի պահում մարմինը, ասաց ֆելդմարշալը, մարդուն կորսետ են հագցնում: Հենց այդ կորսետն էլ կոշտ կառավարումն է:

Նա մերժում է հայրենակիցների բարձր գիտակցականությունը՝ Ծովի մյուս կողմից արձագանքեց Վալդեմարը:

Եթե ժողովրդավարությունը հայտնվի զուտ որպես շամանի հմայախոսություն, ասաց Սերապիոնը, մեզ մեծ դժվարություններ են սպասում: Նոր բառերը պետք է ծնվեն ներքին փոփոխություններից:

Նա առաջարկում է սպասել, իսկ ես պահանջում եմ գործել՝ առարկեց Վալդեմարը:

Թող ապրեն իրենց սրտի կանչով՝ ասաց Սերապիոնը: Իմ գործը ընտրություններ նշանակելն է:

Լողալ սովորելու համար պետք է ջուրը մտնել՝ հայտարարեց Վալդեմարը:

Ու մենք մտանք:

Կղզու տիրակալի ընտրություններին սկսեցին պատրաստվել տարբեր ուժեր, և հենց այստեղ էլ ի հայտ եկավ հայացքների բազմազանությունը: Իշխանության համար պայքարում իրենց թեկնածուներին ներկայացրին և՛ Պայծառ Ապագայի կողմնակիցները, և՛ անցյալի նվիրյալները: Տիրակալ Վլասի գործը շարունակող Մեղու-

ների կուսակցություն էլ հիմնվեց, որը նույնպես առաջադրեց իր մարդուն: Կղզու նոր հասարակական ուժ դարձավ Առաջադիմության կուսակցությունը, որը գլխավորեց ոչ այլ ոք, քան Վալդեմարը, որը մարմնապես դեռ արտասահմանում էր:

Նա անսպասելիորեն կատարեց փողերը փոխանցելու իր խոստումը. սահմանափակ չափով, բայց փոխանցեց ոչ թե Հարավ, այլ՝ Հյուսիս, մայրաքաղաք, որտեղ իր գործունեությունն էր ծավալել նորաստեղծ կուսակցությունը: Հարավի ազատագրական շարժումն այլևս չէր գրավում Վալդեմարին, և նա շուտով ի լուր ամենքի հայտարարեց իր մեջ կատարված աշխարհայացքային հեղաշրջման մասին: Նախկին զորավարն այլևս Հարավի անջատում չէր ցանկանում, այլ երազում էր, հակառակը, Կղզու միասնության ամրապնդում:

Վալդեմարի մեջ կատարված հեղաշրջման առաջին զոհը դարձավ Վարվառան. չէ՞ որ իսկական քաղգործչի անձնական կապերն անխզելի են հասարակականից: Սիրո անտես թելերով նա այսուհետ կապված էր Մայրցամաքային նավթային ընկերության հետ, որն էլ Վալդեմարի միջոցների աղբյուրն էր:

Նոր կրքով բռնված՝ նա նորածագ հարաբերությունների ամրապնդում էր փնտրում, բայց հասկանում էր, որ դժվար կլինի ամուսնանալ նավթային ընկերության, չենք ասում արդեն՝ նրա տիրոջ՝ պարոն Բրանդի հետ: Վալդեմարը գնաց միակ հնարավոր ճանապարհով՝ ամուսնացավ ընկերության տիրոջ դստեր՝ Սեսիլիայի հետ:

Ի տարբերություն Մելիսսայի՝ այդ լուրը Վարվառային չսպանեց: Միայն ավելի կոփեց ազատագրական ճանապարհին կատակլիզմների վարժված առաջնորդին: Վարվառան շնորհավորական հեռագիր հղեց նորապսակներին՝ խոստանալով նվերն անձամբ հանձնել: Վալդեմարը լավ էր ուսումնասիրել պայքարի նախկին զինակցին և անհանգստացավ, բայց վիճակը նետված էր: Նրա Ռուբիկոնը դարձավ Ծովը, որը Կղզին բաժանում էր Մեծ երկրից: Սերապիոնից անվտանգության գրավոր հավաստիացումներ ստանալով՝ Վալդեմարն ու Սեսիլիան ժամանեցին Կղզի:

Իրեն ոչ մի օր հանգիստ չտալով՝ Վալդեմարը լծվեց նախընտ-

րական գործունեությանը: Առաջին հանդիպումն ընտրողների հետ, ի զարմանս բոլորի, մայրաքաղաքում չէր: Ժամանակ ու ջանք չխնայելով՝ թեկնածուն մեկնեց Կղզու հյուսիս-արևմուտքի նավթաբեր շրջաններ: Վալդեմարը նավթաշտարակների ֆոնին պատմում էր բարեկեցության մասին, որ սպասում է երկրին իր կառավարման դեպքում, և նրա խոսքի ռիթմը համահունչ էր ջրհորի ահռելի կռունկներ հիշեցնող նավթահանների ռիթմին:

Ավարտելով ելույթը՝ նա, ինչպես միշտ, ձեռնածություն էլ արեց: Գլխից վեր պահելով նավթով լի անոթը, որին բացառապես սև ոսկի էր ասում, Վալդեմարը մոտեցավ հանդիսատեսների առաջին շարքին: Բոլոր ցանկացողներին տալիս էր հոտոտելու անոթի պարունակությունը, նույնիսկ ոմանց քթերին քսեց, այնպես, որ բոլորին պարզ լինի՝ ձեռքին հենց այդ սև ոսկին է: Մոտ կանչելով մի ծեր հորատողի՝ ածպարարը նրան խնդրեց հանել բաճկոնն ու բոլորին ցույց տալ նաև աստառը: Բաճկոնը երկու կողմից կեղտոտ էր, ինչը թույլ չէր տալիս այն հատուկ ներկայացման համար պատրաստած համարել: Կասկածից դուրս էր նաև հորատողը. նավթահանքում աշխատելու բոլոր տարիներին ածպարարության դույզն-ինչ հակում չէր դրսևորել: Հորատողը Վալդեմարի խնդրանքով բաճկոնը գցեց նավթով լի անոթի վրա: Իսկ երբ հանեց, պարզվեց, որ անոթը դատարկ է: Ե՛վ հորատողը, և՛ մյուս նավթագործները ապշած էին. մտքներով չէր անցել, որ նավթը կարող է անհետ չքանալ:

Քսենիա

Ֆիլիպն էր եկել, քննարկեցինք ապագա հրատարակության մանրամասները: Անպայման ուզում է սկսել բնաբանով: Տեքստը որոշել է սովորական տառատեսակով չշարել, այլ պատվիրել մի հայտնի գծանկարչի: Նա երկու օրում արել էր գործը: Այսօր առավոտյան բերել է Ֆիլիպին: Կուզե՞նք նայել: Այո՛, իհարկե, ինչպե՞ս չնայենք: Իսկ ի՞նչ բնաբան է:

Ֆիլիպը թղթապանակից հանեց ամուր անողորկ թերթը՝ հին գրությամբ ոճավորած տառերով:

- Ահա... Պրոկոպիի գրառումը «Ճշմարիտ պատմության» վերջին էջին:

Թղթի վրա կռանալով՝ կարդում ենք. «Ագաֆոնի գերեզմանի մոտ չի գտնի ոչ ոք մարգարեություն ձայնը որ է աղբյուր իմացության Կղզու ապագայի»:

Ախ, ահա՛ թե ինչ...

- Հայտնի արտահայտություն է,- ասում է Պարֆենին:- Գերազանցապես նրանով, որ իմաստն այնքան էլ հասկանալի չէ:

- Ի՞նչը կարող է ավելի լավ լինել բնաբանի համար,- ծիծաղում է Ֆիլիպը:

Թղթապանակից հանում է ձեռագիր էջի լուսանկարը, նույնպես գեղագրի աշխատանքի պատճեն: Դնում է սեղանի եզրին: Թողնում է մեզ՝ համենայնդեպս:

Պարֆենին հարցնում է.

- Բայց և այնպես, ինչպե՞ս եք հասկանում այս գրառումը:

Խմբագիրը հասկանում է մոտավորապես այսպես. նույնիսկ Ագաֆոնի գերեզմանի մոտ ոչ ոք չի կարող արտաբերել մարգարեությունը, որ Կղզու ապագայի մասին գիտելիքի աղբյուրն է: Մեր լռությունից դրդված՝ Ֆիլիպը բացատրում է, որ մարգարեության բացակայության պարագայում մեզ մնում է միայն պատմությունը, որը պարտավոր ենք մանրակրկիտ ուսումնասիրել: Եվ հրատարակել:

Նա ժպտում է.

- Մարգարեության առկայության դեպքում, իհարկե, ամեն ինչ ավելի հեշտ կլիներ:

Իհարկե: Հուսալի մարգարեությունը պատմությունից հավաստի է:

Խմբագրի գնալուց հետո վերցրի նրա թողած լուսանկարը: Գրառումը ծանոթ էր հրապարակումից, իսկ ձեռագիրը ոչ ոք չէր տեսել: Ագաֆոնի գերեզմանի մոտ... Պրոկոպիի ձեռագիրը, իմ կարծիքով, շատ ավելի լավն էր գեղագրի վարժանքներից: Այն ժամանակի սովորությամբ՝ ո՛չ վերջակետ, ո՛չ ստորակետ, նույնիսկ բառերն անջատ չեն: Փոխարենը՝ ծով վերտողյա նշաններ՝ գեղեցիկ ու ոչինչ չնշանակող: Ձայն տվի Պարֆենիին.

- Տե՛ս. այստեղ, ուր էջի եզրը վնասված է, կարող էր ինչ-որ բառ լիներ: Տեսնո՞ւմ ես գծիկը, ըստ երևույթին, ինչ-որ տառի մաս է:

- Ո՞:

- Հնարավոր է:- Եթե բառերն այլ կերպ անջատենք, ուրիշ բան կստացվի. «Ագաֆոնի գերեզմանի մոտ չի գտնի ... մարգարեություն... ձայնը որ է աղբյուր իմացության Կղզու ապագայի»:

- Ո-ով սկսվում է *ոչ ոք*- ը: «... չի գտնի ոչ ոք մարգարեություն... Ձայնը որ է աղբյուր իմացության Կղզու ապագայի»: Խնդիրը ձայնն է: Տաճարի պատի ձայնախորշի՞ց:

- Ստացվում է, որ Պրոկոպին մարգարեությունը թաքցրել է ձայնախորշում, և այդ ձայնախորշը Ագաֆոնի գերեզմանի մոտ է:

Մենք զանգեցինք Ֆիլիպին ու պատմեցինք մեր ենթադրության մասին: Լսափողի մեջ որոշ ժամանակ միայն շնչառություն էր լսվում: Թափ տվի խոսափողը, և այն արձագանքեց.

- Վաղը առավոտ կփորձեմ կապվել մշակույթի նախարարի հետ: Ցանկացած աշխատանք Պայծառակերպության Տաճարում հնարավոր է միայն թույլտվությամբ:

Ստացվում է՝ Պրոկոպին համոզված էր, որ ոչ ոք մարգարեությունը չի գտնի: Միևնույն ժամանակ հուշում էր, թե ինչպես գտնել: Դա այնքա՛ն նման է նրան:

Կղզին երբեք այդպիսի հանրային պայքար չէր տեսել: Գլխովին թաղվել էր այդ հորձանուտում, ինչպես փարավոնի զորքը վաղնջական ժամանակներում թաղվեց Կարմիր ծովի խորխորատում, իսկ շատ ավելի հետո իշխան Կոնստանտինի զորքը քաշվեց անտառային ճահճուտը: Կղզին նոր տիրակալ էր ընտրում, որն այսուհետ կոչվելու էր պրեզիդենտ: Առաջին անգամ էր պրեզիդենտ ընտրվում, ասենք, ընտրություններն էլ առաջին անգամ էին, ու պետության մեջ ոչ մի շունչ չգիտեր, թե ինչով կավարտվի այդ ամենը:

Առաջադրված թեկնածուների քննարկումն ամենուր էր՝ թերթերում, ռադիոյով և նույնիսկ հեռուստատեսային արկղերում, որ աստիճանաբար կղզիաբնակների կենցաղ էին մտնում: Վիճում էին փողոց-

ներում ու հրապարակներում, տրամվայներում ու տաքսամոտորներում, նաև ծեպընթաց գնացքում, որ կապում էր Հյուսիսն ու Հարավը:

Օրերից մի օր հեռուստատեսությամբ հանդես եկավ Պայծառ Ապագայի Կուսակցության ներկայացուցիչը: Հեռուստադիտողներին հայտնեց, որ ինչ-որ արդարասերներ իրեն են հանձնել մի թուղթ՝ *Հռչակագիր մտադրությունների մասին* անվանումով: Փաստաթուղթն արտացոլում էր Վալդեմարի մտադրությունները, որոնք համընկնում էին Մայրցամաքային նավթային ընկերության մտադրություններին: Վալդեմարը պարտավորվում էր ընտրություններում իր հաղթանակի դեպքում Կղզու նավթային արդյունաբերությունը դուրս բերել պետական ենթակայությունից ու հանձնել նշված ընկերությանը:

Հեռուստատեսային ելույթը կղզիաբնակների վրա մեծ ազդեցություն ունեցավ ոչ միայն լսածով, այլև տեսածով: *Հռչակագիրը* ցուցադրվեց մեծ պլանով և էկրանին մնաց այնքան, մինչև ծանոթացան բոլորը, ներառյալ նրանք, ովքեր այնքան էլ արագ չէին կարդում: Թուղթը հավաստված էր մտադրված կողմերի ստորագրություններով:

Հաջորդ օրը հեռուստատեսությամբ հանդես եկավ Վալդեմարը: Ի հեծուկս հանրային սպասումների՝ նա շատ ավելի հաջող օգտագործեց հեռուստատեսության հնարավորությունները, քան մերկացնողը: Վերջինիս դաշնակիցը թուղթն ու համաձայնագրի չոր մանրամասներն էին, Վալդեմարինը՝ ջերմ զգացմունքները:

Հուզված ու նույնիսկ ցնցված Վալդեմարը հեռուստադիտողներին հարցրեց, թե ինչպես կարող էին հավատալ ինչ-որ թղթի և ոչ իրեն՝ Վալդեմարին, որը երբեք չի խաբել հայրենակիցներին: Արցունքը գլորվեց այտով ու ձայնը խզվեց: Թղթի հայտնվելն էլ բացատրում էր մերկացնողի ձեռքերի ճարպկությամբ՝ ասելով, որ այդ հնարքը քաջ հայտնի է յուրաքանչյուր աճպարարի:

Ի հաստատումն իր խոսքերի՝ Վալդեմարը վերցրեց Մտադրությունների մասին հռչակագրի պատճենը, ճմռթեց, իսկ երբ շտկեց, պարզվեց, որ թերթը մաս-մաքուր է: Թեկնածուի գործողություններն այնքան համոզիչ էին, որ թղթի բովանդակությանը, ինչպես և Վալ-

դեմարի նախկին կասկածելի արարքներին տեղյակ հայրենակիցներն անվերապահորեն հավատացին նրան:

Համոզվելով, որ ինչ ասես կարելի է ապացուցել ու հերքել, Վալդեմարն այլևս անզսպելի էր: Ամեն հանդիպման ձեռնածություն անելով՝ իրեն մերկացնելու բոլոր փորձերը բացատրում էր առաջադիմության թշնամիների դավերով:

Կղզով մեկ փակցված էին նրա լուսանկարները, որ բեռնանավերով բերում էին Մեծ երկրից: Նկարներում թեկնածուն տարակերպար էր: Մեկ ուսին գցած պիջակով, ինչը վկայում էր նրա աշխատասիրության մասին, մեկ առանց պիջակի, հոգնած իմաստուն դեմքով, որն արտացոլում էր Վալդեմարի բոլոր ներքին ուժերի լարումը:

Այդ աշխատավորը, սակայն, ուրախության գինն էլ գիտեր, ինչը վկայում էր անհավանական ճերմակ ատամները բաց ծիծաղող Վալդեմարի լուսանկարը: Հասկանալի էր, որ այդ մարդը, շարքային կղզիաբնակների պես, նաև հանգստանալ գիտեր. դա էր հաստատում կարուսելով պտտվելու պատկերը: Ամեն նոր նավի հետ ընտրողներն ավելի ու ավելի շատ մանրամասներ էին իմանում թեկնածուի մասին. Վալդեմարը գրադարանում, թատրոնում, մարզասրահում:

Զարմանքի էր արժանի, որ այդ նկարները նոր Վալդեմար ստեղծեցին՝ գրքասերի, ազատ արվեստների գնահատողի ու մարմնամարզիկի: Կղզու մեծ սրտացավի, որը երբեք մտադրությունների հռչակագիր չի ստորագրել և ինքն էլ մտադրություններ չունի: Դրամական միջոցներ չի յուրացրել և անհոգ պտտվում է կարուսելի վրա: Ստորացվածների ու նվաստացվածների պաշտպանի, ինչի մասին հենց նշյալներն էլ անվերջ պատմում էին կղզիաբնակներին, և առաջ երբեք այդքան հարցազրույցներ չէին հրապարակվել չքավորների, որբերի ու այրիների հետ: Եվ քչերը միայն չէին ցանկանա քվեարկել այդպիսի մարդու օգտին:

Ընտրությունների օրը այնքան կղզիաբնակներ եկան քվեատուփերի մոտ, որ քվեարկության ժամանակը երկարացվեց չորս ժամով: Ձայները հաշվում էին երեք օր ու երեք գիշեր: Երկրի պրեզիդենտ ընտրվեց Վալդեմարը:

Գլուխ քսանմեկերորդ
ՎԱԼԴԵՄԱՐ

Պրեզիդենտ Վալդեմարի կառավարման առաջին տարում Կղզում սկսեցին Մայրցամաքային նավթային ընկերության բենզալցակայաններ հայտնվել: Ծլում էին ինչպես անվերջանալի թաշկինակները Վալդեմարի ցիլինդրից, և կղզու բնակիչները դա ոգևորությամբ էին ընդունում: Վառ ու գույնզգույն լցակայանները շահավետորեն տարբերվում էին կղզու այլ կառույցներից, որոնք տպավորում էին զուտ իրենց անդեմությամբ:

Կղզիաբնակները, ներառյալ և ավտոմեքենա չունեցողները, հաճույքով էին այցելում լցակայան, քանի որ այնտեղ միայն բենզին չէր վաճառվում, այլև բազում մանր-մունր գեղեցիկ իրեր. վառիչներ, չիփսեր, թիթեղյա տուփերով սառնաշաքար, սափրվելու պարագաներ, փայլփլուն ամսագրեր ու ծամոն: Ի տարբերություն նախկին բենզալցակայանների, նորերից ոչ թե բենզինի, այլ չտեսնված լվացող միջոցների և անուշաբույր ջրի հոտ էր գալիս:

Այդպիսի այցելություններից հետո կղզիաբնակները տուն էին դառնում բարձր տրամադրությամբ, բուրում ու չիփսեր էին խրթխրթացնում: Հիշատակված ապրանքների թանկության բերումով ոմանք կարտոֆիլը մանր կտրատում ու փորձում էին տապակել թավայում, բայց չիփս չէր ստացվում: Ստացվում էին կարտոֆիլի վառված շերտիկներ, որոնք դժվարությամբ էին քերվում թավայի տակից, քերելու դեպքում էլ դժվար էր ուտել:

Վալդեմարի առաջին տարվա վերջին պարզվեց, որ Մայրցամաքային նավթային ընկերությունը գնել է Կղզու բոլոր նավթահորերը: Հայտարարվեց, որ այդ ընկերությունը կարող է ավելի շատ օգուտ

քաղել հորերից, քան կղզու պետությունը: Նոր տեր ձեռք բերելով՝ նավթային աշտարակները գլխով արեցին՝ ի հաստատումն ասվածի, լռելով միայն այն մասին, որ այդ օգուտը զգացվում էր ոչ թե Կղզում, այլ Մեծ երկրում:

Ոմանք այդ կապակցությամբ հիշեցին *Մտադրությունների հռչակագիրն* ու առաջին իսկ հարմար առիթով դրա մասին հարցրին Պրեզիդենտին: Վալդեմարը պատասխանեց, որ այդպիսի մտադրություններ չեն եղել, նավթային արդյունաբերությունն էլ կանխամտածված չի անցել Մայրցամաքային նավթային ընկերությանը:

Պարֆենի

Տևական քննարկումներից ու համաձայնեցումներից հետո Պայծառակերպության Տաճարում որոնողական աշխատանքների թույլտվություն ստացվեց: Նախևառաջ պետք էր գտնել Ագաֆոն Ապագայատեսի գերեզմանը, քանի որ Տաճարը վերականգնելիս տապանաքարերի վրա նոր հատակ էին փռել:

Ինչպես մեզ պատմեց Ֆիլիպը՝ հատակը բացելով՝ բավական արագ գտել էին Ագաֆոնի տապանաքարը: Դրանից հետո մանրակրկիտ ստուգել էին ձայնախորշերն այն կամարի տակ, որտեղ գերեզմանն էր: Բոլոր խորշերը դատարկ էին: Հետո նայել էին Ագաֆոնի հանգստավայրից հեռու ձայնախորշերը. այդտեղ էլ ոչինչ չէին գտել: Որոշել էին տախտակներով չփակել Ագաֆոնի տապանաքարը ու բաց էին թողել աղոթողների համար:

Քսենիան ընկճված է: Ճիշտն ասած՝ ես էլ: Մեր գյուտը այնքան գեղեցիկ էր թվում, որ չէինք կասկածում նրա իսկությանը, քանզի ճշմարիտն ու գեղեցիկը ուղեկցում են իրար: Մեզ այլ բան չէր մնում, քան ներողություն խնդրել Ֆիլիպից ու բոլոր նրանցից, ում անհանգստացրել էինք:

- Ես զգում եմ այդ ձեռագիրը, հասկանո՞ւմ ես,- ինձ ասաց Քսենիան:- Ու հաստատ գիտեմ, որ չի կորել:

Վաղը թռչելու ենք Փարիզ, որտեղ Ժան-Մարին սպասում է մեզ հերթական դրվագների նկարահանման համար:

Վալդեմարի պրեզիդենտության երրորդ տարում Կղզում սկսեցին մայրցամաքային ընկերությունների բաժանմունքների բազմաթիվ շենքեր կառուցվել: Վալդեմարը չէր հոգնում կրկնելուց, որ Կղզին իր պատմության մեջ առաջին անգամ բացվել է աշխարհին ընդառաջ: Այդ բացությունը նախևառաջ արտահայտվեց օգտակար հանածոներն ու փայտանյութը Մեծ երկիր արտահանելու ծավալներով: Հակառակ հոսանքը կղզիաբնակներին էր բերում նրանց անծանաչ բազում ապրանքներ: Արդեն իսկ բենզալցակայաններում վաճառվողին գումարվեցին Ստինգի վեպերը, Քինգի ձայնասկավառակները, ստրազներ, ստրինգներ ու տարատեսակ այլևայլություններ, որ նույնիսկ անհնար է թվարկել:

Ընկերությունների շենքերը կոչվում էին օֆիսներ: Երբ օֆիսները արդեն կառուցված էին, լցվեցին մայրցամաքային մարդկանցով: Հոգնաբեկ տեսք ունեին, զգացվում էր, որ լավն են կղզիաբնակներից և ամեն ինչ կարողանում են: Եկվորները կղզիաբնակներին կատակով անդրենածին էին կոչում, չնայած խիստ հազվադեպ էին կատակում ու նախընտրում էին հանդես գալ լուրջ իրազեկումներով առ այն, թե ինչպես է պետք աշխատել, հանգստանալ, բուժվել, սեր անել և ընդհանուր առմամբ կազմակերպել կյանքը:

Հետևելով մայրցամաքայիններին՝ Կղզու բնակիչներն աստիճանաբար սկսեցին նմանվել նրանց: Եվ շատերը մայրցամաքայիններին պես դարձան. անշտապ էին քայլում, ձեռքերը գրպաններում և ատամների արանքից նետում էին՝ *էդ քո պրոբլեմն է:* Ասում էին՝ *ես ձեզ լսեցի:* Հարցնում էին. *հարցի գինը:* Իսկ այդպես չկարողացողները տխրում էին հոգու խորքում, քանզի չէին հասնում իր ժողովրդին առաջադիմության պայծառ թագավորություն մտցնող Պրեզիդենտի թեթև քայլքի ետևից:

Իսկ մայրացամաքայինները, տեսնելով իրենց անձարակ արտացոլումը, մի քիչ ամաչում էին իրենցից, բայց արդեն ոչինչ շտկել

չէին կարող: Ինչ արած, այդպիսին էին նրանց քայլվածքը, տեսքն ու խոսքը, և չնայած իրենց նմանները ծուռ հայելու արտացոլում էին հիշեցնում, հասկանում էին, որ այդ աղճատումը պատահական չէ և ընդգծում է իրենց ինքնահատուկ գծերը:

Կղզիաբնակները, որոնք սովոր էին անշտապ ուտելուն, դժվար էին յուրացնում *ֆաստֆուդը,* բայց կամքի ուժով այդտեղ էլ հաջողությունների հասան: Կյանքի արագությունն ընդհանուր առմամբ աճել էր, և ժամանակի դեմքը՝ փողը, ամուր դրոշմվել էր կղզիաբնակների գիտակցության մեջ: Թող որ Կղզու բնակիչների համար ժամանակը դեռ չէր փոխվում փողի, բայց այդ անցումին սպասելիս ամեն ինչ նկատելի արագացել էր:

Կղզու երեխաները գործարար, բանկային ծառայող ու նոտար էին խաղում, խաղալիք դրամապանակներից հանում էին խաղալիք վարկային քարտերն ու ուղեչեքերը: Նոր կյանքի յուրացման գործում նրանք հաջողակ էին մեծերից, որոնք իրենց նույնպես երեխա էին զգում, որովհետև մեծահասակները Կղզում մայրցամաքայիններն էին:

Նույնիսկ Վալդեմարի ձեռնածություններն էին զուտ դրամական բնույթ կրում և արվում էին գերազանցապես առանց հանդիսատեսի: Վալդեմարը ցամաքել էր, փոքրացել, և կղզու քաղաքացիների պատկերացմամբ այնքան էլ նման չէր պրեզիդենտի: Խնդիրը չափսերը չէին. քաղաքացիներին վեհություն էր պետք: Վալդեմարը չուներ այն վեհությունը, որ հատուկ էր Կղզու նախկին տիրակալներին: Նա մայրացամաքային մի դեսպանատնից մյուսն էր գնում, մասնակցում *կլոր սեղանների ու շնորհանդեսների,* հետո *ռոլլի* ու *կանապե* ուտում պլաստմասե ափսեներից:

Առաջին ժամանակները Վալդեմարը փորձում էր իր հետ տանել իշխանական զույգին, որ նրանց ներկայությունը լրացնի չբավականացնող վեհությունը, բայց Նորին Բարձր Պայծառափայլություններն անփոփոխ մերժում էին հրավերը՝ դեսպանական ընդունելություններին գերադասելով ընթրիքը կոմունալ խոհանոցում: Մայրցամաքային դեսպանների հրավերներն էլ էին մերժում: Հնարավոր

է՝ այն պատճառով, որ հրավերներն ընդգծված տիրական էին, այն դեպքում, երբ դեսպաններն այստեղ ընդամենը հյուր էին:

Ընդսմին, մայրցամքայիններն ավելի ու ավելի մեծ դեր էին խաղում երկրի կառավարման մեջ: Նրանք խորհուրդներ էին տալիս Վալդեմարին, ու քանի որ խորհուրդներն ուղեկցվում էին փողերով, Պրեզիդենտը երախտագիտությամբ էր ընդունում դրանք. նրա համար գաղտնիք չէր, որ այդ երկու տարերքներն անխզելիորեն կապված են իրար հետ: Երբ խորհուրդները վերաբերում էին պետական ունեցվածքը մասնավոր մայրցամաքային ձեռքերին փոխանցելուն, Վալդեմարը փոխանցում էր: Երբ կղզու թերթերում այս կամ այն հոդվածը զետեղելու խնդրանք էր ստացվում, զետեղում էր:

Վալդեմարից ընդհանուր առմամբ գոհ էին՝ նշելով, որ առանձին կառավարչական թերացումները, ինչպիսիք էին պետական միջոցների չքանալը, տնտեսական ցուցանիշների անկումը և այլն, ներելի են՝ նկատի առնելով առաջադիմության նրա անհագ ծարավը:

Քսենիա

Կրկին Փարիզում ենք և այսօր գնում ենք ստուդիա: Այնտեղ, Ժան-Մարիի ասելով, վերստեղծվել է մեր Քաղաքը, որտեղ արդեն նկարահանել են մի քանի դրվագ: Հիմա նկարվում է հերթականը: Ժան-Մարին մի տեսակ տարօրինակ է խոսում նրա մասին, ինչպես խիստ անձնական բանի մասին են խոսում: Թեթև անհանգստություն եմ զգում, իսկ իմ կանխազգացումները սովորաբար կատարվում են: Ես ու Լեկլերը շատ տարբեր մարդիկ ենք. խոսում ենք տարբեր լեզուներով. ոչ միայն տառացի: Ու դժվար թե նա անցնի մեր լեզվին:

Պարֆենին, ինչպես միշտ, զուսպ է: Ասում է.

- Կնայենք:

- Իհարկե,- պատասխանում եմ,- եթե սեր չենք արել, գոնե կնայենք:

Ծիծաղում է:

- Քեզ չի՞ թվում, որ սկսելու համար մի քիչ ուշացել ենք:

Ստուդիայում մեզ դիմավորում է ռեժիսորի օգնականը: Էլեկտրամեքենայով տանում են տաղավար: Այնտեղ աշխատանքը եռում է: Ննջարանի բեմապատկեր: Աներևակայելի չափերի մահճակալ: Եզրին նստած են երկու ջահել արարած՝ միանման խալաթներով:

- Ուզում ենք ողջախոհ նկարել, բայց՝ հյութեղ,- ասում է Ժան-Մարին:

- Սա ի՞նչ է,- հարցնում եմ:

Լեկլերի մատը ալիքաձև հատում է օդը:

- Ո՞նց ասեմ... Ի վերջո, ճգնավոր չե՞ք եղել:

- Եղել ենք,- ասում է Պարֆենին:- Դրա համար էլ երեխաներ չունենք:

Ես լուռ եմ: Լեկլերի ձեռքը սահում է դեմքով: Բերանի անկյունները կախվում են, և առաջին պահին թվում է՝ լաց է լինում:

Չէ՛, ծիծաղում է: Ներողություն է խնդրում. նյարդե՛րը: Պարզապես չգիտի՝ ինչ ասի: Ծխախոտ է վերցնում օգնականից. երբեք չեմ տեսել, որ ծխի: Իսկապես էլ չի ծխում. սիգարետը շրթունքների արանքում է, բայց չի վառում: Հիմա կփորձի ամեն ինչ բացատրել: Կրակայրիչը շխկացնելով՝ համենայնդեպս վառում է ծխախոտը:

Այդ տեսարանն ուզում է նկարել Տրիստանի և Իզոլդայի մասին, սքանչելի երիտասարդ զույգի (ցույց է տալիս երիտասարդ զույգին), որը միջնադարյան բարդ պայմաններում... Ցանկացած միջնադարյան զույգ հանդիսատեսի աչքին Տրիստան և Իզոլդա է: Ինչպես արտահայտել...

Պարֆենին թոթվում է ուսերը.

- Ըստ էության արտահայտելու բան չկա:

- Չեմ հասկանում՝ ինչն է ձեզ անհանգստացնում,- գրգռվածության երանգներ:- Սեր անե՞լը: Բայց սցենարում միայն դրա ակնարկն է: *Առանձնակի* ոչինչ:

Պարֆենին անխռով է:

- Բայց ախր ուրիշ ոչինչ չի էլ եղել: Մենք ապրել ենք կատարյալ սիրով: Որպես եղբայր և քույր:

Ժան-Մարին ծխախոտով անցք է բացում ծածկոցի մեջ ու խնդրում ուրիշը բերել: Ես ու Պարֆենին հասկանում ենք, որ դա ձնշում է մեզ վրա:

- Բանն այն է, որ սցենարում...,- Ժան-Մարին խոսքն անավարտ թողնելով՝ լուռ նստում է:

Նրանը սցենարն է, իսկ մերը՝ կյանքը. կարելի է համեմատել: Մանավանդ, որ նա սովորական իմաստով սցենար չունի:

- Ես կարող էի ասել,- Լեկլերը նայում է հատակի երկրաչափական զարդանախշին,- որ կատարյալ սերն անհնար է նկարահանել, որ այն կինեմատոգրաֆիկ չէ...

Նա բարձրացնում է ձեռքը՝ կանխելով առարկությունները, բայց մենք չենք առարկում: Պետք է կարծել՝ դա էլ կինեմատոգրաֆիկ չէ:

- Բայց ուրիշ կերպ կասեմ: Լա՛վ, ենթադրենք հրեշտակային կյանքով եք ապրել: Իսկ երբեք չե՞ք ցանկացել տեսնել, թե ուրիշ ինչպես կարող էր լինել:

Պարֆենիի զարմացած հայացքը:

- Հանվե՛ք,- առանց երիտասարդներին դառնալու բղավում է Ժան-Մարին: Հիստերիայի մեջ է, միայն մեզ է նայում:- Այս սքանչելի զույգը դուք եք: Փորձեք ուրիշ կյանք ապրել՝ նրանց միջոցով: Ցանկացած փորձառություն ունեցել եք, սրանից բացի. ուրեմն ինչո՞ւ եք ձեզ արգելում: Համառությունի՞ց:

Պարֆենին ժպտում է:

- Այո՛: Իհարկե: Ցանկացած ընտրություն համառություն է պահանջում:

Ես ճչում եմ:

- Դա իմ,- ճչում եմ,- ի՛մ ընտրությունն էր: Եվ նա այդ ընտրությունն իրենը դարձրեց, դրա համար էլ նրանից թանկ մարդ ինձ համար չկա: Ու հիմա չգիտեմ՝ կարո՞ղ էի որոշում կայացնել երկուսիս փոխարեն: Անընդհատ դրա մասին եմ մտածում. բայց ի՞նչ կապ ունեն այստեղ ձեր Տրիստանն ու Իզոլդան: Չէ՞ որ նա երեխա էր ուզում, իսկ ես նրան զրկեցի դրանից: Եվ ձեր հիմար ֆիլմն այլևս ոչինչ չի շտկի:

Ես այնպես եմ հեկեկում, ինչպես երբեք լաց չէի եղել: Ժան-Մարին վախեցած է: Մենք վերադառնում ենք հյուրանոց:

Երկու ժամ անց Ժան-Մարին գալիս է մեզ մոտ և առաջարկում զբոսնել Փարիզում: Ո՛չ մենք, ո՛չ նա չենք խոսում ստուդիայում տեղի ունեցածի մասին:

- Կարդացի, որ այսօր կենտրոնում դեղին ժիլետների ցույց է,- ասում է Պարֆենին:

Լեկլերը գլխով է անում.

- Միանգամայն ճիշտ է, բայց արդեն վերջացել է: Մենք դեղին ժիլետների ցույցից *հետո* կզբոսնենք:

- Ու սուրճ կխմենք,- ասում եմ ես:

Ստուդիայում կատարվածից հետո ուզում եմ հանգստացնող որևէ բան ասել: Ժան-Մարին ոչ մի կերպ չի արձագանքում առաջարկիս:

Գնում ենք երեք մեքենայով: Առաջինում՝ Ժան-Մարին ու Դոմինիկը, երկրորդում՝ ես ու Պարֆենին, երրորդը պահպանության ջիփն է: Մեքենաները կանգ են առնում Մեծ բուլվարներից ոչ հեռու: Մոտեցած ոստիկանը բացատրում է, որ անցումը փակ է: Իջնում ու ոտքով ենք գնում:

Պարզվում է, որ այսօր աղետների օր է: Քարշակները տեղափոխում են վառված մեքենաները. բոլոր մեքենաները վառված են: Մայթեզրին՝ ածխացած մոտոռոլերների ցուցահանդես: Ցուցափեղկերի մեծ մասը ջարդված է, շատերը՝ նրբատախտակով փակած: Բանկի զրահապատ ապակին պատվել է ճաքերի աստղերով, բայց չի ջարդվել: Էլեկտրոնիկայի խանութի առաջ՝ մի քանի երաժշտական կենտրոն՝ տուփերով: Ինչ-որ մեկը ցանկացել է երաժշտություն լսել: Խանութի ծառայողները դրանք ներս են տանում ցուցափեղկով, որի ապակին չկա:

- Արդարության համար պայքարը,- ասում է Ժան-Մարին,- սովորաբար ավարտվում է կողոպուտով:

- Ի՞նչ են ուզում նրանք,- հարցնում է Պարֆենին:

Ժան-Մարին ցույց է տալիս ամայացած բուլվարը:

- Ա՛յ սա:

Թեքվում ենք փողոցներից մեկը, որտեղ արդեն կանգնած են մեր մեքենաները: Լեկլերը շրջվում է իմ կողմը.

- Հիմա այստեղ սուրճի հարցը բարդ է: Ուրիշ տեղ գնանք:

Սուրճը խմում ենք Լատինական թաղամասում: Նստած ենք բաց պատշգամբում: Բոլորին էսպրեսո ու ջուր են բերում, Դոմինիկին՝ նաև լիկյոր: Ժան-Մարին Դոմինիկի գլխից պոկում է բեյսբոլի կեպին ու թարս քաշում իր գլխին: Նայում է ինձ.

- Ապուշ ֆիլմ, ապուշ ռեժիսոր՝ մոդայիկ ու անիմաստ:

Ես փախցնում եմ հայացքս:

- Կներեք, չէի ուզում ձեզ վիրավորել:

- Ամենատխուրն այն է, որ դա ճիշտ է,- Լեկլերը պատռում է շաքարավազի ծրարն ու կեսը լցնում էսպրեսոյի մեջ:- Կարծում եք չե՞մ հասկանում, որ Տրիստանն ու Իզոլդան այստեղ կապ չունեն. լրիվ ուրիշ սեր է: Բայց չէ՞ որ դա ոչինչ չի փոխում, որովհետև հանդիսատեսը ոչինչ չի պատրաստվում հասկանալ ձեր սիրո մասին: Կամ ֆիլմ է նայում Տրիստանի և Իզոլդայի մասին, կամ ոչինչ չի նայում:

- Հանդիսատեսը հիմար է,- ասում է Դոմինիկը:

Ժան-Մարին վերադարձնում է նրա կեպին:

- Պարզապես մի ժամանակը հրաժարվում է հասկանալ մյուսին: Եվ եթե այսօրը պատմության մեջ չի տեսնում իր արտացոլումը, չի նայի այդ հայելու մեջ,- մնացած շաքարավազը նենգ Ժան-Մարին լցնում է Դոմինիկի լիկյորի մեջ:- Կնայի՞, Դոմինի՛կ:

- Հոգևոր ամուսնության պատմություն նկարելն ինքնասպանություն է,- Դոմինիկը փորձում է լիկյորն ու հոգոց հանելով՝ դեն հրում:- Հիմա ընտանիքի բոլոր տեսակները կան, բացի դրանից:

Հարևան սեղանի շուրջը ուսանողներ են նստում: Ցածրաձայն խորհրդակցելուց հետո մոտենում են Լեկլերին՝ ինքնագիր խնդրելու: Նրանք մեր մասին էլ են կարդացել. կարո՞ղ ենք ինքնագիր տալ: Իհարկե, կարող ենք:

Ստորագրում ենք: Ժան-Մարին հետաքրքրվում է՝ երիտասարդները հոգևոր ամուսնության մասին ֆիլմ կնայեի՞ն: Ուսանողները

ժպտում են: Գիտեն, որ ռեժիսորը սիրում է կատակել: Դա բոլորը գիտեն: Նրանք կնայեն ամեն ինչ, որ կնկարի մսյո Լեկլերը:

Ժան-Մարին պահանջում է դա գրավոր հաստատել: Ուսանողներից մեկը հանում է նոթատետրն ու գրառում անում, որի տակ ստորագրում են բոլորը: Ուշադիր կարդալով՝ Լեկլերը թուղթը չորստակ ծալում ու դնում է ջինսի ետևի գրպանը: Խիստ ասում է.

- Լա՛վ: Կմտածե՛մ:

Վալդեմարի պրեզիդենտության յոթերորդ տարում Քաղաքում հինգ խաղատուն ու երկու հասարակաց տուն բացվեց: Մայրաքաղաքի փորձն աներևակայելի արագությամբ տարածվեց ողջ Կղզում:

Շատերն ասում էին.

- Մեր հողի վրա երբեք այսպիսի բան չի եղել:

Այդպես ասողներին պրեզիդենտ Վալդեմարը պատասխանում էր.

- Գուցե կասեք մարմին է՞լ չէին վաճառում: Գուցե չէին էլ խաղո՞ւմ:

Անկեծության ավելցուկից դեմքը պատվում էր կարմիր բծերով:

Պատասխանում էր.

- Չեմ ընդունում կեղծ բարեպաշտությունը: Երեսպաշտությունն էլ չեմ ընդունում: Մենք ընդամենը կանոնակարգել ենք եղածը:

Նրան առարկում էին.

- Կանոնակարգելով՝ կանոնակարգվածը մի տեսակ օրինակ են դարձնում հասարակության համար: Իսկ կեղծ բարեպաշտությունն այստեղ կապ չունի:

Առաջադիմության ընթացքն ավելի ու ավելի հաստատուն էր դառնում: Բայց շուտով լուր տարածվեց, թե անառականոցներում տեսել են անձամբ Վալդեմարին: Սկզբում հերքում էր, բայց շա՛տ շատերն էին տեսել, և ակնհայտը ժխտելն անիմաստ դարձավ: Նա հայտատրարեց, որ այդ տխուր վայրերն այցելել է ստուգման նպատակով, բայց երբ ի հայտ եկավ, թե որքան մանրակրկիտ են եղել այդ ստուգումները, այլևս առարկելու ոչինչ չուներ:

Վալդեմարը կանչվեց Մեծ երկիր, որտեղ ծանր խոսակցություն ունեցավ աներոջ հետ: Չար լեզուներն ասում էին, որ այդ զրույցից հետո Պրեզիդենտը կորցրել է կանանց հետ շփվելու պահանջմունքը, չխոսելով արդեն խաղալու մասին, ու մնացել է միայն փողի կիրքը:

Վալդեմարի կինը՝ Սեսիլիան, ի տարբերություն հոր, տեղի ունեցածն այդքան ցավոտ չընդունեց: Այդ ընթացքում ամուսնու ձեռնածություններն արդեն հասցրել էին ճանձրացնել, և նա սփոփանք էր գտնում ձիավարության մեջ: Ձիերի, առավել ևս ձիավարության ուսուցիչ Սոզոնտի հետ շփումը բարենպաստ ազդեցություն ունեցավ նրա վրա: Բոլորն ընդգծում էին Սեսիլիայի այտերին հայտնված վարդագույնը, ինչպես և ընդհանուր մարմնական կայտառությունը:

Շուտով պարզվեց, որ Պրեզիդենտի կինը հղի է: Վալդեմարը, որ աներոջ հետ խոսակցությունից հետո այլևս ամուսնական մահիճ չէր մտնում, դավաճանություն կասկածեց: Տարակուսանքներով բռնված՝ ի վերջո երկչոտ հարցրեց Սեսիլիային՝ հղիությունը կապված չէ՞, արդյոք, ձիավարության պարապմունքների հետ, և եթե այո, ապա ումի՞ց է երեխան:

Սեսիլիայի պատասխանը կարճ ու կոպիտ էր.

Ձիուց, սիրելի՛ս: Քեզ կբավարարի՞ այսպիսի բացատրությունը:

Բացատրությունը Վալդեմարին չէր բավարարում, բայց ցույց չտվեց: Սեսիլիայի բարձրագոչ պատասխանը լսելի եղավ ոչ միայն նրան, այլև շատերին Պալատում: Հաջորդ օրն այն քննարկում էր ողջ երկիրը: Կղզու հասարակության մեջ աստիճանաբար համոզմունք ձևավորվեց, որ Պրեզիդենտի կինը կենտավրոս է կրում որովայնում: Դա, ամեն դեպքում, հետագայում չհաստատվեց:

Պահանջվող ժամանակն անց Սեսիլիան արական սեռի, տռուզ թշերով մի պինդ մանկիկ լույս աշխարհ բերեց: Երեխան բոլորովին նման չէր Վալդեմարին, բայց ձիուց էլ ոչինչ չուներ: Միևնույն ժամանակ, երեխայի նմանությունը Սոզոնտին ապշեցուցիչ էր: Նորածինների մասին հազվադեպ կարելի է ասել, թե ինչ-որ մեկին նման են, բայց այս նորածնի մասին այլ բան ասել հնարավոր չէր: Սեսիլիայի

ցանկությամբ նրան անվանակոչեցին Իպոլիտ, որ նշանակում է *լծից ձի արձակող:* Սեսիլիան ինքն էլ այդ ժամանակ արդեն բավական սանձարձակվել էր և հարկ չէր համարում թաքցնել կապը Սոզոնտի հետ:

Պրեզիդենտական առաջնեկի ծննդյան պատվին հանդիսավոր ընդունելություն կազմակերպվեց, որին ներկա էին Հյուսիսի ու Հարավի կարևոր մարդիկ: Ի զարմանս բոլորի, ընդունելությանը մասնակցում էր նաև Վարվառան, որը եկել էր իր տեղակալուհի Վասսայի ուղեկցությամբ: Երջանիկ ծնողները նրան միայն այն ժամանակ նկատեցին, երբ ամբոխին հրմշտելով՝ Վասսան իր ղեկավարուհու համար ճանապարհ էր բացում դեպի ամուսինները:

Վալդեմարը հիշում էր Վարվառայի խոստացած նվերի մասին և միայն երկու ընծա էր հնարավոր համարում՝ սուր սրած դանակ կամ ինը գրամանոց գնդակ: Ճանաչելով Վարվառային՝ ավելի շատ հակվում էր գնդակին, որովհետև նախկին զինակիցն անվրեպ էր կրակում: Այդպիսի մտքերով ալեկոծված՝ Վալդեմարն իր համար աննկատ հայտնվեց Սեսիլիայի թիկունքում:

Վարվառան մոտենում էր, և արդեն Վասսան կարիք չուներ կանգնածներին դեսուդեն հրելու. հրավիրյալներն իրենք էին դեսուդեն թռչում՝ ճանապարհ բացելով դեպի Վարվառայի նախկին նշանածը: Մարտաշունչ կանայք վերջին քայլերն արեցին արդեն բացարձակ լռության մեջ: Կանգ առնելով՝ Վարվառան ասաց Վալդեմարին.

Հիշո՞ւմ ես՝ քեզ նվեր էի խոստացել: Հետաձգեցի մինչև ծնվեր առաջնեկդ, որ երեքիդ միասին սպանեի, և միայն դանակի ու գնդակի միջև էի տատանվում՝ հոգով հակվելով վերջինին: Բայց ահա եկա, ու ձեռքերս դատարկ են: Դու խղճուկ ես, և քո կյանքն էլ խղճուկ է: Եվ լավագույն պատիժը կյանքդ քեզ թողնելը կլինի, այնպես որ, չսպասես, թե քեզ կազատեմ նրանից:

Ո՞վ եք դուք, սքանչելի անծանոթուհի՝ Վարվառային հարցրեց Սեսիլիան: Որ իմ ամուսինը խղճուկ է, բոլորը գիտեն, բայց դուք առանձնահատուկ, սրտառուչ բառեր գտաք:

Ես նրա մահն եմ, պատասխանեց Վարվառան, որը խորշում է նույնիսկ մոտենալ նրան, դրա համար էլ ողջ է թողնում:

Ինձ թվում է, թանկագի՛նս, այստեղ տեղին է որևէ ձեռնածություն անել՝ Վալդեմարին դիմեց Սեսիլիան, բայց ամուսինը միայն ձեռքերը տարածեց: Պարզվում է՝ հիմա դու նույնիսկ ձեռնածության ընդունակ չես:

Սեսիլիան ժպտաց Վարվառային.

Շատ ափսոս, չէ՞:

Ափսոս, բայց ոչ շատ՝ պատասխանեց Վարվառան:

Շրջվելով՝ նա շարային քայլով կտրեց սրահն ու Վասսայի ուղեկցությամբ անհետացավ դռան ետևը: Սրահով հիասթափության հոգոց անցավ, քանզի ներկաներն ավելիին էին սպասում:

Վալդեմարի կառավարման տասներորդ տարում աշխատուժ բերեցին Կղզի: Ոչ մեկին հայտնի չէր այդ մարդկանց ո՛չ ծագումը, ո՛չ լեզուն, ո՛չ անունները, ո՛չ բարքերը: Հայտնի էր միայն, որ նրանք պահանջկոտ չեն և աշխատում են ոչ մեծ գումարով: Նրանց բերելը պնդել էին օտարերկրյա ընկերությունները, քանզի նշված անպահանջկոտությունն ու էժան աշխատելու ցանկությունը չէին տեսնում կղզիաբնակների մեջ:

Աշխատուժն ապրում էր բարաքներում ու սնվում նրանով, ինչ բերում էին տերերը: Այդ ուժը վատ զգացումներ չէր հարուցում կղզիաբնակների մեջ. միայն զարմանք: Կղզու կյանքին այդ մարդիկ չէին խառնվում և իրենց լեզվով շփվում էին զուտ իրար հետ: Շրջում էին իրենց բաժանված միանման արտահագուստով, և կղզիաբնակների աչքին նրանց դեմքերը նույնպես միանման էին: Եկվորները հյուրընկալության հրավերներին պատասխանում էին քաղաքավարի ժպիտով ու ցույց էին տալիս իրենց բարաքները, և հասկանալի չէր, թե ինչ են նշանակում նրանց ձեռքերի շարժումները՝ բարաքը լքելու արգե՞լք, թե՞ ողջ բարաքը հյուր կանչելու առաջարկ: Շուտով նրանց մոռացան:

Պարֆենի

Ես ու Քսենիան ավելի ու ավելի էինք համակրում Լեկլերին: Սկզբում տաղանդավոր, բայց մակերեսային էր թվում: Սա կշտամբանք չէ: Բոլորը չէ, որ կարող են տաղանդավոր պատկերել մակերեսայնությունը: Նա կարող էր ուրիշ բաների մասին էլ պատմել, բայց ահավոր կախման մեջ է հանդիսատեսից, հովանավորներից, գովազդից: Նա այնքան մարդկանց ու կազմակերպությունների հետ է կապված, որ անհասկանալի է ինչի մասին է խոսքը՝ ստեղծագործության, թե՞ արտադրության: Այդպես էի մտածում մինչև փոթորիկը, որ անցավ նկարահանման հրապարակով:

Անկասկած՝ ամեն ինչ սկսվել էր որպես բեմադրություն: Եվ այդ անծայրածիր մահճակալն ու խալաթավոր թռչնակները դրա տարրերն էին: Հանդիսատեսները՝ ես ու Քսենիան: Մերժումից վախենալով՝ Լեկլերը մեզ չէր պատմել իր մտահղացումները, այլ որոշել էր ներկայացնել. ապրեք այն կյանքը, որը չեք ապրել: Տեսեք՝ ինչպիսին կարող էր լինել: Մի՞թե կարծում էր, որ դա կգրավի մեզ:

Բայց ուրիշ վարկած էլ կա. Լեկլերը մե՛զ չէր համոզում: Ուզում էր, որ մենք տարհամոզենք իրեն: Ըստ երևույթին զգացել էր, որ իր հղացած ֆիլմը մերը չի դառնում:

Հաջորդ օրը, երբ շրջում էինք Լուվրում, Ժան-Մարին հանկարծ ասաց.

- Ի վերջո, ես արդեն այն կարգավիճակում եմ, որ կարող եմ նկարել, ինչպես ուզում եմ: Ու ոչ ոք չի համարձակվի առարկել ինձ:

Դա ասվեց Մոնա Լիզայի առաջ. Լեկլերի մեջ ռեժիսորն անմահ է:

Նայում ենք նկարը, նա մեջքով է կանգնած: Ցույց է տալիս ուսի վրայից.

- Ջոկոնդային կարելի է մոտեցնել մեր ժամանակին՝ ծիծաղող նկարել, ու դրա մեջ ավելի շատ դրայվ կլինի: Բայց չէ՞ որ նա ժպտում է: Ավելի ճիշտ՝ համարյա չի ժպտում, ու դրանով է հետաքրքիր:

Արդեն մեքենայում Լեկլերը վերադարձավ այդ խոսակցությանը: Ասաց՝ որոշել է փոխել հայեցակետն ու իրենից անցնել մերին: Դրա համար պետք է հասկանա, թե ինչպիսին է այդ մերը:

Ասաց, որ վտանգի է գնում, բայց վտանգը մեծ չէ. ընդամենը ֆիլ-մի տապալում:

Քսենիա

Նկարահանումներից հետո Ժան-Մարին գալիս է մեզ մոտ՝ հյուրանոց:

Շեմից հայտնում է, որ կինոնկարն ընդհանրապես սկզբում պատկերացրածի պես չի լինելու: Կլինի ոչ միայն իմ ու Պարֆենիի, այլ շատ ավելի մեծ մի բանի մասին:

Կղզու մասին պատումը Լեկլերը դիտարկում է որպես ընդհանրապես պետության պատմության մետաֆոր: Հնարավոր է՝ նույնիսկ համաշխարհային պատմության: Այդ միտքն արդեն հայտնվել էր մեզ հետ նախկին զրույցներում, բայց հիմա ավելի հաստատուն է դարձել: Իր չափումներից մեկում նույնիսկ Աստվածաշունչը պատմություն է՝ իր լուսավոր ու խավար դարաշրջաններով:

Մենք նստել ենք ցածր ապակե սեղանի շուրջը: Սեղանին մրգերով սկահակ է: Գավաթների նեղ շրջանակում՝ խնձորի հյութով սափոր: Ժան-Մարին խնդրում է պատասխանել իր համար կարևոր մի հարցի.

- Կա Կղզու կյանքն ու այդ կյանքի որոշ հանգամանքներ, որ հասկանալի են ինձ: Օրինակ, Իշխանությունը,- Ժան-Մարին վերցնում է գավաթներից մեկն ու դնում սեղանի կենտրոնում:- Իշխանությունն իրեն իրացնում է Պատմության մեջ:

Առաջին գավաթի կողքին հայտնվում է երկրորդը: Լեկլերը ձգվում է երրորդի ու չորրորդի ետևից:

- Կղզու պատմությունը ձգվում է Մարգարեի ու Պատմաբանի միջև: Եվ այս ամենը,- Ժան-Մարիի ձեռքը կախվում է գավաթների վրա,- գործում է որպես միասնական համակարգ: Ո՞րն է ձեր տեղը այդ համակարգում: Գիտեմ, որ այդ տեղը շատ մեծ է, բայց որտե՞ղ է:

Չնայած սպասքի տեղաշարժին, հարցը հասկանալի չէ ո՛չ ինձ, ո՛չ Պարֆենիին:

- Դուք ոչ մարգարե եք, ոչ պատմաբան, և վաղուց արդեն նաև Իշխանություն չեք. ո՞վ եք դուք,- Ժան-Մարին գավաթները դնում է տեղը:- Այս հարցի պատասխանը ֆիլմի բանալին է: Ձեզ ինչ եք զգում Կղզում: Պատմության մարմնավորո՞ւմ: Ձեր ժողովրդի ոգին: Պահապանն՞ր:

- Մարդիկ, որ ընդունվածից մի քիչ ավելի են ապրել,- ժպտում է Պարֆենին:

Լեկլերը հոգնած հետ է ընկնում աթոռի թիկնակին:

- Իսկ *ինչո՞ւ* եք այդքան երկար ապրում,- հարցնում է նա:- Կամ, ավելի շուտ, այսպես. *ինչի՞ համար* եք այդքան երկար ապրում: Չէ՞ որ չէիք կարող ձեզ չտալ այս հարցը: Տվել եք, չէ՞:

Պարֆենին տխուր նայում է Լեկլերին:

- Տվել ենք:

- Եվ որն է ձեր պատասխանը:

- Որ դրա մասին պետք է ավելի վերևներին հարցնել:

Վալդեմարի կառավարման տասներկուերորդ տարում Կղզում բարեփոխումներ սկսվեցին: Այդ բառի մեջ *փոխումն* առանձնացնելով՝ Պրեզիդենտը որոշեց սկսել համազգեստները փոխելուց: Նախկինում կապույտ զինվորական համազգեստը դարձավ կանաչ, կիրզայե սապոգների քառակուսի քթերին փոխարինեց մակույկաձևը, զինծառայողների կոճակների վրա հայտնվեց զորատեսակի նշանը, ուսադիրների աստղերը խոշորացրին, և թույլատրվեց պատվի առնել առանց գլխարկի:

Ոչ զինվորական ուսումնական հաստատություններում համազգետի գույնը, հակառակը, կանաչից փոխեցին կապույտի, աշակերտների գոտիների ճարմանդներին հայտնվեց պետության զինանիշը, իսկ աշակերտուհիների համար զգալիորեն փոփոխվեց գոգնոցների ձևվածքը:

Կառավարությանը մոտ լրատվամիջոցներն ընդգծում էին բարեփոխումների խորությունն ու անշրջելիությունը:

Սակայն վերափոխումները դրանով չսահմանափակվեցին:

Որոշվեց աջակողմյան երթևեկությունը դարձնել ձախակողմյան, ինչը հարուցեց ֆելդմարշալ Սերապիոնի անկեղծ անհանգստությունը: Նա զգուշացրեց, որ այդպիսի անմշակ բարեփոխումը բազում զոհերի պատճառ կդառնա: Ժողովրդի ծոցից ելած մարդը հիշեցնում էր ասացվածքը.

Գլուխը կտրելը՝ հեչ, դժվարը կպցնելն է:

Դժբախտաբար ասացվածքին ոչ ոք ականջ չդրեց: Ճանապարհային երթևեկությունը երկրում փոփոխեցին դրա մասին հայտարարելուց մեկ օր առաջ: Ճանապարհների գծանշումն էլ չհասցրին փոխել. հո բարեփոխումը չէին՞ հետաձգելու այդպիսի մանրուքի համար: Ինչպես և զգուշացրել էր Սերապիոնը՝ զոհեր եղան:

Ավարտական բարեփոխումը երկրում փոխնախագահի պաշտոն հաստատելն էր: Նորամուծությունը Վալդեմարին աներն էր հուշել՝ առաջարկելով այդ պաշտոնին նշանակել իր դստերն ու Վալդեմարի կնոջը՝ Սեսիլիային:

Պարֆենի

Այսօր երեկոյան մեզ Փարիզ զանգեց Ֆիլիպը: Լավ ձևավորում էր գտել հրատարակության համար՝ երանելի Իերոնիմը: Քարանձավ: Ձեռագրափաթեթ: Առյուծ: Այդ որմնանկարն ուղիղ Ագաֆոնի գերեզմանի վերևում է:

Մենք խոսում ենք բարձրախոսով:

- Ագաֆոնի գերեզմանի վերևո՞ւմ,- զարմացավ Քսենիան:- Ես հիշում եմ այդ որմնանկարը. հակառակ պատին է:

Ֆիլիպի ձայնի մեջ համբերատարություն է հայտնվում: Մանրամասն նկարագրում է որմնանկարի դիրքը: Չախ կցաշենք, տաճարի կրող պատը: Բայց: Քսենիային թվում է, որ Ագաֆոնը պետք է թաղված լինի աջ կցաշենքում: Նա համոզված է: Ու կարծում եմ, որ իրավացի է:

- Լավ, կձշտեմ,- կարճ ասում է Ֆիլիպը:

Գուցե և չի ճշտի. ձայնն այդպիսին է:

Նա զանգեց երկու ժամից: Հուզված է:

- Պատկերացնո՞ւմ եք, Ագաֆոնն իսկապես թաղված է եղել դիմացի պատի տակ: Տաճարը վերականգնելիս, Վլասի օրոք, տեղափոխել են: Վլասը ցանկացել էր մեղվի հուշարձան դնել տեղը: Հասկանո՞ւմ եք դա ինչ է նշանակում:

- Հասկանում եմ: Այն ձայնախորշերում չենք փնտրել:

- Ճիշտ այդպես: Պարզապես մշակույթի նախարարությունում վերահուղարկավորման մասին չէին հիշում:

Պարզ է, որ չեն հիշի: Ծա՛տ են զբաղված:

Վալդեմարն արագ հոգնեց բարեփոխումներից, ասենք պետության գործերն էլ ընդհանուր առմամբ նրան ավելի ու ավելի քիչ էին հետաքրքրում: Երեկոները *Կոլոմբոյի* սերիալն էր նայում և առողջության համար վտանգավոր չափերով գարեջուր խմում: Մի սերիայում Վալդեմարը զարմանքի արժանի ձեռնածություն տեսավ՝ գիլյոտինով:

Աճպարարը գլուխը դնում է շեղբի տակ, շեղբն ընկնում է, բայց չի վնասում պառկածին: Ամբողջ խնդիրը սողնակն է, որ գաղտնի տեղադրվում է գիլյոտինի վրա ու խանգարում շեղբի ընկնելուն: Ընկնում է դատարկ շրջանակը, բայց հանդիսատեսին թվում է՝ շեղբն ընկավ: Սերիալում այդ հնարքն օգտագործվում է աճպարարին սպանելու համար: Ծանոթանալով մեխանիզմի աշխատանքին՝ չարագործը քաշում է սողնակն, ու գիլյոտինը գործում է ըստ իր ուղղակի նշանակության:

Վալդեմարը կարգադրեց իր համար ճիշտ այդպիսի գիլյոտին պատրաստել և ջանադիր պարապում էր, որ նոր հնարքը ցուցադրի Կղզու օրվա տոնակատարություններին:

Բայց *Կոլոմբոյի* սերիալը միայն նա չէր նայում: Ինչպես հետագայում պարզվեց՝ անմիջապես Վալդեմարի ելույթից առաջ սողնակը հանվել էր անվտանգ դիրքից, և տոնախմբող հայրենակիցների աչքի առաջ Պրեզիդենտը կորցրեց գլուխը: Գլուխը գլորվեց տախ-

տակամածով, ու Սեսիլիան այն կանգնեցրեց գեղեցիկ ֆուտբոլային շարժումով:

Հաջորդ օրը տեղի ունեցավ Սահմանադրական դատարանի նիստ, որը հայտարարեց Պրեզիդենտի կողմից իր պարտականությունների կատարման անհնարինության մասին, որոնք օրենքի համաձայն դրվում էին փոխպրեզիդենտի վրա: Սահմանադրական դատարանը պետք է հաստատեր այդ անհնարինությունը:

Մեծ էկրանին հայտնվեցին նախօրեի իրադարձության լուսանկարները, և Դատարանի նախագահը ցուցափայտը սահեցրեց էկրանի վրայով: Հիշելով Սերապիոնի մռայլ առածը՝ դատավորը նկատեց, որ Պրեզիդենտի գլուխը մարմնին կպցնելն իսկապես անհնար է: Ըստ այդմ, պրեզիդենտական պարտականությունների կատարումն առանց գլխի համապատասխանաբար բացառվում էր: Այս դատողությունները դատավորին բերեցին եզրակացության, որ Վալդեմարը պետք է թողնի պաշտոնն ու լիազորությունները փոխանցի փոխպրեզիդենտին: Եզրափակելով՝ դատավորն իրեն թույլ տվեց կատակել՝ որ իշխանությունը, Վալդեմարի գլխի պես, ընկել է Սեսիլիայի ոտքերի տակ:

Զգալով, որ անկաշկանդ, համարյա մտերմական մթնոլորտ է տիրում, կատակեց նաև Սեսիլիան: Հայտնեց, որ հանգուցյալ ամուսինն իրականում վաղուց էր կորցրել գլուխը, բայց դա նրան չէր խանգարում կառավարել երկիրը:

Բայց, ասաց Սեսիլիան, եթե պնդում եք, պատրաստ եմ ընդունել իշխանությունը:

Դատավորը պնդում էր: Նա ներկաներին հիշեցրեց, որ մեկ տարվա ընթացքում երկրում պետք է անցկացվեն նոր պրեզիդենտական ընտրություններ: Իշխանության վակուում թույլ չտալու համար Սեսիլիան անհապաղ պետք է ստանձնի պաշտոնն ու զբաղվի ընտրությունների նախապատրաստությամբ: Համաձայնելով, որ վակուումից վատ բան չկա՝ Սեսիլիան ստանձնեց պրեզիդենտական լիազորությունները:

Պարֆենի

Գիշերվա մոտավորապես երեքին զանգում է Ֆիլիպը: Մարգարեությունը գտել են: Այնտեղ, որտեղ և ենթադրվում էր՝ Ագաֆոնի առաջին գերեզմանի վերևի ձայնախորշերից մեկում: Ֆիլիպը ներողություն է խնդրում, որ արթնացրեց: Ի՞նչ ներողություն...

Ես գոչում եմ.

- Ի՞նչ եք գտել:

Ֆիլիպը սկսում է կարդալ, բայց դժվարանում է: Խնդրում եմ լուսանկարել տեքստն ու ուղարկել հեռախոսիս: Հինգ րոպեից մարգարեությունը մեզ մոտ է:

Պարզվում է՝ փոքրիկ տեքստ է: Թուղթը հիմնավոր քայքայվել է, բայց մի քիչ ջանալով՝ գրվածը կարելի է կարդալ: Ձեռագիրը հաստատ Պրոկոպիինն է: Ոչ մի կասկած, որ դա Ագաֆոնի մարգարեությունն է: Չգիտեմ՝ քանի անգամ ենք վերընթերցում ես ու Քսենիան: Հիսո՞ւս: Հարյո՞ւր: Քննարկում ենք յուրաքանչյուր բառը: Բոլոր բառերը հասկանալի են: Բայց նույնը չի կարելի ասել ընդհանուր առմամբ մարգարեության մասին: Բերում եմ ամբողջությամբ.

Ագաֆոն Ապագայատեսի մարգարեությունը գալիք ժամանակների մասին

Ես՝ անարժան Ագաֆոնս, ուղղում եմ խոսքս մեր ժառանգներին: Խոսում եմ Կղզու վերահաս և գուցե վերջին ժամանակների մասին՝ հույսով, որ խոսքս կհայտնվի բարեպատեհ ժամի:

Բացվեք աշխարհին, և դա ի բարօրություն կլինի ձեզ: Բայց չէ՞ որ ասված է՝ կա գրկելու ժամանակ և կա գրկից հեռացնելու ժամանակ: Կհասնեն օրեր, երբ տկարություններ կպատեն ձեզ և բարիքն ի վնաս կդառնա, զի չեք ազատվի ձեր ախտերից, այլև նորերը կգտնեք:

Եվ կհեղեղեն Կղզին օտարները: Իսկ դուք կլինեք նրանց մեջ, իբրև ագռավը ավերակներին: Չարիքը, սակայն, օտարների չէ, այլ ձեր մեջ փնտրեք:

Չի կբազմանա անառակությունը և կչարանաք ու կսկսեք նեղել մեկմեկու: Եվ մեծ թշնամություն կծագի ձեր միջև, և եղբայրը ձեռք կբարձրացնի եղբոր, և որդին՝ հոր վրա:

Եվ հողը, մարդկանց չարկամությունն զգայելով, ինքն էլ կչարանա:

Փորձության ժամը կգա, երբ հայտնվի քարը, որն անհնար է կակղացնել ոչնչով, այծի արյունից բացի:

Եվ հողը կցնցվի, և կբռնկվի սև Ջուրը Հյուսիսում, և կհորդի վառվող ջուրը Հարավում:

Եվ մոխիր կտեղա երկնքից, և ձեր սրտերը մոխիր կդառնան:

Եվ չեք կարողանա փրկություն աղերսել Աստծուց, զի կդարձնի Իր դեմքը ձեզնից:

Եվ եթե չգտնվի ձեր մեջ երեք արդար, որ բարձրանան Լեռն ու խոսեն Նրա հետ, կկենաք ծխի ու խավարի մեջ:

Գլուխ քսաներկուերորդ
ՍԵՍԻԼԻԱ

Սեսիլիայի կառավարման տարում Կղզին պատրաստվում էր ընտրությունների: Արդեն երկրորդ ընտրություններն էին երկրում, և կղզիաբնակներն արդեն որոշ փորձ ունեին: Փորձը հուշում էր, որ ընտրություններն անկասկած ազդում են կյանքի ընթացքի վրա, բայց այդ ազդեցությունն իր սահմաններն ունի: Ավելի ստույգ, ընտրությունները որոշում են Պրեզիդենտի անունը, բայց ոչ նրա որոշումները: Առավել խորաթափանց քաղաքացիները նույնիսկ պնդում էին, որ ընտրություններում հաղթած Պրեզիդենտն անում է այն, ինչ կաներ ցանկացած չհաղթող, եթե նրան վիճակվեր հաղթել: Ոմանք հիշում էին անմոռանալի եպիսկոպոս Գերոնտիի պատմությունը ագռավի ու պանրի մասին, բայց այդպիսի հիշողություններն անհարկի և նույնիսկ վնասակար ճանաչվեցին:

Պրեզիդենտի պարտականությունների կատարումը քիչ բան փոխեց Սեսիլիայի կյանքում: Առաջվա պես ձիավարում էր և ազատ ժամանակն անցկացնում Սոզոնտի հետ՝ ընդ որում, իր ողջ ժամանակն ազատ դիտելով: Ընտրությունների նախապատրաստությամբ զբաղվում էին հոր՝ Կղզի ուղարկած մարդիկ: Անհրաժեշտության դեպքում նրանք Սեսիլիայի ներկայությամբ ստորագրում էին այս կամ այն թուղթը՝ նրան չծանրաբեռնելով ավելորդ մանրամասներով ու բացատրություններով: Միայն մի անգամ նա հարցրեց, թե ով է լինելու Պրեզիդենտը: Լսելով, որ ամենայն հավանականությամբ՝ Սոզոնտը, Սեսիլիան ծափ զարկեց և այլևս հարցեր չէր տալիս:

Նրան մի քիչ վշտացնում էր, որ Սոզոնտը հաճախ գնում է ընտ-

րողների հետ հանդիպումների՝ դրանով շեղվելով ծիավարության համատեղ պարապմունքներից: Բայց Սեսիլիային բացատրեցին, որ բացակայությունները ժամանակավոր են, և երբ Սոզոնտը դառնա Պրեզիդենտ, նախկին անդորրը կվերադառնա նրանց կյանք:

Հարկ է նկատել, որ այդ ուղևորությունները չէին ուրախացնում նաև Սոզոնտին, որն առաջին ժամանակները քաշվում էր ելույթ ունենալ: Սակավախոս մարդ էր և նախկին կյանքում զրուցել էր գերազանցապես ձիերի հետ: Բառարանային պաշարը մեծ չէր, քանզի ձիերինն էլ մեծ չէ, ու սահմանափակվում էր զուտ գլխավոր հրահանգներով: Բայց քանի որ հրահանգները կարևոր էին նաև պրեզիդենտական պարտականությունները կատարելու համար, Մայրցամաքից ուղարկված մարդիկ Սոզոնտին անհոյս չէին համարում: Ի վերջո գործը կարգի ընկավ, ու լեզուն կամաց-կամաց բացվեց:

Պարզվեց, որ Սոզոնտը լավ հիշողություն ունի, այնպես որ, առանց դժվարության անգիր էր անում նախընտրական ելույթները, ինչպես և հաճախակի հնչող հարցերի պատասխանները: Հանդիպումներին ներկա օգնականները միշտ կարող էին օգնության հասնել. այդպես էր լինում, երբ հարցերը վերաբերում էին մանրամասներին: Նման դեպքերում նա պարզում էր ձեռքը, ասես ձիուն զսպելով, և ասում, որ նման բաներն ավելի լավ գիտեն իր օգնականները: Բոլորին հասկանալի էր, որ այդ մարդը մտածում է մեծ չափումներով, իսկ մանրուքների վսեմաշուք չիմացությունն ընտրողների աչքին նրան բարձրացնում էր առօրեականությունից:

Պարֆենի

Այսօր գնացինք նկարահանման հրապարակ: Նկարվում է այն դրվագը, երբ իշխան Ավերկին՝ Քսենիայի հորեղբայրը, փորձում է փոխել կնոջս: Տաճարի բեմանկարներ, մոմերի առկայծում, օդում տարածված լարվածություն: Հորեղբայրն ինձ շատ դուր եկավ. ոգեշունչ բանսարկու: Անխառն չարիք: Ցանկանում է Քսենիայի փոխա-

րեն գահին նստեցնել իր աղջկան: Հորեղբա՛յր է կոչվում...

Ինձ խաղացող դերասանն էլ լավն է. հուզված է (քրտինքը դուրս է տվել ճակատին), պատրաստ վճռական գործողությունների: Մատի շարժումով մոտ է կանչում պահակախմբի պետին: Կիսաշարժումով: Նույնիսկ մոտ չի կանչում. միայն մտածում է կանչել, ու պետն արդեն կողքին է: Դուրս գալիս բռնել հորեղբորը: Կարելի է նաև աղջկան. ադպես ավելի հուսալի է:

Տեսախցիկը սահում է տաճարի պատի վրայով: Գեորգիի և օձի հրաշքը: Օձը: Խոշոր պլանով՝ Ավերկին՝ օձը:

Ամեն ինչ հանգուցալուծվում է առանց պահակախմբի միջամտության. չէր կարող չլուծվել: Իմ ու Քսենիայի սիրո ուժով:

Այդ նույն օրերին տեղի ունեցավ նաև Սոզոնտի ու Սեսիլիայի պսակադրությունը: Հարսանիքն աչքի էր ընկնում ճոխությամբ ու հրավիրյալների մեծ թվով: Հանդիսությունը կազմակերպել էին այն նույն մարդիկ, որոնք զբաղվում էին փեսացուի նախընտրական արշավով: Նորապսակների կառքին տասներկու սպիտակ ձի էր լծված, որոնք ըստ կազմակերպիչների մտահղացման խորհրդանշում էին ողջախոհությունն ու պսակվողների հավատարմությունն ընտանեկան արժեքներին:

Ձիեր էին տրամադրվել նաև հյուրերին, ինչը որոշ շփոթմունք հարուցեց նրանց շարքերում, քանզի բոլորը չէ, որ կարողանում էին ձի քշել: Բայց Սոզոնտն ու Սեսիլիան ցանկանում էին անպայման հրավիրյալների համար բացահայտել ձիավարման հրճվանքը, որը շատերի համար վերածվեց տխրության:

Ծանրամարմին ու անդյուրաշարժ հյուրերը ժողովրդի մեծ բազմության ներկայությամբ իրենց նժույգերի վրա բարձրանալու անհաջող փորձեր էին անում: Հանդիսատեսներն անմիջապես շրջապատեցին նրանց: Ձիուց ձախ կանգնածները բարձրացնում էին հեծյալին ու ոտքը դնում ասպանդակի մեջ, այն ժամանակ, երբ աջից կանգնածները բռնում էին ձեռքերն ու քաշում թամբին: Համատարած քրքիջի ներքո նրանց *նստահյուրեր* կնքեցին: Արդեն թամբի վրա՝ այդ հեծելակները շարժվում էին հարսանեկան թափո-

րի մեջ. դեմքերը լարված էին ու նույն դեմքերով էլ ժամանակ առ ժամանակ սահում էին թամբից:

Հարսանյաց հանդեսը մասնակից ձիերի թվով գերազանցեց բոլոր նախորդներին և անմիջապես ստացավ *ձիու հարսանիք* անվանումը:

Քսենիա

Մարգարեությունը գտնելու գիշերը ես ու Պարֆենին այլևս աչք չփակեցինք: Մի քանի դար շարունակ կորսված համարվողը հայտնվել էր աշխարհին: Մենք կարդում ու կարդում ենք ու ոչ մի կերպ չենք կարողանում կանգ առնել:

Ագաֆոնը հույս ունի, որ մարգարեությունը կհայտնվի բարեպատեհ ժամանակին:

Այդպիսի մարդու հույսը հաստատուն է ցանկացած գիտելիքից: Դրանից հետևում է, որ ուղերձը հասցեագրված է այսօրվաններիս, և ամենը, որ այնտեղ ասվում է, պետք է կատարվի տեսանելի ապագայում:

Սարսափելի է:

Առավոտյան փարիզյան թերթերը լույս են տեսնում մարգարեության մասին հաղորդագրությամբ: Ընդամենը մի տող, բայց խոստանում են, որ մանրամասները կհետևեն: Կղզու վերաբերյալ Փարիզում աղոտ պատկերացում ունեն, բայց մարգարեության մասին գիտեն բոլորը: Դրա մասին շատ է գրվել. այստեղ սիրում են պատմական հանելուկներ:

Համարյա բոլոր թերթերում հիշատակում կա, որ ես ու Պարֆենին Փարիզում ենք և անկասկած կպարզաբանենք իրավիճակը: Մեզ է զանգում հյուրանոցի տնօրենն ու հայտնում, որ նախասրահում արդեն լրագրողների բազմություն է հավաքվել: Ի՞նչ կկամենանք:

Կկամենանք ոչ մեկին չտեսնել: Առայժմ ի վիճակի չենք որևէ բան մեկնաբանել: Տնօրենը խոստանում է անվտանգության ծառայություն նշանակել մեր համարի մոտ:

Մեկ ժամից գալիս է Ժան-Մարին: Խնդրում եք, որ ներս թողնեն: Ռեժիսորը ոգևորված է: Դեռ երբեք ապագա ֆիլմն այդպիսի գովազդ չի ունեցել:

- Արդեն ֆրանսերեն կարդացել եմ մարգարեությունը,- ասում է նա,- բայց ամեն ինչ չեմ հասկացել: Գուցե թարգմանության առանձնահատկությո՞ւնն է:

- Բնագրի առանձնահատկությունն է,- պատասխանում է Պարֆենին:

Մարգարեությունն ինձ ու Պարֆենիին հասկանալի է, կամ համարյա հասկանալի է: Անհասկանալի համարում ենք այն, ինչին չենք ուզում հավատալ: Մեզ թվում է՝ եթե տող առ տող մեկնաբանենք, այդ ամենը կկատարվի: Ազնվորեն ասում ենք Ժան-Մարիին: Գլխով է անում: Կփորձի ամեն ինչ ինքնուրույն հասկանալ: Վեր է կենում ու հրաժեշտ տալիս:

- Բայց չէ՞ որ Նրա հետ խոսակցությունը Կղզու արդարացման փորձ է,- ասում է Լեկլերը:- Եթե չեք առարկում, խոսակցությունը եզրափակիչ տեսարան կդարձնեմ:

Պարֆենին ուշադիր նայում է ռեժիսորին:

- Այո՛, այդ տեսարանը միանգամայն կարող է եզրափակիչ լինել:

Լեկլերը դռան մոտ շրջվում է.

- Ես կասեի, որ Կղզու արդարացումը դուք եք:

Անհետանում է:

Ինչպես նախորդ ընտրություններին, դեպի Կղզին ձգվեցին Սոզոնտի նկարներով նավերը: Դիմանկարներն ընդգծում էին թեկնածուի աշխատասիրությունը, անսահման ազնվությունը, նույնքան անսահման սերը երեխաների ու ձիերի հանդեպ:

Այս անգամ թատրոնում ու գրադարանում արված նկարներ չկային, փոխարենը՝ ձիերի ներկայությունը բազմազան էր. թեկնածուին մեջքներին առած՝ հաղթահարում էին արգելապատերը, քայլում էին սանձի տակ և նույնիսկ ծառս լինում՝ զորեղ հեծյալին ցած գցելու անզոր ցանկությամբ: Հեծյալի լուսանկարները,- կատաղած ձիու

վրա, ասպանդակներին կանգնած ու ձեռքը առաջ պարզած,- կարծես արդեն պատկերում էին ոչ թե ձիավարության ուսուցչի, այլ կայսեր հուշարձան, քանզի բոլոր կայսրերը հենց այդպես էին արշավում, և ձիերը նրանց տակ նախընտրում էին տեղաշարժվել երկու ոտքի վրա: Առաջ պարզած ձեռքը խոստանում էր ոչ միայն ձիու հնազանդեցում, այլև բոլոր նրանց, որոնց չարաշահումները կանգնում են առաջադիմության ճանապարհին:

Թեկնածուների և նրանց տարատեսակ ունակությունների ողջ բազմազանությամբ հանդերձ՝ ձի նստելու ունակությամբ ոչ ոք չէր կարող համեմատվել Սոզոնտի հետ: Հպարտ կեցվածքը, քանդակեն կիսադեմն ու բնատուր սակավախոսությունը նրան արագորեն արժանացրին ժողովրդի սիրուն:

Սկզբում մայրցամաքային օգնականները Սոզոնտին ստիպում էին անգիր անել երկարաշունչ ճառերը, բայց հասկանալով, որ նրա ուժը սակավախոսության մեջ է, սկսեցին ելույթները կարճ գրել, զնգուն դարձվածքներով, որոնք նման էին ձիամարզարանում տրվող հրամաններին:

Գեղջկական ընտանիքում մեծացած Սոզոնտը ամենից առաջ ձգում էր գյուղացիությանը, որը կղզու բնակչության մեծամասնությունն էր: Երբ դա պարզ դարձավ, երկրով մեկ սկսեցին փակցնել Սոզոնտի լուսանկարները՝ շեղոձիք վերնաշապիկով ու յուղած սապոգներով: Նա թփթփացնում էր ձիերի բաշերը, լծում խոտ բարձած սայլերին, երբեմն էլ պարզապես զրուցում նրանց հետ՝ բարի ու սրտանց:

Նախանձ մրցակիցներն ասում էին, թե նույն հաջողությամբ կարելի է պրեզիդենտ ընտրել ձիուն, բայց դա էլ չվանեց ընտրողներին: Նրանք հիշում էին, թե ինչպես էր հեռավոր ժամանակներում երկիրը ղեկավարում Մեղուների Տիրակալը, և հիմա դա ամենավատ ժամանակը չէին համարում: Ընտրությունների օրն արդեն ակնհայտ էր, որ Կղզու հաջորդ Պրեզիդենտ կդառնա Սոզոնտը:

Եվ դարձավ:

Քսենիա

Ժան-Մարին հարցրեց.

- Ինչպե՞ս էիք ապրում հորաքրոջ մոտ, Ծովեզերքի տանը:

Պատասխանում եմ.

- Ընդարձակ քարաշեն տուն էր. այդ կողմերում քար էին կտրում: Դրա համար էլ Ծովեզերքի տները մինչ օրս կանգուն են, այն դեպքում, երբ Քաղաքի շատ մասեր, գերազանցապես փայտաշեն, չեն պահպանվել:

Ձմռանը սիրում էի մտնել խոհանոց ու նայել, թե կրակից կարմրտակած խոհարարուհին ինչպես է ճաշ եփում: Հիշում եմ նրա հաստլիկ, մինչև արմունկները մերկ ձեռքերը: Խոհարարուհին անծայրածիր էր և իրենով լցնում էր ընդհանուր առմամբ ոչ մեծ խոհանոցը: Նրա կանգնած տեղում հատակի տախտակները ճկվել էին, բայց այդտեղից ձեռքը կարողանում էր հասցնել ցանկացած իրի, որ ուզում էր վերցնել: Ձեռքերը միակն էին, որ կենդանացնում էին նրա անշարժությունը:

Ես նստում էի փոքրիկ աթոռակին ու մեջքով հեվում վառարանին: Երբեմն հենց այդտեղ էլ քնում էի և արթնանում արդեն իմ սենյակում. այդ ձեռքերն էին ինձ տանում:

Հորաքույր Կլավդիան սիրում էր խոհարարուհուն: Արդեն այն ժամանակ փխրուն չէր հորաքույրս, և հնարավոր է նրան դուր էր գալիս խոհարարուհու հետ համաչափելի լինելը: Մյուսների մեջ նախ և առաջ սեփական արտացոլումն են գնահատում:

Տանն, իհարկե, նաև նիհար սպասակազմ էր շարժվում: Նիհարների շարժումները հապճեպ են, անհամոզիչ և հաճախ՝ աննպատակ: Հորաքույր Կլավդիան գիտեր, որ եթե խոհարարուհին որևէ տեղ գնում է, ուրեմն դրա համար ծանրակշիռ հիմքեր ունի: Իսկ մնացած ծառայանին հետուառաջ էր անում տանը, ինչ-որ բան շարժում տեղից տեղ: Չեմ բացառում, որ այդ տեղաշարժը միշտ չէր գիտակցական, բայց միշտ բարյացակամ էր:

Իմ կողքով անցնելիս այդ մարդիկ շոյում էին մազերս կամ, պպզելով, ինչ-որ բան հարցնում: Երբեմն քաղցրավենիք էին հյուրասի-

րում: Կոչում էին Ձերդ Բարձր Պայծառափայլություն: Եթե Պայծառափայլությունը համապատասխան էր թվում արտաքինիս, ապա Բարձրից կարմրում էի: Այդպիսի դիմելաձևն ինձ կանխավարձ էր թվում. շատ էի ուզում բարձրահասակ լինել:

Ապագայում ինձ այդպես բարձր էր տեսնվում նաև Պարֆենին: Իմ մանկական երազանքներում մենք կանգած էինք երկու նրբիրան, իրար ձգվող ձառերի պես: Դիպչում էինք ճակատներով, միահյուսվում ձեռքերով: Մեր արանքում փոքրամարմին ու հաստլիկ հորաքույրն էր: Այդ կամարի տակ նա մեկ իմ կողմն էր դառնում, մեկ Պարֆենիի՝ ինչպես կծուձը բրուտի ճախարակին: Իսկ մենք Կլավդիային մոռացած նայում էինք իրար աչքերի:

Ամռանը Պարֆենիին բերեցին հորաքրոջ տուն: Հիմիկվա լողափն այն ժամանակ ամայի ավազե տարածք էր: Հիմիկվա մահճակների ու ծածկերի արանքով տեսնում եմ այն ժամանակվա ափն ու մեզ՝ զբոսնողներիս: Այնտեղ, ուր ալիքներն արդեն չեն հասնում, կառուցում ենք մեր դղյակները, և դրանք բոլորը նման են իշխանական Պալատին: Ալիքների սահմանը շարժական է, և տարերքն ի վերջո ավերում է դղյակները: Որոշ ժամանակ դեռ կանգնած են որպես տրորված ավազե ավերակներ, բայց հետո դա էլ է չքանում:

Հիմա շատ են ավազե դղյակները: Ու շինարարներն են շատ. իրենց կառույցների վրա կռացած (ողնաշարի փխրուն գիծը) ու բադիկի պես ծնկածալ դրանց շուրջը պտտվող: Ասենք, երեկոյան վեցից հետո այստեղ էլ ամայի է: Լողափը բոլոր առումներով ժամանակավոր երևույթ է:

Երեկոյան նստում ենք խաղողի վազերով պատատված տաղավարում: Տաք կաթ ենք խմում՝ մեղրով, ու լսում դայակների ծորուն պատմությունները: Դրանք անվերջանալի են ու շարունակում են իրար: Իսկ մենք, ուրեմն, նստած ենք իրար ձեռք բռնած ու, մեկմեկու համար ստեղծված, մեզ երջանիկ ենք զգում: Արդեն այն ժամանակ գիտեինք, որ դա երջանկությունն է: Ու չգիտես ինչու կռահում էինք, որ այդպես երջանիկ այլևս չենք զգա:

Գլուխ քսաներեքերորդ
ՍՈԶՈՆՏ

Սոզոնտի կառավարման առաջին տարին համընկավ արևելյան օրացույցով Ձիու տարուն: Արևելյան օրացույցի մասին առաջ Կղզում ոչ ոք չգիտեր: Բայց Սոզոնտին գիտենալով՝ բոլորը հասկանում էին, որ այդ տարին չէր կարող այլ լինել:

Այդպիսի օրացուցային երևույթը Պրեզիդենտը որոշեց նշել մինչ այդ չտեսնված թափով՝ Կղզում Միջազգային ձիախաղեր հիմնեց, որոնք կոչված էին հավաքելու եթե ոչ աշխարհի բոլոր հեծելակներին, ապա առնվազն նրանց զգալի մասին: Իրադարձության նախապատրաստմանն էին ուղղվել Կղզու բոլոր դրամական միջոցներն ու մարդկային ուժերը: Երկրում սկսեցին տասնյակ ձիասպարեզներ կառուցվել, իսկ մայրաքաղաքում ամենասեղմ ժամկետներում բացվեց հսկա ձիարշավարանը:

Չնայած շուրջօրյա աշխատանքին, հենց սկզբից պարզ էր, որ խաղերը Ձիու տարում անցկացնել չի հաջողվի: Եվ այդ ժամանակ պրեզիդենտական հրամանագրով առաջիկա տասնամյակը հայտարարվեց Ձիու տասնամյակ: Շինարարներին այդուհետ ոչինչ չէր սահմանափակում բացի, Պրեզիդենտի անհամբերությունից, որը չափազանց մեծ էր:

Սոզոնտը առավոտն սկսում էր շինհրապարակների և շինարարության հետ կապված արտադրությունների շրջայցից: Ու դրանով էր զբաղվում նաև օրվա մնացած մասը: Ձիուն առնչվող ամեն ինչ անասելի հաճույք էր պատճառում Սոզոնտին: Ամեն ինչի մեջ ձիու ներկայություն էր տեսնում, և հարցախույզ միտքն այն կռահում էր նույնիսկ ոչ ակնհայտում:

Այսպես, երկաթբետոնե շինանյութեր արտադրող գործարան այցի ժամանակ Սոզոնտի աչքին ընկավ տարեց հաշվապահ Ֆիրսը: Ֆիրսը կարճահասակ էր ու ծռոտն: Գործարանի տնօրենի ելույթն ընդհատելով՝ Պրեզիդենտը մոտեցավ հաշվապահին ու հարցրեց.

Հեծելազորայի՞ն ես:

Կիսակույր Ֆիրսը, մաշված թևնոցները շտկելով, պատասխանեց.

Ճիշտ այդպես:

Ու շխկացրեց կրունկները:

Հետևի շարքերից զուսպ ծիծաղ լսվեց: Բոլորը գիտեին, որ այդ մարդը տարբեր ժամանակներում բազում զբաղմունքներ էր փորձել, նույնիսկ կոնյակի սպիրտի առաքիչ էր եղել: Իսկ ազատ ժամանակ տրվում էր թղթախաղի և արժեթղթեր կեղծում: Հեծելազորը երևի միակ ուղին էր, ուր Ֆիրսը ոտք չէր դրել:

Պրեզիդենտը շատ գոհ մնաց Ֆիրսի հետ կարճ շփումից ու նկատեց, որ *երկաթբետոնե իրերի պատրաստման գործում առաջատար դեր պիտի խաղա հեծելազորը:* Կղզու հին ավանդույթով՝ Պրեզիդենտի այդ դիտողությունը նույն օրն իսկ կախվեց գործարանի դարպասի գլխին:

Մեկ շաբաթ անց հաշվապահը հրավիրվեց պրեզիդենտական Պալատ, որտեղ նրան շնորհեցին Կղզու արիության շքանշան և անհատական թոշակ նշանակեցին: Հանդիսավոր բանկետին գինովցած շքանշանակիրն անսպասելիորեն սկսեց պատմել կոնյակի սպիրտի երկաթուղային փոխադրման առանձնահատկությունների մասին: Նրա ասելով՝ կաղնեփայտե տակառներում ոչ մեծ անցքեր էին արվում ու խողովակով քաշում սպիրտը: Հետո անցքերը փակում էին տաշեղով ու վրայից կավ քսում: Կայարաններում տակառներն առատորեն ջրում էին, ինչից դրանք ուռչում ու ծանրանում էին: Դա թույլ էր տալիս նախնական քաշով տեղ հասցնել սպիրտը:

Հանդիսության հյուրերի դեմքերը քիչ-քիչ ձգվում էին, քանի որ բոլորին չէր հասկանալի, թե ինչի կապակցությամբ է այդ պատմությունը: Բարեբախտաբար պարգևատրվածի պատմության ընթաց-

քում Սոզոնտը տարված էր զրույցով: Ավարտելով՝ Պրեզիդենտը հարցրեց՝ Ֆիրսը անձնական խնդրանքներ չունի՞: Ծքանշանակիրը, որն այդ ընթացքում հասցրել էր մի քիչ սթափվել, խնդրեց երկրում օղու-լիկյորի բեռների հեծյալ ուղեկցորդում մտցնել: Խնդրանքն անհապաղ բավարարվեց:

Սոզոնտի կառավարման չորրորդ տարում Կղզում Միջազգային ձիախաղեր անցկացվեցին: Աշխարհի բոլոր անկյուններից ժամանեցին հիսուն հազար հեծելակներ: Տասն օր շարունակ նրանք հանդիսատեսին էին ներկայացնում իրենց արվեստը: Խաղերի փակման հանդիսությանը հայտարարվեց, որ հիսուն հազար մասնակիցներից ցանկացածը կարող է մնալ Կղզում և արժանավոր դրամական ու մթերային բավարարում ստանալ՝ փողով ու անասնակերով:

Խաղերի մասնակիցները գերազանցապես այնպիսի վայրերից էին, որտեղ չէր բավականացնում ո՛չ փողը, ո՛չ անասնակերը, այնպես որ, հիսուն հազարն էլ համաձանեցին մնալ և գրանցման ընթացքում տարօրինակ կերպով բազմացան՝ հասնելով յոթանասուն հազարի: Նշված անձանցից *հեծելազորային արագ արձագանքման* ջոկատ կազմավորվեց:

Բայց շատ շուտով ջոկատն սկսեց դժվարությունների հանդիպել տեղի բնակչության հետ: Պատճառն այն էր, որ հեծելակներին ճշգրիտ հրահանգված չէր, թե հատկապես ինչին պիտի արձագանքեն: Մյուս կողմից, նրանց վերաբերմունքը կղզիաբնակների, հատկապես կղզիաբնակուհիների հանդեպ, դժգոհություն հարուցեց Կղզում: Բնակիչներից շատերը պահանջում էին խստորեն պատժել հեծելակներին:

Ես՝ մեղավորս, վախենում եմ, որ դա ոչ մի լավ բանի չի բերի: Նույն տարածության մեջ քեզ հետ ապրողի ճնշումը կործանարար է նախ և առաջ ճնշողի համար, որովհետև հենց նրան էլ քայքայում է: Ինչպես ասում է կղզիաբնակների առածը՝ վիշապի դեմ պայքարելով՝ ինքդ ես վիշապ դառնում: Ոմանք կարող են հարցնել. իսկ ո՞րն է ելքը:

Ես այդ հարցի պատասխանը չունեմ: Գուցե և ելք չկա:

Ի՞նչն է ժողովուրդների տեղաշարժի պատճառ դառնում: Ի՞նչն էր նրանց մեծ գաղթի պատճառը IV–II դարերում: Կենսական տարածության փնտրտո՞ւքը: Շարժման բնազդական ձգտո՞ւմը: Հետաքրքրասիրությո՞ւնը: Ալեքսանդր Մակեդոնացին իր զորքով հասավ Հնդկաստան՝ *ցանկանալով տեսնել աշխարհի ծայրը,* բայց այդ բացատրությունն ինձ միշտ անհամոզիչ է թվացել: Իսկ հիմա, ժողովողին նմանվելով՝ ենթադրեմ, որ կա քո երկրում մնալու ժամանակ և կա ուրիշ երկիր գնալու ժամանակ: Օրինակ՝ մեր երկիր:

Պարֆենի

Ժան-Մարին ուզում է ավելի շատ իմանալ իմ ու Քսենիայի հարաբերությունների բնույթի մասին:

- Ի՞նչ հարաբերություններ կարող են լինել,- հարցնում եմ,- ամբողջի երկու մասերի միջև:

Լեկլերի համար դժվար է պատկերացնել, թե որքան կարող են սերտաձել երկու մարդ երեք հարյուր տարվա ընթացքում: Կարող են նույնիսկ ավելի կարճ ժամանակում: Մենք միատեսակ ենք մտածում, միատեսակ արձագանքում: Եթե պետք է, մեկս մյուսի փոխարեն պատասխանում ենք նամակներին, քանզի չկան այնպիսի իրավիճակներ, որ միասին չհաղթահարենք: Եվ ընդհանրապես, չկան այնպիսի իրավիճակներ, որ չհաղթահարենք:

Ամուսնական զույգերը միայն տարբեր մանկություն են ունենում, բայց մեր դեպքում այստեղ էլ ամեն ինչ այլ է: Հանգամանքների բերումով կոչված մեր դժբախտ երկիրը միավորելուն՝ մենք նույնիսկ մանկությունն ենք անցկացրել սերտ շփման մեջ: Իսկ այն հազվագյուտ պահերը, երբ առանձին էինք, վաղուց գիտենք մեկմեկու պատմություններով:

Մենք ոչ միայն մտածում՝ միատեսակ էլ զգում ենք: Ինձ թվում է՝ եթե հակառակ մեր երազանքին, մեզնից մեկը ավելի շուտ հեռանա, մնացողը աչքեր ու ականջներ կդառնա նրա համար, այնպես

որ, հեռացածն իր եթերային բնակության վայրից առաջվա պես կկարողանա տեսնել ամառային տաք օրն ու խոտերի խոհուն ծփանքը:

Սոզոնտի հինգերորդ տարում կղզում երկրաշարժագետներ հայտնվեցին Մեծ երկրից: Ուսումնասիրելով Կղզու Հարավում գտնվող Լեռը՝ նրանք հայտարարեցին, որ հրաբուխը կարող է արթնանալ: Երկրաշարժագետները դիմեցին Լեռան շրջակա գյուղերի բնակիչներին և կոչ արեցին հնարավորության դեպքում բնակության ուրիշ վայր գտնել: Այդպիսի հնարավորություն բնակիչները, բնականաբար, չունեին:

Երկրաշարժագետները հայտարարությունն արեցին լուսաբացին, երբ լքում էին Լեռը, այնպես որ, շրջակայքի բնակիչներն ինչպես հարկն է չարձագանքեցին արթնացող հրաբուխի մասին նորությանը, քանի որ իրենք էլ նոր-նոր էին արթնանում: Երկրաշարժագետների ասածի մեջ, ըստ էության, ոչ մի նոր բան չկար, քանի որ այդպիսի նախազգուշացումներ Կղզում առաջ էլ էին հնչել: Իսկ երկրաշարժագետները մեկնեցին արևելյան ուղղությամբ՝ հետագա ուսումնասիրությունների համար:

Այդ երկրաշարժագետների հետ կապված որոշ անհստակություն կար: Ոմանք ասում էին, որ նրանց տեսել են Կղզու արևելյան մասում՝ ամայի, հարթավայրային ու երկրաշարժի սպառնալիքներից զերծ շրջանում: Մյուսները պնդում էին, թե ժամանածներն ընդհանրապես երկրաշարժագետներ չեն, այլ երկրաբաններ, ու Լեռը միայն ինչ-որ այլ նպատակների քողարկում է: Քանի որ ոչ ոք չէր կարող ասել, թե ինչ նպատակներ էին, մեղադրանքն անապացույց համարեցին ու մոռացան երկրաշարժագետների մասին:

Սոզոնտի կառավարման վեցերորդ տարում Մայրցամաքային նավթային ընկերության նախագահ Բրանդը կղզու պետությունից գնեց հենց այն հողերը, որտեղ տեսել էին երկրաշարժագետներին: Հողերը չնչին գնով առան, իսկ երբ գնորդին հարցրին, թե ինչին է պետք այդ անապատը, ասաց, որ մենություն է փնտրում: Եվ չնայած

վերոնշյալ Բրանդը երբեք մենության հակում չէր դրսևորել, պատասխանը հարգանք հարուցեց:

Բրանդը սկսեց աջակցության բազմաթիվ նամակներ ստանալ: Գտնվեցին բարեպաշտ մարդիկ, որոնք պատրաստակամություն էին հայտնում իրենց ճգնարանները հիմնել եղբայր Բրանդի մենաստանից մեկ օրվա անցման սահմաններում: Մի կողմից դա աջակցություն էր անապատականին, մյուս կողմից, նոր ճգնարանների հեռավորությունը նկատի ունենալով, չէր խանգարի նրա մենությանը: Կային նաև այնպիսիք, որ անապատականին օգնություն էին առաջարկում տաճարի կառուցման գործում, քանզի նույնիսկ ճգնավորը խոստովանության և հաղորդության կարիք ունի:

Սակայն պարզվեց, որ եկվոր անապատականը նման բաների կարիք չունի: Պարզվեց, որ նրա մենաստանը ժամանակակից շինությունների համալիր է՝ նախատեսված ալմաստների արդյունահանման ու երեսակման համար: Ասենք, դա էլ ոչ թե Բրանդն էր անելու, այլ ալմաստի հանքերի մեծաթիվ աշխատողները:

Հողի գնումն ու, գլխավորը, դրա հիմնավորումը Բրանդի ու Սոզոնտի լուրջ սխալն էր, եթե, իհարկե, ընդունենք, որ Սոզոնտը մասնակցել էր որոշում ընդունելուն: Այն, որ Բրենդը, պարզվում է, մենության չէր ձգտում, չգիտես ինչու առանձնակի վիրավորեց կղզիաբնակներին: Գուցե այն պատճառով, որ ցանկացած կղզի մենություն է, և այդ կարգի բացատրությունները նման վայրերում առանձնակի համակրությամբ են ընդունվում:

Բրանդը լրջորեն անհանգստացած էր, որովհետև հաջորդ տարի Կղզում պետք է կայանային Պրեզիդենտի հերթական ընտրությունները: Նա փորձեց կատակ ներկայացնել ճգնավորության մասին ասածը, բայց դա միայն սրեց վիճակը, որովհետև Կղզում նման բաներով չէին կատակում: Իսկ Սոզոնտը ոչ մի բացատրություն էլ չտվեց, և նրա քչախոսությունը հասավ մինչ այդ չտեսնված չափերի:

Սահմանված ժամանակին Կղզում սկսվեց քարոզարշավը: Անսպասելիորեն Սոզոնտի գլխավոր հակառակորդ դարձավ Վարվա-

ռան: Արտաքին թշնամին, որին նա տեսնում էր օտարերկրյա ընկերությունների մեջ, ավելի վտանգավոր էր թվում նրանցից, ում կոչում էր *հյուսիսային հարևաններ:* Վարվառայի մեջ կատարված փոփոխությունը զարմացրեց և՛ Հյուսիսին, և՛ Հարավին, բայց նրա հմայքն այնքան մեծ էր, որ շուտով կարողացավ բոլորին համոզել, որ իրավացի է:

Իսկ երբ հերթական անգամ դեպի Կղզին ձգվեցին գլխավոր թեկնածուի նկարներով բարձված նավերը, նրանց արգելեցին կառանվել նավահանգստում: Ու չնայած երկար բանակցություններից հետո նավերն այնուամենայնիվ կառանվեցին, Սոզոնտը դրանից ոչինչ չշահեց. բոլոր նկարները հայտնվեցին Վարվառայի կողմնակիցների ձեռքին: Ինչպես և ենթադրվում էր, պատկերները փակցվեցին ամենատեսանելի տեղերում, բայց դրանց տեսքը ուրախություն չպատճառեց Սոզոնտին, քանի որ իրենցից տարատեսակ կոլաժներ էին ներկայացնում:

Այսպես, բոլոր ձիավոր պատկերներից կտրել-հանել էին բուն թեկնածուին, իսկ գլուխը սոսնձել ձիու գլխի տեղը: Ձիու մարմնին կցված Սոզոնտի գլուխն իսկապես էլ փոքր-ինչ ձիանման էր դարձել: Թավ բաշը, զորեղ ծնոտը, և գլխավորը՝ ժպիտով բացված խոշոր ատամները կասկած չէին թողնում թեկնածուի իրական ծագումնաբանության վերաբերյալ:

Ամենից շատ ուշադրության արժանացավ լուսանկարը, որտեղ Սոզոնտը պատկերված էր ձիու տեսքով, Բրանդը՝ մեջքին: Ցուցադրական քարոզչության ազդեցությունը մեծանում էր նրանով, որ Վարվառան հակառակորդին այլ կերպ չէր կոչում, քան *այդ որձաձին:*

Վարվառայի խոսքն աչքի էր ընկնում պատկերավորությամբ, վառ համեմատություններով և հոյզերի առատությամբ, որից Սոզոնտը զուրկ էր: Նրա ելույթներին սպասում էին, և դրանցից յուրաքանչյուրը դառնում էր իրադարձություն, որը հետո երկար քննարկվում էր:

Վարվառայի գլխավոր կիրքն այսուհետ Հարավի անկախությու-

նը չէր, այլ օգտակար հանածոները: Նա կոչ էր անում Կղզին ազատագրել օտրերկրյա ընկերությունների լծից՝ նրանց ղեկավարներով ու աշխատակիցներով հանդերձ: Խոստանալով ժողովրդին վերադարձնել նրան պատկանող ընդերքը, չէր մոռանում նաև մենության հակված Բրանդին, որը, Վարվառայի ասելով, նա ստանալու էր բանտի խցում:

Ընտրությունների օրը քվեարկելով՝ Սոզոնտն ու Սեսիլիան չսպասեցին արդյունքներին: Իրենց համար ոչ մի լավ բան չհուսալով՝ Սոզոնտի պրեզիդենտության վերջին օրն օգտագործեցին Կղզին անարգել լքելու համար, քանզի Վարվառայի խոստացած մենությանը չէին ձգտում:

Երբ պրեզիդենտական ինքնաթիռն սկսեց բարձրություն հավաքել, Սոզոնտն ուղիղ եթերում դիմեց հայրենակիցներին: Քանի որ ուղերձի տեքստը նրան էր հանձնվել արդեն ինքնաթիռում, չէր հասցրել անգիր անել ու թղթից էր կարդում:

Առաջին իսկ նախադասությունից ամեն ինչ ծուռ գնաց: Պրեզիդենտական պաշտոնի համար ճակատամարտը *պատմական* գնահատելով՝ Սոզոնտը պարզորոշ արտաբերեց *տապակա* ու հայտարարեց, որ ինքն այն տանուլ չի տվել: Քրքիջի պայթյունը ներքևում այնքան հզոր էր, որ արձագանքը հասավ ինքնաթիռին ու Սոզոնտին ստիպեց ուղղել սխալը: Իսկ երբ բացատրում էր, որ իր մեկնումը Կղզուց հարկադրված քայլ է, հասավ երկրորդ պայթյունի արձագանքը. այս անգամ ծիծաղում էին ուղղման վրա:

Վտարանդության դառը հացի մասին խոսելիս կադր մտավ ճաշի սայլակը, որն անմիջապես հետ քաշեցին ու կանգնեցրին անկյունում, բայց հայրենակիցների քաղցած աչքերն ամեն ինչ տեսել էին:

Առաջին պլանը զարդարում էր սև խավիարով թասը, գլխատված անանասից գեղեցիկ կախվել էին խաղողի ողկույզները, իսկ մնացածը թաքնված էր արծաթե աղցանամաններում ու ապուրամաններում. հնարավոր է՝ այդ ամենի թվում էր նաև հիշատակված տապական:

Հետագա տեքստը ինչ-որ չափով բացատրում էր սայլակի հայտնվելը. Սոզոնտը կղզիաբնակներին խոստացավ, որ կպահպանի իրեն մինչև այն պահը, երբ կպահանջվի իր վերադարձը: Բայց դա չէր կարող շտկել ցավալի վրիպումն, ու նստվածքը մնաց:

Ավարտին մի առեղծվածային կոչ հնչեց՝ *Դուրս եկեք պոչի կողմից:* Այդ նախադասությունը ցուցում էր Սոզոնտին, որը ռեժիսորի մտահղացումամբ, պետք է վեր կենար ու դուրս գար՝ բազկաթոռը դատարկ թողնելով: Արտահայտությունը լայնորեն տարածվեց ժողովրդի մեջ, և Կղզում այն հաճույքով օգտագործում էին տարբեր առիթներով. մանավանդ՝ տեքստը թույլ էր տալիս:

Երբ ձայների հաշվարկն ավարտվեց, Սոզոնտն արդեն հեռու էր՝ Բրազիլիայում, Մինաս Ժերիս պրովինցիայի ձիաֆերմայում, որն ամուսինները կանխապես էին գնել: Սազոնտը ձիերի հետ իրեն հանգիստ և ուրախ էր զգում, ու հասկացավ, որ գտել է կյանքի նպատակը: Ու զարմացավ, որ նրան տանող ճանապարհն այդքան ոլորապտույտ էր:

Քվեարկության արդյունքներով Կղզու Պրեզիդենտ հայտարարվեց Վարվառան:

Գլուխ քսանչորսերորդ
ՎԱՐՎԱՌԱ

Վարվառայի կառավարման առաջին տարվա առաջին օրը հեռախոսազանգ ստացվեց Բրանդից, որը նույնպես առաջինն էր: Բրանդը շնորհավորում էր Պրեզիդենտին պաշտոնը ստանձնելու կապակցությամբ և հույս հայտնում, որ համագործակցությունը Կղզու հետ կշարունակվի: Ինչպես հետո Վարվառան պատմեց թերթերին՝ պատասխանն այսպիսին էր եղել.

Համագործակցություն կարող է լինել միայն մեկ դեպքում. դուք օգտակար հանածոները վերադարձնում եք Կղզու ժողովրդին:

Բրանդը Վարվառային առաջարկեց մտածել և այնպիսի լուծում գտնել, որի դեպքում Կղզում տեղը կբավականացներ և՛ իրեն, և՛ նրան: Իսկ երբ Վարվառան պատասխանեց, որ, ցավոք, Կղզին միայն մեկն է, և այնտեղ նրա համար տեղ չկա, Բրանդն ասաց.

Ուրեմն կունենանք երկու Կղզի:

Մի շաբաթ էլ չանցած հայտնի դարձավ, որ Վարվառայի վաղեմի ընկերուհին՝ Վասսան, Վարվառային մեղադրել է Կղզու շահերն անտեսելու մեջ:

Հարվածը կրկնակի ցավոտ էր: Վարվառային դավաճանում էր մի մարդ, որին նա վստահում էր, ինչպես ինքն իրեն: Նշանակություն ուներ նաև, որ Վասսային աջակցում էին Հարավի հազարավոր բնակիչներ, այն դեպքում, երբ Վարվառան համոզված էր, որ Հարավն ամբողջովին իր կողմն է:

Նոր Պրեզիդենտի առաջին դեկրետով Կղզու բոլոր օգտակար հանածոները պետության սեփականություն հայտարարվեցին: Մայրցամաքային նավթային ընկերությանը կարգադրվեց ամենա-

սեղմ ժամկետներում գործերը հանձնել երկրի կառավարությանն ու լքել Կղզին:

Ընկերությունն իսկապես լքեց Կղզին, բայց միայն հյուսիսային մասը: Հարավային մասը լքել չէր պատրաստվում ու շարունակում էր ալմաստի հանքերի մշակումը: Ալմաստներն արդյունահանման գլխավոր առարկան չէին, բայց քանի որ երկրաշարժաբանները, որոնք, ինչպես հետագայում պարզվեց, երկրաբաններ էին, ալմաստ էին գտել, ընկերությունը չանտեսեց այդ հանգամանքը: Դեկրետից հետո Վասսային պարզ դարձավ, որ Բրանդին Կղզու Հարավից վռնդելն այնքան էլ հեշտ չի լինելու:

Պարֆենի

Մի տարօրինակ թռչուն ճոճում է ճյուղը: Սկյուռիկը քարացել է ծառից ծառ թռիչքի մեջ: Երկարականջ գլխարկներով երեխաները քայլում են մամուռի վրայով: Անտառի թավուտում կիսախավար է, իսկ բացատում՝ արև: Ցուրտը փոխարինվում է ջերմությամբ: Քայլերը զգույշ են, զգացումները՝ սրված: Աղջնակը խատուտիկ է պոկում, փչում-թռցնում ալեհեր գդակը: Ցողունին ճերմակ հյութ է դուրս տալիս: Ինչ-որ անտես թելիկներ խտղտացնում են դեմքը: Անտառը նոսրանում է:

Ճանապարհին ուղեկցում է ջղախոտը: Սմբակների մոտեցող դոփյունը խառնվում է փոշուն: Խնձորապուտերով ձի: Խնձոր՝ տղայի ձեռքին: Խռթոցով կծում է: Տալիս է աղջկան:

- Ուզո՞ւմ ես:

Աղջիկն էլ է կծում:

Խնձորը մեծ է, ու նրանք վաղուց են ուտում: Գուցե՝ հարյուր տարի: Այնտեղ, ուր առաջին անգամ կծել են, ճերմակը դեղնագույն է դարձել:

Երեխաներն արագացնում են քայլը: Արագաքայլ ուղևորներ՝ անցնում են երկու անվաղուրների արանքի նեղ շերտով: Ոգեշունչ ուխտավորներ՝ շտապում են դեպի անտեսանելի նպատակը, չիմա-

նալով, որ երկիրը խնձորի պես է, եթե երկար, շատ երկար քայլես նույն ճանապարհով, կվերադառնաս առաջվա տեղը: Որն առաջվանը չի լինի, որովհետև արդեն ոչ մեկին չես գտնի այնտեղ:

Ժան-Մարին արագ գրի է առնում լսածը, երբեմն նույնիսկ նկարում. ճանապարհի խոր աղուրները, երկու կողմից՝ ծառեր: Մի քանի նրբագիծ՝ և հայտնվում ենք ես ու Քսենիան... Ժան-Մարին, պարզվում է, վատ չի նկարում:

- Հրաշալի կադր է,- ասում է:- Ինձ պատկերներ են հարկավոր տարվա բոլոր եղանակների համար. դեռ չգիտեմ՝ ինչ կհասնի մոնտաժին: Չէ՞ որ դեռ ինչ որ հիշողություններ մնացել են:

Հիշողություններ մնացել են: Տարեցներին միայն հիշողություններն են մնում:

Վարվառան կառավարման երկրորդ տարում վերջնագիր ուղարկեց Վասսային: Պահանջում էր, որ Վասսան ընդունի Կղզու պետական իշխանության գերակայությունն ու կատարի իր կարգադրությունները: Հիշեցնում էր, որ գլխավոր պահանջը տվյալ ժամանակահատվածում ալմաստի հանքերը պետությանը հանձնելն է: Խոստանում էր մայրաքաղաքից եկած հրամանները չկատարելու դեպքում անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել: Ուղերձը կարճ էր ու խիստ, ինչպես վայել է վերջնագրին:

Վասսայի պատասխանն ավելի կարճ էր, բայց՝ ոչ խիստ, այլ, ավելի շուտ, ծաղրական: Ոչ մի անվանական դիմում ու ստորագրություն: Միայն ասվում էր, որ Հարավի պետությունն ինքը կորոշի ինչպես վարվել հանքերի հետ: Ի պատասխան Վարվառայի սպառնալիքների՝ Վասսան ընդամենը քամահրանքով հետաքրքրվել էր՝ *թե չէ ի՞նչ կլինի:*

Վասսայի պատասխանը ստանալուց հետո միայն Վարվառան գիտակցեց իրավիճակի ողջ բարդությունը: Պարզ դարձավ, որ ձեռքը բարձրացրել, բայց խփել չի կարող, որ իրականում միջոց չունի Վասսային ստիպելու, որ ենթարկվի: Կղզու Բանակը ողբալի վիճակում էր, այն դեպքում, երբ հայտնի էր, որ Վասսան Հարավի աշ-

խարհազոր է հավաքում: Աշխարհազորը, որ սկզբում Վասսայի երևակայության պտուղն էր թվում, աճում էր արտակարգ արագությամբ, քանի որ կոշտ գաղափարները մտքերին տիրելու հատկություն ունեն: Վարվառան ակնհայտորեն թերագնահատել էր Վասսային:

Վերջնագիրը միայն Վարվառայի թուլությունը չէ, որ ի հայտ բերեց, այլև սկիզբ դրեց բազում աղետալի իրադարձությունների: Նույնիսկ եթե ընդունենք, որ այդ իրադարձություններն անխուսափելիորեն կատարվելու էին, ստիպված ենք խոստովանել, որ վերջնագիրն արագացրեց դրանք:

Այսպես, մայրցամաքային թերթերը, ասես հրամանով, սկսեցին տարակուսել կղզու կյանքի ժողովրդավարության կապակցությամբ: Վարվառային մեղադրում էին, որ նախընտրում է խոսել վերջնագրերի լեզվով: Հակաժողովրդավարավական ճանաչվեց նաև մասնավոր սեփականության օտարումը հօգուտ պետության: *Ավազակային օտարում*՝ ասես պատծենաթղթով գրում էին թերթերը:

Դրանից հետո Մեծ երկրում հոդվածների ու հեռուստածրագրերի մի շարք հայտնվեց, որը փառաբանում էր հարավցիների առանձնահատկությունները՝ խաղաղասիրությունը, աշխատասիրությունը, գիտելիքների ձգտումն ու անհնազանդությունը հյուսիսցիների դարավոր լծին: Իսկ հյուսիսցիները, պարզվեց, բնատուր անոմալիայի բերումով, ռազմատենչ են, ծույլ, սովորել չեն ուզում և իրենց նմաններին ստրկացնելու անզուսպ կիրք ունեն: Պարզելով մեկ Կղզում իրարից այդքան տարբեր ժողովուրդների գոյությունը՝ Մայրցամաքը չէր դադարում զարմանալ այդպիսի բնական երևույթից:

Պայթած ռումբի պես հնչեց ոմն Ֆիլոնի՝ Կղզու հարավային ծովեզերքից մի ուֆոլոգի ելույթը: Այդ Ֆիլոնը վաղ մանկությունից իրեն նվիրել էր Հարավային Ձկան համաստեղությունից եկածների դիտարկմանը, որոնք ժամանակ առ ժամանակ վայրէջք էին կատարում նրա գյուղից ոչ հեռու: Նկատելով հարցախույզ տղային՝ այլմոլորակայինները արագ ընդհանուր լեզու էին գտել նրա հետ, ընկե-

րացել ու երբեմն նրան ման էին տալիս չճանաչված թռչող սարքերով:

Նրանք Ֆիլոնին պատմել էին, որ Հարավային Ձուկ համաստեղությունը վաղուց է հետաքրքրվում Կղզու Հարավային մասով և նույնիսկ երազում է եղբայրական հարաբերություններ հաստատել նրա հետ: Հարավը հյուրերին գրավում էր իր հնամենի և անզուգական քաղաքակրթությամբ, հարուստ խոհանոցով ու ժողովրդական ստեղծագործությամբ: Նրանց վրա ցնցող տպավորություն էին թողել հատկապես հանելուկները, որոնք արտացոլում էին հարավցիների մտածողության տարիմաստությունը:

Ֆիլոնն ի պատասխան անմիջապես մի հանելուկ առաջարկեց այլմոլորակայիններին. *ցերեկը կծում է, գիշերը՝ լողում:* Չնայած բոլոր ջանքերին՝ եկվորները չկարողացան լուծել հանելուկը: Իսկ երբ Ֆիլոնն ասաց պատասխանը, ապշած էին դրա պարզությունից. *դնովի ատամները:* Հարցին, թե որտեղ են հայտնագործել այդ զարմանալի հարմարանքը, պատանի ուֆոլոգը պատասխանեց, որ՝ իհարկե, Կղզու Հարավում: Հակառակ դեպքում, հարցրեց նա, ինչո՞ւ են այդ կողմերում բոլորը դնովի ծնոտներով:

Ֆիլոնը երկգլխանի հյուրերին ծանոթացրեց նաև Նախագահ Կասյանի թևավոր խոսքերին, որոնք մանկուց անգիր գիտեր ու ներկայացնում էր որպես իրենը: Այլմոլորակայինները բոլոր վեց ձեռքերով ծափահարում էին նրան, չնայած և խոստովանում, որ երկու գլուխը բավարար չէ դրանք հասկանալու համար:

Անկեղծության մի պահի նրանք Ֆիլոնին խոստովանեցին, որ ժամանակին երկու ճառագայթ են արձակել Կղզի. մեկը՝ դրական, դեպի Հարավ, մյուսը՝ բացասական, համապատասխանաբար՝ դեպի Հյուսիս: Հենց այդտեղ էլ նրան հասկանալի էր դարձել բարձր քաղաքակրթության ծագումը Հարավում, այն դեպքում, երբ այն միանգամայն բացակայում էր Հյուսիսում: Իր բազմամյա լռությունն այդքան կարևոր բաների մասին Ֆիլոնը բացատրում էր նրանով, որ տևական ժամանակ Հարավային Ձկան համաստեղությունում է եղել:

Ճառագայթման մասին լուրերն օրվա ընթացքում տարածեցին համաշխարհային լրատվական գործակալությունները, ու բոլորի համար պարզ դարձավ՝ հյուսիսցիները մեղավոր չեն, որ այդքան անդուր են: Մեկ օր անց, սակայն, տիեզերական թեման չքացավ լրահոսից նույնքան արագ, որքան հայտնվել էր:

Ավելի ուշ, մոտ մեկ ամիս անց, լրատվական գործակալությունների ժապավեններով մի կարճ հաղորդագրություն անցավ առ այն, որ, պարզվում է, Ֆիլոնը երբևէ չի եղել Հարավային Ձկան համաստեղությունում, այլ նախկին բոլոր տարիներն անցկացրել է փակ բժշկական հաստատությունում:

Իսկ այդ ընթացքում լրատվամիջոցները փորձում էին պարզել, թե ինչ կարելի է անել ստեղծված իրավիճակում: Բարի կամքի մարդիկ պատասխանեցին՝ օգնել Հարավին: Առաջարկի անսպասելիությունից ցնցված մամուլը շփոթված հարցնում էր՝ ինչպե՞ս: Եվ այդ ժամանակ առաջին անգամ հնչեց *զենք* պաղ բառը: Բարի կամքի մարդիկ այն արտաբերում էին ոչ առանց ափսոսանքի:

Քսենիա

Մութ է. աշնանը շուտ է մթնում: Դեռ տաք է, և մենք ընթրում ենք հորաքույր Կլավդիայի տան բակում: Երկար կաղնեփայտե սեղանին ձեթի ճրագներ են: Քամի չկա, և բոցը խստավար ու վերձիգ է: Կարավաջոյին կանխելով՝ աչքեր, այտոսկրեր, ձեռքեր է խլում խավարից: Հանդարտ հոսում է մեծերի զրույցը, որից մեզ խաղաղ ու մի քիչ քնկոտ ենք զգում: Չենք ուզում տուն մտնել, և ծառաները ծածկոցներ են բերում: Կողք կողքի նստել ու լսում ենք շրթունքներից թռչող անշտապ ու իրար չկցվող բառերը:

- Ծովն ալեկոծվել է:

- Ասում են Մայրցամաքում հիմա շատ ցուրտ է:

- Ստամոքսի ցավի դեմ պետք է տրորած եղնգնաքար խմել: Իսկ ընդհանրապես, իհարկե, պետք է աղոթել:

Բառերն առանձին-առանձին ծանոթ են, բայց խոսքի իմաստը

փախչում է մեզնից, պատրույգի ծխի պես հալվում խավարում:

Զգում ենք, թե ինչպես են ինչ-որ մեկի ուժեղ ձեռքերը մեզ տանում տուն:

Առավոտ: Ժան-Մարին խնդրել է պատմել աշնանային առավոտի մասին: Ցանկալի է՝ նույն ճանապարհին, որով անցնում էինք ամռանը:

Օդը սուր ու բարկ է: Քայլում ենք սայլի ետևից: Տերևները դեղին են: Կան, որ արդեն տերև էլ չեն, այլ թելիկների ոստայն: Թաղվել են խոնավ աղուրներում. մեր առջևից պտտվում են անիվները: Տերևներից մի քանիսը անվահեցերին կպչելով՝ ելնում են անիվի բարձրության ու նորից իջնում գետնին: Դիտանվի նման: Ճռնչում ու պտտվում են անհամաչափ՝ հետևելով ձիու դանդաղ քայլին: Պտտվում են իրարից անջատ, երբ իրականում անբաժան են:

Մենք նստում ենք սայլին ու ձուլվում ընդհանուր ռիթմին: Մեր ոտքերը ճոճվում են ձախ ու աջ: Մեր տակ փափուկ խոտ է: Մեր առաջ՝ փախչող ճանապարհը, մեր ուղևորությունը՝ հրաժեշտ ու թախիծ, որովհետև առաջ գնալիս պետք է շրջվել ու հրաժեշտ տալ, ու տխրել:

Միջազգային ասպարեզում պարտություն կրելով՝ Վարվառան հայացքը դարձրեց ներկոզիական կյանքին: Նրան արագ հաղթանակ էր պետք, որը հանրային ուշադրությունը կշեղեր արտաքին ձակատի անհաջողություններից: Վարվառան հայտարարեց, որ կարգուկանոն կհաստատի *երկաթյա ձեռքով:* Հենց այդ արտահայտություն էր ուզում օգտագործել և օգտագործեց:

Վարվառայի երկաթյա ձեռքն իջավ օտարերկրացիների գլխին: Նա եկվորների անսահմանափակ ներկայությունը դանդաղ գործողության ռումբ հայտարարեց, որը կպայթի տարիներ անց ու գլխիվայր կշրջի Կոզին: Տիրակալուհին ընդգծում էր, որ օտարերկրյա աշխատուժը նախևառաջ *ուժ է,* որը չի կարելի թերագնահատել: Այդ ուժը չի ցանկանում *ինտեգրվել,* և Կոզու ժողովրդի կողքին բարձրանում է մի ուրիշ ժողովուրդ:

Այդ մարդիկ արդեն իսկ անհանգիստ են, ասաց Վարվառան, հետագայում այդ անհանգստությունը միայն աճելու է:

Պետության գլուխն արգելեց բանվորներ հրավիրել արտասահմանից, և այդ արգելքը հավանության արժանացավ կղզիաբնակների կողմից: Բայց Վարվառան դրանով չբավարարվեց ու կարգադրեց ձեռնամուխ լինել օտարներին Կղզուց վտարելուն: Քանի որ այդ մարդիկ գնալու տեղ չունեին, չարացան և անցան խուլ դիմադրության: Ոստիկանությունը նրանց որսում էր փողոցներում, բայց նրա ուժը բավական չէր, և գործի դրվեց Բանակը:

Կղզիաբնակների մեջ քիչ չէին կամավորները, որոնք միացան եկվորներին բռնելուն: Չբռնված օտրերկրացիներն էլ պատանդ էին վերցնում Կղզու բնակիչներին՝ պահանջելով բաց թողնել բռնվածներին: Վարվառան համաքաղաքացիներին կոչ արեց զինվել համբերությամբ՝ ասելով, որ ավելի լավ է չարիքը խեղդել սաղմնային վիճակում, հետո իսկական պատերազմ ստանալու փոխարեն:

Բայց իրադարձություններն օրըստօրե ավելի ու ավելի էին պատերազմ հիշեցնում: Իսկական ճակատամարտ տեղի ունեցավ, երբ բանակային ստորաբաժանումները փորձում էին զինաթափել յոթանասուն հազարանոց *արագ արձագանքման հեծելազորային ջոկատը,* որը ստեղծել էր Սոզոնտը: Նրանց զինաթափել չհաջողվեց, և այդ ժամանակից ջոկատը Կառավարության հրամաններին չէր արձագանքում: Ջոկատն իսպանական վարգով Հյուսիսից Հարավ կտրեց ողջ երկիրը, ապա թափված սնդիկի պես բաժանվեց փոքրիկ մասնիկների ու ցրվեց Կղզում: Որոշ հեծելակներ հանապազօրյա հացը վաստակում էին գեղջուկներին օգնելով նրանց տնտեսություններում, ոմանք էլ փող ու ձիու կեր էին հայթայթում ավելի պարզ միջոցներով:

Այդ օրերին Նորին Բարձր Պայծառափայլություն Պարֆենին ու Քսենիան Փարիզում էին: Նրանք Վարվառային դիմեցին բաց նամակով՝ զգուշացնելով, որ ընտրված ուղին բազմապատկում է ատելությունն ու տանում աղետի: Այդպիսի գործողությունները, ասվում էր նամակում, մարդկանց մեջ արթնացնում են վատագույնը: Ընդու-

նելով, որ բանվորների անսահմանափակ ներհոսքն ակնհայտորեն սխալ էր, նրանք Պրեզիդենտին զգուշացնում էին զերծ մնալ նոր սխալներից: Վերափոխությունները, գրում էին պայծառափայլ իշխանները, պետք է վերաբերեն ընդհանուր կանոններին, ոչ թե մարդկանց ճակատագրին:

Իշխանական նամակում խոսք էր գնում նաև օտարերկրյա արտադրությունները դուրս շպրտելու մասին: Պարֆենիի և Քսենիայի կարծիքով՝ պետք էր պարզել, թե դրանցից որոնք են գործում ի շահ Կղզու, և որոնք՝ ոչ, և միայն դրանից հետո որոշում կայացնել: Ճշմարտությունը երբեք բևեռներում չէ, պնդում էին նամակի հեղինակները, և կոշտ որոշումների շտկումն այլ կոշտ որոշումներով ներդաշնակության չի բերի:

Նամակը կարդալով՝ Վարվառան գազազեց: Իշխանական զույգին մեղադրեց ազգային դավաճանության, ինչպես և Կղզուց դասալքելու մեջ: Պարֆենիի ու Քսենիայի՝ Փարիզում գտնվելը գնահատեց որպես փախուստ մի երկիր, որը պատերազմի մեջ է Կղզու հետ:

Վարվառայի հայտարարություններն անմիջապես տարածվեցին Կղզու թերթերով ու հեռուստատեսությամբ, որոնք, վախենալով, որ հեծելազորայինները *կարծագանքեն,* ռազմական գործողություններ սկսեցին տարեց զույգի դեմ: Աններդաշնակ ձայներով անեծքներ էին հղում Պարֆենիին ու Քսենիային՝ ամեն օր նրանց դավաճանական գործունեության նորանոր մերկացումներ հրապարակելով:

Այդպես, հին թերթերի հավաքածուները քրքրելով՝ թղթակիցներն աշխարհին ներկայացրին իշխանական զույգի՝ պետական գանձարանը վատնելու, ինչպես և՝ Պարֆենիի կողմից անչափահաս Լուկերյային պղծելու հին մեղադրանքները: Այդ լուրին պատրաստակամորեն արձագանքեց կղզու ոստիկանությունը, որին Լուկերյայի կուսության վերաբերյալ վաղեմի եզրակացությունն արդեն կասկածելի էր թվում:

Պարֆենիի ենթադրյալ զոհը վաղուց ննջում էր քաղաքային գե-

ռեզմանատանը: Չնայած նրա որդու՝ Սըսոյի բողոքներին, Լուկերյայի մարմինն արտաշիրմեցին: Նրա խռովված աձյունափոշում վաղուց արդեն ոչինչ չէր վկայում կուսության առկայության կամ բացակայության մասին, և Լուկերյային կրկին հողին հանձնեցին:

Բայց և այնպես գործն ուղարկվեց դատարան, որտեղ կայացավ վերջին տարիների ամենաաղմկոտ դատավարություններից մեկը: Դատարանում հանդես եկավ Սըսոյը և հայտարարեց, որ հետաքննությանը հուզող հարցը իր մոր կուսության վերաբերյալ կարող է լուծվել նաև առանց փորձաքննության: Սըսոյն իրեն պտուղն էր համարում Լուկերյայի և մտակազմությամբ նրան համարժեք մի մարդու երջանիկ ամուսնության, որը տեղի էր ունեցել քննվող դեպքերից հինգ տարի անց: Բացի այդ, հանդես գալով դատարանում, Սըսոյը տառացի վկայաբերեց մոր խոսքը Պարֆենիի հետ հարաբերությունների մասին. *նրան երբեք տեսած չկամ:*

Արդարացման դատավճռի մասին հայտնելով՝ մամուլը շեշտում էր իշխանի ձարպկությունը, որն ամեն ինչ արել էր հետքերը ջնջելու և իրեն ներկայացված մեղադրանքը տապալելու համար: Կղզու ոստիկանությունը գործ էր հարուցել նաև գանձարանը վատնելու վերաբերյալ, սակայն պղծման դատաքննությունից հետո խելամտորեն ձեռնպահ մնացին դատարան ուղարկելուց:

Իշխանական գործերի մանրակրկիտ քննությունն ալեկոծեց կղզու հանրությանը: Ինտերնետը լեփ-լեցուն էր սեռական հայհոյանքներով, որոնց իմաստն այն էր, որ բնակչության մեծ մասը վաղուց արդեն վատ բան էր զգում. չափից դուրս արդարակյաց էին թվում Պարֆենին ու Քսենիան: Այդ հրապարակումներում առավել հաճախադեպ անհայհոյանք արտահայտություններն էին՝ *մարմանդ ջրից վախեցիր, գառան մորթով գայլեր,* ինչպես և ժողովրդական իմաստնության որոշ այլ նմուշներ: Պարֆենիի ու Քսենիայի կյանքը ինտերնետի օգտատերերը նկարագրում էին որպես վատնումների ու պղծումների անվերջանալի շարք:

Ծովեզերքի իշխանական տան պատուհանների վրա կանոնավոր կերպով քարեր էին թռչում, մի անգամ էլ Մոլոտովի կոկտեյլով

շիշ նետեցին: Հրդեհը հաջողվեց մարել, ու տունն ամբողջությամբ չվառվեց, բայց գրադարանը ոչնչացավ:

Հետևելով պատմության ներկայիս զարգացմանը՝ մտածում եմ. ինտերնետն ինչո՞ւ է այդքան դաժան: Գուցե, որ այնտեղ գրողներին ոչ ոք չի՞ ճանաչում: Կամ որ գրողները չե՞ն ծնվել հրապարակային խոսքի համար: Չէ՞ որ առաջ արտահայտվել կարող էին միայն շատ քչերը, որոնց խոսքը հավասարակշիռ էր, իսկ պատասխանատվությունը՝ գիտակցված: Նաև չեմ հասկանում, թե ինչո՞ւ էին նրանց զոհը դարձել պայծառափայլ իշխանները, որոնցից Կղզին սիրուց ու բարությունից բացի, այլ բան չէր տեսել: Մի միտք ունեմ, որից ինքս էլ եմ վախենում. գուցե նրանց հանդեպ ժողովրդի սերն այդպե՞ս էր արտահայտվում:

Պարֆենիի ու Քսենիայի հալածանքն աննկատ չմնաց նաև Մեծ երկրում, որտեղ արդեն ի պաշտպանություն նրանց ձայներ էին հնչում: Ամենից նշանակալին, իհարկե, Բրանդի ելույթն էր, որը հայտարարեց, թե կցանկանար դաշնակից տեսնել իշխանական զույգին: Բայց շուտով հետևեց անհողդողդ ծերունիների պատասխանը, որից պարզ էր դառնում, որ այդպիսի դաշինքն իրենց համար անկարելի է: Դրա բացատրությունը կարճ ու սպանիչ էր. Բրանդը իրենց մի քիչ դուրսպրծուկ է թվում:

Նորին Բարձր պայծառափայլությունները ստիպված եղան գին վճարել այդ արտահայտության համար: Բրանդին մերժելու հաջորդ օրը նշանավորվեց մայրցամաքային մամուլի լիակատար շրջադարձով: Պարֆենին ու Քսենիան, որ դեռ նախորդ օրը *հումանիզմի պատվարն* էին Կղզում, ակնթարթորեն վերածվեցին *առաջադիմության թշնամիների, անդրենածին իշխանիկների և մարտնչող խավարամոլների:* Նրա համա՞ր էին այդքան երկար ապրել, որ լսեն այդ ամենը:

Ո՞վ էին նրանք և ի՞նչ էին շարունակում լինել բոլորիս համար: Պահապան հրեշտակնե՞ր: Դժվար թե. մարդկային պաշտոն չի: Միտքս դառնում է մարգարեությանը. գուցե ամեն ինչ բացատրվում

է նրանով, որ Պարֆենին ու Քսենիան պետք է ապրեն մինչև նրա կատարումն ու օգնե՞ն մեզ՝ անզորներիս:

Հարց է ծագում՝ շատե՞րն են ապրում երեք հարյուր հիսուն տարի:

Պատասխանում եմ. քչերը:

Պարֆենի

Երեխաները քայլում են ծյունածածկ ճանապարհով: Աղվեսամորթու կիսամուշտակներով: Շեկը ձերմակի վրա: Մատները թաթմաններում բռունցք արած՝ որ չմրսեն: Ձյունը երբեմնակի սահումթափվում է հսկա եղևնիների թաթերից: Ձյունը ճռռում է ոտքերի տակ: Պահպանում է նրանց հետքերը:

Մոտենում են Պայծառակերպության վանքին: Վանական գերեզմանատանն անցնում են շիրիմների մոտով: Հանգուցյալները, անդրշիրիմյան գործերից կտրվելով, ձեռքով են անում նրանց ճնակոլոլ տապանաքարերից:

Զգույշ, որ չդիպչի ննջեցյալին, տղան մաքրում է մոտակա սալի ձյունը: Իշխան Ֆեոդոր, Կղզու մկրտիչ: Տեսնելով Ֆեոդորի ձեռքի խաչը, երեխաներն ակնածանքով շրթունքները հպում են խաչին:

- Ինչո՞ւ ես լռում,- հարցնում է աղջիկը:

- Ըստ էության, ամեն ինչ ասված է,- պատասխանում է Ֆեոդորը: - Ուրիշ ի՞նչ կարող եմ ավելացնել:

Երեխաները մաքրում-բացում են հարևան երկու տապանաքարերի անունները. Կոնստանտին և Ֆրոլ: Կենդանության օրոք նրանք *տոհմագրությունների պատերազմ էին մղում:*

- Հիմա հարևաններ ենք,- ծիծաղում է Կոնստանտինը:- Համարյա ընկերներ: Մահվանից հետո շատ բան ես վերաիմաստավորում:

Ֆրոլը ջարդում է խոնարհված ձյուղն ու մաքրում իր տապանաքարի ձյունը: Մի տեսակ դժգոհ տեսք ունի:

- Իսկ ի՞նչ ունենք կիսելու: Մեր լեգենդական նախատատերի՞ն: Ի դեպ, նաև ձեր,- Ֆրոլը ցույց է տալիս շարքի առաջին տապանաքա-

րերը:- Որևէ մեկը կարո՞ղ է ասել՝ ո՞վ է այս գերեզմաններում:

Նկարահանում վերևից՝ ինֆրակարմիր խցիկով: Սև-սպիտակ պատկեր, որ գերազանցապես բաղկացած է ուրվագծերից: Բոլոր գերեզմաններում կմախքներ են: Մելանիայի և Իլարիայի գերեզմանները դատարկ են:

Կոնստանտինը տխուր նայում է Ֆրոլին.

- Փնթփնթան եք դառնում, բարեկա՛մս:

- Իսկ որտե՞ղ է Օգոստոսի գերեզմանը,- հարցնում է աղջիկը:

- Պետք է կարծել՝ Հռոմում,- ասում է Ֆրոլը:- Այնքան էլ ազգական դուրս չեկավ մեր Օգոստոս պապիկը...,- Ֆրոլը շրջվում է:- Իսկ սա ձեզ է վերաբերվում:

Գերեզմանատան կածանով դանդաղ մոտենում են իշխաններ Միխաիլն ու Անդրոնիկը: Քայլքը թեթև է, ավելի շուտ՝ սահք:

- Ծերացել ես, որդի՛ս,- տղային է դիմում Միխաիլը:

Տղան թոթվում է ուսերը:

- Զավակնե՛րս,- ասում է Անդրոնիկը,- մի անհանգստացեք, չէ՞ որ դա միայն մենք ենք տեսնում: Ուրախ եմ, որ այդպես հոգածու եք մեկմեկու հանդեպ:

- Շատ սրտառուչ զույգ է,- գլխով է անում Կոնստանտինը:- Չեմ կասկածում, որ կզարդարեն մեր ընկերությունը: Այստեղ շատ տարբեր մարդիկ են պառկած, բայց բոլորն իշխաններ են: Իշխաննե՛ր: Օգտվելով նրանից, որ դեռ ողջ եք, կարող եք անձամբ հարմար տեղ ընտրել ձեզ համար:

- Ինձ թվում է՝ այսպիսի տեսք կունենար...,- Ֆրոլը եղևնու ծյուղը նետում է արահետին:- Չէ, մի քիչ անքաղաքավարի է:

Միխաիլը թաշկինակը տանում է աչքերին:

- Գիտե՞ք, ես հանգիստ եմ նրանց համար:

Այդ ընթացքում վիծակը Կղզում շիկանում էր: Քաղաքում ու մերձակայքում սկսեցին ավազակախմբեր հայտնվել: Սկզբում տեղացիներ էին, իսկ ավելի ուշ նրանց միացան արագ արձագանքման հեծելազորայինները: Ավազակները ծառեր էին տապալում ճանա-

պարիներին՝ այդպես կանգնեցնելով մեքենաներն ու անխնա կողոպտելով տերերին: Երեկոները չարագործները խուժում էին թատրոններ, ռեստորաններ ու խաղատներ, և ոստիկանությունը, տեսնելով ինչպես են կողոպտում այցելուներին, չէր համարձակվում միջամտել ու հեռանում էր:

Վարվառայի կառավարման երրորդ տարում Կղզում երկնաքար ընկավ: Խփեց նավթամբարներից մեկին, և ահռելի ջահը բոցկլտում էր այնքան ժամանակ, մինչև ամբողջ նավթը վառվեց:

Մարդիկ հարցրին եպիսկոպոս Կիրիլին, թե դա ինչ կարող է նշանակել:

Եպիսկոպոսը պատասխանեց, որ տեղի ունեցածը երկու իմաստ ունի: Առաջինը՝ ֆիզիկական, և նշանակում է, որ ածխաջրածիններ-ը հակված են վառվելու: Երկրորդը մետաֆիզիկական է, և իրեն էլ մինչև վերջ հասկանալի չէ, բայց ամենայն հավանականությամբ ոչ մի լավ բան չի նշանակում ու ստիպում է հիշել Ագաֆոնի մարգարեությունը:

Նույն օրերին Հարավի հանքերում աներևակայելի չափերի մի ալմաստ գտան: Ասում էին, որ երկրի ընդերքը երբեք նման բան չի ծնել ու մարդու աչքերը նման բան չեն տեսել: Զարմանալի գյուտի մասին լուրը տարածվեց աշխարհով մեկ, ու բոլորն ապշում էին՝ տեսնելով նրա պատկերը: Ոմանք էլ, Կղզում տիրող տրամադրություններից չվախենալով, հասնում էին հանքերը, որտեղ, առաջին ժամանակները, ցուցադրվում էր խնամքով հսկվող քարը:

Երեսակված ալմաստը կոչվում է ադամանդ: Կղզում հայտնաբերված քարը, թեկուզ և մշակված չէր, շողում էր, ինչպես երեսակումից հետո. և այն էլ ադամանդ անվանեցին: Ադամանդի հատկությունների մասին հայտնի է, որ կրակն ու երկաթը անզոր են նրա հանդեպ, այնպես որ, կարելի է խփել մուրճով, նետել քուրան, այրել, և ոչինչ չի վնասի նրան ու չի փափկացնի:

Կհամեմատեի այս քարը նրանց սրտերի հետ, ովքեր հիմա ոչինչ չեն զգում ու չեն հասկանում, երախտագետ չեն բարուն, անմատչելի են թե՛ գորովին, թե՛ ակնածանքին, չեն մեղմվում աղեր-

սանքով ու չեն վախենում սպառնալիքներից:

Եվ եթե փորձում ես ջարդել ադամանդը, ավելի է կարծրանում: Եվ միայն մի միջոց կա աշխարհում, որ կարող է ադամանդը զրկել ամրությունից՝ այծի արյունը: Այդ արյան մեջ թրջած քարը կորցնում է իր հատկություններն ու զնդանի վրա ջարդվում մուրճով, բայց այդ էլ՝ մեծ դժվարությամբ, իսկ մուրճն ու զնդանը վնասվում են: Հայտնաբերված ալմաստն ամեն գիշեր թրջում էին այծի թարմ ու տաք արյունով, բայց այնպես կարծր էր նրա բնույթը, որ քարհատներն իրենք կասկածում էին իրենց կարողություններին:

Բայց քարի երեսակումն արդեն ոչ ոքի չէր հետաքրքրում: Բոլորը հիշում էին մարգարեության բառերը ադամանդի մասին, ու ոչ ոք դրանք չէր բարձրաձայնում, որովհետև սարսափելի էր: Եվ որ այն ոչնչից չէր փափկում ու չէր վնասվում, նույնպես սարսափելի էր: Եթե քարը գոնե մի քիչ փափկեր, կամ թեկուզ մի փոքրիկ կտոր պոկվեր, իհարկե, մի քիչ ավելի թեթև կլիներ: Եվ ինչ-որ անողոք բան կար ադամանդի կարծրության մեջ, անմարդկային ու ոչ հողածին:

Նույն տարում ստորգետնյա հարվածներ հնչեցին Կղզում, ասես գետնի տակ բանտված ահռելի մեկը փորձում էր դուրս պրծնել, իսկ Լեռան գագաթին բազում հարյուրամյակների ընթացքում առաջին անգամ ծուխ հայտնվեց: Եվ այդ ցնցումներից երկրի ներքին շրջանում բանտ փլվեց, կալանավորների մի մասը զոհվեց, մյուսներն էլ, շղթաներից ազատվելով, փախան-ցրվեցին Կղզով մեկ: Եվ տեսնելով ինչ է կատարվում՝ ոստիկանները սկսեցին լքել ծառայությունը, քանի որ ներկա հանգամանքներում ավելի վտանգավոր գործ չկար:

Շտապօգնության մեքենաները ժամանում էին միայն Քաղաքի կենտրոնական շրջանի կանչերով, քանի որ կենտրոնն էր դեռ հսկվում: Քիչ չէին դեպքերը, երբ բժիշկներին կանչում էին մեկ նպատակով՝ կողոպտել կամ խլել թմրամիջոցները: Մի քանի շաբաթ անց շտապ օգնությունն արդեն ընդհանրապես ոչ մի տեղ չէր մեկնում:

Աննախադեպ թվով երկսեռ մարմնավաճառներ հայտնվեցին

փողոցներում: Քաղցած էին ու քաշում էին անցորդների թևքերից՝ առաջարկելով արատներից ավերակված իրենց մարմինները: Բայց անցորդներն էլ շատ չէին. ժամը վեցից հետո քչերն էին համարձակվում դուրս գալ փողոց: Քաղաքը մեռնում էր:

Կղզու հարավային մասում սկսեցին մեծ թվով մայրցամաքային նավեր կառանվել: Ժամանակակից զենք էին բերում, որը չունեին կղզիաբնակները, նաև՝ այդ զենքն օգտագործել սովորեցնողների:

Զենքը ստանալուն պես շփման գծում սկսվեցին առաջին մարտերը, ու եղբայրը ձեռք բարձրացրեց եղբոր, որդին՝ հոր վրա: Բայց այդ մարտերը մի քիչ հիասթափեցրին պատերազմի արվեստ սովորեցնողներին, քանզի զենքի բոլոր փայլուն հնարավորությունները չէին օգտագործվում, իսկ մարտերն անհրաժեշտ դաժանությունը չունեին:

Բանն այն էր, որ ժամանակի ընթացքում տրամադրությունները Հարավում սկսել էին փոխվել: Թեկուզ պակաս չափով, բայց հարավցիների վրա էլ տեղացին Հյուսիսը բռնած աղետները, որովհետև ժանտախտի համար սահմաններ չկան, մանավանդ մեկ Կղզու սահմաններում: Հարավի բնակիչներն արդեն այնքան էլ չէին մղվում հաղթելու Հյուսիսին: Վասսայի մարտաշունչ կոչերը դեռ թռչում էին գերշիկացած օդում, բայց նախկին արձագանքը չէին գտնում:

Բրանդն ու համախոհները, որոնք լի էին պատերազմը մինչև վերջին կղզիաբնակը շարունակելու վճռականությամբ, հասկացան, որ իրենց երազած պատերազմն արդեն անհնար է: Եվ այդ ժամանակ Կղզի ուղարկվեցին մայրցամաքային զորքեր, որոնք կոչված էին երկրին վերադարձնելու առաջադիմական կենսակարգը, իսկ վռնդված տերերին՝ ածխաջրածինները:

Մայրցամաքային զորքերին գործողությունների ընթացք հուշեց ինքը՝ բնությունը: Տեսնելով, թե ինչ երկար ու վառ է վառվում երկնաքարի հրդեհած նավթամբարը՝ նրանք գործի դրեցին հեռահար հրետանին ու սկսեցին հրետակոծել նավթաբեր շրջանը: Երեք օրից այն բցկլտում էր հսկա մոմի պես, որը երևում էր նույնիսկ Մեծ

երկրից: Ծուխն այնքան սև ու թանձր էր, որ պատեց ողջ Կղզին: Ե՛վ Հյուսիսը, և՛ Հարավը թաղվեցին խավարի մեջ:

Եվ Կղզու բնակիչների վիատությունն աստիճանաբար սկսեց փոխվել զայրույթի: Մարդիկ գալիս էին Գլխավոր հրապարակ ու բացահայտ արտահայտում այդ զայրույթը: Բոլորը հասկանում էին, որ կառավարությունը վաղուց արդեն անզոր է որևէ բանի վրա ազդելու, բայց զայրույթն ամբարտակը հեղեղած ջրի պես ելք էր փնտրում և անպայման պետք է հորդեր որևէ մեկի վրա:

Օրեցօր ավելի ու ավելի շատ մարդ էր հավաքվում պրեզիդենտական Պալատի առաջ, և նրանք օրեցօր ավելի չար էին: Այն օրը, երբ մարդկային ծովը ողողեց ոչ միայն Գլխավոր հրապարակը, այլև հարակից փողոցները, կղզիաբնակները պահանջեցին, որ տիրուհի Վարվառան դուրս գա իրենց առաջ:

Բայց Վարվառան դուրս չեկավ:

Նախորդ գիշեր տղամարդու շորեր հագած փախել էր:

Քսենիա

Մայիսին երեխաները վերադառնում են հորաքույր Կլավդիայի տուն: Երեք հարյուրից ավելի տարի անց. ժամանակն աննկատ է թռչում: Քայլում են իրար ձեռք ամուր բռնած, քանզի չգիտեն՝ իրենց ինչ է սպասում այդ տանը:

Կտրում են բաց տարածությունը, և տունն արդեն երևում է: Տան ետևում ծովն է, նույնպիսին, ինչպես առաջ էր: Ճանապարհի երկայնքով՝ դեռ թարմ, բայց ամառային արևից խանձված խոտ:

Երեխաները երբեմն դուրս են գալիս ճանապարհից ու քայլում խոտերի վրայով: Ծղրիդներ են թռչում ոտքերի տակից, մողեսները սողում են տաք քարերի վրայով: Խոտերը շորորում են, իսկ քարերն անշարժ են: Եթե քարերը չլինեին, քամու պոռթկումը կքշեր-կտաներ այդ պատկերը:

Մոտենալու հետ տան մանրամասները խոշորանում են: Ճաքեր

են երևում, պատերին՝ գետնից մի քիչ բարձր մամուռ, ծիծեռնակի բներ՝ տանիքի տակ: Ծիծեռնակները ճախրում են բարձր երկնքում: Երեխաները, գլուխները բարձր, նայում են նրանց: Իրենց ու ծիծեռնակների ընդհանուր տանը:

Դուռը բաց է. քառանկյուն մթություն: Երեխաներն արդեն մտնում են տուն: Դեռ մոտենում, բայց արդեն մտնում են:

Ահա արդեն շեմին են: Ձախից թիթեղյա ինչ-որ բան է ընկնում ու գլորվում հատակի քարե սալերի վրայով: Հասնելով ճոճքի սահմանին՝ դառնում է արձագանք ու խփվում պատերին: Նրա ետևից թռչում է մանկան կանչը.

- Կենդանի մարդ կա՞:

Լավ հարց է: Միակ հնարավորը:

Կանչից հետո՝ լռություն, իսկ արևից հետո՝ խավար: Եվ անհայտություն: Ոտքերը, սալերի կցվածքները զգալով, տանում են անհրաժեշտ ուղղությամբ. նրանք սեփական հիշողությունն ունեն:

Ձախից՝ խոհանոցը. այնտեղ մի քիչ լուսավոր է կաթսայի տակ վառվող կրակից: Անշտապ խլթխլթոց, ջրապտույտների անթափանցիկ փայլ:

Նրանց սպասել էին մինչև վերջին պահը. որքան կարող էին: Բայց չէին հասցրել: Այդպես կինոյում է լինում. վրիպել էին կես ժամով, և ամեն ինչ այլ կերպ էր գնացել:

Երեխաների աչքերը վարժվում են կիսախավարին, ու նրանք նայում են շուրջը: Վառարանի մոտ՝ ճղոնի կույտ, ցածրիկ սեղանին՝ մի քանի ափսե:

Պատի տակ՝ նստարանին երևում է խոհարարուհու ուրվապատկերը: Պառկած է մեջքի վրա, մի ձեռքը՝ կրծքին, մյուսը կախված է համարյա մինչև գետին:

- Մահացե՞լ է,- հարցնում է աղջիկը:

Տղան մոտենում է խոհարարուհուն, բարձրացնում նրա ուժեղ ձեռքն ու շոշափում զարկերակը:

- Չի մեռել, քնած է:

Երեխաները ոտքերի ծայրերին դուրս են գալիս խոհանոցից ու

գնում տանը պտտվելու: Ծառաները քնած են սնդուկներին: Իլիկի վրա կռացած ննջում է դայակը:

Բարձրանալով երկրորդ հարկ՝ երեխաները մտնում են հորաքույր Կլավդիայի սենյակը: Նա կիսապառկած է՝ գլուխը թաղած փետրաբարձերի մեջ: Բարձերը միշտ նրա թուլությունն են եղել: Աչքից հեռու՝ նրան *բարձերի դյուժին* էին ասում. հորաքույրը գիտեր դա, բայց ոչինչ չէր կարող անել: Բարձ շատ էր սիրում:

Բարձերը հաշվելով՝ տղան ասաց.

- Տասնմեկ:

Աղջիկը ցույց է տալիս բարձը ձեռքին սպասուհուն.

- Տասներկուերորդը:

Սպասուհին մղվում է Կլավդիային. հատակին նստած՝ բարձը խցկում է ձախ կողի տակ: Գլուխը հանգչում է անկողնուն:

Երեխաները դուրս են գալիս պատշգամբ ու տեսնում ծովը: Նստում են կաղնեփայտե, առյուծագլուխ արմնկակալներով բազկաթոռներում: Սպասում են, թե մարդիկ երբ կարթնանան:

Գլուխ քսանհինգերորդ
ՊԱՐՖԵՆԻ ԵՎ ՔՍԵՆԻԱ

Ես՝ մեղավոր Ինոկենտիս, լքելով խուցս բնական աղետի բերումով, պատմածից շատի ականատեսը եղա, թեև ոչ ամբողջին: Այս գլուխը նշումներն են, որ արել եմ գերազանցապես իրադարձությունների ընթացքում: Դրանք, հակառակ իմ սովորության, մշակված չեն, խառնիփնթոր են մեծավ: Հրատարակիչ Ֆիլիպը պնդեց, որ հրապարակվեն հենց այդ տեսքով: Նրան թվում է՝ հենց այդպես են հաղորդում իրադարձությունների ողջ ոբերգականությունը: Վստահ չեմ, բայց ենթարկվում եմ:

Մայիսի 25-րդ օրը

Անիշխանություն սկսվեց: Կղզու պատմության ողջ ընթացքում առաջին անգամ ոչ ոք չէր ուզում վերցնել իշխանությունը, քանզի անհասկանալի էր ինչ անել այդ աղետալի պայմաններում, որ Աստծո թողտվությամբ հաստատվել էին:

Մայիսի 26-րդ օրը

Հարավից լուր եկավ, որ մայրցամաքային զորքերը դադարեցրել են դեպի Հյուսիս հարձակումն ու շտապ տարհանվում են Կղզուց:

Մայիսի 27-րդ օրը

Եկավ գլխավոր աղետը. Լեռը սկսեց արթնանալ: Թույլ ծուխը, որ ոլորվում էր գագաթին, փոխարինվեց խառնարանից արձակվող ծխի թանձր սյունով: Նրա հայտնվելն ուղեկցվում է ցնցումներով, ասես այն անտեսանելին ու ահռելին, որ գալարվում էր գետնի տակ

բոլոր վերջին ամիսներին, ջանքերը միավորել Լեռան հետ ու հիմա ողջունում էր նրա արթնացումը: Լեռան լանջերից մեկով, շուրջն ամեն ինչ վառելով, արդեն հրո գետեր են հոսում: Հյուսիսից գալիս է վառվող նավթի ծուխը, իսկ Հարավից՝ Լեռան մոխիրե ամպը: Եվ երկինքն աղոտացել է, և նրա միջով դժվարությամբ է թափանցում արևը, իսկ գետնին մոխիր է նստել: Դեռ շատ խիտ չէ, ընդամենը փոշի՝ որովհետև Աստծո քամին փչում է ծովի կողմն ու մոխրի շատը քշում այնտեղ: Բայց հերիք է քամին փոխվի, ու մոխիրը կթափվի մեզ վրա որպես սև ձյուն, որից փրկություն չկա, որը մտնում է թոքերն ու փակում շնչառությունը: Բայց մեզ էլի մեկ սարսափելի վտանգ է սպասում, որի մասին գիտեն բոլոր կղզիաբնակները. Լեռը այն հրաբուխներից է, որ պայթելու հատկություն ունեն: Աշխարհը Կղզու ղեկավարությանը կոչ է անում անհապաղ սկսել բնակիչների տարհանումը՝ զգուշացնելով, որ աղետին քիչ է մնացել: Բայց Կղզին այլևս ղեկավարություն չունի, նավեր էլ չունի տարհանման համար, քանզի դրանց մեծ մասն արդեն իր զինվորներին դուրս բերող մայրցամաքային բանակի տրամադրության տակ է:

Մայիսի 28-րդ օրը

Առավոտվա ժամը տասը: Բոլորը հավաքվել են Գլխավոր հրապարակում և արդեն չեն հեռանում. գիտեն, որ միասին ավելի հեշտ է փրկության ուղիներ փնտրել: Բացի այդ, հրապարակը բաց տեղանք է, և ստորգետնյա ցնցումների ժամանակ այնտեղ այնքան վտանգավոր չէ, որքան տներում ու նեղ փողոցներում: Բոլորը խոսում են Ագաֆոն Ապագայատեսի մարգարեության մասին. հիմա յուրաքանչյուրին ակնհայտ է, որ այն սկսում է կատարվել: Խոսում են ծերերն ու ջահելները, հարուստներն ու աղքատները, հավատացյալներն ու անհավատները: Բոլորն անգիր գիտեն մարգարեության տողերը, ու հիմա դրանք վազող տողի պես սահում են կապարե երկնքով: Մենք բացվեցինք աշխարհին, և դա բարի էր: Բայց չէ՞ որ ասված է՝ կա գրկելու ժամանակ և կա գրկից հեռանալու ժամանակ: Վրա հասան օրեր, երբ պատեցին մեզ արատներ, և բարին

չար դարձավ, քանզի մեր արատներից չազատված՝ ուրիշներինն էլ առանք մեզ վրա: Եվ օտարները հեղեղեցին Կղզին, և մենք կանք նրանց մեջ որպես ագռավը՝ ավերակներում: Սակայն փորձանքը օտարների մեջ չէ, այլ մեր, քանզի բազմապատկվեց անառակությունը, և խստասիրտ դարձանք ու սկսեցինք նեղել իրար: Եվ մեծ թշնամություն ծագեց մեր մեջ, և ձեռք բարձրացրեց եղբայրը եղբոր վրա և որդին՝ հոր: Եվ հողը, մարդկանց դաժանությունն զգալով, ինքն էլ դաժանացավ: Եկավ փորձության ժամը, ու հայտնվեց ադամանդ քարը, որ չի փափկում ոչնչով, բացի այծի արյունից: Եվ հողը ցնցվեց, և բռնկվեց սև ջուրը Հարավում, և մոխիր թափվեց երկնքից: Եվ սրտերը մեր պատրաստ են մոխիր դառնալ: Եվ չենք կարող փրկություն աղերսել Աստծուց, քանզի կշրջի Իր դեմքը մեզնից: Եվ եթե չգտնվեն մեր մեջ երեք արդար, որ բարձրանան Լեռն ու խոսեն Նրա հետ, կհատվի մեր կյանքը ծուխ ու խավարում: Եվ սկսեցինք մտածել երեք արդարոց մասին, որ կկարողանային խոսել Նրա հետ, և ուրիշ ոչ ոք չէր գալիս մեր մտքին, բացի Պարֆենիից ու Քսենիայից: Երրորդ արդարը չենք գտնում, բայց մեր հիշողության մեջ է՝ Տերը, որ պատրաստ էր խնայել Սոդոմը հանուն հիսուն արդարի, համաձայնեց նաև հանուն տասի խնայել, որ, ավաղ, նույնպես չգտնվեցին: Այնպես որ, համարձակվում ենք մտածել, մեր երկուսը երեք չի՞ հաշվվի: Եվ հիշում ենք ինչպես վարվեցինք պայծառափայլ իշխանների հետ, և ամաչում ենք դրա համար: Մնում է միայն հույսը, որ նրանք կներեն մեզ՝ անմիտներիս, և բոլորը, ասես մեկ բերան, թողություն են խնդրում նրանցից՝ հավատալով, որ աղաղակը կհասնի նրանց ականջներին: Մարդիկ սպասում են իրենց իշխանների վերադարձին, որ նրանք գոնե մի կարճ ընթացք ընդունեն իշխանությունը Կղզում և բարձրանան Լեռը, և խոսեն Աստծո հետ:

Ցերեկվա ժամը մեկը: Լուր է գալիս, որ կղզու օդանավակայանը, վերջին ինքնաթիռն ընդունելով, փակվել է. մոխիրն այնքան խիտ է, որ օդն անպիտան է դարձել թռիչքի համար: Եվ այդ լուրի հետ վերջին հույսը լքում է մեզ:

Ցերեկվա ժամը երկուսը: Շտապ հաղորդում, որ Պարֆենին ու

Քսենիան Կղզում են: Առանց նախազգուշացման ժամանել են վերջին ինքնաթիռով ու հիմա մայրաքաղաքի ծանապարհին են: Պայծառափայլ իշխանները ստանձնում են ողջ իշխանությունն ու կառավարության անդամներին հրամայում ժամը տասնվեցին ներկայանալ պրեզիդենտական Պալատ: Իհարկե, կարելի է պնդել, որ դա մեր աղաչանքի պատասխանը չէր, այլ նրանց ազատ կամքը. որոշում՝ ընդունված Վարվառայի փախուստից հետո: Բայց մենք դա ընդունում ենք որպես պատասխան, և իրականում հենց այդպես էլ կա:

Ցերեկվա ժամը երեքը: Հրապարակ է մխրճվում մոխրից գորշացած պրեզիդենտական շարասյան առաջին մեքենան: Հետևից հայտնվում է Կղզու դրոշով ավտոմոբիլը: Պարֆենիի ու Քսենիայի ավտոմոբիլն է: Շարասյունը կանգ է առնում, և իշխաններն իջնում են մեքենայից: Նրանք եկել են դիմակայելու քաոսին: *Քաոս* բառը, բերնեբերան անցնելով, պտտվում է հրապարակում: Ուրախալի լուր: Մեկը պե՞տք է դիմակայի քաոսին: Մեքենան բաց չեն թողնում: Մարդիկ իշխանական զույգին ծնկաչոք խնդրում են բարձրանալ Լեռն ու խոսել Նրա հետ: Խնդրարկուները հասկանում են, որ հիմա լավագույն պահը չէ Լեռանն այցելելու համար, բայց ի՞նչ անես, եթե այդպես է ասում մարգարեությունը: Մեկը պե՞տք է բարձրանա Լեռը: Ըստ երևույթին, հենց նրանք էլ պետք է: Դա սարսափելի է, բայց ուրիշը չկա, քանզի չկան այլևս արդարներ, և նրանք հանուրի վերջին հույսն են: Բայց ինչպե՞ս կհամարձակվենք՝ հարցնում են իշխանները: Մեզ արդար հռչակենք ու զորենք խոսե՞լ Նրա հետ: Պետք չէ, որ ձեզ արդար հռչակեք, պատասխանում է ամբոխը, քանզի մենք ձեզ արդեն ճանաչել ենք այդպիսին: Պարզապես գնացեք ու խոսեք: Խնդրեք, որ թույլ չտա Լեռը պայթի, թե՞ չեք խղճում մեզ ու մեր երեխաներին:

Ցերեկվա ժամը չորսը: Կառավարության հետ Նորին Բարձր Պայծառափայլությունների հանդիպման ընթացքում քննարկվում են մարդկանց փրկության միջոցները:

Ցերեկվա ժամը հինգը: Գերագույն հրամանագրով երկրում հայ-

տարարվում է ռազմական դրություն: Կարգուկանոն հաստատելու և բնակիչներին օգնելու նպատակով ֆելդմարշալ Սևերիանը զորքերին հրամայում է մտնել քաղաքները: Զինվորներին ուղղված ողջերթի խոսքում ֆելդմարշալն ասում է, որ ճակատամարտը ծանր է լինելու, քանզի առաջին անգամ թշնամին անտեսանելի է: Նոր ցնցումներից զգուշանալով՝ զինվորականներն արագ վրաններ են խփում բաց տեղանքներում և փողոցներում հակագազեր ու շնչադիմակներ բաժանում: Հիվանդանոցներում, մանածագործական ֆաբրիկաներում, կտորեղենի խանութներում սկսում են թանզիֆե վիրակապեր պատրաստել: Այնտեղ օգնության են ուղարկվում կինկամավորներ: Կամավոր տղամարդկանցից ջոկատներ են կազմում փլվածքները մաքրելու համար:

Երեկոյան ժամ ութը: Պարֆենին ռադիոյով դիմում է ժողովրդին: Կոչ է անում սրտերից վանել վախն ու օգնել իրար, իրավիճակը բարդ է, բայց ոչ անելանելի: Մի պահ լռելով՝ ասում է. ոչ ոք մեզ իրավունք չի տվել բարձրանալ Լեռն ու խոսել Նրա հետ, այնպես որ, մենք չենք կարող գնալ: Ասում է. տեսնելով ձեր արցունքները, մենք չենք կարող չգնալ այնտեղ, այնպես որ, իհարկե կգնանք:

Երեկոյան ժամը տասը: Պալատի դիմաց կանգնում է զինվորական բեռնատարների շարասյունը: Առջևից՝ երկու ոստիկանական ամենագնաց, քանի որ բացառված չէ անճանապարհ երթևեկությունը: Եպիսկոպոս Կիրիլը մաղթանքի կարգ է կատարում Կղզու փրկության համար: Նրա բուրվառից կայծեր են ցայտում, ասես փոքրաչափ հրաբուխ լինի, և կայծերը, շարասյունից առաջ անցած՝ թռչում են դեպի Լեռը: Ֆելդմարշալ Սեվերիանը հինգրոպեանոց պատրաստություն է հայտարարում: Կազմուպատրաստ դիմավորելով աղետը՝ նա շքերթային համազգեստով ու ֆելդմարշալական մականով է:

Երեկոյան ժամը տասնմեկը: Շարասյունը շարժվում և ուղղություն է վերցնում դեպի Հարավ: Ճանապարհին հանդիպում են դեպի Հյուսիս եկող հազարավոր մարդիկ: Ողջ կյանքը Լեռան շուրջն ապրածները զգում են նրա խռովքը: Ասում են, որ չնայած ժայթքու-

մը դադարել է, Լեռն ուր որ է կպայթի: Այդ կողմը մեկնողներին խղճալով՝ կոչ են անում հետ դառնալ:

Մայիսի 29-րդ օրը

Գիշերվա ժամը երկուսը: Մեքենաները ժայթքումից չտուժած կողմից մոտենում են Լեռանը: Ծարասյանը սպասում են ստորոտում հավաքված հազարավոր մարդիկ: Ովքե՞ր են՝ հարցնում է եպիսկոպոս Կիրիլը: Փախչելու տե՞ղ չունեն, թե՞ իշխանական աղոթքին հավատացողներն են: Երկուսն էլ՝ պատասխանում է տաճարի վանահայրը: Առջևից գնացող ոստիկանական մեքենաները միացնում են շչակները: Ծարասյունը դանդաղ անցնում է ամբոխի միջով: Դեպի գագաթը տանող ոլորանների տակ կանգ են առնում: Բեռնատարների թափքերին լուսարձակներ են դրվում և ուղղվում գալարապտույտ ճանապարհին: Ճանապարհի առաջին հարյուր մետրը լուսավորված է, ինչպես ցերեկով: Նորին Բարձր Պայծառափայլությունները կանգնել են առաջին մեքենայի մոտ: Ինչ-որ մեկը բաճկոններ է բերում՝ վախենալով, որ Լեռան գագաթին կարող է ցուրտ լինել: Իշխանները հրաժարվում են. բաճկոնի կարիք չկա: Գլխավորը, ասում են, որ չափից դուրս շոգ չլինի: Հրաժարվում են նաև ռադիոկապից, քանզի այլ կապի միջոցներ ունեն: Բացի այդ, ռադիոկապն այնտեղ, ամենայն հավանականությամբ, չի գործի: Եպիսկոպոս Կիրիլը օրհնում է նրանց: Մի պահ հապաղելով՝ ասում է. մարգարեությունները միշտ չի պետք տառացիորեն հասկանալ: Նկատի ունեմ, որ պարտադիր չէ հեռուն գնալ այս ճանապարհով: Ստորոտին կանգնած՝ դուք արդեն կարծես Լեռան գլխին եք: Փորձում է ժպտալ: Դա էլ հաշիվ է: Պարֆենին ու Քսենիան խոնարհում են գլուխները: Հաշիվ է, այո՛: Ում համար ասես, բայց ոչ Ագաֆոնի:

Գիշերվա ժամը երեքը: Վրահաս լռության մեջ իշխաններն առաջին քայլն են անում դեպի գագաթը: Նրանց ուղեկցում է եպիսկոպոսը: Ոլորանների սկզբում կանգ է առնում. այստեղից մենակ եք գնալու, Աստված ձեզ պահապան: Ի՞նչ են մտածում նրանց հայացքով ուղեկցողները: Որ անպաշտպա՞ն են: Որ նրանց քայլքը երե-

րո՞ւն է: Երկու հուզիչ ծերուկ: Գնում են իրար ձեռք բռնած. ողջ կյանքում այդպես են քայլել: Քսենիայի շորը թրթռում է գիշերային քամուց: Հասնելով շրջադարձին՝ շրջվում ու նայում են մեզ: Քայլ են անում դեպի չլուսավորված տարածությունը: Անհետանում են: Հետո պիտի վառեն լապտերիկները. բարդ բան չէ: Դրանց մեջ հզոր լամպեր են, իսկ լիցքը՝ մի քանի ժամվա: Եթե միաժամանակ չօգտագործեն, լիցքը, կարելի է ասել, անսահմանափակ է: Երբ էլեկտրականություն չի լինում, դրանցով լուսավորում եմ խուցս: Իսկ առաջ մոմեր էի վառում: Անկեղծ ասած, ինձ համար դժվար է լապտերիկներով պատկերացնել նրանց: Լույսին գնացողներին:

Առավոտվա ժամը չորսը: Որոտմունք է: Հրեշավոր ձայթյուն, ասես երկիր ու երկինք ճաքեցին: Բոլորը հասկանում են՝ Նա սկսել է խոսել Պարֆենիի ու Քսենիայի հետ: Ահռելի ամպ է կախվում Լեռան վրա՝ սև ու շառագույն: Ծերունիների ձայնը թույլ է. միայն թե Նա լսի: Որոտի նոր հարված: Ամբոխն աղեկտուր աղաղակում է: Հաջորդ հարվածը տապալում է կանգնածներին: Ինչքա՞ն ժամանակ ենք այսպես պառկած: Չգիտեմ: Բերանս լցվել է ավազով ու մոխրով: Դղրդոցի արձագանքը կտրում-անցնում է Կղզին, հերթով խփվում երկնքին ու երկրին ու վերադառնալով՝ թուլանում, ինչպես վայել է արձագանքին: Եվ տները քաղաքներում պատվում են ճաքերով, որոշ տներ էլ փլվում են: Շտապ օգնության մեքենաների շչակներ չեն լսվում: Մոխրագույն փաթիլներ են թափվում լուսարձակների ճառագայթների տակ: Լուսարձակներն այդ մրրիկը ճեղքում են պարզած ձեռքի հեռավորության վրա, այնպես որ, մեքենաներն ամենացածր արագությամբ են շարժվում: Անձնազոհ՝ հասնում են առաջին փլեկին, որտեղից կամավորականները հանում են տառապյալ մարմինները: Դեռ երեկ չարացած ամբոխ՝ ժողովուրդն այդ գիշեր հայրենակիցների համահավաք, գթասիրտների կաճառ է դարձել: Երբ առաջին սարսափը թողնում է Լեռան ստորոտում սպասողներին, մարդիկ շրջապատում են ֆելդմարշալ Սեվերիանին: Նա անթարթ նայում է ոլորաններին, դեմքը շառագունել է կրակի փայլից: Թրջվել արցունքներից: Մարդիկ գոռում են, որ Պարֆե-

նին ու Քսենիան մնացել են Լեռան վրա, իբր նա չգիտի:Գոռում են, որ մնացել են այդ դժոխքում, իսկ Բանակը ոչինչ չի անում, ի՞նչ է, կարելի չէ՞ ուղարկել այդ Լեռը: Բանակն անզոր է, միայն շրթունքներով ասում է ֆելդմարշալը, բայց միթե դո՛ւք չուղարկեցիք նրանց այնտեղ: Մի քանի զինվոր մոտենում են նրան: Ֆելդմարշալը հայացքը Լեռից չկտրելով՝ լսում է նրանց: Գլխով է անում, և երկու բեռնատար գործի են գցում շարժիչներն ու բարձրանում ոլորաններով: Պարֆենին ու Քսենիան չէին կարող հեռու գնացած լինել: Բոլորը հավատում են, որ նրանց կգտնեն:

Առավոտվա ժամը հինգը: Քամին փոխվում է, և մոխրի ամպերը սկսում են լողալ դեպի Կղզու հյուսիս: Դանդաղ են թվում, չնայած, իհարկե, արագ են շարժվում: Հսկա աերոստատներ են հիշեցնում, որոնց ներսում կայծակներ են շողում, քանզի մոխրի մասնիկների լիցքերը բախվում են իրար: Անտեսանելի բարձունքում պաղելով՝ մոխիրն իջնում է Կղզու վրա: Կայծակներ՝ երկնքի ողջ լայնությամբ, իսկ երկրի ողջ երկարությամբ՝ ցնցումներ: Վերջին օրերը չե՞ն արդյոք: Չէ՞ որ ասված է՝ կխավարի արեգակը, և լուսինը լույս չի տա, և աստղերը կթափվեն երկնքից, և երկնային ուժերը կերերան: Լավայի գլխավոր հոսքը Լեռան հակառակ կողմում է, բայց այս կողմում էլ մի քանի հրավառ շոշափուկ է հայտնվում: Վերադառնալով՝ ոլորաններով ներքև են սլանում բեռնատարները: Կրակով բռնված: Զինվորներն ընթացքում ցած են թռչում: Բեռնատարները հասնում են ճամփեզրին ու պայթում: Բժիշկները վազում են դեպի զինվորները: Պարֆենիին ու Քսենիային չեն գտել:

Առավոտվա ժամը յոթը: Ժայթքումը կորցրել է ուժը, բայց արևը թաղված է մոխրի մեջ, ու լույսը չի բացվում: Ոչ թե կատարվողն է վախեցնում, այլ գալիք պայթյունի միտքը. Լեռը դեռ տեղում է:

Առավոտվա ժամը ութը: Ստորգետնյա ցնցումները թուլանում են: Լավայի գետերը դառնում են առվակներ, հետո՝ ընդհանրապես սառչում:

Կեսօր: Հիմա արդեն պարզ է, որ Լեռը խաղաղվում է: Երկինքը մի քիչ լուսավորվում է: Զինվորները շղթա կազմած՝ մատչելի տա-

ռածքներում սանրում են Լեռը: Պարֆենիին ու Քսենիային են փնտրում:

Հոկտեմբերի 6-րդ օրը

Որոնումները տևեցին մեկ շաբաթից ավելի, բայց Նորին Բարձր Պայծառափայլություններին այդպես էլ չգտան: Այսօր եռօրյա սուգ հայտարարվեց նրանց համար, և ողջ Կղզում լալիս են զանգերը: Հենց մտածում ես, թե քանի տարի են մեր կողքին եղել, գլուխդ պտտվում է: Ծերունահասակ ու մարմնով տկար, թվում է՝ ի՞նչ կարող էին անել: Բայց չէ՞ որ հենց Պարֆենին ու Քսենիան էին հսկում մեր կյանքը: Հենց միայն իրենց ներկայությամբ: Ինձ չի լքում զգացողությունը, որ սգո հարցում շտապել ենք: Դժվար է հավատալ, որ այդպիսի երկար կյանքի սովոր մարդիկ կարող էին կորցնել կյանքը: Ավելի շուտ, նրանց իր մոտ է տարել Նա, Ում հետ խոսում էին այդ գիշեր: Գուցե հենց դրա համար էլ բարձրանում էին Լեռը: Ոմանք ասում են, որ այդպիսի խոսակցություն չէր կարող լինել, քանզի արդար միայն երկուսն էին: Բայց չէ՞ որ Փրկիչն ասել է. *ուր որ երկու կամ երեք հոգի իմ անունով ժողովված լինեն, ես այնտեղ նրանց մեջ եմ:* Ուրեմն երեքն էին, քանզի նրանց հետ էր Քրիստոս: Ես չեմ պատրաստվում որևէ մեկի հետ վիճել, քանզի վեճի մեջ ծնվում է ոչ թե ճշմարտությունը, այլ զայրույթ ու հոգու անձկություն: Ով ուզում է, թող համարի, որ Լեռը կուլ է տվել Պարֆենիին ու Քսենիային: Բայց այն, որ նրանց անհետանալու գիշերը Լեռը խաղաղվեց ու հողը հանդարտվեց, համոզում է ինձ, որ իրավացի եմ: Ու նաև: Չէ՞ որ հայտնի է՝ պատմությունը զուտ ճանապարհ է, որով գնում է մարդը: Այդ ճանապարհին կարելի է բազմապատկել բարին կամ չարիք ցանել, և դա կախված է յուրաքանչյուրի ընտրությունից: Մարդը կարող է ձուլվել ամբոխին՝ սարից սողացող հրաշունչ գետի նմանվելով: Եվ քարանալ նրա պես: Կարող է և բարձարանալ դեպի գագաթը՝ չսարսելով ստորգետնյա ցնցումներից ու քարաթափերից: Օրինյալ է հողը, որ այդպիսի տիրակալ է ծնում: Նրա համար բոլորն իր երեխաներն են. տխրում է նրանց համար, ուրախանում

նրանց համար և հանուն նրանց բարձրանում լեռը՝ փրկչական խոսակցության: Կարող է ասել լեռանը՝ շարժվիր տեղից: Եվ այն կշարժվի: Կամ հակառակը՝ մնա տեղում: Եվ կմնա: Հիմա, ինչպես ամպրոպից հետո, օդը մաքուր է: Օդում ոչ թե չարություն է լուծված, այլ փոխադարձ սեր ու կարեկցանք: Այո՛, կարեկցանք, որովհետև կարեկցանքն է սեր ծնում ու հաղթում չարությանը: Այ ինձ, օրինակ, երկրաշարժի օրերին հայր տնտեսը թուղթ չտվեց տարեգրությունը շարունակելու համար: Ասաց. պատմությունն, ըստ երևույթին, ավարտվում է, ուրեմն ինչո՞ւ, եղբա՛յր Ինոկենտի, իզուր վատնենք թուղթը: Արդեն ուզում էի հակադարձել ծանր խոսքով: Առնվազն հիշեցնել, որ *մեր գործը չէ՝ գիտենալ ժամանակներն ու ժամկետները,* միայն հարկ է, որ ուշադիր գրի առնենք ամբողջը: Բայց լռեցի՝ խղճալով նրան երկրայինին հակվելու համար: Մանավանդ, որ դեռ թուղթ ունեի: Իսկ երկու օր անց առատ թուղթ բերեց, գրկեց ինձ ու լաց եղավ. ներիր ինձ, եղբա՛յր, ժլատության համար: Ահա քեզ թուղթ, գրիր առաջվա պես, քանզի պատմությունը չի ավարտվել: Այո՛, ասում եմ, պատմությունը շարունակվում է. առայժմ: Բայց սա վերջին զգուշացումն էր: Եվ խաղաղություն ու սեր հաստատվեց մեր միջև, և Կղզում բոլորը հաշտվեցին իրար հետ՝ հուսալով, որ իրենց օրերը կերկարեն: Իսկ երկիրը երկար սպասված խաղաղություն կնքեց Ֆրանսիայի հետ: Իմացա, որ այդ պետության մեջ էլ ուրախացել են խաղաղության համար, չնայած և այնտեղ քչերը գիտեին պատերազմի մասին: Եվ էլի Ֆրանսիայի կապակցությամբ, քիչ էր մնում մոռանայի. օրերս լուր եկավ, որ Ժան-Մարի Լեկլերի *Կղզու արդարացումը* կինոնկարը ինչ-որ կարևոր մրցանակ է ստացել: Ասում են, թե Լեկլերը վախենում էր, որ իր ֆիլմը չհասկացված կմնա: Իզուր էր վախենում. այստեղ ինչը կարող է անհականալի լինել: Ես ֆիլմին ծանոթ չեմ, բայց երջանկություն եմ ունեցել ճանաչելու Նորին Բարձր Պայծառափայլություններին. չեն եղել ավելի պայծառ մարդիկ մեր պատմության մեջ: Կարծում եմ՝ նրանց տարիքում քչերը կխիզախեին այդպիսի վերելքի: Դա հասկանալի է ցանկացած հանդիսատեսի:

Բովանդակություն

Հրատարակչի կողմից 6
Գլուխ առաջին 8
Գլուխ երկրորդ 18
Գլուխ երրորդ 44
Գլուխ չորրորդ 52
Չորրորդ գլխի հավելված 62
Գլուխ հինգերորդ 72
Գլուխ վեցերորդ 78
Գլուխ յոթերորդ 91
Գլուխ ութերորդ 104
Գլուխ տասնչորսերորդ 110
Գլուխ տասնհինգերորդ 128
Գլուխ տասնվեցերորդ 154
Գլուխ տասնյոթերորդ 173
Գլուխ տասնութերորդ 199
Գլուխ տասնիններորդ 213
Գլուխ քսաներորդ 230
Գլուխ քսանմեկերորդ 238
Գլուխ քսաներկուերորդ 259
Գլուխ քսաներեքերորդ 267
Գլուխ քսանչորսերորդ 276
Գլուխ քսանհինգերորդ 295

Եվգենի ՎՈԴՈԼԱԶԿԻՆ

ԿՂԶՈՒ ԱՐԴԱՐԱՑՈՒՄԸ

վեպ

Թարգմանությունը ռուսերենից՝
Ներսես ԱԹԱԲԵԿՅԱՆԻ

Ստեփանակերտ 2022

Հրատ. խմբագիր՝ Հ. Ալեքսանյան
Սրբագրիչ՝ Ա. Գրիգորյան
Էջադրումը՝ Թ. Հարությունյանի
Կազմի ձեւավորումը՝ Ա.Խաչատրյանի

Թուղթը՝ օֆսեթ, չափսը՝ 60x84 1/16: Ծավալը՝ 19.5 տպ. մամուլ
Տպաքանակը՝ 500:

Տպագրվել է «Դիզակ պլյուս» հրատարակչության տպարանում
ԱՀ, Ստեփանակերտ, Հ. Հակոբյան 25

«ԳԵՂarm» հանդեսի մատենաշարով լույս են տեսել

«Թատերախաղեր Արեւմտյան գրականությունից» - 2010
Իոսիֆ Բրոդսկի. «Տեղատարափի շաչյունը» - 2011
Մ. Բախտին. «Դոստոեւսկու պոետիկայի խնդիրները» - 2012
«Սիրիուսի սրնգահարները»/Վ.Խլեբնիկով, Ն.Գումիլյով, Վ.Խոդասեւիչ/ - 2012
Սերգեյ Դովլաթով. «Միայնակների երթը» - 2012
Յուրի Լոտման. «Մի.Անուն.Մշակույթ» - 2012
Վառլամ Շալամով. «Կոլիմյան պատմվածքներ»- 2012
Ժարկո Միլենիչ. «Լեոնը՝ հրաշագործի աշակերտը»- 2013
Պավել Ֆլորենսկի. «Իկոնոստաս» - 2014
Ռուս կոնցեպտուալ պոեզիա/ Դ.Պրիգով, Վ.Նեկրասով, Լ.Ռուբինշտեյն/ - 2014
Հենրիխ Սապգիր. «Զուգահեռ մարդը» - 2014
Վասիլի Գրոսման. «Կյանք եւ ճակատագիր» - 2014
«Կամուրջների խռովությունը. մետամետաֆորիստներ» - 2015
Ալեքսանդր Սոլժենիցին. «Մատրյոնայի կալվածքը»- 2015
Անդրեյ Պլատոնով. «Չեւենգուր. Գուբը. Պատմվածքներ» - 2015
Արդի ռուսական վերլիբռ (անթոլոգիա) - 2015
Չինաստանի մշակույթի քրեստոմատիա - 2015
Ջիդի Մաջիա. «Հրեղեն խոսքեր» - 2015
Մա Քայ. «Սրտի արձագանքներ» - 2015
Եվգենի Վոդոլազկին. «Լավր» - 2015

Քայ Տյանսին. «Խաղաղ կյանքի երգը» - 2015
Ռուս այլախոհական պոեզիա (անթոլոգիա) - 2015
Չինական մտքի եւ մշակույթի հիմնական
հասկացություններ (հատոր 1) - 2016
Յու Ջիան. «Անձրեւից պատսպարվող թռչունը» - 2016
Պավել Բասինսկի. «Լեւ Տոլստոյ.
Փախուստ դրախտից» - 2016
Չժան Ցզի-յան. «Երազ ծովի մասին» - 2016
Վան Զենչկի. «Երիտասարդ վանականի սիրո
պատմությունը» - 2016
Լյուդմիլա Պետրուշեւսկայա. «Սեր. երջանկություն.
ռեքվիեմ» - 2016
Անդրեյ Բելի. «Պետերբուրգ» - 2016
«Դիկոռոսներ. Անհայտ պոետների ապաստան»
(անթոլոգիա) - 2016
Ռուս մինիմալիստներ (անթոլոգիա) - 2016
Իձյե Թան. «Կոնֆուցիականությունը, ուղղայականությունը,
դաոսիզմը, քրիստոնեությունը եւ չինական
մշակույթը» - 2016
Սյուն Շի-ի. «Երկնային կամուրջը» - 2016
Չինական մտքի եւ մշակույթի հիմնական
հասկացություններ (հատոր 2 եւ 3) - 2016
Դոնգ Քիանգ. «Ամուսնություն» - 2017
Դոնգ Քիանգ. «Կացարաններ» - 2017
Ինգեբորգ Բախման. «30-րդ տարին» - 2017
Ջիդի Մաջիա. «Ընձառյուծից մինչեւ Մայակովսկի» - 2017

Չինական մտքի եւ մշակույթի հիմնական
հասկացություններ (հատոր 4) - 2017
Անդրեյ Վոլոս. «Վերադարձ Փանջիռուդ» - 2017
Դոնգ Քիանգ. «Թաղում» - 2017
Դոնգ Քիանգ. «Փառատոներ» - 2017
Դոնգ Քիանգ. «Ուտեստներ» - 2017
Սյաո Ցյան. «Վիշապի մորուքներն ընդդեմ
նախագծերի» - 2017
Ուան Ցուոլիան. «Մերձակցության աստիճաններ» - 2017
Ֆյոդոր Սոլոգուբ. «Ճնչաղեւը» - 2018
Չինական մտքի եւ մշակույթի հիմնական
հասկացություններ (հատոր 5) - 2018
Ու Չուն. «Չինական մշակույթ. փիլիսոփայություն» -2018
Ուեյսին Սյուլն, Սյուն Ճու. «Չինաստանի յուրահատկու-
թյունները: Չինաստանի համաշխարհային
ժառանգությունը»- 2018
Չինական մտքի եւ մշակույթի հիմնական
հասկացություններ (հատոր 6) - 2018
Աղի ձայնը (20-րդ դարի հետուբսուսական թվականների
սերնդի չին գրողների պատմվածքներ) -2019
20-րդ դարի ռուսական պատմվածք (անթոլոգիա) - 2019
Չինական մտքի եւ մշակույթի հիմնական
հասկացություններ (հատոր 7) - 2019
Գվինեթ Լյուիս. «Քառսի հրեշտակները» - 2020
Պավել Բասինսկի. «Լեւ Տոլստոյ. Ազատ մարդը» - 2020

Ցերինգ Նորբու. «Փրկված գառը» - 2020
Չժան Յավեն. «Դարերի կանչը» (Մտորումներ Հոնկոնգի մասին. իրական պատմություն) - 2020
Կոնֆուցիոս. «Զրույցներ» - 2020
Չինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացություններ (հատոր 8) - 2021
Չինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացություններ (հատոր 9) - 2021
Մարիա Գրեչ Գանադո. «Երիզվածք» - 2021
Էլիզաբեթ Քրիստին Յոկուլսդոտիր. «Մեր, նյարդերի քայքայում. ոչ մի պար ձուկ-քարի վրա» - 2021
Ալեքսեյ Վառլամով. «Մտագայլը» - 2021
Միխալ Այվազ. «Այլ քաղաք» - 2021
Իմանուել Միֆսուդ. «Յուտա Հայմ» - 2021
Խոսեբա Սարիոնանդիա. «Բանտեր եւ աքսորներ» - 2022
Չինական ավանդական բժշկության հիմնական հասկացությունների հանրագիտարան (հատոր 1) - 2022
Նիկոլա Դուրետիչ. «Մահվան եւ անհետացման ժամանակագրությունը» - 2022
Սլավենկա Դրակուլիչ. «Ֆրիդա կամ՝ցավի մասին» - 2022
Սիգիզմունդ Կրժիժանովսկի. «Հիշողություններ ապագայի մասին» - 2022
Չինական ավանդական բժշկության հիմնական հասկացությունների հանրագիտարան (հատոր 2) - 2022

www.vogi-nairi.am
Էլ. հասցե՝ vogi.nairi@mail.ru
հեռ.: +374 97252323, +374 94259161